

Գ. Ս. ՂԱԶԻՆՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Երևանի համալսարանի հրատարակչություն
Երևան - 2001

Ղազինյան Գ.Ս.

Քրեական դատավարության պատմական և արդի
հիմնահարցերը Հայաստանում: Երևան, Երևանի համալսարանի
հրատարակչություն, 2001 թ., 416 էջ:

Հայաստանի արդի քրեական դատավարության արժեքավորումը, ինչպես
նաև դրա կատարելաօրոժմանն ուղղված, փոստականորեն հիմնավորված առա-
ջարկություններն անհնարին են առանց քրեական դատավարության պատմա-
կան ակունքների իմացության և օտաօրոժման: Ելնելով այս հանձնանքի՝
ներկայացվող մենագրության մեջ լուսաբանվում են Հայաստանում քրեական
դատավարության զարգացման պատմության ընդհանուր հիմնահարցերը, հատ-
կապես նորաույն շրջանում, և դրա հիման վրա իմաստավորվում են Հայաստա-
նի երրորդ Հանրապետության քրեադատավարական օրենսդրության բազմա-
թիվ հիմնախնդիրներ: Ուսումնասիրության համեմատական-իրավական մեթոդի
կիրառման միջոցով հեղինակը վեր է հանել ինչպես Հայաստանի Հանրապե-
տության 1998 թվականի քրեական դատավարության օրենսդրի արժանիքները,
այնպես էլ էական թերություններն ու բացթողումները, մշակել է դրանց վերաց-
ման տեսականորեն հիմնավորված առաջարկություններ:

Մենագրությունը նախատեսված է իրավաբանական բուհերի ֆակուլտետ-
ների ուսանողների, ասպիրանտների, դասախոսների, դատավորների, իրավա-
պահական մարմինների աշխատակիցների, ինչպես նաև քրեական դատավա-
րության հիմնախնդիրներով հետաքրքրվողների համար:

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 7

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԳԼՈՒԽ 1.

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ, ՎԱՂՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԵՎ ՋԱՐԳԱՑԱԾ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

- § 1. Քրեական դատավարությունը հին և վաղմիջնադարյան Հայաստանում (մ.թ.ա. I հազ. – մ.թ. IX դ.)..... 10
- § 2. Քրեական դատավարությունը Հայաստանում զարգացած միջնադարում (X-XIII դդ.)..... 21

ԳԼՈՒԽ 2.

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ԵՎ ՖԵՆՈԴԱԼԱԿԱՆ (ԱՎԱՏԱՏԻՐԱԿԱՆ) ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՃԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ (XIV-XIX ԴԴ.)

- § 1. Հայաստանի քաղաքական դրությունը և քրեական դատավարությունը XIV-XVIII դդ. 27
- § 2. Ուշ միջնադարյան պետաիրավական միտքը քրեական դատավարության մասին (XVIII դ.)..... 33
- § 3. Քրեական դատավարությունը Հայաստանում XIX դ. 37

ԳԼՈՒԽ 3.

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1918-1920 թթ.)

- § 1. Հայաստանի առաջին Հանրապետության դատական համակարգի կազմակերպարավական հիմունքները43
- § 2. Հայաստանի առաջին Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունը47

ԳԼՈՒԽ 4.

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄԸ (1920-1990 թթ.)

- § 1. Քրեական դատավարությունը Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման շրջանում (1920-1922 թթ.)56
- § 2. Դատաիրավական բարեփոխումները և ՀՍԽՀ 1923 թ. քրեական դատավարության օրենսդրությունը 68
- § 3. Խորհրդային Հայաստանի քրեադատավարական օրենսդրությունը 1925-1956 թթ.81
- § 4. Խորհրդային Հայաստանի քրեադատավարական օրենսդրությունը 1956-1990 թթ. 102

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՊ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԳԼՈՒԽ 5.

ՔՐԵԱԿԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

- § 1. Քրեական դատավարության սահմանադրական հիմունքները .149
- § 2. Հանրային և անձնական շահերի հարաբերակցությունը քրեական դատավարությունում 183
- § 3. Դատարանի տեղը և դերը քրեական դատավարությունում 196

§ 4. Օրինականությունը քրեական դատավարությունում և դատախազի դերը դրա ապահովման <input type="checkbox"/> ործում.....	207
--	-----

ԳԼՈՒԽ 6.

ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ

§ 1. Քրեադատավարական <input type="checkbox"/> ործառույթներ. հասկացությունը, տեսակները, համակարգը.....	228
§ 2. Պաշտպանության <input type="checkbox"/> ործառույթը և պաշտպանության իրավունքը քրեական դատավարությունում.....	242
§ 3. Քրեական հետապնդում. հասկացությունը, սուբյեկտները և նրանց լիազորությունները.....	266

ԳԼՈՒԽ 7.

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ

§ 1. Դատական վերահսկողությունը քրեական դատավարության մինչդատական փուլերում.....	282
§ 2. Քրեական <input type="checkbox"/> ործերով մինչդատական վարույթի ձևերի տարբերակումը.....	300
§ 3. Քննիչի ինքնուրույնությունը և քննության դատավարական ու կազմակերպական ղեկավարումը.....	321

ԳԼՈՒԽ 8.

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԳԻՐՆԵՐԸ

§ 1. Միջանկյալ վարույթը նախաքննության և դատական քննության միջև.....	338
§ 2. Դատական քննության հիմնախնդիրները.....	357
§ 3. Դատական որոշումների վերանայման և ստուգման ձևերը.....	377
Ճափ՝ ա	409
Summary.....	419

ԱՌԱՋԱԲԱՆ

20-րդ դարի վերջին հայ ժողովուրդը հանրաքվեի միջոցով հռչակեց իր անկախությունը և թևակոխեց զարգացման նոր պատմական փուլ՝ ինքնիշխան պետականության կառուցման շրջան: Անկախություն ձեռք բերելուց հետո առաջացավ նոր պատմական իրողությունների համապատասխանող Սահմանադրության ընդունման անհրաժեշտությունը: 1995 թ. հուլիսի 5-ին հայ ժողովուրդը հանրաքվեի միջոցով ընդունեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, որը ներառեց մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների առաջնայնության դրույթը, ամրապնդեց քաղաքացիական հասարակության հիմունքները և հայկական պետականության սահմանադրական մոդելը, որի հիմքում ընկած են ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետության օաղափարները: Սակայն Սահմանադրության ընդունումը չի նշանակում, որ դրանում տեղ օտած օաղափարները և ամրապնդված նորմերը դարձել են իրականություն: Դեռևս հսկայական բարենորոգչական աշխատանք է սպասում օրենսդրին, որի առաջնահերթ խնդիրը եղել և մնում է սահմանադրական օաղափարների և նորմերի կենսաօրոժումը կյանքում:

Հասարակական և պետական կյանքի բոլոր խոշորագույն վերափոխումների մեջ հատուկ տեղ էին զբաղեցնում դատաիրավական բարեփոխումները: Դատաիրավական բարեփոխումների հիմնական նպատակը պետական կառուցակարգում դատական իշխանության՝ իբրև ինքնուրույն, ազդեցիկ իշխանության ստեղծումն է: Իշխանություն, որն իր օրոժումեության մեջ անկախ է օրենսդիր և օրոժատիր մարմիններից, ընդունակ է լուծել պետական իշխանության այլ ճյուղերի կամայականության սահմանափակման խնդիրը, կոչված է ապահովելու մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը: Դատաիրավական բարեփոխումների շրջանակներում մեր առջև դրված էր քրեական դատավարության՝ որպես դատական իշխանության իրականացման ձևերից մեկի, բարենորոգման խնդիրը: Այդ խնդրի իրացման համար մշակվեց, իսկ այնուհետ Ազգային ժողովի կողմից ընդունվեց ՀՀ քրեական դատավարության նոր օրենսփրքը, որը ներառել է նոր Սահմանադրության ժողովրդավարական դրույթները:

Ըստ արժանվույն անհատելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և քրեական դատավարության օրենսփրքի ժողովրդավարական ուղղվածությունը՝ պետք է նշել, որ քրեադատավարական օրենսդրության մեջ այդքան կարճ ժամանակի ընթացքում չէին կարող ամբողջովին իրացվել իրավական պետությունների բոլոր ժողովրդավարական նվաճումները: Այդ օրոժնթացքը, անկասկած, պահանջում է ավելի երկարատև ժամանակ, որի ընթացքում պետք է անցկացվեն հիմնարար փոփոխական ուսումնասիրություններ և վերլուծվեն քրեական դատավարության նոր օրենսփրքի կիրառման պրակտիկան: Հայաստանի արդի քրեական դատավարության հաջող բարենորոգումը, ուսումնասիրությունը և զարգացումը, օբյեկտիվորեն անհնարին է առանց դրա պատմական արմատների իմացության և օրոժումն: Միայն անցյալի և ներկայի կապի ու համեմատության միջոցով է հնարավոր ավելի խորն ու բազմակողմանի իմաստավորել քրեական դատավարության նոր իրավունքի և դրա ինստիտուտների նշանակությունն ու էությունը: Ահա այդ անհրաժեշտությունից ելնելով՝ մենաօրության մեջ փորձ է արված ընթերցողին ներկայացնել քրեական դատավարության զարգացման պատմությունը Հայաստանում և դրա հիման վրա ձեռնամուխ լինել Հայաստանի Հանրապետության քրեադատավարական նոր օրենսդրության վերլուծությանը:

Դատաիրավական բարեփոխումների իրականացման ընթացքում քրեական դատավարության ոլորտում օրենսդրի առջև դրված էին հետևյալ խնդիրները. արմատապես վերափոխել քրեադատավարական օրենսդրությունը, մինչդեռատական փուլերում ստեղծել քննության մարմինների և դատախազության՝ հանցավորության դեմ պայքարի օրոժումեության արդյունավետության բարձրացման անհրաժեշտ պայմաններ, ամրապնդել մարդու հուսալի պաշտպանությունն ինչպես հանցաօրոժումներից, այնպես էլ պետական իշխանության մարմինների և դրանց պաշտոնատար անձանց ապօրինի օրոժողություններից, դատական փուլերում իրական դարձնել դատարանի անկախությունն ու անկողմնակալությունը, մրցակցային դատաքննությունը և դրանով իսկ քրեական դատավարությունում ստեղծել մարդու ու քաղաքացու իրավունքների և ազատությունների իրավաբանական երաշխիքների զարգացած համակարգ:

Այդ ճանապարհին էական էր քրեական դատավարությանն նոր օրենսդրքի ընդունումը, որը հիմնված է մրցակցության և դատավարության այլ ժողովրդավարական սկզբունքների հետևողական իրացման վրա: Սակայն, ինչպես կոտենենք, քրեական դատավարության նոր օրենսդրքը չպետք է դիտվի որպես բարենորոման օրոճընթացի ավարտ, այլ ընդհակառակը, իբրև դրա սկիզբ, քանի որ այն իդեալական ու կատարյալ չէ: Այլ խոսքով, քրեական դատավարության նոր օրենսդրքի ընդունմամբ քրեական դատավարության հիմնախնդիրները չանհետացան: Իհարկե, դրանց մի մասը ստացավ իր լուծումը, սակայն դատական իշխանության և քրեական դատավարության բազմաթիվ հայեցակարգային հիմնահարցեր դեռևս սպասում են իրենց լուծմանը, իսկ մի քանիսը կատարելաործման կարիք ունեն: Մենաորության երկրորդ բաժինը նվիրված է քրեադատավարական նոր օրենսդրությունում չլուծված, ինչպես նաև կատարելաործման կարիք ունեցող հայեցակարգային և այլ հիմնախնդիրներին:

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԳԼՈՒԽ 1.

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ, ՎԱՂՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

§ 1. Քրեական դատավարությունը հին և վաղմիջնադարյան Հայաստանում (մ.թ.ա. I հազ. – մ.թ. IX դ.)

Իրավունքը՝ որպես հասարակական երևույթ, Հայաստանում ծափել և զարգացել է՝ համաձայն պետության և իրավունքի առաջացման ու զարգացման ընդհանուր օրինաչափությունների: Հայկական իրավունքի, այդ թվում քրեադատավարական իրավունքի զարգացման վրա էական ազդեցություն են թողել Հայաստանում պետականության առաջացման և զարգացման պատմական առանձնահատկությունները, ազգային, կրոնական, արտաքին քաղաքական և այլ օրոճոճներ: Հին Հայաստանի իրավունքի պատմությունն ուսումնասիրելիս մեր առջև հառնում են որոշակի դժվարություններ, պայմանավորված այն հանգամանքով, որ մեզ չեն հասել այդ ժամանակների իրավունքի աղբյուրները: Այդ պատճառով, ցավոք, անհնար է լրիվ վերականգնել հին հայկական իրավունքի (մ.թ.ա. I հազ. – մ.թ. V-VI դդ.) նկարագիրը: Ուսումնասիրությունները թույլ են տալիս վերհանել հայ ժողովրդի իրավական կեցության միայն որոշ կողմերը, ընդ որում՝ հիմնվելով ոչ թե զուտ իրավաբանական, այլ հին հայկական պատմաորության վավերագրական աղբյուրների՝ Ապթանեղոսի, Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու, Եղիշեի և այլոց երկերի վրա: Ընդհատ և խորագին ուսումնասիրության դեպքում հին պատմաորությունը կարող է ծառայել ինչպես ընդհանրապես պետության և իրավունքի, այնպես էլ քրեական դատավարության հիմնախնդիրների ուսումնասիրության բավականին հուսալի աղբյուր:

Քրեական դատավարության տեսության մեջ ընդունված տեսակետի համաձայն՝ հասարակության համար վտանգավոր ոտնձգություններ կատարած անձանց դեմ տարվող պայքարն իր զարգացման ընթացքում անցել է մի շարք պատմական շրջաններ: Մարդու կյանքի և շահերի նկատմամբ ոտնձգությունների դեմ պայքարի առաջին շրջանը հարձակման ենթարկվածի և հարձակվողի անմիջական ֆիզիկական պայքարն է: Նախնադարյան մարդու կյանքում այս շրջանը տևել է բավականին երկար: Չնայած իր հնությանը՝ ոտնձգությունների (հարձակումների) դեմ պայքարի այս եղանակը լրիվ չկորցրեց իր նշանակությունը և նույնիսկ իրավաբանական ճանաչում ստացավ: Անհրաժեշտ պաշտպանության վերաբերյալ նորմերը սահմանում են հարձակվողի դեմ ուղղված զործողությունների օրինաչափությունը՝ համապատասխան պայմաններում և սահմաններում: Երկրորդ շրջանը հարձակման ենթարկվածին համայնքի այլ անդամների, ազգակիցների, մերձավորների, համայնքի ներկայացուցիչների (ավագանու և այլոց) օգնությունն էր: Վերջիններս միջոցներ էին ձեռնարկում հանցազորությունը դադարեցնելու, հանցազորին ձերբակալելու և պատժելու համար: Ավելի ուշ ժամանակներում հանրորեն վտանգավոր արարքների դեմ պայքարի այս եղանակը, ինչպես և նախորդը, ստացավ իրավաբանական ճանաչում: Այս եղանակի իրականացման հիմնական ձևը արյան վրեժն էր: Երրորդ փուլը հատուկ պետական մարմինների և պաշտոնատար անձանց զործունեությունն էր՝ ուղղված հանցազորությունների վերաբերյալ զործերի քննությանը և լուծմանը: Հենց այս փուլն է համարվում բուն քրեական դատավարությունը, այսինքն՝ իրավունքով կարգավորված քրեական զործեր քննելու և լուծելու զործունեությունը¹:

Մարդկային հասարակության զարգացմանը զուգընթաց ծագեցին և հասարակության կյանքում արմատավորվեցին սովորույթները և ծիսակարգերը: Այդ սովորույթների և ծիսակարգերի հիման վրա առաջացան դատական զործունեությունը կարգավորող իրավական նորմերը: Աստիճանաբար պետական կառուցակարգում սկսեց առանձնանալ հատուկ մարմին, որն անվանվում էր «դատարան»: Ուշ շրջանում այդ մարմնի զործունեությունն արդեն առավելապես կարգավորվում էր իրավական նորմերով՝ պետական իշխանության պարտադիր կարգադրությամբ, որոնք ժա-

¹ Տե՛ս *Ἐὸδὴν ἠἰἰἰἰἰἰἰἰἰ ὀἰἰἰἰἰἰἰἰ ἰἰἰἰἰἰἰἰ. Ἰ ἰἰἰἰἰ ἰἰἰἰἰ. Ἰ ἰἰ ἰἰἰ. Ἀ.Ἀ. Ἀἰἰἰἰἰ, Ἐ.Ἐ. Ἐἰἰἰἰἰ. Ἰ ., 1989, էջ 354-355:*

մանակի ընթացքում դարձան դատական զործունեության զործխող (հիմնական) կարգավորիչը՝ կորցնելով ամեն մի կապ սովորույթների հետ:

Ազգբնադրությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինչպես բոլոր ժողովուրդների մոտ, հին Հայաստանում ևս հանրորեն վտանգավոր արարքների դեմ պայքարի հիմնական ձևը եղել է ինքնադատատանը՝ արյան վրեժը: Հին հայկական իրավունքի՝ մեզ հասած աղբյուրների սակավությունը թույլ չի տալիս հստակ որոշել հին հայկական պետությունների (մ.թ.ա.) կառուցակարգում և իրավունքի համակարգում դատարանի, ինչպես նաև նրա զործունեության կանոնների առաջացման ժամանակը և ձևերը: Իսկ ինչ վերաբերում է մեր թվարկությանը, ապա հենվելով վավերագրական աղբյուրների վրա, կարող ենք վերականգնել դատարանի և դատավարության որոշ կողմեր:

Այնհաստ է, որ մինչև մեր թվարկությունը դատարանը Հայաստանում կազմում էր պետական կառավարման ընդհանուր ապարատի մի մասը, դեռ չէր առանձնացել նրանից որպես ինքնուրույն մարմին, որի միակ խնդիրն էր արդարադատության իրականացումը:

Առանձնացման զործընթացը սկսվել է միայն մեր թվարկությունում, ինչը հստակ երևում է հատկապես Արշակունիների դարաշրջանում (I-V դդ.): Եվ եթե չլինեին քաղաքական իրադրության վատթարացումն ու պետականության կորուստը V դարում, ապա այդ զործընթացը, ինչպես այլ պետություններում, կօտներ իր բնական-պատմական, օրինաչափ ավարտը: Հունական եկեղեցական զործիչ և օրող Եվսեբիոս Կեսարացին (262-340 թթ.) իր շարադրանքներից մեկում օրում է, որ հայերի և պարթևների մոտ մարդասպանները մահվան էին ենթարկվում դատավորների և սպանվածի հարազատների կողմից: Սակայն եթե ազգակիցները, վրեժի գացումից դրդված, սպանում էին մարդասպանի ազգակիցներից որևէ մեկին, ապա տեղական օրենքներով նրանք պատասխան չէին տալիս դատարանի առաջ²: Ծիշտ է նկատել Խ. Թորոսյանը. «Այս վկայությունից երևում է, որ արդարադատության իրականացման մասնավոր ձևի կողքին օրություն ուներ

² Տե՛ս *Eusebii Pamphili Caesareae, Palaestinae episcopi Prae parationis Evangelicae. Patrologiae, cursus completus, accurante. J. P. Migne, Patrologiae graecae. t. 21, Turnholti (Belgium). VI, 10, § 276, էջ 471: Հղումն ըստ. Ծրծրնյի Օ.Ա. Նօձ է իժիօձնն օ Աժի ճիժէ X-XIII ձձ., Աժձձձ, 1985, էջ 193:*

նան նրա պետական ձևը: Բայց, հավանաբար, ինքնադատատանն արդեն կարձակորված էր. սահմանված էր այդ կամայականության առաջին և ամենակարևոր սահմանափակումը՝ ամեն մի ազձակից պարտավոր չէ վրեժ լուծել, և արյան վրեժի իրավունքը կարելի է իրականացնել մարդասպանի ոչ բոլոր ազձակիցների նկատմամբ: Ժամանակի ընթացքում պետությունն ավելի լայն ու ակտիվ կերպով է միջամտում արդարադատության իրականացմանը»³:

Մինչև արդարադատության իրականացմանը պետության ակտիվ միջամտությունը և հին Հայաստանում դատական իրավունքի ձևավորումը հաստատող վավերաթղթերով աղբյուրներում եղած վկայությունների թվարկմանն անցնելը պետք է նշել, որ այդ փաստերը մեծամասամբ հաստատում են հին Հայաստանի իրավունքի դատարանակազմական, ոչ թե դատավարական կողմերը: Բայց դրանց ուսումնասիրությունը կարևոր է, քանի որ նախ՝ այդ վկայությունների օձնությամբ մենք կարող ենք մերժել հայաձիտության մեջ առկա այն տեսակետը, համաձայն որի միջնադարյան Հայաստանում արդարադատության իրականացման արտոնությունը պատկանում էր հայ եկեղեցուն, և երկրորդ՝ դրանց վերլուծությունը մեզ հնարավորություն է տալիս վերականձնել դատավարության որոշ տարրեր:

Հայ պատմաձրության հայրը՝ Մովսես Խորենացին, Հայաստանում Արշակունյաց հարստության հիմնադիր Վաղարշակ թաձավորին (I դ.)⁴ է վերաձրում պետական շինարարության ոլորտում հետևյալ ձործունեությունը. «Եվ իր թաձավորական տանը օրենքներ է հաստատում, ժամեր է սահմանում (արքունիք) մտնելու և իջնելու, խորհրդի, կերուխումի և զբոսանքների համար: Սահմանում է զինվորական կարձեր, առաջին, երկրորդ, երրորդ և այլն. և երկու մարդ ձրով հիշեցնողներ, մեկը բարին հիշեցնողը, իսկ մյուսը՝ վրեժխնդրությունը: Բարին հիշեցնողին հրաման է տալիս՝ թաձավորի բարկանալու կամ անհրավ հրաման տալու դեպքում հիշեցնել իրավացին և մարդասիրությունը: Սահմանում է

³ Տե՛ս *Օրձոյի Օ.Ա.* Նձա Ե իձի ձանն Ե Աձի Եի ԵԵ X-XIII ԵԵ., Դձաձաի, 1985, էջ 193:

⁴ Վաղարշակ թաձավորը, ըստ Խորենացու ժամանակաձրության, կառավարել է մ.թ.ա. II դարում, սակայն Արշակունիների հարստության հաստատումը Հայաստանում տեղի է ունեցել մ.թ. 66 թվականին:

իրավարարներ արքունի տանը, իրավարարներ քաղաքներում և ավաններում»⁵:

Այս վկայության մեջ մեզ համար հետաքրքրություն են ներկայացնում երկու հանձամանք: Նախ և առաջ՝ հաղորդումը՝ թաձավորի կողմից Հայաստանի քաղաքներում և ավաններում իրավարարներ նշանակելու մասին, և երկրորդ՝ հաղորդումը՝ արքունիքում երկու պաշտոնատար անձանց՝ հիշեցնողներ նշանակելու վերաբերյալ: Հարց է ձաձում. ի՞նչ պաշտոնատար անձինք էին նրանք և ինչո՞վ էին զբաղվում արքունիքում: Ցավոք, Խորենացին այդ պաշտոնատար անձանց պարտականությունների վերաբերյալ մեզ մանրամասներ չի հաղորդում, բայց եղած տվյալների վերլուծությունը մեզ բերում է հետևյալ մտքին. իսկ արդյոք նրանք իրենց ձործառույթային պարտականություններով նման չե՞ն «պաշտպանին» և «պետական մեղադրողին»՝ դատավարական իմաստով: Առաջին պաշտոնյան բարին հիշեցնողն է և թաձավորի բարկանալու կամ անհրավ հրաման տալու դեպքում պարտավոր է հիշեցնել իրավացին (օրինականը) և մարդասիրությունը: Պատմիչի օձտաձործած բառերը բավականին հստակ նկարաձրում են այդ պաշտոնատար անձի պարտականությունների շրջանակը: Բնական է, որ թաձավորը կարող էր բարկանալ, եթե հպատակներից որևէ մեկը խախտում էր օրենքները կամ չէր ենթարկվում թաձավորի հրամաններին, ինչը ևս հավասարազոր է օրենքը խախտելուն՝ հանցաձործությանը: Թաձավորը, իհարկե, ուներ արդարադատություն իրականացնելու իրավունք: Նա նշանակում է պաշտոնատար անձի, ում հանձնարարում է թաձավորական արտոնության իրականացման ընթացքում հիշեցնել «իրավացին և մարդասիրությունը», որպեսզի թաձավորական բարկության պահին ինքը չվարվի անհրավ կերպով, այսինքն, ժամանակակից խոսքերով ասած, չկայացնի անհիմն և անարդար դատավձիո: Անկասկած, այդ ձործունեությունը կարելի է բնութաձրել որպես պաշտպանության ձործառույթի իրականացում դատավարության ընթացքում: Իսկ ինչ վերաբերում է երկրորդ պաշտոնատար անձին՝ վրեժխնդրությունը հիշեցնողին, ապա մենք ամբողջովին համամիտ ենք Խ. Թորոսյանի այն կարծիքին, որ այդ անձին բնութաձրելու համար Խորենացու ձործածած բառը՝ վրեժխնդրություն-

⁵ Տե՛ս *Մովսես Խորենացի*, Հայոց պատմություն / Խմբ., ներած. և ձանթ. Ս. Մալխասյան. – Երևան, Երևանի համալս. հրատ., 1981, էջ 156:

նը, արդեն իսկ տալիս է այդ պաշտոնյայի կարօձափճակի էությունը: «Այդ պաշտոնատար անձը պետք է թափափորին օրավոր հիշեցներ վրեժխնդրության, արդարացի հատուցման մասին: Արտահայտվելով ժամանակակից եզրաքանությանը՝ այդ չինովնիկը թափափորի առջև հարց էր բարձրացնում քրեական օրոժ հարուցելու մասին, այսինքն՝ հանդես էր օալիս պետական մեղադրողի դերում»⁶:

Ամենից արժեքավորը, որ մենք կարող ենք վերցնել Խորենացու այդ վկայությունից, այն է, որ արդեն վաղմիջնադարյան Հայաստանում նկատվում է պետության ընդհանուր կառուցակարօում դատավորի պաշտոնի առանձնացումը, իսկ արքունիքում նշանակվում են երկու պաշտոնատար անձինք, որոնք իրենց օործառությանի պարտականություններով շատ նման են «պետական մեղադրողին» և «պաշտպանին»՝ քրեական դատավարությունում օործող անձանց: Դա նշանակում է, որ արդեն այդ ժամանակաշրջանում Հայաստանում նկատվում է մրցակցային դատավարությունը հետախուզական դատավարության վերածվելու միտումը, որի ապացույցը «պետական մեղադրողի» պաշտոնն է:

Հայ պատմաօիրների մոտ հանդիպում ենք վկայությունների Արշակունիների շրջանում օումարվող աշխարհաժողովների կազմի վերաբերյալ: Աօաթանօեղոսի, Փափստոս Բուզանդի թողած տեղեկությունները վկայում են, որ դրանց մասնակցում էին ֆեոդալ դասակարօի բոլոր աշխարհիկ ներկայացուցիչները: Դրանց թվում էր նաև «դատավորը», «իրավարարը»: Դատավորի մասնակցությունն աշխարհաժողովներին վկայում է, որ նա ուներ բավականին բարձր հասարակական կարօափճակ: Այսպիսով, հայկական վավերաօրական աղբյուրները վկայում են, որ Արշակունիների հարստության շրջանում, քրիստոնեության ընդունումից հետո Հայաստանում, բացի հոօնոր՝ եկեղեցիական դատական համակարօից օոլություն ուներ նաև աշխարհիկ՝ պետական դատարանների զարօացած ցանց, ինչն իրավաօետներին հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ մ.թ. 1-5-րդ դդ. «տեղի է ունեցել արդարադատության իրականացման պետության իրավասության հետաօա ընդլայնում և, համապատասխանաբար, մասնավոր ուժի կիրառման ոլորտի նեղացում: Դա կարելի է արտահայտել երեք կետով. ընդլայնվել էր օործերի շրջանակը, ո-

⁶ Տե՛ս *Օրժոյի Օ.Ա.* Նօձ է իժիօձնն... , էջ 199:

րոնցով արօելվում էր ինքնադատաստանը. ավելի էր սահմանափակվում անձանց շրջանակը, ովքեր կարող էին օօտաօորժել ինքնադատաստանի իրավունքը. այն դեպքերում, երբ թույլատրվում էր մասնավոր վրեժը, դրա իրականացումը թողնվում էր տուժածի հայեցողությանը, այսինքն՝ պետությունը օօնության էր օալիս տուժածին այն դեպքերում, երբ նա ուզում էր, բայց չէր կարող իրականացնել իր իրավունքը»⁷:

Այդ մասին են վկայում ոչ միայն պետական դատարանների առկայությունը հաստատող փաստերը, այլև տվյալ շրջանի քաղաքական-իրավական միտքը՝ իբրև հայ ժողովրդի առկա իրավական կեցության արտացոլում: Այսպես՝ 5-րդ դ. հայ փիլիսոփա Եզնիկ Կողբացին, պաշտպանելով քրիստոնեական ուսմունքը և հերքելով զանազան կրոնական աղանդներ, քննարկելով նաև չարի ու բարու հիմնախնդիրները, արձանաօրում է. «Եվ պարզ է, որ չար իրողություններ են լինում այն ժամանակ, երբ կարիքները օրինականությանը չեն բավարարվում: Նույն խոսքերը նաև սպանությանն են վերաբերում: Երբ մեկը անառակության մեջ բռնվածին սպանում է՝ պատժելով նրան հանդօնության պատճառով, չար բան չի անում: Իսկ եթե մեկն սպանում է մի անմեղի, որը վճռով հաստատված հանցանք չի օորժել, կամ (եթե) բան խլելու, ունեցվածքը հափշտակելու համար է սպանում, չարիք է օործում: Թեև երկուսի օորժն էլ նույնն է, բայց նպատակը նույնպիսին չէ»⁸:

Հատկանշական է, որ սպանության երկու տարբերակներն էլ քննարկվում են օրինականության համատեքստում: Այսինքն՝ անառակության մեջ բռնվածին սպանելը չար բան չէ, հետևաբար օրինական է: Ուրեմն 5-րդ դարում Հայաստանում դեռ որոշ քրեական օորժերով թույլատրվում էր ինքնադատաստանը: Բացի այդ, փիլիսոփայի «վճռով հաստատված հանցանք չի օորժել» արտահայտությունը վկայում է բուն քրեական դատավարության և արդարադատության՝ որպես օորժունեության տեսակի, առկայությունը:

Մեկ այլ տեղում Կողբացին օրում է. «Արդ՝ այս բոլոր համոզիչ բացատրություններից հետո էլ համառում ու նույնն են մեջտեղ բերում. «Չարիքները,– ասում են,– ի բնե են և ոչ կամածին»: Պատասխանում ենք, թե որ ի բնե են, ինչու են թափափորներից սահման-

⁷ Տե՛ս *Օրժոյի Օ.Ա.* Նօձ է իժիօձնն... , էջ 194:

⁸ Տե՛ս *Եզնիկ Կողբացի*, Եղծ աղանդոց (Աշխարաբար թարօմ. և ծանօթաօր. Ա.Փ. Աբրահամյանի), Երևանի համալսարանի հրատ., 1994, էջ 33:

Քննարկվող շրջանում արդեն արյան վրեժը չէր թույլատրվում: Կողմերը, որոնց նշելու համար միջնադարյան աղբյուրներն օժտաօրծում են մի քանի եզրույթներ՝ դատախազ, դատաստանավոր, ոսոխ, ամբաստան, պարտավոր էին դիմել դատարան: Մեղադրական դատավարությունը կարող էր սկսվել միայն այն դեպքում, երբ շահագործող կողմը, նույնիսկ ակնհայտ հանցաօրծությունների դեպքում, դիմում էր դատարան՝ մեղադրելով հակառակորդ կողմին: Որպես մեղադրող կողմ կարող էին հանդես գալ նաև տուժածի ազնակիցները:

Դատավարության կողմերը դատարան էին օպիս միասին, կամ մեղադրող կողմը բերում էր մեղադրվողին: Այն դեպքում, երբ տուժած կողմը չէր կարող դա անել, իշխանություններն օժնում էին նրան: Պետությունը օժնում էր տուժած կողմին ոչ միայն մյուս կողմի չներկայանալու դեպքում, այլև այն դեպքում, երբ կողմերից մեկը խուսափում էր արդեն կայացված դատավճի կատարումից:

Մինչև դատական քննությունը դատավորն անհրաժեշտության դեպքում պետք է ծանոթանար օրծին, առանձին լսեր կողմերին, և ապա նշանակեր դատական միտ. «Մի՛ զամբաստանի կամ գդատախազի միայն լուիցե գբան, եւ եթէ լուիցե, ուսցի միայն, այլ մի՛ վճիռ հատցե մինչ ի միասին կատարելապէս քննեսցի»:

Երկուք կամ երիւք վկայիւք զվճիռն հատցե հաւատարմաւք, ըստ Աւրիմացն»¹⁶:

Այդ նախնական օրծողություններից հետո դատավորը նշանակում էր դատական միտի օրը: Նշանակված օրը կողմերը ներկայանում էին դատարան: Կողմերից մեկի բացակայության դեպքում օրծը չէր լսվում: Կողմերը պետք է դատարան ներկայանային անձամբ: Նրանց փոխարինումը ներկայացուցիչներով չէր թույլատրվում: Մխիթար Գոշը կողմերին արելում էր ունենալ «փաստաբաններ». «Մի՛ բնաւ լիցի վարձու ունենալ գճարտասանս ոմանս աստենախասս, որովք զչարն ի օլուխ տանիցեն յաղթութիւն»¹⁷:

Հայկական միջնադարյան իրավունքին հայտնի էին ապացույցների հետևյալ տեսակները՝ խոստովանությունը, վկաների

ցուցմունքները, երդումը, օրավոր փաստաթղթերը, օիտակ անձանց եզրակացությունները՝ դատական փորձաքննություն (խոսքը միայն դատաբժշկական փորձաքննության մասին է)¹⁸:

Դատական քննությունը դոնբաց էր և բանավոր: Դատավորը և կողմերը դատարանում ունեին իրենց որոշակի տեղերը: Ըստ Գրիօր Տաթևացու (1346-1409 թթ.) նկարագրության՝ դատավորները դատի ժամանակ պետք է նստեին բարձր աթոռների, որպեսզի, նախ՝ հայցվորներին վախ ներշնչելով՝ պարզեին ճշմարտությունը, երկրորդ՝ որպեսզի դատավորը չտեսներ նրանց դեմքը (աչքերը) և չվախենար դատելուց: Բացի այդ, Տաթևացու կարծիքով, արարքի համար հատուցումը օպիս է բարձրյալներից՝ թափորից և իշխաններից: Դատավորը, բարձր տեղում նստելով, ցույց էր տալիս իր իշխանությունը: Երկու հայցվորները՝ որպես մեղադրող և մեղադրյալ, հավասար դիրքում պետք է ծնկաչոք սպասեին: Երբ ավարտվում էր արդարացի քննությունը, հայցվորներից մեկը, ով իրավացի էր, կանօնում էր դատավորի աչ կողմում, իսկ մյուսը, որ անիրավ էր՝ ձախ կողմում, ու դատավորը հրապարակում էր դատավճիռը¹⁹:

Դատական քննությունը սկսվում էր կողմերի ելույթներով: Առաջինը խոսում էր մեղադրողը, այնուհետև՝ պատասխանողը, ընդ որում, դատավարությունը պետք է ընթանար պատշաճ կարօուկանոնի, հանօիտ պայմաններում. «Բանակոուութեան ոսոխաց յատենի անդ աստեսցին, զի մի՛ ամբոխ լիցի խոովութեան յատենի անդ եւ պատճառ խափանման դատաստանին: Ուսցին միանօամայն դատախազքն՝ ոչ վիճոյ վասն օպ յատեան, այլ վշտակցաբար զարժանն առնույ վճիռ: Ըստ կարօի խաւսել երկաքանչիւրոցն տայցեն՝ լոութեամբ միոյն, զի ստուօեալ ճշմարտին՝ վճիռն օլաւ բերցի»²⁰:

Կողմերին լսելուց հետո դատարանը լսում էր վկաներին: Մխիթար Գոշի Դատաստանաօիրքը դատարանին հանձնարարում է հատուկ ուշադրություն դարձնել վկաների հարցաքննութեանը:

¹⁶ Տե՛ս *Մխիթար Գոշ*, Գիրք Դատաստանի, ... Ա խմբաօրություն, Նախադրություն, օլուխ Զ, էջ 9:

¹⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 11:

¹⁸ Այդ մասին մանրամասն տե՛ս *Օլժիւնի Օ.Ա. Նօձ է ի ժիժօանն...* էջ 223-254:

¹⁹ Տե՛ս Գիրք քարոզութեան, որ կոչի Ամստան հատոր, արարեալ *Գրիօրի Տաթևացու*, Կոստանդնուպոլիս, 1741, էջ 459-460: Հղումն ըստ *Օլժիւնի Օ.Ա. Նօձ է ի ժիժօանն ձ Աժի ձիժ էժ X-XIII ձձ. Աժաձալ*, 1985, էջ 203:

յանը: Կողմերը կարող էին բացարկ հայտնել վկաներին այն դեպքերում, երբ վկան օժտված էր, այսպես կոչված, բացասական հատկանիշներով: Օրինակ՝ ոչ դրական բարոյական կերպարով: Գործով առկա բոլոր ապացույցները հետազոտելուց հետո դատարանը կայացնում էր դատավճիռ, որը կարող էր հայտարարվել ամմիջապես կամ դատավորների որոշակի խորհրդակցությունից հետո, այն կարող էր կայացվել նաև դատական միտքի օրվանից մի քանի օր հետո. «Երկայնամիտք եւ ներողք լիցին դատողքն: Եվ զի բազում անձամ անյայտ իրքն պատահին, մի՛ կանամտեալ լուծցեն, այլ շտեմարանեալ պահեսցեն եւ պարապով տեսեալ՝ վերստին ասեննի լուծցեն, որքան եւ իցէ առնույ զնոյն»²¹:

Հայկական միջնադարյան դատական իրավունքը սահմանում էր դատարանի առջև կողմերի հավասարության և դատարանի անկողմնակալության սկզբունքը: Գոշն այդ դրույթը շարադրել է հետևյալ կերպ. «Մի՛ լիցի դատատրաց սիրել զանհրաւութիւն, եւ մի՛ լիցի հաւատացելոց սիրել զյաղթութիւն անհրաւաբար առաջին դատատրաց, զի թէ յաղթէ՝ զանձն զրկէ, և թէ յաղթի ի սուտ բանից՝ կրէ ամոթ ի մարդկանէ, իսկ առ Աստուած՝ պարզ երեսօք»²²:

Մխիթար Գոշն իր Դատաստանափրքի նախադրության Ե օլիսում արտահայտում է հետևյալ միտքը. «Իսկ եթէ որոց՝ յառաջ քան զայս ցուցաւ ի ճառի՝ մարդկան լինել դատաստան ըստ ազօրի: Բայց այժմ ասելի է, եթէ որոց՝ մարդկան: Յայտնապէս բարեաց ոչ է դատաստան մարդկան եւ ոչ երեւելի չարեաց արանց, այլ յերկուց անյայտ եղելոց: Չի երեք են, որով վարին մարդիկ՝ բարի, եւ չար, եւ միջակ: Եւ ընտրելի է դատատրաց ոչ զյայտնապէս օրոյս եւ ոչ զայր, վկայեալ ի բարի օրոյս, այլ առ որս կարծեալք է չարն»²³: Գոշի Դատաստանափրքում ամրափակված այս դրույթը Հ. Կարստին և Խ. Թորոսյանին հիմք է տալիս ենթադրելու, որ Մխիթար Գոշը, բացի արդարադատության իրականացման

հատուկ ձևից, նախատեսում է դրա այլ ձևեր ևս, այսինքն՝ Մխիթար Գոշի Դատաստանափրքում առկա է դատավարության ձևերի տարբերակում²⁴: Ըստ Խ. Թորոսյանի՝ Մխիթար Գոշը «բոլոր մարդկանց բոլոր տեսակ օրոճերը բաժանում է երեք խմբի՝ բարի, չար և միջակ, ընդ որում դատարանին ենթակա չի համարում բարի և չար օրոճերը, այլ միայն միջակները... Որ բարի մարդիկ ենթակա չեն դատի՝ իրավաբանական իմաստով ինքնին հասկանալի է, որ օրոճերով «առ որս կարծեալք է չարն» պետք է դատ, պարզ է նույնպես: Անհասկանալի ու տարօրինակ կարող է թվալ Մխիթարի միտքը, թե չար օրոճերին, նույնիսկ հայտնապէս չար, դատաստան պետք չէ: Արտաքուստ կարող է եզրակացություն արվել, թե Մխիթարը անպատժելի է հայտարարում քրեական ծանր հանցաօրոճությունները՝ օրոճություն, ավազակություն և այլն, նույնիսկ այն դեպքում, երբ ստույգապէս հայտնի է հանցաօրոճը: Բայց այդպիսի եզրակացությանը հակասում է Մխիթարի կողմից դատաստանափրքը օրելու բուն փաստն արդեն, նրանում այդ հանցաօրոճությունների համար սահմանված պատիժները և այլն: Մխիթարի խոսքերից հետևում է միայն, որ «յայտնի չարք», օրինակ՝ հանցանքի պահին բռնված հանցաօրոճը, անշուշտ, պետք է պատժվի, բայց կարելի է և առանց դատաքննության»²⁵:

²⁰ Տե՛ս *Մխիթար Գոշ*, Գիրք Դատաստանի..., Ա խմբափրություն, Նախադրություն, օլուխ 9, էջ 10:

²¹ Տե՛ս *Մխիթար Գոշ*, Գիրք Դատաստանի... Ա խմբափրություն, Նախադրություն, օլուխ 9, էջ 10:

²² Տե՛ս *Մխիթար Գոշ*, Գիրք Դատաստանի... Գ խմբափրություն, օլուխ 9, էջ 293:

²³ Տե՛ս *Մխիթար Գոշ*, Գիրք Դատաստանի... Ա խմբափրություն, Նախադրություն, օլուխ 6, էջ 8:

²⁴ Տե՛ս *Josef Karst*. Armenisches Rechtsbuch Sempatischer Kodex aus dem 13. Jahrhundert, zweiter Band: Kommentar, Strassburg, 1905, էջ 372-373:

²⁵ Տե՛ս *Մխիթար Գոշ*, Գիրք Դատաստանի..., Ծանոթափրություններ, էջ 536:

ԳԼՈՒԽ 2.

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ԵՎ ՖԵՆՈԴԱԼԱԿԱՆ (ԱՎԱՏԱՏԻՐԱԿԱՆ) ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՃԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ (XIV-XIX ԴԴ.)

§ 1. Հայաստանի քաղաքական դրությունը և քրեական դատավարությունը XIV-XVIII դդ.

Հայկական միջնադարյան իրավունքը, այդ թվում և քրեադատավարական իրավունքը, որը բուռն զարգացում ապրեց IX-XIII դդ., քայքայիչ հարվածի ենթարկվեց մոնղոլների արշավանքների (XIII դ.), իսկ այնուհետև Հայկական լեռնաշխարհում պարսկական ու թուրքական լքերի շխանության հաստատման հետևանքով: Հայկական պետականությունը անհետացավ պատմական թատերաբեմից: Չնայած մնում էին հայկական քաղաքները, մասամբ մասնավատարական տները, սակայն լինելով մասնատված, ապակենտրոնացված՝ նրանք «չէին ներկայացնում այն պետական կազմը, այն ազգային քաղաքական կոմպակտ մարմինը, որտեղ կկարողանար տեղական օրենսդրություն ձևավորել և հայ իրավունքն իր հետագա զարգացումն ունենար... Հայաստանն այլևս չէր ներկայացնում քաղաքական մեծություն և կազմում էր թուրք պետությունների սուկ մի տարածքային մասը: Այստեղ այլևս խոսք չի կարող լինել հայ իրավունքի մասին իբրև իրավական մի սիստեմի: Այն արդեն կորցրել էր իր քաղաքական և սոցիալ-տնտեսական նշանակությունը: Հայ իրավունքը դարձել էր միայն անցյալի պատմական մի երևույթ, լքերի փուլարձանի արժեք ունեցող մնացորդ, բացառությամբ հայ սովորույթական իրավունքի, որի նորմերը, մանավանդ ընտանեկան ու ժառանգական հարաբերությունների բնավատում, համառ պահպանողականությամբ տիրում էին

բնատնտեսության պայմաններում դեպքերով հայ համայնքներում»²⁶:

Պետականության կորստով Հայաստանում հանրային բնույթ ունեցող հասարակական հարաբերությունների ոլորտում աստիճանաբար սկսում են կիրառվել մասնաշաղկապի նորմերը: Հայկական սովորույթային իրավունքը և հայ իրավունքի այլ աղբյուրներն իրենց լքերի շխանությանը շարունակում են հայկական համայնքների սահմաններում և միայն ընտանեկան, ժառանգական և մի շարք այլ հարաբերությունների ոլորտում: Սակայն այստեղից եզրակացնել հայ իրավունքի անհետացման մասին, ճիշտ չէր լինի: Այս պայմաններում միայն կարելի է փաստել ընդհանրապես հայ իրավունքի և մասնավորապես դատավարական իրավունքի զարգացման կասեցման մասին: Հայկական իրավունքը շարունակում էր կատարել հասարակական հարաբերությունների կարգավորման իր դերը՝ ավատատիրական հասարակության իրավական համակարգի յուրահատկությունների շնորհիվ: Խոսքը ավատատիրական իրավունքի այնպիսի առաձեռնահատկության մասին է, ինչպիսին է պարտիկուլյարիզմը, որն էլ իր հերթին պայմանավորում էր իրավունքի աղբյուրների բազմազանությունը և իրավակիրառ լքերի մեծության ընթացքում իրավունքի աղբյուրի ընտրության հարաբերական ազատությունը: Ավատատիրական հասարակության իրավական համակարգի այդ յուրահատկությունը նպաստում էր հայկական սովորույթային իրավունքի, միջնադարյան դատաստանալքերի, կանոնական իրավունքի, հետևաբար և՛ հայկական դատարանների ու դատավարության պահպանմանը և լքերի շխանությանը:

Մյուս լքերում, որը որոշակիորեն նպաստեց հայկական դատարանների ու դատավարության պահպանմանը, իսլամի՝ որպես կրոնի, առանձնահատկությունն էր և այստեղից բխող մուսուլմանական իրավունքի հիմնական աղբյուրի՝ շարիաթի յուրահատկությունը: Այն է՝ շարիաթը օրենք է միայն մուսուլմանների համար: Իսլամը աշխարհը բաժանում է երկու մասերի՝ դար ալ-իսլամ (իսլամի աշխարհ, հավատի աշխարհ), և դար ալ-իսլամ (ոչ մուսուլմանական աշխարհ, «անհավատների» աշխարհ): Ըստ մուսուլմանական իրավունքի՝ անձի իրավական կարգավիճակը վճռում է նրա կրոնական դավանանքը: Լիիրավ անձնական կարգավիճակ

²⁶ Տե՛ս *Մամուլյան Խ.*, Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Երևան, 1939, էջ 153-154:

ունի միայն մուսուլմանը, որի «հիմնական պարտականությունները րից մեկը համարվում է սուրբ պատերազմը՝ շիհադը, պատերազմը հանուն հավատի: «Անհավատների» աշխարհը պետք է նվաճվի: Նվաճումը նվաճվածների համար ստեղծում է հետևյալ իրավական կարգավիճակները. նվաճվածների մի մասը կամավոր ընդունում է իսլամը և դառնում է մուսուլմանական համայնք-պետության լիիրավ անդամ, կամ նվաճվածները մնում են իրենց հավատին հավատարիմ և շարունակում են դիմադրությունը: Վերջիններս ենթակա են անխնա ոչնչացման: Վերջապես, երրորդ կարգավիճակը՝ նվաճվածները մնում են հավատարիմ իրենց կրոնին, սակայն ճանաչում են մուսուլմանական համայնք-պետության իշխանությունը»²⁷: Այս «անհավատները» մուսուլմանական պետություններում կազմում էին հպատակների հատուկ խումբ՝ զիմմիներ (ար. ախլ ազ-զիմմա – մուսուլմանական պետության պաշտպանության տակ լռելի մարդիկ): Մահմեդական իրավունքի այս դոգմայի զործողության շնորհիվ զիմմիների համայնքներն օտարներին իրավական ինքնավարությունից՝ իրենց օրենքների և իրավական սովորույթների հիման վրա իրենց հարաբերությունները կարգավորելու իրավունքից, քանի որ շարիաթը իրավունք էր միայն մահմեդականների համար: Այն փաստը, որ զիմմիները, այդ թվում և հայերը, մուսուլմանական լռելի իշխանության դարաշրջանում օտարներին իրավական ինքնավարությունից, հաստատվում է նաև հայկական վավերաթղթերի և արձանների վկայություններով: Այսպես, Խ. Թորոսյանը նշում է հայ եկեղեցու լռելի, Տարսի արքեպիսկոպոս Ներսես Լամբրոնացու հետաքրքրաշարժ վկայությունը. «Գրիզորի պատրիարքության տարիներին, որը երրորդն էր իր անվանակիցների մեջ (նկատի ունի՝ պատրիարքների մեջ – Գ.Ղ.), Հռամկլայում, 1193 թվականին, նրա պատրիարքության տասնութերորդ տարում, քաղաքների և վավառների բնակիչները սրբության առջև հարուցեցին հարց քաղաքացիական օրենքների մասին: Քանի որ մահմեդականներից նրանք, ովքեր իշխաններ էին քաղաքներում և դատավորներ, հայերի դատական լռելիքը չէին լուծում, իսկ նրանցից դատաստան խնդրողներին ուղարկում էին դատվելու իրենց օրենքներով: Քանզի այդպիսին էր նրանց լռելիքների հրամանը տրված քաղաքների դատավորներին՝ նրանց (հայերի)

²⁷ Տե՛ս *Օրժոնյի Օ.Ա.* Նո՛սն է՛ իժի՛ ժո՛նն... և էջ 108:

դատը թողնել իրենց դատելու, իրենց իսկ օրենքներով»²⁸: Այսպիսի իրադրությունը հանգեցրեց նրան, որ, օրինակ, Թուրքիայում XV դ. սուլթան Մեհմեդ II-ի օրոք սահմանվեց կրոնական համայնքների համակարգ, որը, նախ՝ համապատասխանում էր մուսուլմանական իրավունքի տեսությանը և երկրորդ՝ սուլթանների կողմից օտարներին էր որպես ոչ մահմեդական բնակչությանը հնազանդության մեջ պահելու օժանդակ միջոց:

Թուրքական իշխանությունների համար կրոնական համայնքները ստեղծում էին հարկային հարմարություններ, քանի որ հենց դրանց միջոցով էին անձվում տարբեր հարկեր և տուրքեր: Այդ համայնքները, վերջապես, թուրքական պետությանն ազատում էին ոչ մահմեդական բնակչության հանդեպ մի շարք լռելիքներ կատարելուց: XV դարի 2-րդ կեսին թուրքական իշխանությունները ճանաչեցին երեք կրոնական համայնքներ՝ հուճաուղղափառ, հայ-թուրքական, հրեական: Այդ համայնքների ղեկավարությունն իրենց հավատակիցների վրա ուներ ոչ միայն հողերի իշխանություն, այլև որոշակի քաղաքացիական իշխանություն²⁹: Հուճաուղղափառ համայնքի կազմավորումից հետո ստեղծվեց հայ-թուրքական համայնքը (Էրմենի միլետի): 1461 թ. Մեհմեդ II-ի հրամանով Բուրսայից մալաթալաք բերման ենթարկվեց Հովակիմ եպիսկոպոսը (նրա հետ միասին մալաթալաք տեղափոխվեցին բազմաթիվ հայ ընտանիքներ), ում և սուլթանը դարձրեց պատրիարք³⁰:

Այսպիսով, Հայաստանում դատարանը և դատավարությունը մահմեդական լռելի իշխանության դարաշրջանում մուսուլմանական իրավունքի դոգմաների յուրահատկության պատճառով մնացին այնպիսին, ինչպիսին դրանք կային X-XIII դդ.՝ կրելով որոշ փոփոխություններ: «Դրանցից լռելիքներն այն է, որ թալարական դատարանի տեղը զբաղեցնում էր խալիֆի կամ սուլթանի կամ Հայաստանի բարձրագույն մահմեդական կառավարիչի դատարանը: Սակայն թալարական դատարանին ընդդատյա ոչ բոլոր լռելիքներն անցան նվաճողների իրավասությանը: Նրանց հետաքրքրում էին միայն քաղաքական բնույթի լռելիքներ՝ նվաճողներին դավաճանելը, անհնազանդությունը, ապստամբությունը և նման այլ արարքներ: Բայց վեճերը, որոնցով կողմեր էին համարվում հայը և մահմեդականը, և քրեական լռելիքը, որոնցով հայը

²⁸ Տե՛ս *Օրժոնյի Օ.Ա.* Նո՛սն է՛ իժի՛ ժո՛նն... և էջ 110:

²⁹ Տե՛ս *Ի իճե՛սն Ա.Ա.* Էն՛ո՛ր ժե՛յ Օճճճճ. Օ.1, Է., 1963, էջ 72:

մեղադրյալ էր, իսկ մահմեդականը՝ տուժող, ընդդատյա էին մուսուլմանական դատարաններին: Գոյատևած հայկական իշխանները, ովքեր ճանաչվել էին նվաճողների կողմից, պահպանում էին իրենց դատական իշխանությունը»³¹:

Հետևաբար, հայկական դատարանների՝ եկեղեցական (կաթողիկոսի, եպիսկոպոսի, վարդապետի, հոփոկոսկանի), դատական իշխանությունը պահպանած ավատատեր-գիմմիների (տերունական), հայկական լուսավորական և քաղաքային համայնական, ցեխերի և եղբայրությունների ընդդատյա ենթակա քրեական զործերով կիրառվում էր հայկական դատավարական իրավունքը:

Մուսուլմանական դատարանների ընդդատյա ենթակա քրեական զործերով կիրառվում էին շարիաթի նորմերը, որոնք թույլատրում էին բացահայտ կրոնական խտրականություն և կամայականություն: Այսպես, Պարսկաստանին անցած Արևելյան Հայաստանում XVII դ. սկզբին կազմակերպվեցին խանություններ՝ վարչատարածքային միավորներ խանի լիազորությամբ: «Խանություններում զործեր ամբողջ դատական լիազորությունները կենտրոնացված էին մահմեդական հոփոկոսկանության ձեռքում: Գլխավոր դատավորը կադին էր, որի նստավայրը քաղաքն էր, իսկ լուսավորում դատավարությունն իրականացնում էին մուլլաները: Ղուրանի սկզբունքները և շարիաթի օրենքները հնարավոր էին համարում դատավարության ընթացքում կրոնական խտրականության կիրառումը»³²:

Սկսած XVI դ.՝ Թուրքիային անցած Արևմտյան Հայաստանում կազմակերպվեցին փաշայությունները՝ վարչատարածքային միավորները՝ սուլթանի կողմից նշանակված փաշայի լիազորությամբ: Այստեղ «դատական զործը տնօրինում էր իսլամ հոփոկոսկանությունը, իսկ դատական մարմինների զործունեության հիմքում դրված էին շարիաթի օրենքները: Փաշայություններում Ղուրանի սկզբունքների հիման վրա զործող դատավորները խախտում էին այլահավատ բնակչության իրավունքները, կիրառում էին կրոնական խտրականություն, անտեսում էին արդարա-

³⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 73:

³¹ Տե՛ս *Օրծնդի Օ.Ա. Նոճ է իժի ծանն...*, էջ 110:

³² Տե՛ս *Պողոսյան Մ.*, Հայաստանը XIII-XVII դդ., Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1960, պրակ 5, էջ 104:

դատության սկզբունքները, իսկ դրանից չափից շատ տուժում էին հայերը: Փաշայություններում լիազոր դատավորը կադին էր, որի հսկողության տակ զործում էին ստորադաս դատարանները: Չնայած դատական համակարգի զործությանը՝ փաշայի և այլ պաշտոնատար անձանց կամայականությունը բնակչության ստորին շերտերի և, հատկապես, նվաճված ժողովուրդների նկատմամբ չունեի ոչ մի սահման: Նրանք կարող էին բռնաօրավել բնակչության զուրքը, մարդուն ենթարկել կոտանքների, սպանել և մնալ անպատիժ»³³:

Վերն արված մեջբերումները հայկական պատմափոփոխության չափազանցությունները չեն, այլ միջնադարյան մուսուլմանական պետությունների իրական իրավական կեցության արձանագրումներ: Այդպիսի իրադրությանը նպաստում էին նաև մուսուլմանական իրավունքով սահմանված դատավարական կանոնները³⁴:

Այսպիսով, XIV-XIX դդ.՝ Հայաստանում մուսուլմանական զործի իշխանության շրջանում, հայկական իրավունքը, դատարանը և դատավարությունը չանհետացան պատմական թատերաբեմից: Հայկական դատարանները մասամբ պահպանվում էին, և նրանցում կիրառվում էին ազգային դատավարական նորմերը: Բայց պետականության կորստի պատճառով հայկական իրավունքի և դատավարության հետագա զարգացումը կասեցվեց³⁵:

³³ Տե՛ս նույն տեղը, էջ 108:

³⁴ Տե՛ս *Èñòï ðèÿ àï òóááðñòáá è ì ðááá çáðóááæì ùò òòðàì, Ì ., 1996, մաս 1, էջ 429-430:*

³⁵ Հայրենիքում չունենալով ամուր քաղաքական հիմքեր իր զարգացման համար, հայ իրավունքը լուրահատուկ զարգացում ապրեց Հայաստանից դուրս, օտարերկրյա պետությունների տարածքներում զուտ հայկական զարգացումներում: Այսպես, Լեհաստանի հայ համայնքը երկար և համառ պայքարի շնորհիվ հասավ ներքին ինքնավարության: Լեհական իշխանությունները համայնքին առաջարկեցին հաստատման ներկայացնել իրենց ազգային օրենքները: Հայերը Մ. Գոշի Դատաստանափոփոխ համապատասխան կրճատումներով ու փոփոխություններով թարգմանեցին լատիներեն (այնուհետև՝ լեհերեն): Լեհական սելմը քննարկեց և հավանության արժանացրեց Դատաստանափոփոխ, իսկ Սիփիզմունդ Մեծ թագավորը 1519 թ. հաստատեց այն: Մ. Գոշի Դատաստանափոփոխ լատիներեն (լեհական) խմբագրությունը կիրառվում էր Լվովի հայկական համայնքի դատարաններում, համայնքի հետագա զործության շրջանում, մինչև XVIII դ.:

1765 թ. Եկատերինա II-ի հրովարտակով Աստրախան քաղաքի հայկական համայնքին թույլատրվեց ստեղծել «Աստրախանի հատուկ հայկական դատարանը», որը զործություն ունեցավ մինչև 1841 թ.: Դեռ 1746 թ. Աստրախանի հայերը և այլ օտարերկրացիներ իրավունք էին

Հենց այդ պատճառով էլ Հայաստանի պետության և իրավունքի պատմությունը լիարժեքությամբ հայ իրավունքի զարգացման այս դարաշրջանը բնութագրում է որպես «լճացում»:

XIV-XIX դդ. ուժեղացավ հայ եկեղեցական դատարանների նշանակությունը, ինչը պայմանավորված էր մուսուլմանական պետությունների պետավարչական կառուցակարգում կրոնական համայնքների հիմնադրմամբ: Դատարանի և դատավարության զարգացման այս փուլը Արևելյան Հայաստանում շարունակվեց մինչև Ռուսական Կայսրությանը միանալը, իսկ Արևմտյան Հայաստանում՝ մինչև այսպես կոչված 1860 թ. սահմանադրությունը:

§ 2. Ուշ միջնադարյան պետաիրավական միտքը քրեական դատավարության մասին (XVIII դ.)

XVIII դ. երկրորդ կեսին Հայաստանը լիարժեք էր երկու համարտող միեմանությունների՝ Պարսկաստանի և Թուրքիայի տիրապետության տակ: Անտանելի սոցիալական քաղաքականությունը՝ բարձրացված օրենքի աստիճան, չքողարկված կրոնական խտրականությունը հայ ժողովրդի բոլոր խավերին հասցրել էին արտակարգ ծանր վիճակի: Նման պայմաններում պարբերաբար ծագում էին հայ ժողովրդի ազատագրման տարբեր ծրագրեր: Այդ հիմնահարցի լուծմանն էր ուղղված նաև ուշ միջնադարի հայ քաղաքական-իրավական միտքը, մասնավորապես Ծ. Ծահամիրյանի «Որոշայթ փառացը» (XVIII դ.): Այդ տրակտատը՝ որպես հայ բուրժուական-իրավական մտքի ակնազարդ հուշարձան, հայաօրոջ մեջ դիտարկվում է որպես Հայաստանի ազատագրության ծրագիր՝ հայ-ռուս-վրացական ռազմաքաղաքական եռյակ միություն ստեղծելու միջոցով:

Ծ. Ծահամիրյանի «Որոշայթ փառացը» որպես հայ ազատագրական-ազատագրական շարժման կազմակերպման իրավական կա-

ռուցակարգի նախագիծ,³⁶ ունի նաև 521 հոդով. բաղկացած օրենսդրական բաժին՝ ազատագրված Հայաստանի համար առաջարկող օրենքների նախագծերի տեսքով: Տրակտատի այդ բաժնում նախատեսված են նաև դատական իրավունքի նորմեր, որոնց մի մասը նվիրված է քրեադատավարական իրավունքին և դատարանակազմությանը:

Ծահամիրյանի տրակտատի այդ բաժինն ուսումնասիրելիս նկատվում է անլիակալ դատական օրենսդրության բացահայտ ազդեցությունը: Ծահամիրյանն առաջարկում է դատական զործառույթները դնել ընտրովի դատական մարմինների վրա: Բարձրագույն դատական ատյան պետք է դառնար դատական պալատը, որն ընտրվելու էր հայկական պառլամենտի՝ Հայոց տան կողմից երեք տարի ժամկետով (հ. 21)³⁷, իսկ տեղերում այդ զործառույթները պետք է իրականացնեին քաղաքային դատարանները, որոնց նախագահները ևս ընտրվելու էին պառլամենտում:

Մինչև «Որոշայթ փառացի» հոդվածների մանրագրին վերլուծությանն անցնելը, նշենք, որ դրանք, լինելով սահմանադրության նախագծի հոդվածներ՝ ունեն ընդհանրական բնույթ, չեն նախատեսում ազատագրված Հայաստանի քրեական դատավարության մանրամասները:

Տրակտատի 506 հ. սահմանում է, որ քրեական զործերով դատավարության իրականացման համար, բացի ընտրովի քաղաքային դատավորներից, քաղաքացիներից ընտրվում են նաև 94 բարեօրոճ և համբավավոր անձինք: Նրանցից 70-ը, ովքեր կոչվում են «որոնողք», պետք է պարզեն հանցանքի կատարման մեջ կասկածվող անձի մեղքը և լուծեն նրան դատի տալու հարցը: Մնացած 24 երդվյալ ատենակալները կոչվում են դատողք և պետք է դատական քննության ընթացքում որոշեն ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության հարցը դատավճիռ կայացնելու միջոցով: 70 «որոնողք» դատավորներից կազմված դատական կազմի զործառույթը, ըստ Ծահամիրյանի, մեղադրյա-

ստացել դատվել իրենց օրենքներով և սովորույթներով: Այդ պահանջ-մունքի բավարարման համար էլ ստեղծվեց Աստրախանի հայերի Դատաստանափոքը, կազմված 1135 հոդվածներից, որոնցից շատերը նվիրված էին դատարանակազմությանը և դատավարությանը: Այդ դատաստանափոքը, որպես իրավունքի աղբյուր, օտարազորվել է նաև հարավային Ռուսաստանի այլ հայկական քաղաքայիններում:

³⁶ Տե՛ս *Օձ-ձձյի Ա.Ն.* “Çai’ââî ý -âñîî èþáèý” è “Í òâââè” Ø. Øââî èðýíà èâè í àî ýòí èèè àðí ýí ñèí àî ì ðâââ ýí ì ðè ì ðí ñââ ù á í è ý. Àâî ð á Õ. àèññ. ... èâí à. þð. í àðè. Øâèèèèè, 1990, էջ 3:

³⁷ Տրակտատի հոդվածների կարգաչափն համարները և դրանց բովանդակությունը վերցված են *Մ.Մ. Թելունցի* «Հայ ազատագրական-ազատագրական շարժման կազմակերպման իրավական կա-

լին դատի տալն էր, իսկ 24 «դատողք» դատավորներից կազմված կոլեկիան Օործը քննում էր ըստ էության: Փոքր կոլեկիայի 24 անդամներից 12-ին ընտրում էր ինքը՝ ամբաստանյալը, ընդ որում նա իրավունք ուներ ատենակալներ ընտրելու իր ազօրի ներկայացուցիչներից: Քրեական Օործերով դատական քննությունը պետք է անցկացվեր նստաշրջանային կարգով, տարին 4 անգամ՝ Օարնանը, ամռանը, աշնանը և ձմռանը (հ. 222): Քրեական Օործով մինչդատական վարույթում պետք է մասնակցեին երկու մարմիններ՝ քաղաքային դատարանից մեկ ամիս ժամկետով ընտրված դատավորը և 70 «որոնողք»՝ մեծ կոլեկիան (հ. 354): Այդ դատավորը համարվում էր հերթապահ և պաշտոնական ընթացք էր տալիս ստացված հաղորդումներին ու ՕանՕատների: Այդ դատավորի պարտականությունների մեջ էր մտնում ՕանՕատվածին օձնություն ցույց տալը, կասկածյալին (մեղադրյալին) կալանավորելը, դատական նիստին նրա մասնակցությունն ապահովելը: Այսպիսով, հերթապահ դատավորը փաստորեն քրեական հետապնդման սուբյեկտ էր, և նրան կարելի է համեմատել ժամանակակից քննիչ դատավորի հետ: Այդ մասին է վկայում տրակտատի 503 հ., համաձայն որի՝ հանցաօործության կապակցությամբ հաղորդումները և ՕանՕատները հանձնվում են հերթապահ դատավորին, որը հրավիրում է կասկածյալին և հայտարարում նրան ստացված հաղորդման կամ ՕանՕատի մասին: Այնուհետև սպանություն կատարած անձն անհապաղ կալանավորվում է, իսկ մնացած հանցաօործությունների վերաբերյալ Օործերով կասկածյալը կարող է և չկալանավորվել, եթե կան նրա համար երաշխավորող անձինք: Վերջիններիս բացակայության դեպքում կասկածյալը կալանավորվում էր:

185 հոդվ.՝ որպես մինչդատական վարույթի ընդհանուր պայման, սահմանում է բնակարանի անձեռնմխելիության սկզբունքը:

Այն, որ հերթապահ դատավորը կատարում էր ժամանակակից դատական քննիչի պարտականությունները, վկայում է մինչդատական վարույթի մեկ այլ պայման ևս, ըստ որի եթե որևէ մեկը մահացել է, ապա դիակը պետք է մնար մինչև դատավորի և բժշկի՝ դեպքի վայր ժամանելը: Վերջիններս քննության միջոցով պարզելու էին մահվան պատճառները և միայն դրանից հետո

կան շարժումը XVIII դ. երկրորդ կեսին և իրավաքաղաքական միտքը» (Երևան, 1995) աշխատության թիվ 3 հավելվածից:

թույլտվություն էին տալիս թաղելու սպանվածին (հ. 273): Տրակտատի ընդհանուր ձևակերպումները մեզ հնարավորություն չեն տալիս լրիվ պարզել հերթապահ դատավորի Օործառույթները:

Դատական քննության ընդհանուր պատկերն ըստ «Որոձայթ փառացի» հետևյալն էր. դատական նիստերի դահլիճում պետք է ներկա լինեին քաղաքի դատավորը՝ որպես նախաձահող, 94 դատավորները (70 «որոնողք» և 24 «դատողք»), ովքեր կրոնական երդում էին տալիս, որ ամբաստանյալի նկատմամբ կլինեն անաչառ և անկողմնակալ: Այնուհետև 70 «որոնողքից» կազմված դատական կոլեկիան և դատարանի երկու աշխատակիցները պետք է անցնեին Օործի հանձնարարների ուսումնասիրությանը, լսեին դատապարտյալին և առանձնանային՝ ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության հարցը լուծելու համար: Մեծ կոլեկիան առանձին պետք է քվեարկության միջոցով հստակ պատասխաներ այդ հարցին: Եթե կոլեկիան Օտնում էր, որ ամբաստանյալը անմեղ է, ապա նրան անմիջապես պետք է ազատեին կալանքից, իսկ հակառակ դեպքում Օործը փոխանցվում էր փոքր կոլեկիային, և դրանով իսկ սկսվում էր դատական քննությունը: Դատական քննության այս մասում սկզբում լսվում էր ՕանՕատը, ուսումնասիրվում էին ապացույցները, որից հետո Օումարվում էր Օադոնի խորհրդակցությունը, որտեղ փոքր կոլեկիան կայացնում էր կա՛մ արդարացնող կա՛մ մեղադրող դատավճիո: Մահվան դատապարտված յուրաքանչյուր անձ իրավունք ուներ երեք ամսվա ընթացքում ՕանՕատարկել դատավճիոր դատական պալատում (բարձրաՕույն դատարանում), իսկ այնուհետև նախարարին (Օործադիր իշխանության ղեկավարին) և երրորդ անգամ՝ խորհրդարանին՝ Հայոց տանը: Եթե այս ընթացակարգերն անցնելուց հետո դատավճիոր մնում էր անփոփոխ, ապա այն ի կատար էր ածվում (հհ. 223, 224):

Ըստ «Որոձայթ փառացի»՝ դատավարության հիմնարար սկզբունքներն էին՝ անմեղության կանխավարկածը, երդվյալ ատենակալների դատարանը, կողմերի մրցակցությունը, պաշտպանության և պետական մեղադրանքի ինստիտուտները, ինչպես նաև դատարանի և դատավարության կազմակերպման ժողովրդավարական բնույթ ունեցող մի շարք այլ սկզբունքներ: Իրենց ժամանակների համար առաջադիմական համարվող այս դրույթների կողքին «Որոձայթ փառացում» ամրաօրված էին նաև այն-

Ժամանակավոր կառավարության կողմից, ինչպես օրինակ, Էրիվանի օկրու՝ային դատարանին կից վարչական և ցուցակա՝րական բաժինների հիմնադրումը: Ինչպես կենտրոնական Ռուսաստանում, այնպես էլ Հայաստանում ստեղծվեցին ռազմահեղափոխական տրիբունալներ:

Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանին, ապա այն, չնայած արևմտյան աշխարհի առաջադիմական լոբբինգներին, շարունակում էր իր լոյությունը որպես հետամնաց պրովինցիա (ծայրամաս)՝ Թուրքիայի իշխանության ներքո: Արտասահմանյան հայ լալթօջախների Հայաստանի վերաբերյալ առաջադիմական լադափարները և ծրա՝րերը, այդ թվում նաև «Որո՝այթ փառացը», չունենալով հայրենիքում կենսա՝ործվելու նախադրյալներ, վերածվում էին պատմության լիրկն անցած հուշարձանների: 1863 թ. թուրքական կառավարությունը օտարերկրյա պետությունների և Թուրքիայի հայ համայնքի ճնշման տակ հաստատեց Հայ ազ՝ային ժողովի կողմից 1960 թ. մայիսի 24-ին ընդունված, «Հայոց ազ՝ային սահմանադրությունը», որը, չնայած իր անվանմանը, իհարկե, ոչ թե սահմանադրություն էր, այլ հայկական համայնքի ներքին ինքնավարության կանոնադրություն: Համաձայն այդ «սահմանադրության» 56 հոդվ.՝ ստեղծվում էր նաև ազ՝ային դատական խորհուրդ, որի կազմի մեջ մտնում էին 10 անդամներ՝ 5 հո՝կորական և 5 աշխարհիկ: Դատական խորհրդի լորձառույթն էր «ազ՝ային դատական լորձերի ընդհանուր տեսչությունը»: Այդ մարմնի լոյությունը փաստորեն շարունակում էր XV դ. հայ քրիստոնեական համայնքի իրավական ինքնավարությունը: Խորհրդի պարտականությունների մեջ մտնում էր հաշտարար միջնորդությունը վիճող կողմերի միջև՝ արդար համաձայնության հասնելու համար: Դատավճիռներ (վճիռներ) կայացնելիս դատական խորհուրդը դրանց հիմքում պետք է դներ «նախնիների ավանդական օրենքները» կրոնական լորձերով, կայսրության դատավարական կանոնները՝ աշխարհիկ լորձերով: Դատական խորհրդի կողմից դատապարտված անձը կարող էր դատավճիռը լան՝ատարկել կրոնական կամ քաղաքական խորհրդին կամ, ելնելով լորձի հան՝ամանքներից, պահանջել խառը ժողով (հ. 59):

«Հայոց ազ՝ային սահմանադրությունը» լորձեց մինչև 1896 թ. Աբդուլ Համիդի կազմակերպած ջարդերը: Նրա լորձո-

ղությունը վերական՝նվեց 1908 թ.՝ երիտթուրքերի հեղաշրջումից հետո: 1915 թ. հայոց եղեռնի օրերին «Ազ՝ային սահմանադրությունը» վերջնականապես ար՝ելվեց, Ազ՝ային ժողովը ցրվեց, իսկ նրա պատ՝ամավորների մեծ մասը սպանվեց կամ աքսորվեց:

ԳԼՈՒԽ 3.

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1918-1920 թթ.)

§ 1. Հայաստանի առաջին Հանրապետության դատական համակարգի կազմակերպարավական հիմունքները

1918թ. մայիսի 30-ին Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդն իրեն հռչակեց «հայկական օրավանդների միակ օրենսդրություն»։ Սկսվեց անկախ ազգային պետականության շինարարությունը։ Հայաստանի առաջին Հանրապետության հռչակումը նշանավորեց նոր շրջան Հայաստանի քրեադատավարական իրավունքի զարգացման մեջ։

Առաջին հանրապետության օրենսդիր և օրոժադիր մարմինների կազմավորումից հետո նրանց առջև դրված լիարժեք խնդիրներից մեկն էլ հանրապետության դատական համակարգի կառուցման և օրոժուհեության հիմունքների մշակումն էր, դատարանակազմական, քրեական ու քաղաքացիական դատավարական հարաբերությունները կարգավորող համապատասխան օրենքների մշակումն ու ընդունումը։

Առաջին հանրապետության պետական կառուցակարգում դատական մարմինները պետք է զբաղեցնեին կարևոր տեղ, որը պայմանավորված էր նրանց առջև դրված արդարադատության խնդիրներով։ Այդ խնդիրների ուժով դատարանը և դատավարությունը առաջին հանրապետությունում ձեռք էին բերում մասնավորապես նշանակություն՝ արդարադատության խնդիրների լուծմամբ նպաստել նորահռչակ պետականության կայացմանը⁴⁶։

1918 թ. օգոստոսի 3-ին Հայաստանի խորհրդի երկրորդ նիստում հրապարակվեց կառավարության հայտարարությունը (դեկ-

⁴⁶ Տե՛ս *Վաղարշյան Ա. Գ.*, Հայաստանի առաջին Հանրապետության դատական համակարգի հիմունքների մշակումը և դրանց օրենդրական կենսաօրոժումը, — Իրավունք և օրինականություն, Երևան, 1996, թիվ 2(10), էջ 26:

լարացիան)⁴⁷, ըստ որի արդարադատության ոլորտում կառավարությունն իր առջև դրել էր հետևյալ խնդիրները. «Հարմարեցնել դատարանը երկրի քաղաքացիական իրավահասկացության և իրավական սովորույթներին, միաժամանակ քրեական դատավարությանը մասնակից դարձնել ժողովրդի ներկայացուցիչներին»⁴⁸։ Ինչպես տեսնում ենք, հայտարարությունից այդ դրույթները շատ ընդհանուր էին։ Կառավարությունը չէր նախատեսել, թե ինչ միջոցներով ու եղանակներով պետք է օրինականություն և իրավակարգ հաստատվի Հայաստանի Հանրապետությունում, թե ինչպիսի դատական համակարգ և իրավապահական մարմիններ պետք է հիմնադրվեն, որպեսզի լուծվեն այդ խնդիրները⁴⁹։ Այս հիմնախնդիրների լուծման նպատակով արդարադատության նախարարի նախաձեռնությամբ օրոժարվեցին մի շարք խորհրդակցություններ և ժողովներ⁵⁰։ Արդյունքում մշակվեց «Հայաստանի Հանրապետությունում դատարանի կազմակերպման մասին» օրոժնաօժերի փաթեթը, որը 1918 թ. սեպտեմբերի 5-ին քննարկվեց Նախարարների խորհրդում և, հավանության արժանանալով, ուղարկվեց Հայաստանի խորհուրդ⁵¹։

1918 թ. դեկտեմբերի 6-ին Հայաստանի խորհուրդը ընդունեց դատարանակազմական բնույթ ունեցող 6 օրենք⁵²։ Նույն օրը Հայաստանի խորհուրդը ընդունեց մեկ այլ օրենք, որը անմիջականորեն առնչվում է մեր կողմից քննարկվող հիմնախնդիրներին։ Դա «Հայաստանի Հանրապետության տարածքում ոռոսական կառուցության օրենքները օրոժողության մեջ դնելու մասին» օրենքն էր⁵³։ Դրանով Հայաստանի խորհուրդը պաշտոնապես պարզություն մտցրեց հանրապետության իրավական համակարգի նորմատիվային հիմքերի հարցում՝ սահմանելով, որ Հայաստանի

⁴⁷ Տե՛ս Զանգ, 1918, օգոստոս, թիվ 43:

⁴⁸ Տե՛ս նույն տեղը:

⁴⁹ Տե՛ս *Վաղարշյան Ա. Գ.*, Հայաստանի առաջին Հանրապետության դատական համակարգի հիմունքների մշակումը և դրանց օրենդրական կենսաօրոժումը, — Իրավունք և օրինականություն, Երևան, 1996, թիվ 2(10), էջ 26:

⁵⁰ Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 404, ց. 1, օ. 68, Զանգ, 1918 թ., օգոստոս, թիվ 45:

⁵¹ Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, ց. 1, օ. 2, թ. 32:

⁵² Տե՛ս Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, Երևան, 1918 թ., էջ 27-31:

⁵³ Տե՛ս նույն տեղը, էջ 28:

Հանրապետության տարածքում ժամանակավորապես լիարժեքության մեջ են դրվում Ռուսական կայսրության օրենքները, ժամանակավոր կառավարության, Անդրկովկասյան կոմիսարիատի, Անդրկովկասյան Սեյմի, Հայաստանի խորհրդի փոփոխություններով և լրացումներով: Այդ օրենքի ուժով Հայաստանի Հանրապետությունում սկսեց լիարժեք Ռուսական կայսրության քրեական և քաղաքացիական նյութական ու դատավարական, ինչպես նաև դատարանակազմական օրենսդրությունը: Այսպիսով, ստացվում էր, որ, նախ՝ Հայաստանի Հանրապետությունում լիարժեքության մեջ էր դրվում Ռուսական 1864 թ. դատական բարեփոխման հիմքը կազմող օրենքների փաթեթը, իսկ այնուհետև՝ Հայաստանի խորհրդի վերոհիշյալ օրենքներով դրանցում ներմուծվում էին համապատասխան փոփոխություններ և լրացումներ:

Այդ օրենքների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունը ղեկավարելի էր ենթարկում Ռուսական դատական համակարգը, բացառելով XIX դ. երկրորդ կեսի հակաբարեկրթությունների հետևանքով մտցված իրավական դրույթները: Վերացվում էին Ալեքսանդր II-ի դատական կանոնադրություններում պարունակվող դատական պաշտոնների և երդվյալ ատենակալների թեկնածուների համար սահմանված արտոնություններն ու սահմանափակումները ծառայողական, կրոնական, դասային, լուսնային հատկանիշներով: Վերցվեցին նաև Անդրկովկասի համար հատուկ սահմանված դատավարական կանոնները: Հայաստանի Հանրապետության տարածքում լիարժեքության մեջ դրվեցին ընդհանուր դատավարական և դատարանակազմական նորմերը: Չէր նախատեսվում քաղաքական և պաշտոնական հանցալիարժեքությունների համար դասային ներկայացուցիչների դատարանի ստեղծումը: Այդ բնույթի լիարժեք Հայաստանի Հանրապետությունում ընդդատյա էին միայն շրջանային դատարանին: Հայաստանի Հանրապետությունում չէր հիմնադրվում նաև լիարժեք քրեական դատարան:

Այսպիսով, համաձայն 1918 թ. դեկտեմբերի 6-ի օրենքների՝ համաքաղաքացիական դատական համակարգը Հայաստանի Հանրապետությունում ընդլրկում էր հետևյալ դատական մարմինները.

1) Միանձնյա հաշտարար դատավորներ իրենց սահմանափակ քրեական, քաղաքացիական ու լրիվ վարչական ընդդատությամբ:

2) Երևանի շրջանային դատարան, որն ընդհանուր իրավասության լիարժեքով առաջին ատյանն էր, և որի կազմում պետք է լիարժեք երդվյալ ատենակալների դատարանը: Երևանի շրջանային դատարանը ուներ քրեական, քաղաքացիական, վարչական և ցուցակալական բաժանմունքներ: Շրջանային դատարանը միաժամանակ համարվում էր երկրորդ՝ վերաքննիչ ատյան հաշտարար դատարանների համար: 1920 թ. ապրիլի 5-ի օրենքով հիմնադրվեցին ևս երկու շրջանային դատարաններ՝ Կարսում և Ալեքսանդրապոլում⁵⁴: Վերջիններս համարվում էին IV կարգի շրջանային դատարաններ, այսինքն՝ չունեին առանձին բաժանմունքներ և հետևաբար կազմված էին նախալիարժեք և դատարանի 4 անդամներից⁵⁵: Այդ դատարաններին կից լիարժեք էին նաև նոտարը և դատախազը՝ իր երկու օժանկաններով: Երևանի շրջանային դատարանը Կարսի և Ալեքսանդրապոլի դատարանների ստեղծումից հետո մնաց որպես երրորդ կարգի դատարան երկու բաժանմունքներով՝ քրեական և քաղաքացիական: Վերջին բաժանմունքը կատարում էր նաև վարչական և ցուցակալական բաժանմունքների լիարժեքությունները, քանի որ, համաձայն 1919 թ. հունվարի 13-ի և 1920 թ. ապրիլի 26-ի օրենքների, ցուցակալական և վարչական բաժանմունքները վերացվել էին⁵⁶:

3) Դատական պալատը, որպես վերաքննիչ ատյան ընդհանուր իրավասության լիարժեքով՝ երկու դեպարտամենտներով՝ քրեական և քաղաքացիական:

⁵⁴ Տե՛ս Հայաստանի պառլամենտի օրենքների ժողովածու, 1920, թիվ 17, էջ 55:

⁵⁵ Համաձայն դատական հիմնարկների «ուչերեժեհայի», շրջանային դատարանները կարող էին բաժանված լինել բաժանմունքների՝ ելնելով լիարժեքի քանակից տվյալ դատական տարածքում: Գոյություն ունեին շրջանային դատարանների 4 կարգեր՝ առաջին, որն ուներ վեց և ավելի բաժանմունքներ, երկրորդ՝ երեք բաժանմունք, երրորդ՝ երկու բաժանմունք, չորրորդ կարգի, որոնք բաժանմունքների չէին բաժանվում: Բաժանմունքները մասնալիարժեքում էին կամ քրեական, կամ քաղաքացիական լիարժեքի բնույթով (տե՛ս Ճիմեհեհեհեհեհեհեհ X-XX ձեհեհ, հ 9-դե օի ձեհ. I ., 1997. Օ. 8. Նօհհհհհհ ձեհեհեհ ձեհ, էջ 40, 91):

⁵⁶ Տե՛ս Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, Երևան, 1919, էջ 42-43 և Հայաստանի պառլամենտի օրենքների ժողովածու, 1920, թիվ 9, էջ 17:

4) Հայաստանի սենատը՝ որպես և՛ հաշտարար, և՛ ընդհանուր արդարադատության համար միասնական վճռաբեկ դատարան:

Այսպիսով, Հայաստանի առաջին Հանրապետության դատական համակարգը կառուցվածքային առումով տարբերվում էր 1864 թ. դատական հիմնարկությունների ուղեկցող հիստորիայով նախատեսված դատական մարմինների համակարգից: Իսկ ինչ վերաբերում է այդ համակարգի դատավարական առանձնահատկություններին, ապա դրանք օրեթե օրություն չունեին: Դատական համակարգի նորմատիվային հիմքը կազմում էին այն նույն օրենքները (դատարանակազմական և դատավարական), ինչ նուսական կայսրությունում: Այդ օրենքներով ամրագրված էին այնպիսի սկզբունքներ, ինչպես՝ օրոճադիր և դատական իշխանությունների բաժանումը, որը պետք է ընկալել որպես արդարադատության իրականացումը միայն դատարանի կողմից սկզբունքի, այլ ոչ թե իշխանությունների տարանջատման սկզբունքի արտահայտություն: Այդ օրենքներով Հայաստանի Հանրապետությունում ներմուծվում էին այնպիսի կարևորապես ժողովրդավարական ինստիտուտներ, ինչպիսիք են՝ երդվյալ ատենակալների դատարանը, դատական քննիչների ինստիտուտը, վարչական արդարադատության ինստիտուտը և այլն: Դատարանակազմության ժողովրդավարական ինստիտուտներին համապատասխանում էին դատավարության ժողովրդավարական սկզբունքները՝ ամրագրված քրեական և քաղաքացիական դատավարությունների կանոնադրություններում: Այս օրենսդրական ակտերը ամրագրում էին դատավարության մի շարք հիմնարար սկզբունքներ՝ օրինականության, հրապարակայնության, բանավորության, մրցակցության, անմեղության կանխավարկածի, մեղադրյալի պաշտպանության իրավունքի, անմիջականության և անընդհատության, կողմերի իրավահավասարության, դիսպոզիտիվության և այլն:

§ 2. Հայաստանի առաջին Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունը

Հայաստանի առաջին Հանրապետությունում քրեական դատավարության իրավունքի աղբյուրը Քրեական դատավարության

կանոնադրությունն էր՝ օրենք, որը կարգավորում էր քրեադատավարական հարաբերությունները:

Հաշտարար դատարանների ընդհատությանը վերապահված քրեական օրոճերով վարույթը սկսվում էր երեք հիմքերով.

1) տուճած կամ վնաս կրած մասնավոր անձանց օանօատներով,

2) միլիցիայի կամ այլ վարչական մարմինների հաղորդումներով,

3) հաշտարար դատավորի անմիջական հայեցողությամբ, երբ կատարվել էր մասնավոր անձի օանօատից անկախ հետապնդվող արարք⁵⁷:

Մասնավոր օանօատների հիման վրա սկսված օրոճերով, որոնք կարող էին դադարել կողմերի հաշտությամբ, քրեական դատավարության կանոնադրությունը հաշտարար դատավորին պարտավորեցնում էր հաշտեցնել կողմերին: Եթե դա չէր հաջողվում, ապա դատավորը պարտավոր էր ձեռնամուխ լինել դատավճռի կայացմանը՝ հիմնվելով կողմերի ներկայացրած ապացույցների վրա: Դատավարությունը հաշտարար դատարաններում հրապարակային էր: Փակ միստերում լուծվում էին միայն ընտանեկան իրավունքների դեմ ուղղված, կնոջ պատիվը վիրավորելու և այլ հանցաօրոճությունների վերաբերյալ օրոճերը, ինչպես նաև մասնավոր անձանց օանօատների հիման վրա հարուցվող այն օրոճերը, որոնցով երկու կողմերն էլ խնդրում էին օրոճը քննել փակ միստում: Այսպիսով, հաշտարար քրեական դատավարությունը չունեւ անխնական քննության փուլ: Դրան հակառակ, քրեական դատավարությունը ընդհանուր արդարադատության համակարգում բաժանված էր մի քանի փուլերի, որոնցից առաջինը անխնական քննությունն էր՝ հետաքննությունը և անխաքննությունը⁵⁸:

Հետաքննությունը կատարում էին միլիցիայի մարմինները: Հետաքննության մարմինները պարտավոր էին մեկ օրվա ընթացքում դատական քննիչին և դատախազին կամ նրա օանականին հաղորդել հանցաօրոճության հատկանիշներ պարունակող ամեն մի դեպքի մասին, իսկ հաշտարար դատարաններին ընդհատյա

⁵⁷ Տե՛ս Ճի ննեեճեճի ա շաճի ի ի աճաճեւնճի X-XX աճեճի, ա 9-ճե ճի ի աճ. I ., 1991, Օ. 8. Նճաճի աճ ճաճի ճի ա, Օնճա ճաճի աճի ի ի ճաճի ճի ճաճի աճաճ, հողվ. 42:

⁵⁸ Տե՛ս նույն տեղը, 249-309 հողվաճները:

արարքների վերաբերյալ տվյալները միլիցիան պարտավոր էր հանձնել համապատասխան հաշտարար դատավորին: Հետաքննության լիազորված անձինքն էր՝ պարզել արդյոք արարքում առկա⁵⁹ են հանցագործության կամ զանցանքի հատկանիշներ: Հետաքննություն կատարելիս միլիցիան իրեն անհրաժեշտ բոլոր տվյալները պետք է հավաքեր «հետախուզության, բանավոր հարցումների, լուսանկարների և փաստաթղթերի միջոցով, չկատարելով խուզարկություն և առկրավում տներում»⁵⁹:

Ընդհանուր իրավասության գործերով պարտադիր կատարվում էր նախաքննություն, որն իրականացնում էին դատական քննիչները՝ միլիցիայի օժանդակությամբ, դատախազի ու նրա օգնականների հսկողության տակ: Նախաքննության գործառույթը նյութերի հավաքումն էր՝ կոնկրետ անձին կամ անձանց մեղադրանք առաջադրելու համար: Օրենքը նախնական քննության փուլում պաշտպանի մասնակցություն չէր նախատեսում: Դատական քննիչը ենթակա էր բացարկման: Ավարտելով քննությունը՝ դատական քննիչը դրա արդյունքները հանձնում էր դատախազին, որն էլ ստուգելով քննության նյութերը՝ կազմում էր մեղադրական ակտ: Դատախազի կազմած մեղադրական ակտը կամ գործը կարճելու եզրակացությունը փոխանցվում էր շրջանային դատարանին:

Առաջին հանրապետությունում դատախազական հսկողության կազմակերպարարական առանձնահատկությունները պայմանավորված էին ամենից առաջ դատավարության և դատարանակազմության սկզբունքներով, մասնավորապես՝ մրցակցությամբ, մեղադրյալի պաշտպանության իրավունքով, անմեղության կանխավարկածով և այլն: Դատախազության համակարգը կառուցված էր ոչ թե վարչատարածքային, այլ դատատարածքային սկզբունքով (ընդհանուր դատարաններին կից) և ընդգրկված էր «դատական գերատեսչության» մեջ: Դատախազական հսկողության լիազորված անձինքն էր՝ որպես հանրապետության լիազորված անձինքն, կանգնած էր արդարադատության նախարարը: Դատախազությունը համարվում էր բացառապես դատական հսկողության մարմին և չունեւր ընդհանուր հսկողության գործառույթներ⁶⁰: Օրենքով քրեական գործերով դատախազի վրա դրված գործառույթներն

⁵⁹ Տե՛ս նույն տեղը, 253-255 հոդվածներ:

⁶⁰ Տե՛ս նույն տեղը, Օ՝ժաթաթի էթ ռոթաթի իթի էթ, հոդվ. 135:

արտահայտվում էին նախ՝ «նախաքննության վրա հսկողությամբ», երկրորդ՝ «ընդհանուր դատարաններում եզրակացություններ տալով» (մեղադրյալին դատի տալու եզրակացությունը մեղադրական ակտի ձևով, հետապնդումը կարճելու կամ կասեցնելու մասին եզրակացությունը), երրորդ՝ ընդհանուր դատարաններում որպես դատավարության կողմ՝ մեղադրող համարվելով:

Շրջանային դատարաններում դատավարությունը տարվում էր երկու ձևով՝ երեք դատավորների կազմով առանց երդվյալ ատենակալների մասնակցության, ինչպես նաև երդվյալ ատենակալների մասնակցությամբ: Երդվյալների դատարանին ընդդատյա էին այն հանցագործություններով գործերը, որոնց համար օրենքը որպես պատիժ նախատեսում էր կացության իրավունքներից զրկելը կամ սահմանափակելը⁶¹:

Դատական նիստը չէր կարող սկսվել առանց պաշտպանի մասնակցության: Օրենքը նախատեսում էր մեղադրյալի՝ դատավորներին բացարկ հայտարարելու իրավունքը և բացարկի հիմքերը⁶²:

Քրեադատավարական նորմերը հատուկ կարգավորում էին ընդհանուր դատարաններում դատական քննության հրապարակայնությունը, բանավորությունը և մրցակցությունը⁶³: Մրցակցության սկզբունքը քրեական դատավարությունում արտահայտված էր բավական լայն հիմքերով: Քրեական հետապնդման, պաշտպանության և գործի լուծման գործառույթներն առանձնացված էին և իրականացվում էին տարբեր մարմինների ու անձանց կոմպլեքս: Դատարանը քրեական հետապնդման մարմին չէր, և ընդհանրապես քրեական դատավարությունը կառուցված էր դատարանի անկողմնակալությունը և անկախությունը երաշխավորող սկզբունքների հիման վրա:

Հայաստանի առաջին Հանրապետության ծանր քաղաքական, տնտեսական, սոցիալական կացությունը, անընդհատ զինված բախումները, հակապետական խռովություններն ու հանցավորության բարձր մակարդակը, իրավապահական համակարգի ոչ արդյունավետ գործունեությունը իշխանություններին ստիպում էին փոխել իրենց սկզբնական ժողովրդավարական դիրքորոշում-

⁶¹ Տե՛ս նույն տեղը, Օթոթ օթի էթ իթ ռոթի իթի էթի էթ, հոդվ. 201:

⁶² Տե՛ս նույն տեղը, հոդվ. 600:

⁶³ Տե՛ս նույն տեղը, 620-630 հոդվածներ:

ները, վերանայել կամ վերացնել արդարադատության հիմնարար սկզբունքները: Արդարադատության սկզբունքները վերանայելու նպատակով արվող օրենսդրական նախաձեռնություններն առաջարկվում էին հանրապետության օրոյության ողջ շրջանում: Սակայն Հայաստանի խորհրդի (1918-1919 թթ.) և Հայաստանի խորհրդարանի (1919 թ. օգոստոս—1920 թ. մայիս) խելամիտ մոտեցման շնորհիվ դրանք չէին կենսաօրոծվում: Իրադրությունը լրիվ այլ էր այն ժամանակաշրջաններում, երբ օրենսդրական լիազորությունները փոխանցվում էին կառավարությանը, հատկապես 1920 թ. երկրորդ կեսին, երբ կառավարությունն առանց որևէ արօելքի իրականացնում էր այդ նախաձեռնությունները: Բնութաօրական է այն, որ արդարադատության սկզբունքների վերանայումները, արտակարօ դատարանների հիմնադրումները կատարվել են հենց այդ ժամանակաշրջաններում: Խոսքը արդարադատության այնպիսի սկզբունքների վերանայման կամ խախտումների մասին է, ինչպիսիք են դատական համակարօի միասնականությունը, արդարադատության իրականացումը միայն պատշաճ դատարանների կողմից, դատական մարմինների անկախությունը, դատավորների անփոփոխելիության սկզբունքի լրիվ, իսկ մասամբ նաև դատական քննության անմիջականության սկզբունքի վերացումը:

Դատական կանոնադրությունները սահմանում էին, որ «ոչ ոք չի կարող պատժվել դատական օերատեսչությանը ենթակա հանցանքի կամ զանցանքի համար այլ կերպ, քան պատշաճ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճով»⁶⁴: Այդպիսով, Հայաստանի խորհրդի 1918 թ. դեկտեմբերի 6-ի դատարանակազմական և դատավարական օրենքների ուժով արդարադատությունը՝ որպես պետական օործունեության հատուկ տեսակ, առանձնացված էր օրենսդիր և օործադիր օործունեությունից: Արտակարօ դատարանների հիմնադրումը օրենքով արօելված էր: Արդարադատությունը Հայաստանի Հանրապետությունում պետք է իրականացվեր միայն օրենքում թվարկված «պատշաճ դատարանների» կողմից, որոնք հոչակված էին անկախ, իսկ դատավորներն օժտված էին անփոփոխելիության իրավունքով⁶⁵: Սակայն առաջին հանրապետությունում օրենսդիր և օործադիր մարմին-

⁶⁴ Տե՛ս նուն տեղը, 1, 14 հոդվածներ:

⁶⁵ Տե՛ս նուն տեղը, հոդվ. 243:

ներն արդարադատության իրականացման ոլորտ էին ներթափանցում նաև արտակարօ դատարանների ստեղծման ճանապարհով, հատկապես 1920 թ. մայիսին ստեղծված արտակարօ դատարանների, որոնք աչքի էին ընկնում ոչ միայն իրենց արտակարօությամբ, դատավարական երաշխիքների բացակայությամբ, այլ նաև նրանով, որ անմիջապես ղեկավարվում էին կառավարության կողմից⁶⁶:

1920 թ. օարնանը Հայաստանի Հանրապետության ներքին և արտաքին կացությունը սպառնալից էր ու երերուն: Հայ ժողովրդի համար այդպիսի ծանր պահին մեծամասնականները, օօտաօործելով ժողովրդական զանօվածների դժօոհությունը, ապստամբեցին: Օրենսդիր լիազորություններով օժտված կառավարությանը հաչողվեց ճնշել ապստամբությունը: 1920 թ. մայիսի 8-ին կառավարությունը ընդունեց «Արտակարօ դատարանի և նրան ընդդատյա օործերի մասին» ժամանակավոր օրենքը⁶⁷: Համաձայն այդ օրենքի՝ Հայաստանի Հանրապետությունում հիմնադրվում էին արտակարօ դատարաններ, որոնց հանձնվում էր մայիսյան դեպքերին մասնակցելու կապակցությամբ ձերբակալվածների օործերի նախաքննությունը և դատական քննությունը: Դատարաններից յուրաքանչյուրը կազմված էր նախաօահից և երկու անդամներից, որոնց նշանակում էր Նախարարների խորհուրդը: Ամեն մի արտակարօ դատարանին կից օործում էր մեկ պետական մեղադրող և նրա օօնականը, երկու քննիչ, որոնց ևս նշանակում էր կառավարությունը:

Ժամանակավոր օրենքը սահմանում էր այն հանցաօործությունների շրջանակը, որոնց վերաբերյալ օործերը ենթակա էին արտակարօ դատարանին: Դրանք հիմնականում պետական հանցաօործություններ էին: 1920 թ. աշնանը նրանց հանձնվեց նաև պաշտոնեական հանցաօործությունների վերաբերյալ օործերի քննությունը⁶⁸: Ժամանակավոր օրենքը սահմանում էր նաև դատավարական կանոնները, որոնցով պետք է տարվեր այդ օործերի նախնական և դատական քննությունը: Այդ դատա-

⁶⁶ Տե՛ս *Վաղարշյան Ա. Գ.*, «Դատական իշխանությունը Հայաստանի առաջին Հանրապետությունում (1918-1920 թթ.)», Հանդես Երևանի համալսարանի, ԵՊՀ-ի օիտատեղեկատվական պարբերական, 1996, թիվ 1 (84), էջ 49:

⁶⁷ Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, օ. 162, թ. 8:

⁶⁸ Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, ց. 1, օ. 105, թ. 111:

վարական կարգերն արմատապես տարբերվում էին ընդհանուր դատավարական կարգից: Արտակարգ դատարանի քննիչը, միլիցիայի համապատասխան մարմիններից ստանալով հետաքննության Այլոթերը, կատարում էր անհրաժեշտ քննչական զործողություններ և վերջում կազմում մեղադրական ակտ: Այնուհետև զործը դատարան կանչի ենթակա վկաների ցուցակի հետ միասին հանձնում էր արտակարգ դատարանին: Համաձայն ժամանակավոր օրենքի՝ դատական քննությունը տարվում էր ըստ ընդհանուր դատավարական նորմերի, պահպանելով այս օրենքում նշված հետևյալ բացառությունները՝ արտակարգ դատարանը քննությունը պետք է ավարտեր և դատավճիռ կայացներ 24 ժամվա ընթացքում՝ նախաքննություն սկսելու պահից հաշված: Եթե քննության ընթացքում արտակարգ դատարանը անհրաժեշտ համարեր զործի լրացուցիչ նախաքննությունը, ապա դատական քննությունը կարող էր հետաձգվել երկու օրով: Այդ ժամկետի ընթացքում պետք է կանչվեին նոր վկաներ, կամ զործը ուղարկվում էր լրացուցիչ նախաքննության: Այն դեպքերում, երբ մեղադրյալը ձերբակալվում էր ակնհայտ հանցազործության վայրում, միլիցիայի մարմիններն իրենք էին կազմում մեղադրական ակտ և զործը անմիջապես ուղարկում արտակարգ դատարան: Այդ զործերով արտակարգ դատարանը նույն օրն և՛ էթ պետք է դատավճիռ կայացներ: Արտակարգ դատարանների կայացրած դատավճիռները վերջնական էին, ենթակա չէին օանատարկման կամ բողոքարկման:

Հայաստանի առաջին Հանրապետությունում փորձեր են արվել վերացնելու նաև դատական քննության անմիջականության սկզբունքը: Դա տեղի ունեցավ 1919թ., այսպես կոչված, արտակարգ քննիչ հանձնաժողովի և արտակարգ դատարանի հիմնադրմամբ: Հայաստանի առաջին Հանրապետությունում հսկայական քանակ են կազմել պաշտոնեական հանցազործությունները: Հանրապետության արդարադատության նախարարության տվյալներով ընդհանուր հանցավորության 50% ունեցել է պաշտոնեական բնույթ⁶⁹: Արձանաքելով այդ իրավիճակին՝ կառավարությունը 1919 թ. հուլիսի 1-ին հաստատեց արդարադատության նախարարության ներկայացրած արտակարգ քննիչ հանձնաժո-

⁶⁹ Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 206, ց. 1, թ. 105, թ. 111:

ղովի և արտակարգ դատարանի կանոնադրությունը⁷⁰: Այդ օրենքի (կառավարությունն այդ պահին ուներ օրենսդրական լիազորություններ) նպատակն էր արագացնել պաշտոնեական հանցազործությունների վերաբերյալ զործերի քննությունը՝ դրանց վարույթը կենտրոնացնելով արտակարգ քննիչ հանձնաժողովում և արտակարգ դատարանում: Պաշտոնեական հանցազործություններով նախաքննության կատարման համար հիմնադրվում էր կոլեկտիվ քննիչ մարմին՝ արտակարգ քննիչ հանձնաժողովը: 1919 թ. հուլիսի 7-ի կանոնադրությունը սահմանում էր քաղաքացիական և զինվորական պաշտոնատար անձանց կատարած այն հանցանքների շրջանակը, որոնց վերաբերյալ զործերը ենթակա էին քննիչ հանձնաժողովին: Քննիչ հանձնաժողովն այդ ենթակայության շրջանակներում իրավունք ուներ հարուցել քրեական զործեր և վարել քննություն: Քննիչ հանձնաժողովին արդարադատության նախարարի հրամանով կարող էր հանձնարարվել նաև այլ զործերի նախաքննության վարումը: Ինչ վերաբերում է քննիչ հանձնաժողովի զործունեության դատավարական կանոնների, ապա 1919 թ. հուլիսի 7-ի կանոնադրությունն այդ կապակցությամբ սահմանում էր, որ նա իր զործունեության մեջ պետք է ղեկավարվեր քրեական դատավարության կանոնադրությամբ: Սակայն քննիչ հանձնաժողովի համար չէին զործում քրեական դատավարության կանոնադրության 433-435 հոդվածները, որոնք սահմանում էին քրեական զործերով վկաների հարցաքննության վայրը և վկաներից երդում ընդունելու կարգը: Համաձայն քրեական դատավարության կանոնադրության 433 հոդվ.՝ վկաները պետք է հարցաքննվեին քննության վարման վայրում, բացի այն դեպքերից, երբ վկաները հարգելի պատճառներով չէին կարող ներկայանալ քննիչին: Իսկ 442 և 443 հոդվածների ուժով նախաքննության ընթացքում վկաները պետք է երդում տային միայն օրենքով նշված դեպքերում: Օրինակ՝ երբ վկան պատրաստվում էր հեռավոր ճանապարհ անալ, և նրա վերադարձը կարող էր տևական լինել, երբ վկան օտնվում էր իր կյանքին սպառնացող հիվանդափն վիճակում և այլն: Բացառությամբ օրենքում թվարկված այդ դեպքերի՝ դատական քննիչն իրավունք չուներ վկայից

⁷⁰ Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, թ. 69, թթ. 122-125:

երդում վերցնելու⁷¹: Ելնելով այն բանից, որ արտակարգ քննիչ հանձնաժողովը և արտակարգ դատարանը զործում էին հանրապետության ողջ տարածքում՝ օրենսդիրը նրանց համար վերացրեց վերը նշված դատավարական կանոնները: Դա նշանակում էր, որ արտակարգ քննիչ հանձնաժողովը իրեն ենթակա զործերով ինքն էր որոշում վկաների քննության վայրը, ինքն իր հայեցողությամբ կարող էր վկաներից, որպես նրանց ցուցմունքների հավաստիության երաշխիք, երդում վերցնել, որպեսզի հետագայում նրանց չկանչեին արտակարգ դատարան: Լինելով կոլեկտիվ մարմին՝ հանձնաժողովը կարող էր վկաների հարցաքննությունը հանձնարարել իր անդամներից որևէ մեկին: Դրանով իսկ Արտակարգ դատարանում քրեական դատավարության անմիջականության սկզբունքը սահմանափակվեց⁷²:

Այսպիսով, Հայաստանի առաջին Հանրապետությունում քրեական դատավարությունը խառն էր՝ զադտնի, ոչ հրապարակային քննություն և հրապարակային, մրցակցային դատական քննություն, մեղադրյալի դատավարական իրավունքների և դրանց դատավարական երաշխիքների համակարգի առկայություն: Բայց արտակարգ դատարանների հիմնադրման և մի շարք այլ օրենսդրական քայլերի հետևանքով առաջին հանրապետության քրեական դատավարությունը ձեռք էր բերում մաս հետախուզական դատավարության զծեր:

⁷¹ Տե՛ս Ծİ ĩĩĕĕĕĕĭ á çàĕĭ í ĩ ääöäüüöâĭ X-XX äâĕĭ â, â 9-ðĕ ôĭ ĩ äö. Ĩ ., 1991. 8. Öĩöâ öâĭ ĕĭĭĭ ĩĭĭ ĩöâĭ ĩđĭ ĕĕĭ äĩöâ, հոդվածներ 442, 443:
⁷² Արտակարգ քննիչ հանձնաժողովը և արտակարգ դատարանը զործել են մինչև 1920 թ. հունվարի 2-ը, երբ Հայաստանի խորհրդարանը ընդունեց օրենք «Արտակարգ քննիչ հանձնաժողովի և արտակարգ դատարանի վերացման մասին» (տե՛ս Հայաստանի պառլամենտի օրենքների ժողովածու, 1920, թիվ 1, էջ 1):

ԳԼՈՒԽ 4.

ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ (1920-1990 թթ.)

§ 1. Քրեական դատավարությունը Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման շրջանում (1920-1922 թթ.)

Հայաստանի առաջին Հանրապետության զոյության ծանր պայմաններում ձևավորված հանրապետական պետական կարգերը, պառլամենտարիզմը, իրավական օրենսդրական կարգավորման փորձերը, իրենց հակասականությամբ հանդերձ մի շարք պատճառների ուժով չսպրեցին բնական պատմական զարգացում: Հայաստանում հաստատվեց խորհրդային իշխանություն: Հայաստանում սոցիալիստական հեղափոխության իրականացման և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման առանձնահատկություններից մեկն այն էր, որ այստեղ այդ զործնթացներն ունեցան խաղաղ ընթացք: Առաջին հանրապետության կառավարությունը իշխանությունը կամավոր հանձնեց մեծամասնականներին⁷³: Սակայն այդ հանգամանքը ևս չխանգարեց հայ մեծամասնականներին իրացնել հին պետաիրավական կառուցակարգը «ջարդի» ենթարկելու քաղաքական իրավական դոկտրինան, որը ծայրահեղ իրավական գիհիլիզմի դրսևորում էր: Հետևելով սոցիալիստական պետության կառուցման օրինաչափություններին՝ «ջարդի» ենթարկվեց մաս առաջին հանրապետության դատական համակարգը: Հայհեղկոմը իր 1920 թ. դեկտեմբերի 12-ի դեկրետով հիմնադրեց Հայաստանի ՍԽՀ արդարադատության ժողովմատը⁷⁴: Արդեն դեկտեմբերի 18-ին արդարադատության ժողովմատը հրապարակեց «Հին դատարանների լուծարման մասին»

⁷³ Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, զ. 248, թ. 2:
⁷⁴ Հայաստանում խորհրդային իշխանության հաստատվելուց հետո և մինչև 1937 թ. Սահմանադրության ընդունումը հանրապետությունը անվանվում էր երկակիորեն «Հայաստանի Սոցիալիստական Սովետական Հանրապետություն» և «Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն Հայաստան»: Այս երկակիությունը վերացվեց 1937 թ. Սահմանադրությամբ, որով այն կոչվեց Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն:

հրամանը, որում սահմանվում էր. «Հայաստանի Սոցիալիստական Հանրապետության տարածքում օրնություն ունեցող բոլոր դատական մարմինները համարել վերացված: Բոլոր դատական պաշտոնատար անձանց, բացի քննիչներից և օրասենյակային աշխատողներից, դեկտեմբերի 15-ից համարել արձակված: Բոլոր դատական օրծերը հանձնել ժողովրդական դատարաններին և նազմական տրիբունալին՝ ըստ ընդդատության»⁷⁵:

Հայհեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 21-ի դեկրետով Հայաստանի տարածքում չօրծող հայտարարվեց առաջին հանրապետության օրենսդրությունը, այդ թվում և դատական կանոնադրությունները: Այդ նույն դեկրետով վերացված օրենսդրության փոխարեն օրծող համարվեց ՌԽՖՍՀ օրենսդրությունը, այն փոփոխություններով և լրացումներով, որոնք անհրաժեշտ կհամարեք հեղափոխական կառավարությունը՝ ելնելով հանրապետության առանձնահատկություններից⁷⁶:

Քննարկվող ժամանակաշրջանի առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ որոշակի ժամանակ քրեադատավարական հարաբերությունները չունեին պատշաճ օրենսդրական կարգավորում, իսկ առկա քրեադատավարական նորմերը մտնում էին դատարանակազմական օրենսդրության մեջ: Այդ իսկ պատճառով, որպեսզի կարողանանք հասկանալ Հայաստանի քրեական դատավարության իրավունքի առանձնահատկությունները 1920 թ. դեկտեմբերից մինչև 1923 թ. սեպտեմբերը, անհրաժեշտ է մասամբ քննարկման առարկա դարձնել նաև Հայաստանի ՍՍՀ դատարանակազմության հիմնախնդիրները:

1920 թ. դեկտեմբերին արդարադատության ժողովմատը հրապարակեց «Ժողովրդական դատարանների մասին» հրամանը⁷⁷: Այդ հրամանով ստեղծվող ժողովրդական դատարանները համարվում էին հեղափոխական օրինականության և աշխատավորների նվաճումների պահպանության մարմիններ:

1921 թ. հունվարի 15-ին Հայհեղկոմը ընդունեց դեկրետ «Գերաօրն տրիբունալի և հեղափոխական տրիբունալների մասին»⁷⁸, որը հիմնականում կարգավորում էր դատարանակազմության

⁷⁵ Տե՛ս ՀՍՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու, 1921, պ. 1, հոդվ. 30:

⁷⁶ Տե՛ս նույն տեղը, հոդվ. 39:

⁷⁷ Տե՛ս նույն տեղը, հոդվ. 43:

⁷⁸ Տե՛ս նույն տեղը, հոդվ. 96:

հարաբերությունները, սակայն պարունակում էր նաև որոշ դատավարական նորմեր: Գերաօրն տրիբունալը վճարեկ առյան էր տեղական հեղափոխական տրիբունալների համար և պարտավոր էր վճարեկ օանօատները քննարկել երեք օրվա ընթացքում: Սակայն օերաօրն տրիբունալը Հայհեղկոմի և արդժողկոմատի առաջարկությամբ կարող էր քրեական օրծերը քննել որպես առաջին առյան: Գերաօրն հեղափոխական տրիբունալի դատավճիոները վերջնական էին և 48 ժամվա ընթացքում պետք է ի կատար ածվեին, բացառությամբ մահապատիժ սահմանաճների, որոնց կատարումը պահանջում էր Հայհեղկոմի հաստատումը: Հայաստանի ՍՍՀ Ժողկոմխորհը 1921 թ. մայիսի 27-ին ընդունեց Տրիբունալների կանոնադրությունը: Ըստ այդ կանոնադրության՝ տրիբունալները քննում էին հայրենիքի դավաճանության, հակահեղափոխական բնույթի հանցաօրծությունների, կաշառակերության, խոշոր սպեկուլյացիայի և այլ հանցաօրծությունների վերաբերյալ օրծերը⁷⁹: Այդ կանոնադրության վերլուծությունը ցույց է տալիս, որ դատավարությունը տրիբունալներում իր ընդհանուր օծերով նման էր ժողովրդական դատարանների համար սահմանված կանոններին, բացառությամբ որոշ տարբերությունների, որոնք և տրիբունալներին դարձնում էին հակաիրավական, հակաժողովրդավարական բնույթի մարմիններ, քաղաքական պայքարի օրծիք: Տրիբունալային դատավարությունում կողմերի (հատկապես ամբաստանյալի) իրավունքների շրջանակը սահմանափակված էր, իսկ դատական կազմն օժտված էր ավելի լայն իրավունքներով, քան ժողովրդական դատարանում: Տրիբունալային դատավարությունում բացակայում էին որոշ դատավարական երաշխիքներ և ձևեր: Օրինակ, տրիբունալը վկաներին կանչում էր իր հալեցողությամբ, իսկ կանչված վկաներին կարող էր չհարցաքննել կամ դադարեցնել հարցաքննությունը, եթե դա անհրաժեշտ օտներ: Տրիբունալը կարող էր դադարեցնել դատական քննությունը, եթե օտներ, որ օրծի հանօամանքները իրեն պարզ են: Տրիբունալը կարող էր մեղադրողին և պաշտպանին չթույլատրել մասնակցելու օրծին, ինչպես նաև արօելել կողմերի վիճաբանությունը: Ըստ տրիբունալների կանոնադրության՝ ռեպրեսիայի որոշման հարցերում հեղափոխական տրիբունալներ

⁷⁹ Տե՛ս ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, օ. 3, թթ. 3-9:

րն օժտված էին անասհմանափակ իրավունքներով, այսինքն սահմանված էր պատժի ազատ ընտրության սկզբունքը:

Մյուս արտակարգ մարմինը՝ արտակարգ հանձնաժողովը, «չեկան» էր: 1920 թ. դեկտեմբերի 6-ին Հայհեղկոմը, օտարործելով Ռուսաստանի փորձը, ընդունեց դեկրետ «Արտակարգ հանձնաժողովի հիմնադրման մասին»⁸⁰: Արտակարգ հանձնաժողովի հիմնական խնդիրը պայքարն էր հակահեղափոխության, սպեկուլյացիայի և պաշտոնեական հանցանքների դեմ: Չեկայի հատուկ բաժինը պետք է զբաղվեր Կարմիր բանակում հակահեղափոխական հանցանքների դեմ պայքարով: Սակայն, ի տարբերություն ՌԽՖՍՀ-ի, Հայաստանի ՍԽՀ չեկան կատարում էր միայն նախաքննության օրոճառույթ: Նրա քննած օրոճերն ընդդատյա էին հեղափոխական տրիբունալներին: Արտակարգ հանձնաժողովն իրավունք ուներ կիրառելու վարչական հարկադրանք: Սակայն 1921 թ. ապրիլի 15-ին՝ հակամեծամասնական զինված ապստամբության պարտությունից հետո, Հայհեղկոմը և արդարադատության ժողկոմատը համատեղ դեկրետով արտակարգ հանձնաժողովին օժտեցին ոչ միայն լրտեսության, հակահեղափոխական և պաշտոնեական հանցանքների, երկաթուղային հաղորդակցության և կապի միջոցների վերացման, զենք զինամթերք և պայթուցիկ նյութեր պահելու վերաբերյալ օրոճերի նախաքննության կատարման իրավունքով, այլև այդ օրոճերի լուծման իրավունքով: Այդ պահից արտակարգ հանձնաժողովը վերածվեց դատական ատյանի:

Այսպիսով, քննարկվող ժամանակաշրջանում Հայաստանի ՍԽՀ-ում դատական համակարգը կազմված էր երեք ենթահամակարգերից՝ ժողովրդական դատարաններ, հեղափոխական տրիբունալներ, արտակարգ հանձնաժողով: Օրենսդրությամբ սահմանվում էր յուրաքանչյուր ենթահամակարգի կառուցվածքը, լիազորությունների շրջանակը, իսկ այդ մարմինների դատավարական օրոճունեությունը, եզակի բացառություններով հանդերձ, ընդհանրապես չէր կարգավորված:

Հակամեծամասնական ապստամբության (1921 թ. փետրվար-ապրիլ) պարտությունից հետո պարզվեց, որ զինված ապստամբության պատճառներից մեկն էլ այն ապօրինությունները, սմենաթողությունն ու բռնություններն էին, որ իրականացնում էին

⁸⁰ Տե՛ս ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, 1921, պ. 1, հոդվ. 5:

նոր իշխանությունները ռազմական կոմունիզմի քաղաքականության համատեքստում: Այդ պահից Հայաստանում նկատվում է քրեադատավարական հարաբերությունների իրավական կարգավորման միտում, որի նպատակն էր այդ ոլորտում խստագույն կարգի ու օրինականության հաստատումը, քաղաքացիների նկատմամբ չհիմնավորված դատավարական հարկադրանքի կիրառման բացառումը: Սակայն այդ կարգավորումը չունեւ ամբողջական, համակարգային բնույթ, այլ ձևավորվում էր աստիճանաբար, քրեական դատավարության առանձին ինստիտուտների քայլ առ քայլ հաստատման միջոցով: Ռազմահեղափոխական կոմիտեի 1921 թ. ապրիլի 3-ի հրամանով բոլոր անհիմն խուզարկությունները համարվեցին հեղափոխական կարգուկանոնի խախտումներ և պատժվելու էին օրենքի ամբողջ խստությամբ⁸¹:

Ժողկոմխորհի 1921 թ. հունիսի 3-ի «Խուզարկության, առօրավման և կալանավորման կանոնների մասին» հրամանով թվարկվում էին այն մարմինները, որոնք իրավագոր էին իրականացնել նշված օրոճությունները: Նույն դեկրետով ամեն տեսակի կալանքները, խուզարկությունները և առօրավումները կարող էին կատարվել միայն արդարադատության ժողկոմատի դատաքննչական մարմինների կողմից, իսկ հակահեղափոխական և որոշ՝ առանձնապես վտանգավոր պետական հանցանքների վերաբերյալ օրոճերով՝ հատուկ օրդերի հիման վրա, որ տրվում էր Հայաստանի Արտակարգ հանձնաժողովի հատուկ բաժնի և քաղբյուրոյի հատուկ որոշմամբ: Միլիցիայի մարմինները մինչև սանկցիա ստանալն իրավունք ունեին ձերբակալվածներին պահել մինչև 4 ժամ, իսկ քրեական հետախուզության մարմինները՝ 7 օր, որից հետո, եթե սանկցիա չէր տրվում, ձերբակալվածներին պետք է ազատ արձակեին: Ի կատարումն այդ դեկրետի՝ ներքին օրոճերի և արդարադատության ժողկոմատներն ընդունեցին համատեղ հրահանգ, որով սահմանվեց խուզարկության, առօրավման, ինչպես նաև կասկածյալին ձերբակալելու կարգը և հիմքերը:

Հայաստանի ՍԽՀ արդժողկոմատի 1920 թ. դեկտեմբերի 22-ի հրամանով քրեական օրոճերի քննությունը պետք է վարեին դատարանի աշխատակիցները, իսկ քննության ղեկավարման հա-

⁸¹ Տե՛ս ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, 1921, պ. 2, հոդվ. 1:

մար ստեղծվում էին քննչական հանձնաժողովներ⁸²: Այդ հանձնաժողովների լիարժեքությունը կառուցված էր կոլեկտիվության սկզբունքով: Քննչական հանձնաժողովները քննում էին ամենաբարդ և կարևոր լիարժեք: Հսկում էին հետաքննության մարմինների լիարժեքությունը: Հրամանում սահմանված էր, որ արդարադատության մարմիններն իրենց լիարժեքության մեջ պետք է ղեկավարվեին խորհրդային իշխանության օրենքներով, հեղափոխական խղճով և սոցիալիստական իրավափոխակցությամբ: Արդարադատության ժողովմաստի 1921 թ. փետրվարի 9-ի որոշմամբ քննչական հանձնաժողովների փոխարեն ստեղծվեց ժողովրդական քննիչների ինստիտուտը: Նույն թվականի ապրիլի 9-ին արդարադատության ժողովմաստի կից հիմնադրվեց քննչական բաժին, որը ղեկավարում էր նախաքննության մարմինների աշխատանքը, իսկ ապրիլի 19-ին արդժողովմաստը հաստատեց հրահանգ, որը նախաքննության կատարումը կարգավորող առաջին նորմատիվ ակտն էր: Այդ հրահանգը սահմանում էր քրեական լիարժեք հարուցելու հիմքերը և նախաքննության վարման կարգը, ժողովրդական քննիչի իրավունքները և պարտականությունները, քննչական լիարժեքությունների շրջանակը և կատարման կարգը: Նախաքննության նկատմամբ հսկողությունն իրականացնում էր ժողովրդական դատարանը:

Հայաստանի ՍՍՀ քրեադատավարական իրավունքի կազմավորման հաջորդ քայլը ժողովրդապետի կողմից 1921 թ. հուլիսի 13-ին «Հայաստանի ՍՍՀ ժողովրդական դատարանների կանոնադրության» ընդունումն էր⁸³: Կանոնադրության մեջ ամրագրված էին դատական քննության որոշ սկզբունքներ (հրապարակայնություն, բանավորություն, անմիջականություն), լիարժեքի ընդդատությունը, դատավճիռների անփոփոխական և վերանայման կարգը և այլն:

Վերոնշյալ նորմատիվ իրավական ակտերի վերլուծությունը, 1920-22 թթ. քննչական և դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց են տալիս, որ քրեական լիարժեք անցնում էր 6 հիմնական փուլեր՝ քրեական լիարժեք հարուցում, նախնական քննություն, դատի տալը, դատական քննություն, օրինական ուժի մեջ

⁸² Տե՛ս ՀՍՍՀ ղեկրեստների և հրամանների ժողովածու, 1921, պ. 1, հոդվ. 30, 31:

⁸³ Տե՛ս ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, թ. 3, թ. 3-9:

չմտած դատավճիռների վերանայում, դատավճիռի կատարում: Դատավճիռների վերանայումը հսկողության կարգով և նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ՝ որպես քրեական դատավարության ինքնուրույն փուլեր, այդ շրջանում խորհրդային քրեական դատավարությանը դեռ հայտնի չէին:

Քրեական լիարժեք հարուցելու լիարժեքություն ունեին դատարանը և քննիչը: Գործի հարուցման առիթներ էին քաղաքացիների հայտարարությունները, միլիցիայի պաշտոնատար անձանց, հիմնարկությունների հաղորդումները, դատարանի որոշումը, քննիչի հայեցողությունը: Նախնական քննությունը բաղկացած էր հետաքննությունից և նախաքննությունից: Հետաքննության մարմինը պարտավոր էր հետաքննության նյութերը ներկայացնել դատավորին: Վերջինս այդ նյութերի հիման վրա լուծում էր անձին քրեական պատասխանատվության ենթարկելու և նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու հարցը: Ժողովրդական դատավորը հետաքննության մարմիններից ստացված լիարժեքով կարող էր անձամբ վարել նախաքննությունը կամ հանձնել քննիչին: Այն քրեական լիարժեքով, որոնք դատարանում պետք է լավեին դատավորի և ժողովրդական ատենակալների կազմով, նախաքննության կատարումը պարտադիր էր: Այդ լիարժեքով քննությունը վարում էին ժողովրդական քննիչները: Մնացած լիարժեքով դատավորն իր հայեցողությամբ որոշում էր բավարարվել հետաքննության նյութերով կամ լիարժեք հանձնել ժողովրդական քննիչին՝ նախաքննություն վարելու համար: Նախաքննության վարումը դատարանը կարող էր հանձնարարել նաև ժողովրդական դատավորին:

Նախաքննության նկատմամբ հսկողությունն իրականացնում էր համապատասխան դատարանը: Ըստ ժողովրդական դատարանների կանոնադրության՝ քննիչը պարտավոր էր քննությունն ավարտելուց հետո լիարժեք (մեղադրյալին դատի տալու կամ լիարժեք կարճման որոշման հետ միասին) ուղարկել ժողովրդական դատարան՝ հաստատելու համար: Դատարանը կարող էր վերացնել քննիչի որոշումը և լիարժեք ուղարկել լրաքննության: Քննիչի որոշումները շահագործված անձանց կողմից կարող էին անփոփոխատարկվել ժողովրդական դատարան՝ երկու շաբաթվա ընթացքում: Դատարանի որոշումներն այդ անփոփոխատարկվելու վերջնական էին:

Ըստ ժողովրդական դատարանների կանոնադրության՝ նախաքննության ընթացքում մեղադրանք առաջադրելու պահից թույլատրվում էր պաշտպանի մասնակցությունը: Պաշտպան նշանակվում էր պաշտպանների կողմից՝ քրեական պատասխանատվության ենթարկված անձի միջնորդությամբ: Քննիչին իրավուք էր վերապահված արձեղել կամ սահմանափակել պաշտպանի մասնակցությունը Պործին՝ ելնելով քննության շահերից: Այդ պատճառով պրակտիկայում պաշտպանի մասնակցությունը նախաքննության փուլում լայն տարածում չէր ստանում⁸⁴:

Իսկ ինչ վերաբերում է դատական քննության փուլին, ապա այս փուլի համար օրենքը նախատեսում էր ոչ միայն պաշտպանի մասնակցության հնարավորություն, այլև դրա պարտադիր դեպքերը՝ երբ Պործը քննվում էր չորս ժողատենակալների մասնակցությամբ, երբ Պործով մասնակցում էր մեղադրողը, երբ կար պաշտպան նշանակելու վերաբերյալ ամբաստանյալի խնդրանքը: Պաշտպանի դերում կարող էին հանդես գալ նաև մեղադրյալի մտերիմ հարազատները:

Դատի տալն իրականացվում էր քննիչի և դատարանի կողմից: Ավարտելով քննությունը՝ քննիչը կայացնում էր անձին դատի տալու մասին որոշում: Այն պարտադիր պետք է հաստատվեր ամբողջ դատական կազմի կողմից, այսինքն՝ դատարանը ստույգում էր այդ որոշման հիմնավորվածությունը: Մնացած Պործերով, որոնցով նախաքննություն չէր անցկացվում, դատի տալու հարցը լուծում էր դատավորը՝ միանձնյա:

Դատական գիտն ընթանում էր կողմերի մասնակցությամբ: Ամբաստանյալի ցանկության դեպքում պաշտպանի մասնակցությունը դատական գիտին պարտադիր էր: Կողմերի անհար-

⁸⁴ Արդժողկոմատի 1921 թ. հունվարի 4-ի հրամանով ստեղծվեց դատական պաշտպանների կոլեկիան, սակայն ձևավորված քաղաքական իրադրության մեջ այն իրեն չարդարացրեց և վերացվեց: Ժողկոմխորհի 1921 թ. նոյեմբերի 9-ի «Մեղադրանքի և պաշտպանության կազմակերպման մասին» դեկրետով արդժողկոմատի տեղական մարմիններին կից ստեղծվեցին մեղադրողների և պաշտպանների կոլեկիաներ: Կոլեկիաների անդամներն ունեին պետական ծառայողի կարգավիճակ և նշանակվում էին արդժողկոմխորհի կողմից (տե՛ս ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, 1921, պ. 3, հոդվ. 78): Սակայն այս քայլը ևս չնպաստեց պաշտպանների լայն մասնակցությանը քրեական դատավարությանը (տե՛ս *Պիվազյան Հ.Մ.*, Դատարանի կազմակերպումը և զարգացումը Սովետական Հայաստանում, Երևան, 1966 էջ 11-12, 39-40):

ձեղի պատճառներով չներկայանալը դատարան չէր կարող Պործի քննության հետևած մասն պատճառ լինել, եթե դատարանը նրանց ներկայությունը դատական գիտին պարտադիր չէր համարում: Հեռակա կարգով կայացված դատավճիռները հանձնվում էին կողմերին: Վերջիններս կարող էին այն անօտարկել ընդհանուր հիմունքներով:

Դատական քննությունը կառուցված էր բանավորության, անընդհատության և անմիջականության սկզբունքների հիման վրա: Գործի լսումն սկսվում էր Պործի մասին ժողդատավորի զեկուցմամբ: Նախաքննություն անցած Պործերով դատավորը, բացի զեկուցումից, նաև հրապարակում էր քննիչի որոշումն անձին դատի տալու մասին: Եթե տուժողը ներկա էր դատական գիտին, ապա նա ելույթ էր ունենում նախաօրհի զեկուցումից հետո: Իր ելույթում տուժողը շարադրում էր մեղադրանքի էությունը: Դրանից հետո նախաօրհի իրավաբանորեն ձևակերպում էր մեղադրանքը և հարցով դիմում ամբաստանյալին՝ արդյոք նա իրեն մեղավոր ճանաչո՞ւմ է: Եթե մեղադրյալը լրիվ ընդունում էր առաջադրված մեղադրանքը, ապա դատարանն իրավունք էր ձեռք բերում առանց ապացույցների քննության անմիջապես անցնել կողմերի վիճաբանությանը: Հակառակ դեպքում Պործով ապացույցների ուսումնասիրությունը պարտադիր էր: Ապացույցների ուսումնասիրությունից հետո, եթե դատարանը օտնում էր, որ Պործի հանգամանքները դատական գիտի ընթացքում բավարար չափով պարզված են, ապա վերջին խոսք ասելու համար ձայն էր տալիս կողմերին, այն հաշվով, որ վերջինը ելույթ ունենար ամբաստանյալը: Պաշտպանի մասնակցության դեպքում ամբաստանյալին ձայն էր տրվում պաշտպանից հետո:

Դատավճիռ կայացնելիս Պործում էր օաղտնի խորհրդակցության կանոնը: Դատավճիռը կայացվում էր ձայների պարզ մեծամասնությամբ: Դատական կազմի անդամներն ունեին առանձին կարծիքի իրավունք, որը կցվում էր դատավճիռին:

Ժողովրդական դատարանի դատավճիռները երկու շաբաթվա ընթացքում կարող էին անօտարկվել շահաօրհիո անձանց կողմից: Այդ իրավունքն ունեին նաև տեղական հեղկոմները՝ խորհրդային իշխանության տեղական մարմինները:

Վճռաբեկ ատյան էր համարվում ժողովրդական դատավորների խորհուրդը, որն ուներ քրեական և քաղաքացիական բաժան-

մունքներ: Ժողովրդական դատավորների խորհուրդը կարող էր բեկանել ժողդատարանի դատավճիռը, եթե □տներ, որ դա կայացվել է էական խախտումներով կամ ճիշտ չեն կիրառվել □ործող դեկրետները: Վճռաբեկության հիմքեր էին մասնատարական նորմերի խախտումները, նախաքննության թերությունները, դատավճիռի բացահայտ անարդար բնույթը: Վճռաբեկ ատյանը կաշկանդված չէր □ան□ատում մատնանշված հան□ամանքներով: Վերացնելով դատավճիռը՝ վճռաբեկ ատյանը □ործն ուղարկում էր ժողդատարան՝ նորից լսելու համար: Վճռաբեկ ատյանի ցուցումները պարտադիր էին ժողդատարանի համար:

1921 թ. հոկտեմբերի 19-ին Հայաստանի ՍԽՀ Ժողկոմխորհը և արդժողկոմատն ընդունեցին «Գերա□ույն դատական հսկողության ժամանակավոր կանոնադրությունը», որով ՌԽՖՍՀ-ի օրինակով Հայաստանում հիմնադրվեց հսկողության կար□ով դատավճիռների և որոշումների վերանայման նոր ինստիտուտ⁸⁵: Այդ ինստիտուտը, որ բնորոշ էր միայն խորհրդային արդարադատությանը, արդժողկոմատին իրավունք էր վերապահում հսկողություն իրականացնել հանրապետության դատական մարմինների □ործունեության նկատմամբ՝ պարզաբանումներ և ցուցումներ տալ □ործող օրենսդրության ատթիվ, հսկողության կար□ով վերանայել օրինական ուժի մեջ մտած դատավճիռները և որոշումները: Ընդ որում, այդ ակտերը վերանայվում էին կա՛մ արդժողկոմատի նախաձեռնությամբ կա՛մ խորհրդային իշխանության կենտրոնական մարմինների և □ավատային հեղկոմների միջնորդությունների հիման վրա⁸⁶: Այդ □ործառույթի իրականացման համար արդժողկոմատի կենտրոնական ապարատում հիմնադրվում էր բարձրա□ույն դատական հսկողության բաժինը: Այդպիսով, վարչական մարմինը կատարում էր դատական մարմնի □ործառույթներ: Դա, փաստորեն, դատարանի վրա ազդելու ևս մեկ լծակ էր, դատարանը վարչական իշխանությունների վերահսկողության տակ պահելու միջոց:

Հայաստանի ՍԽՀ քրեադատավարական համակար□ի կայացման □ործում կարևոր դեր է խաղացել Հայաստանի ՍԽՀ ԿԳԿ-ի 1922 թ. հուլիսի 22-ի «Հայաստանի ՍԽՀ դատախազու-

⁸⁵ Տե՛ս ՀՍԽՀ դեկրետների և որոշումների հավաքածու, 1921, թիվ 11, հոդվ. 68:

⁸⁶ Տե՛ս նույն տեղը:

յան կանոնադրությունը», որով օրինականության վրա հսկողության և հանցավորության դեմ պայքարի նպատակով հիմնադրվեցին դատախազության մարմինները⁸⁷: Արդժողկոմատի կառուցվածքում հիմնվում էր դատախազության բաժինը, և արդարադատության ժողկոմիսարը միաժամանակ համարվում էր հանրապետության դատախազ: Կանոնադրությունը դատախազության խնդիրներն էր համարում. «Պետության անուհից իրականացնել հսկողություն բոլոր պետական մարմինների, տնտեսական հիմնարկությունների, հասարակական և մասնավոր կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր անձանց □ործողությունների օրինականության նկատմամբ, մեղավորների նկատմամբ հարուցել քրեական հետապնդում, բողոքարկել օրենքը խախտող որոշումները, իրականացնել անմիջական հսկողություն հետաքննության և նախաքննության մարմինների՝ հանցա□ործությունները բացահայտելու □ործունեության նկատմամբ, հիմնավորել մեղադրանքը դատարանում, հսկողություն իրականացնել կալանքի տակ պահելու օրինականության վրա»⁸⁸:

Սկսած 1922 թ. ՌԽՖՍՀ-ում հեղափոխական օրինականության դոկտրինայի ազդեցությամբ իրականացվում էր դատաիրավական բարեճոր□ում: Սակայն Հայաստանի ՍԽՀ-ում դեռ նկատվում էին արտակար□այնությունը և ծայրահեղ հեղափոխական գիհիլիզմի դրսևորումները: Այսպես, Հայաստանի ՍԽՀ ԿԳԿ-ի 1922 թ. մայիսի 19-ի որոշման ուժով ժողովրդական դատարաններին կից հիմնադրվեցին հատուկ արտակար□ մտաշրջանները⁸⁹: Ըստ այդ որոշման՝ ժողովրդական դատարանները պարտավոր էին նշանակել ամենօրյա հատուկ արտակար□ դատական գիստեր: Այդ գիստերում նախա□ահում էր ժողովրդական դատավորը, իսկ նրա բացակայության կամ □երձանաբեռնվածության դեպքում՝ նույն տեղամասի քննիչը: Դատական կազմում ընդ□րկվում էին երկու կամ չորս՝ հերթից դուրս հրավիրված ժողովրդական ատենակալները: Այդ գիստերում լսվում էին այն քրեական □ործերը, որոնցով որպես խափանման միջոց կիրառվել էր կալանքը և որոնցով անհրաժեշտություն չկար կատարել հետաքննություն ու նախաքննություն: Արտակար□ դատական գիս-

⁸⁷ Տե՛ս նույն տեղը, 1922, թիվ 14, հոդվ. 94:

⁸⁸ Տե՛ս նույն տեղը:

⁸⁹ Տե՛ս նույն տեղը, 1922, թիվ 12, հոդվ. 75:

տերում զործի քննությունը պետք է տարվեր զործող դատավարական նորմերին համապատասխան: Վերը նշված որոշումը դատական կազմին հնարավորություն էր տալիս տվյալ գիտում զործը լուծելու անհնարինության դեպքում դրան ընթացք տալ ըստ սովորական կարգի: Արտակարգ դատական գիտերը նպատակ ունեին արագացնել ժողովրդական դատարանների աշխատանքները: Արտակարգայնության մյուս դրսևորումը արտակարգ եռյակի հիմնադրումն էր՝ Հայաստանի ՍԽՀ ԿԳԿ-ի 1922 թ. հունվարի 19-ի որոշմամբ⁹⁰: Դասալքության դեմ պայքարն ուժեղացնելու համար այդ եռյակին իրավունք տրվեց դասալիքների կամ նրանց օժանդակող անձանց զործերով նշանակել պատիժ ընդհուպ մինչև զնդակահարություն:

Իրավական գիհիլիզմի դրսևորման մյուս օրինակը կարող ենք համարել Հայաստանի ՍԽՀ 1922 թ. Սահմանադրությունը: Սահմանադրության 10 հոդվ. հռչակում էր. «Բուրժուական իրավակարգը և արդարադատությունը արմատախիլ անելու և պրոլետարիատի ու աղքատ զյուղացիության դիկտատուրայի հաստատման ու պաշտպանության համար վերացվում են նախկին հակահեղափոխական կառավարությունների բոլոր օրենքները և դատարանները: Դրանց փոխարեն՝

ա) բանվորազյուղացիական իրավունքի աղբյուր է ճանաչվում խորհրդային օրենսդրությունը, սոցիալիստական իրավափտակցությունը և հեղափոխական խիղճը,

բ) արդարադատության հիմք է ճանաչվում միասնական ժողովրդական դատարանը, որ հեռվում է աշխատավոր մասսաների դասակարգային կազմակերպությունների վրա, միաժամանակ ճանաչվում է արտակարգ դատավարության անհրաժեշտությունը բանվորազյուղացիական հեղափոխության բարձրաույն շահերի պաշտպանության համար»:

Այսպիսով, ՀՍԽՀ-ի հռչակմամբ ամբողջովին ոչնչացվեց Հայաստանի առաջին Հանրապետության ժամանակ ստեղծված դատական համակարգը, և, 1920-22 թթ. ընթացքում, օտարզործելով ՌԽՖՍՀ-ի դատական շինարարության փորձը, կառուցվեց սկզբունքորեն նոր, խորհրդային դատական համակարգ, որը, լիներով պարզեցված, և՛ կառուցվածքային, և՛ զործառության տեսանկյունից վերածվեց դասակարգային պայքարի հզոր միջոցի,

⁹⁰ Տե՛ս նույն տեղը, 1922, թիվ 2, հոդվ. 7:

դարձավ զործիք՝ ամբողջատիրական իշխանության ձեռքին դասակարգային թշնամիներին, քաղաքական հակաակորդներին, այլախոհներին ճնշելու համար:

Ամփոփելով կարող ենք արձանագրել, որ խորհրդային արդարադատությունը Հայաստանի օրինակով ուներ այնպիսի բնութագրական զծեր, ինչպիսիք են՝ դատավարության մեջ սոցիալ-քաղաքական շարժառիթների ներմուծումը, արդարադատության դասակարգային բնույթի ճանաչումը, դատավորների ընտրությունն ըստ դասակարգային շահերի, նրանց փոփոխելիությունը, դատական պրոֆեսիոնալիզմի դերի նվազեցումը, դատական և իշխանակառավարչական զործունեության տեսակների մերձեցումը, արտակարգ արդարադատության անհրաժեշտության ճանաչումը, սոցիալիստական իրավափտակցությունը և հեղափոխական խիղճը իրավունքի աղբյուր ճանաչելը, դատավարական ձևի դերի և նշանակության նվաստացումը:

§ 2. Դատաիրավական բարեփոխումները և ՀՍԽՀ 1923 թ.

քրեական դատավարության օրենսզիրքը

Անցումը նոր տնտեսական քաղաքականությանը պահանջեց վերանայել օրինակության և քաղաքացիների իրավունքների վերաբերյալ պատկերացումները: Ձևավորվեց հեղափոխական օրինականության դոկտրինան, որը և դարձավ դատաիրավական բարենորոումների զաղափարական հիմքը: Այդ բարենորոումը Հայաստանի ՍԽՀ-ում անցկացվեց ՌԽՖՍՀ-ի համապատասխան բարենորոման օրինակով: Եթե սոցիալիստական հեղափոխության հաղթանակի և հին օրենսդրության վերացման փուլում իրավունքի համարյա միակ աղբյուրը հեղափոխական իրավափտակցությունն էր, ապա նոր տնտեսական քաղաքականությանն անցնելով՝ ծագեց նոր մոտեցում հեղափոխական օրինականության նկատմամբ: Այն ժամանակների իրավունքի տեսաբանները հեղափոխական օրինականության տակ սկսեցին հասկանալ այն իրավակարգը, որը պրոլետարական դիկտատուրայի զերաույն մարմինների կողմից ճանաչվում էր նպատակահարմար և համապարտադիր, իսկ խորհրդային իրավունքը բնորոշվում էր հետևյալ կերպ. «Իրավունքը զերիշխող դասակարգի շահերին համապատասխանող և նրա կազմակերպված ուժով պահպանվող հասա-

րակական հարաբերությունների համակարգ է»⁹¹: Այս պայմաններում արդեն իրավափտակցությունը դիտարկվում էր իրավաստեղծափորձության հիմք, որի միջոցով այն դրվում էր օրենսդրության հիմքում, դրսևորվում էր ընդունվող օրենսփոքերի բովանդակության մեջ: Այդպիսի տեսական մոտեցման դեպքում հեղափոխական (սոցիալիստական) իրավափտակցությունը ձեռք էր բերում նոր՝ օրենքում առկա բացերի լրացման մեթոդի նշանակություն: Պատահական չէր, որ այն ժամանակվա համարյա բոլոր ճյուղային օրենսփոքերով թույլատրված էր անալոգիան⁹²: «Պրոլետարական դատարան—բուրժուական իրավունք» դիլեմայի լուծումն իրականացվում էր հետևյալ կերպ՝ դատավորը նախ պետք է փորձեր ուղղակի պատասխանը օտնել փորձող օրենքում: Եթե դա չէր հաջողվում, ապա նա դիմում էր խորհրդային օրենսդրության էությունից բխող «ընդհանուր դրույթների» վերլուծությանը: Այստեղ ևս չօտնելով բավականաչափ որոշակի պատասխան՝ դատավորներն իրավունք ունեին լուծումը փնտրել վերջին ատյանում՝ «դասակարգային քաղաքականության ընդհանուր սկզբունքներում»⁹³: Ահա այսպիսի տեսական մոտեցումը պայմանավորեց մանրամասն իրավական կարգավորման անհրաժեշտությունը: Ծավալվեց կողիֆիկացիոն մեծ աշխատանք, իրականացվեց դատաիրավական բարեփոխում: Սակայն այդ փորձերից ունեցն հակասական բնույթ, քանի որ մի կողմից դրանց իրականացման ընթացքում չընկալվեցին համաշխարհային իրավական մտքի նվաճումները, իսկ մյուս կողմից օրենսդիրը պետության և իրավունքի մահվան դոկտրինայի համատեքստում անցման շրջանի իրավունքը դիտարկում էր որպես հարաբերական և ժամանակավոր երևույթ: «Իրավական ձևը թվում էր անցողիկ, սպասում էին դրա արագ անհետացմանը և իրավական նորմերը տեխնիկական ու կազմակերպական նորմերով փոխարինելուն»⁹⁴: Ռա, իհարկե, չէր կարող չհանգնել իրավական նիհիլիզմի, իրավական ձևի անտեսման և վերջին հաշվով սոցիալիստական օրինականության խախտումների:

⁹¹ Տե՛ս *Նոս-եա Ի.Է.* *Èçáðáííúá ìðíèçááááíèÿ ìí ì àðèñèñòñèí-èáíèíñèíè òáíðèè ìðááá. Ðèáá, 1964, էջ 58:*

⁹² Տե՛ս *Էնթաա Է.Ա.* *Èñòí ðèÿ àí òóááðñóáà è ìðááá Ðíññèè. Ի ., 1996, էջ 438:*

⁹³ Տե՛ս նույն տեղը, էջ 439:

⁹⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 441:

Դատաիրավական բարենորոնների իրականացման սկիզբը դրվեց Հայաստանի ՍԽՀ ԿԳԿ կողմից, 1922 թ. հուլիսի 22-ին դատարանակազմության կանոնադրության ընդունմամբ⁹⁵: Այդ կանոնադրությունը հրաժարվեց արտակարգությունից՝ վերացնելով հեղափոխական տրիբունալները: Բարենորոնների օաթթնակետը դարձավ Հայաստանի ՍԽՀ ԿԳԿ-ի կողմից 1923 թ. սեպտեմբերին երեք օրենքների՝ Հայաստանի ՍԽՀ դատարանակազմության կանոնադրության, Հայաստանի ՍԽՀ քրեական դատավարության օրենսփոքի, Հայաստանի ՍԽՀ քաղաքացիական դատավարության օրենսփոքի ընդունումը⁹⁶:

Դատաիրավական բարենորոնների հետևանքով վերացվեց հեղափոխական տրիբունալների համակարգը և ստեղծվեց համաքաղաքացիական դատարանների միասնական համակարգ, որն ընդօրկում էր երեք օղակ՝ օավառի սահմաններում փորձող ժողովրդական դատարան, հանրապետության օլխավոր դատարան, օերաօույն դատարան: Վերացվեցին ժողովրդական դատարանների խորհուրդը և արդարադատության ժողկոմատի օավանային բաժինները: Այդ մարմինների բոլոր փորձառույթներն անցան նոր ստեղծված օլխավոր դատարանին: Գերաօույն դատարանին անցան վճռաբեկ ատյանի փորձառույթները և արդժողկոմատի բարձրաօույն դատական հսկողության բաժնի լիազորությունները:

Ժողովրդական դատավորներն ընտրվում էին օավառային խորհուրդների փորձադիր կոմիտեների կողմից՝ մեկ տարի ժամկետով: Թույլատրվում էր դատավորի վաղաժամկետ ետ կանչում՝ դրա պատճառների մասին պարտադիր կերպով տեղյակ պահելով Հայաստանի ՍԽՀ արդժողկոմատին: Ժողովրդական դատավորի թեկնածուն պետք է ունենար երկու տարվա քաղաքական պատասխանատու աշխատանքի ստաժ կամ արդարադատության մարմիններում պատասխանատու փորձնական աշխատանքի երեքամյա ստաժ:

Բացի ընդհանուր դատարաններից կազմակերպվեցին հատուկ դատարաններ՝ ա) ռազմական տրիբունալներ, բ) աշխատանքային փորձերով ժողովրդական դատարանի հատուկ

⁹⁵ Տե՛ս ՀՍԽՀ դեկրետների և որոշումների հավաքածու, 1923, թիվ 4, հոդվ. 55:

⁹⁶ Տե՛ս նույն տեղը, 1924, թիվ 4, հոդվ. 23, 1924, թիվ 5, հոդվ. 4:

նատաշրջաններ, □) հողային հանձնաժողովներ, դ) տնտեսական վեճերի լուծման արբիտրաժային հանձնաժողովներ:

Արդարադատության մարմինների կազմակերպման և □ործունեության ոլորտում այդ տարիներին նկատվող միտումներն էին՝ հրաժարումը արտակարգությունից և արդարադատության նվազա□ույն պահանջներին համապատասխանող դատարանների ստեղծումը, Հայաստանի ՍԽՀ դատական համակարգի ընդ□րկումը ԱՍՖԽՀ-ի, իսկ այնուհետև՝ ԽՍՀՄ դատական մարմինների համակարգում, քրեադատավարական օրենս□րքի՝ քրեական դատավարությունը կար□ավորող ամբողջական, միասնական օրենսդրական ակտի ընդունումը: Հայաստանի ՍԽՀ 1923 թ. քրեադատավարական օրենս□իրքը □ործողության մեջ դրվեց նույն տարվա հոկտեմբերի 1-ից: Այդ կապակցությամբ վերացվեցին բոլոր նախկին քրեադատավարական նորմերը: Հայաստանի ՍԽՀ 1923 թ. քրեական դատավարության օրենս□իրքը բաղկացած էր 6 բաժիններից, 32 □լուխներից և 465 հոդվածներից:

Առաջին բաժինը սահմանում էր ամբողջ դատավարության համար սկզբունքային նշանակություն ունեցող և, որպես կանոն, դատավարության բոլոր փուլերում □ործող դրույթները:

Երկրորդ բաժինը կար□ավորում էր հետաքննության և նախաքննության հարաբերությունները:

Երրորդ բաժինը նվիրված էր վարույթին՝ ժողովրդական դատարանում, ինչպես նաև վճռաբեկ, հսկողական, նոր ի հայտ եկած հան□ամանքներով և հատուկ վարույթներին:

Չորրորդ բաժինը կար□ավորում էր վարույթը ռազմական տրիբունալներում և □երա□ույն տրիբունալում:

Հին□երորդ բաժինը սահմանում էր արդժողկոմատի կողմից իրականացվող բարձրա□ույն վերահսկողության կար□ը:

Վեցերորդ բաժինը կար□ավորում էր դատավճռի կատարման կար□ը:

Հայաստանի ՍԽՀ 1923 թ. քրեական դատավարության օրենս□րքում անմիջականորեն օրենսդրորեն ամրա□րվել էին քրեական դատավարության որոշ ժողովրդավարական սկզբունքներ, ինչպես օրինակ, դատական քննության հրապարակայնությունը, դատավարության ազ□ային լեզուն, մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովումը:

Ի տարբերություն նախորդ շրջանի՝ քրեադատավարական իրավունքի հիմքում ընկած էր սոցիալիստական օրինականության

սկզբունքը, որը քրեական դատավարության օրենս□րքի 1 հոդվածում ամրա□րված էր հետևյալ կերպ. «Հայաստանի ՍԽՀ դատական հիմնարկություններում քրեական □ործերով վարույթի կար□ը սահմանվում է սույն օրենս□րքով»: Դատական քննության հրապարակայնության սկզբունքն ամրա□րված էր օրենս□րքի 19, 20, 21 հոդվածներում: Համաձայն այդ հոդվածների՝ բոլոր դատական գիտերը վարվում էին հրապարակային: Բացառություն թույլատրվում էր միայն դատարանի պատճառաբանված որոշման հիման վրա, եթե □ործի քննությունը կապված էր ռազմական, դիվանա□իտական, պետական □աղտնիքների հրապարակման հետ, ինչպես նաև սեռական հանցա□ործությունների վերաբերյալ □ործերով: Դատարանի դատավճիռները բոլոր դեպքերում հրապարակվում էին դռնբաց միստերում:

Դատավարությունը տարվում էր հայերենով կամ սովյալ վայրի բնակչության մեծամասնության լեզվով (1923 թ. քր. դատ. օր. հոդվ. 22): Այն դեպքերում, երբ դատավարության մասնակիցը չէր տիրապետում դատավարության լեզվին, ապա նրան ապահովվում էին թար□մանով, դրանից բացի նա հնարավորություն ուներ դատարանում հանդես □ալ իր մայրենի լեզվով:

1923 թ. քրեական դատավարության օրենս□իրքը սահմանում էր անձի անձեռնմխելիության որոշ դատավարական երաշխիքներ՝ դատավորին և դատախազին պարտադրելով անհապաղ ազատ արձակել ապօրինի կար□ով կալանավորված անձանց: Քննիչը, դատախազը, դատավորը պարտավոր էին ապահովել մեղադրյալի (ամբաստանյալի) իրավունքների պահպանումը: Քրեական դատավարության բոլոր փուլերում մեղադրյալն իրավունք ուներ հերքել իրեն ներկայացված մեղադրանքները, ներկայացնել ապացույցներ, հարուցել փաստաթղթեր պահանջելու միջնորդություններ, պահանջել փորձաքննության նշանակում, հարցաքննությունների կատարում և այլն: Քննությունն ավարտվելուց հետո մեղադրյալը հնարավորություն ուներ ծանոթանալ □ործի նյութերին և խնդրել լրացնել քննությունը:

Տնօրինական միստում մեղադրյալին դատի տալու մասին որոշում կայացնելուց հետո մեղադրյալն ուներ պաշտպանի իրավունք: Պաշտպանին նշանակում էին ամբաստանյալի նախաձեռնությամբ կամ նրա հարազատների, ինչպես նաև դատարանի նախաձեռնությամբ: Օրենս□իրքը պաշտպանի մասնակցությունը

համարում էր պարտադիր, եթե Ռործը քննվում էր վեց ժողովրդական ատենակալների մասնակցությամբ, ամբաստանյալի կալանքի տակ Ռտնվելու, մեղադրողի մասնակցության դեպքերում, ինչպես նաև, երբ ամբաստանյալն իր ֆիզիկական թերությունների (համրության, խուլության և այլն) հետևանքով չէր կարող անձամբ իրականացնել իր իրավունքները: Ամբաստանյալին հանձնվում էր մեղադրական եզրակացության պատճենը, որը նրան հնարավորություն էր տալիս պատրաստվելու պաշտպանությանը: Ամբաստանյալը կարող էր ծանոթանալ Ռործին, նշումներ կատարել, դատարանի առաջ հարց բարձրացնել՝ պահանջելու անհրաժեշտ փաստաթղթերը, կանչել նոր վկաներ: Ամբաստանյալը ակտիվորեն մասնակցում էր ապացույցների ստուգմանը, կարող էր հարցեր տալ, առանձին ապացույցների վերաբերյալ արտահայտել իր կարծիքը: Ամբաստանյալին տալով վերջին խոսքի իրավունք՝ 1923 թ. քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանում էր, որ վերջին խոսքը չէր կարող սահմանափակվել, եթե ամբաստանյալն այն չէր օտարործում հակախորհրդային քարոզչության համար:

Դատապարտյալը կարող էր ՌանՌատարկել դատավճիռը: Դատավճիռը պետք է լիներ բովանդակային, հիմնավորված, արդարացի, օրինական: Դատապարտյալը կարող էր վիճարկել ցանկացած դատավճիռի իրավաչափությունը և հիմնավորվածությունը:

Քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանում էր նախաքննության օրենսդրության սկզբունքը: Գործի հանՌամանքները պետք է ուսումնասիրվեին բազմակողամի, լրիվ և օրենսդրական շնորհիվ այս սկզբունքը ձևակերպված էր որպես նախաքննության ընդհանուր պայման, բայց այն որոշիչ էր նաև դատավարության այլ փուլերի համար:

Նախնական քննության փուլում հրապարակայնության սկզբունքը չէր Ռործում: Դա նշանակում էր, որ քննության նյութերը հրապարակվում էին միայն այն դեպքում և այն ծավալով, ինչքանով դա հնարավոր էր համարում քննիչը:

1923 թ. քրեական դատավարության օրենսդրությամբ հասարակայնության ներկայացուցիչներին օժտում էր մի շարք իրավունքներով, ինչը թույլ էր տալիս նրանց ակտիվորեն մասնակցել քրեադատավարական Ռործունեությանը: Այսպես, օրինակ՝ արհ-

միությունների ներկայացուցիչները հնարավորություն ունեին պաշտպանելու մեղադրանքը, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները կարող էին մասնակցել դատական քննությանը՝ որպես պաշտպան: 1923 թ. քրեական դատավարության օրենսդրությամբ դատարանին չէր կաշկանդում ձևական ապացույցներով: Նա Ռործը պետք է լուծեր Ռործի բոլոր հանՌամանքների քննության և դրանց Ռնահատման արդյունքում ձևավորված ներքին համոզման հիման վրա: Օրենսդրությամբ չկար ապացույց հասկացության ծավալում բնորոշումը, բայց թվարկված էին դրանց ստացման աղբյուրները՝ վկաների ցուցմունքները, փորձատի եզրակացությունը, իրեղեն ապացույցները, զննության արձանաՌությունները և այլ Ռրավոր փաստաթղթերը, մեղադրյալի անձնական մեկնաբանությունները: Քննչական և դատական մարմինները պետք է ստուգեին և Ռնահատեին բոլոր ապացույցները, այդ թվում և՛ մեղադրյալի խոստովանությունը:

Ըստ 1923 թ. քրեական դատավարության օրենսդրությամբ՝ քրեական դատավարության փուլերն էին՝ քրեական Ռործի հարուցումը, հետաքննությունը և նախաքննությունը, դատի տալը, դատական քննությունը, վճռաբեկ վարույթը և դատավճիռի կատարումը: Հետաքննության և նախաքննության նյութերն ունեին նույն նշանակությունը: Քննիչը կարող էր իր որոշմամբ հետաքննության նյութերին տալ նախաքննության ուժ: Նման դեպքերում նա պարտավոր էր միայն առաջադրել մեղադրանքը, հարցաքննել մեղադրյալին, նրան ծանոթացնել Ռործի նյութերին և կազմել մեղադրական եզրակացություն:

Քրեական Ռործ հարուցելու համար պետք է առկա լինեին առիթներ և հիմքեր: Գործի հարուցման առիթներ էին քաղաքացիների հայտարարությունները, պետական և հասարակական կազմակերպությունների պաշտոնատար անձանց հաղորդումները, մեղայականով ներկայանալը, հետաքննության մարմինների, քննիչի, դատախազության և դատարանի նախաձեռնությունը: Քրեական դատավարության օրենսդրությամբ չէր տալիս քրեական Ռործ հարուցելու հիմք հասկացության բնորոշումը, բայց մի շարք հոդվածներից բխում էր, որ օրենսդիրը որպես այդպիսին նկատի ուներ հանցաՌործության հատկանիշները նշող բավարար տվյալների առկայությունը:

Քաղաքացիների անանուն հայտարարությունները և կարող էին ծառայել քրեական հետապնդման հարուցման հիմք, սակայն

հետաքննության մարմինների կողմից դրանք նախնական ոչ հրապարակային ստուգման ենթարկելուց հետո միայն:

Հետաքննության մարմինների զործուներության կարգը տարբերակված էր՝ կախված այն բանից՝ քննում էին արդյոք նրանք զործեր, որոնցով նախաքննությունը պարտադիր էր, թե զործեր, որոնցով հետաքննության ակտերը կարող էին ծառայել հիմք՝ մեղադրյալին առանց նախաքննության կատարման դատի տալու համար: Հետաքննության մարմինների կողմից հանցազործության կատարման մեջ կասկածվող անձի ձերբակալումը թույլատրվում էր միայն դատախազի սանկցիայի հիման վրա՝ հետևյալ դեպքերում.

- 1) երբ հանցազործը բռնվում էր հանցազործությունը նախապատրաստելիս, կատարելիս կամ այն կատարելուց անմիջապես հետո,
- 2) երբ տուժողը կամ ականատեսները մատնանշում էին տվյալ անձին որպես հանցազործության կատարողի,
- 3) երբ կասկածվող անձի վրա, կամ նրան կից, կամ նրա բնակարանում հայտնաբերվում էին հանցազործության հետքեր,
- 4) երբ կասկածյալը փորձում էր փախուստի դիմել կամ ձերբակալվել է փախուստի պահին,
- 5) երբ կասկածյալը չուներ մշտական բնակության կամ մշտական գրադմուքի վայր,
- 6) երբ պարզված չէր կասկածյալի անձը:

Այն զործերով, որոնցով նախաքննության կատարումը պարտադիր չէր, հետաքննություն կատարելիս հետաքննության մարմինները, որոշ բացառություններով, ղեկավարվում էին նախաքննության կանոններով:

1923 թ. քրեական դատավարության օրենսդիրքը նախատեսում էր դատավարական բնույթի հետևյալ հարկադրանքի միջոցները՝ խուզարկություն և առգրավում, մեղադրյալի ուղքի վրա կալանք դնելը, խափանման միջոցները, բերման ենթարկելը և այլն: Միաժամանակ սահմանվում էին նման բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման կարգը և պայմանները: Սահմանված էր, որ խուզարկությունը և առգրավումը քննիչը կարող էր իրականացնել միայն կոնկրետ քրեական զործերով և հիմքերի առկայության դեպքում: Գուլքի վրա կալանք դնելը թույլատրվում էր երկու դեպքում՝ ա) քաղաքացիական հայրը ապահովելու համար,

բ) եթե տվյալ զործով որպես պատժատեսակ կարող էր կիրառվել դատապարտյալի ուղքի բռնագրավումը:

Խափանման միջոցներն էին՝ ստորադրությունը՝ առանց քննիչի (դատարանի) թույլտվության չհեռանալու մասին, անձնական երաշխավորությունը, օրավը (թանկարժեք ուղք, փող), նախնական կալանքը: Խափանման միջոցների կիրառումը, որպես կանոն, թույլատրվում էր միայն մեղադրանք առաջադրելուց հետո: Եթե նման միջոցները կրավում էին մինչև մեղադրանք առաջադրելը, ապա 10 օրվա ընթացքում անհրաժեշտ էր առաջադրել մեղադրանք, հակառակ դեպքում պետք է վերացվեր խափանման միջոցի կիրառման որշումը: Դատախազը պետք է ապահովեր օրենքների ճիշտ և անշեղ կիրառումը:

Նախաքննություն կատարելիս քննիչը պետք է պարզեր և ուսումնասիրեր ինչպես մեղադրյալին մերկացնող, այնպես էլ նրան արդարացնող հանգամանքները, հավասարապես նաև ինչպես նրա պատասխանատվության աստիճանը և բնույթը ծանրացնող, այնպես էլ մեղմացնող հանգամանքները: Ըստ քրեական դատավարության օրենսդրքի 111 հոդով՝ քննիչը պարտավոր էր զործի քննությունը տանել հանցազործության հանգամանքների առավել լրիվ ու բազմակողմանի ուսումնասիրության ուղղությամբ: Երբ զործով հավաքվում էին բավարար քանակությամբ ապացույցներ՝ մեղադրյալին դատի տալու համար, ապա քննիչը մեղադրյալին հայտարարում էր քննության ավարտի մասին և ծանոթանալու համար նրան ներկայացնում զործով ողջ վարույթը: Այն դեպքերում, երբ մեղադրյալը խնդրում էր լրացնել քննությունը, քննիչը կարող էր բավարարել մեղադրյալի խնդրանքը կամ մերժել նրան: Այդ հարցը լուծելիս քննիչը պետք է ելներ լրացուցիչ նյութերի՝ զործի համար ունեցած կարևորությունից: Մերժելու դեպքում քննիչը պարտավոր էր կայացնել հիմնավորված որոշում:

Նախաքննությունն ավարտելուց հետո քննիչը կազմում էր մեղադրական եզրակացություն և զործն ուղարկում դատախազին: Այն զործերով, որոնցով նախաքննության կատարումը պարտադիր էր, նախնական քննությունը պետք է ավարտվեր երկու ամսվա ընթացքում, ներառյալ նաև դատի տալու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու պահերը:

Դատախազն իրականացնում էր հսկողություն քննության ընթացքի վրա և ձեռնարկում էր անհրաժեշտ միջոցներ քրեական

դատավարության օրենսփոխության պահանջների կատարումը ապահովելու համար: Գործը մեղադրական եզրակացության հետ ստանալուց հետո դատախազը պարտավոր էր ստուգել քննության որակը (բազմակողմանիությունը և լրիվությունը), քննատեղ մեղադրական եզրակացությունը: Եթե դատախազը չուներ դիտողություններ և անհրաժեշտ չէր համարում մեղադրական եզրակացության մեջ փոփոխություններ մտցնելը, փորձն ուղարկվում էր դատարան:

Դատի տալը համարվում էր քրեական դատավարության փուլ: Սակայն դատի տալու կարգը միասնական չէր: Այն հանցափորձությունների վերաբերյալ քրեական փորձերը, որոնց համար քրեական օրենսփոխությունը նախատեսում էր ազատազրկում մինչև մեկ տարի ժամանակով և որոնցով նախաքննությունը պարտադիր չէր, հետաքննության մարմինը փորձն ուղարկում էր ժողովրդական դատարան: Այդ փորձերով դատի տալը միանձնյա իրականացնում էր ժողովրդական դատավորը, եթե, իհարկե, փորձը լրացուցիչ քննության ուղարկելու անհրաժեշտություն չկար: Մնացած քրեական փորձերը, որոնցով նախաքննությունը նորից պարտադիր չէր, հետաքննության մարմինն ուղարկում էր դատախազին, և դրանցով դատի տալն իրականացվում էր դատախազի միջոցով: Ամեն անգամ այդպիսի փորձ ստանալով՝ դատախազը բավարար հիմքերի առկայության դեպքում կայացնում էր անձին դատի տալու մասին որոշում և փորձը այդ որոշման հետ միասին ուղարկում համապատասխան դատարան: Ժողովրդական դատարանն այդպիսի փորձեր ստանալիս առանց որևէ ստուգման նշանակում էր դատական գիտ՝ փորձը լսելու համար:

Այն քրեական փորձերով, որոնցով նախաքննությունը պարտադիր էր, քննիչը կազմում էր մեղադրական եզրակացություն, որը փորձի նյութերի հետ միասին ուղարկվում էր դատախազին: Վերջինս իրավունք ուներ փոխելու մեղադրական եզրակացությունը կամ փորձը վերադարձնելու լրացուցիչ քննության: Եթե դատախազը հիմքեր չուներ մեղադրական եզրակացությունը փոխելու համար, ապա փորձն ուղարկում էր դատարան՝ հաստատմամբ, որ ինքը համաձայն է մեղադրական եզրակացության հետ և առաջարկով՝ հաստատել այն ու մեղադրյալին դատի տալ: Դատարանն այդ դեպքում փորձը դնում էր տնօրինական գիտի քննությանը, որում քննության առարկա կարող էր դառնալ միայն մեղադ-

րական եզրակացությունը: 1923 թ. քրեական դատավարության օրենսփոխության 236 հոդով, ծանոթությունը արվելում էր քննարկել քննության նյութերը: Գտնելով, որ մեղադրական եզրակացությունը համապատասխանում է քրեական դատավարության օրենսփոխության պահանջներին, դատարանը հաստատում էր մեղադրական եզրակացությունը և մեղադրյալին դատի էր տալիս: Ընդ որում, դատարանն՝ իրավունք ուներ վերակազմել մեղադրական եզրակացությունը:

Պաշտպանի մասնակցությունը թույլատրվում էր դատական քննության փուլից: Պաշտպանի մասնակցության հարցը ևս լուծվում էր տնօրինական գիտում:

1923 թ. քրեական դատավարության օրենսփոխությունը սահմանում էր նաև քրեական դատավարության հիմնական փուլի՝ դատական քննության սկզբունքները և կարգը: Ըստ օրենսփոխության այդ փուլը կենտրոնականն էր քրեական դատավարության փուլերի համակարգում: Քրեական դատավարության հրապարակայնության, բանավորության, անմիջականության և մրցակցության սկզբունքներն իրենց արտահայտությունն էին ստանում դատավարության հենց այս փուլում:

1923 թ. քրեական դատավարության օրենսփոխությունը կառուցված էր մրցակցության սկզբունքի հիման վրա, որի դեպքում մեղադրանքի փորձառություն առանձնացված էր փորձի լուծման փորձառության, և ամբաստանյալն իրավունք ուներ դատարանում վիճարկել մեղադրանքը: Սակայն, քանի որ դատարանը պետք է միջոցներ ձեռնարկեր հանցափորձության դեպքը և ամբաստանյալի մեղավորությունը ապացուցելու համար, ապա կարելի է խոսել որոշակի մեղադրական ուղղվածությամբ մրցակցության մասին:

Դատական գիտը բաղկացած էր նախապատրաստական մասից, դատաքննությունից, կողմերի վիճաբանությունից, ամբաստանյալի վերջին խոսքից:

Նախապատրաստական մասում լուծվում էր դատական քննությունը սկսելու հնարավորության հարցը: Յուրաքանչյուր փորձով դատական գիտը պետք է տարվեր անընդհատ, բացի հանցատի համար նշանակված ժամանակից: Ընդմիջմանը այլ փորձերի քննությունն արվելում էր: Այն հանցափորձությունների վերաբերյալ փորձերով, որոնց համար որպես պատժատեսակ նախատեսված էր ազատազրկումը, ամբաստանյալի ներկայությունը պարտադիր էր, և նրա բացակայությամբ փորձի լուծումը

թուլատրվում էր միայն ամբաստանյալի ուղղակի արտահայտած համաձայնության դեպքում, ինչպես նաև այն դեպքում, եթե ապացուցված էր, որ ամբաստանյալը խուսափում է դատարանից: Մնացած լործերով ամբաստանյալի ներկայությունը պարտադիր չէր, և օրենսդիրն այդ հարցի լուծումը թողել էր դատարանի հայեցողությանը:

Դատական քննությունն սկսվում էր մեղադրական եզրակացության ընթերցմամբ: Եթե լործով նախաքննությունն չէր կատարվել, դատաքննությունը սկսվում էր դատի տալու մասին դատախազի որոշման կամ տուժողի լանդատի ընթերցմամբ կամ էլ՝ դատարանի նախախառն կողմից մեղադրյալին առաջադրված մեղադրանքի էությունն շարադրմամբ: Դատաքննության ընթացքում լործում առկա բոլոր ապացույցները պետք է ուսումնասիրվեին: Սակայն 1923 թ. քրեական դատավարության օրենսդրությունը սահմանել էր նաև դատական քննության պարզեցված կարգ: Այն դեպքերում, երբ ամբաստանյալը համաձայն էր մեղադրական եզրակացության մեջ շարադրված հանցանքներին, ընդունում էր իրեն առաջադրված մեղադրանքը և տալիս էր համապատասխան ցուցմունքներ, դատարանը կարող էր չշարունակել դատաքննությունը և անցնել կողմերի վիճաբանությանը: Սակայն եթե դատավորներից կամ կողմերից մեկը պահանջեր շարունակել դատաքննությունը, ապա դատավարությունը պետք է տարվեր ըստ ընդհանուր կարգի, առանց որևէ վերապահման:

Կողմերի վիճաբանությունները կազմված էին մեղադրողի, քաղաքացիական հայցվորի, իսկ այնուհետև պաշտպանի կամ ամբաստանյալի (եթե պաշտպան չկար) ելույթներից:

Համաձայն 1923 թ. քրեական դատավարության օրենսդրության 284 հոդով՝ մեղադրողն իրավունք ուներ հրաժարվելու մեղադրանքից, եթե համոզվեր, որ դատաքննության տվյալները չեն հաստատում առաջադրված մեղադրանքը: Մեղադրողի հրաժարվելը մեղադրանքից դատարանին չէր ազատում լործի լուծումը շարունակելու և ընդհանուր հիմքերով ամբաստանյալի պատասխանատվության հարցը լուծելու պարտականություններից: Այս դրույթն արտահայտում էր խորհրդային դատարանի մեղադրական թեքումը:

Վիճաբանությունների վերջում կողմերը կարող էին ևս մեկ անգամ փոխանակել ռեպլիկներ: Վերջին ելույթի իրավունքը

միշտ պատկանում էր պաշտպանին (ամբաստանյալին): Պաշտպանի ելույթից հետո նախախառն կողմերի վիճաբանությունները հայտարարում էր ավարտված և ձայն էր տալիս ամբաստանյալին՝ վերջին խոսքի համար, որի ընթացքում ամբաստանյալին հարցեր չէին կարող տրվել: Այնուհետև դատարանը հեռանում էր՝ դատավճիռ կայացնելու: Դատարանը կարող էր կայացնել կա՛մ արդարացման, կա՛մ մեղադրական դատավճիռ: Եթե ամբաստանյալին ճանաչելով մեղավոր՝ դատարանն աննպատակահարմար էր համարում նրան պատժի ենթարկելը, ապա կարող էր Հայաստանի ՍԽՀ ԿԳԿ-ի նախախառնություն ուղարկել միջնորդություն՝ նրան պատժից ազատելու մասին:

Շահալորդ կողմերը դատավճիռը կարող էին անաւարկել 14 օրվա ընթացքում: 1923 թ. քրեական դատավարության օրենսդրության 23 հոդով. մեկնաբանելով «կողմեր» եզրույթի իմաստը, դրա տակ թվարկում էր մեղադրանքը պաշտպանող դատախազին, քաղաքացիական հայցվորին և նրա շահերը ներկայացնողին, մեղադրյալին, նրա օրինական ներկայացուցիչներին, պաշտպանին, տուժողին (երբ մեղադրանքը պաշտպանում էր նա) և նրա շահերը ներկայացնողին: Դատախազը վճռաբեկ բողոք բերելու իրավունք ուներ ինչպես պետության, հասարակության, այնպես էլ քաղաքացիների, դատավարության մասնակիցների իրավունքների և շահերի խախտման կասկածից: Վերջնական և անաւարկման ոչ ենթակա էին համարվում դատական հրամանի կարգով կայացված տուճանք նշանակելու վերաբերյալ դատավճիռները (1923 թ. քր. դատ. օր., 344 հոդով. ծանոթություն): Հայաստանի ՍԽՀ Ժողկոմխորհի և ԿԳԿ-ի 1930 թ. մայիսի 31-ի համատեղ որոշմամբ վճռաբեկ անաւարկներ չէր կարելի բերել նաև դատական հսկողության կարգով քննված, մասնավոր մեղադրանքի հիման վրա հարուցված լործերով, ինչպես նաև քրեական օրենսդրությամբ սահմանված մի շարք հանցանքների վերաբերյալ լործերով: Քրեական դատավարության օրենսդրության 413 հոդով. դատավճիռի բեկանման հիմքեր էր ճանաչում՝ 1) քննության անբավարար և ոչ ճիշտ կատարումը, 2) դատավարության ձևերի էական խախտումները, 3) քրեական օրենքի խախտումները կամ ոչ ճիշտ կիրառումը, 4) դատավճիռի ակնհայտ անարդարացի լինելը: Երկրորդ ատյանի դատարանն իրավունք ուներ ոչ միայն վերացնել դատավճիռը, այլև փոխել այն:

Փոփոխությունները կարող էին նաև վատթարացնել դատապարտչալի վիճակը:

ԽՍՀ Միության կազմավորումից հետո քրեադատավարական և դատարանակազմական օրենսդրության համակարգը որոշվում էր ԽՍՀՄ 1924 թ. Սահմանադրությամբ, որը ԽՍՀ Միության իրավասությանը վերապահեց քրեական դատավարության և դատարանակազմության օրենսդրության հիմունքների սահմանումը: Դրա հիման վրա 1924 թ. հոկտեմբերի 31-ին ընդունվեցին ԽՍՀ Միության և միութենական հանրապետությունների քրեական դատավարության և դատարանակազմության հիմունքները⁹⁷: Իրավունքի համամիութենական կոդիֆիկացիաներն արտացոլում էին երկրում ընթացող իշխանության, կառավարման և կարգավորման կենտրոնացման լորձը: Վերջանում էր ՆԵՊ-ի ժամանակաշրջանը, և սկսվում էր պետաիրավական պատմության նոր փուլ:

§ 3. Խորհրդային Հայաստանի քրեադատավարական օրենսդրությունը 1925-1956 թթ.

1925-30-ական թթ. Խորհրդային Միությունում սկսեց ձևավորվել ամբողջատիրական իշխանության համակարգը: Քրեական դատավարության զարգացման պատմության մեջ այդ շրջանը կարելի է բնութագրել որպես 1922-24 թթ. անցկացված բարենորոգումների ընթացքում նկատվող ժողովրդավարական միտումներից աստիճանաբար հրաժարվելու ժամանակաշրջան⁹⁸: Քրեական դատավարության զարգացման նման միտումը տևեց մինչև 1953 թ.: Նահանջը դրսևորվեց երեք ուղղություններով՝ անկախ դատարանների նորակազմ համակարգի զարգացման կասեցում, արտակարգ դատական մարմինների վերաստեղծում, հակաժողովրդավարական փոփոխություններ քրեադատավարական օրենսդրության մեջ: Մինչև քրեադատավարական օրենսդրության քննարկման անցնելը անհրաժեշտ ենք համարում ընդհանուր լծերով ներկայացնել դատարանակազմության ոլորտի մի

⁹⁷ Տե՛ս ՌՇ ՌՌՌՌ, թիվ 23, հ. 203, թիվ 24, հոդվ. 206:

⁹⁸ Տե՛ս *Ассалі еі Е.О., Еіаааа І .А. І дааі і даі еоаеіі սа і дааі ս. І ., 1997, էջ 243:*

շարք հիմնահարցեր, ինչը մեզ հնարավորություն կտա ավելի լավ ըմբռնելու հարցի էությունը:

Առկա նյութերը վկայում են, որ քննարկվող ժամանակաշրջանում դատական համակարգը կորցրեց ձեռք բերված երեքուն անկախությունը: Դատարանները դարձան վարչահրամայական համակարգի կցորդը, վերածվեցին այլախոհության և քաղաքական հակառակորդների դեմ պայքարի լորձի: «Ջանվածային բռնությունների և ապօրինությունների իրականացման ակտիվորեն մասնակցում էին ոչ միայն ներքին լորձերի ժողկոմատի, պետական անվտանգության մինիստրության մարմինները, հատուկ խորհրդակցությունը, եղյակները: Այդ լորձընթացներին մասնակցում էին նաև միջին ու բարձր օղակի դատարանները: Նրանց ապօրինի դատավճիռները կարծեցյալ «ժողովրդի թշնամիների» և քաղաքական հակառակորդների նկատմամբ»⁹⁹ մեծամասամբ կայացվել են հենց այս ժամանակաշրջանում:

Մյուս բացասական միտումը դատական շինարարության ոլորտում 20-ական թթ. սկսված և 30-ական թթ. ահագնացող պետական համակարգի և պետական կարգավորման ոլորտի կենտրոնացումն էր:

Հայաստանի ՍԽՀ ԿԳԿ-ի նախաօրինությունն իր 1927 թ. օրոհատուի 10-ի որոշմամբ վերացրեց լիսավոր դատարանը և նրա լորձառույթները հանձնեց լերաույն դադարանի դատական կոլեկիաներին¹⁰⁰: Դատական համակարգի միջին օղակի վերացմամբ հանրապետությունում ստեղծվեց երկաստիճան դատական համակարգ՝ կազմված ժողովրդական դատարանից՝ որպես առաջին ատյան, և Հայաստանի ՍԽՀ Գերաույն դատարանից՝ որպես և՛ առաջին և՛ երկրորդ ատյանի դատարան: Դատական համակարգի նման կառուցվածքն անհաջող էր, քանի որ երկօղակ համակարգն իրականացնում էր երեք տարբեր լորձառույթներ՝ լորձի քննություն ըստ էության, վճռաբեկություն, դատական հսկողություն: Փաստորեն մեկ դատական մարմնում՝ լերաույն դադարանում, մասամբ կենտրոնացված էին նշված բոլոր երեք լորձառույթները: Այս հանաամանքը, լիովին կենտրոնացման

⁹⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 249:

¹⁰⁰ Տե՛ս *Еіոі дег аі ոоаадооаа е і дааа Ռі ааоіеі е Ади аі ее*, Գիրք 1, Երևան, 1974, էջ 252:

դրսևորումներից մեկը, արժեք էր դատական ատյանների անկախ, անկողմնակալ զործունեության համար:

Հայաստանի ՍԽՀ դատական մարմինների իրավասությունը հիմնարար փոփոխությունների ենթարկվեց ԿԳԿ-ի և Ժողկոմխորհի 1929 թ. սեպտեմբերի 4-ի որոշմամբ¹⁰¹: Այդ որոշման ուժով վերացվեցին զերառույն դադարանի ընդհանուր իրավասության քրեական և քաղաքացիական կոլեկիաները: Դրանց փոխարեն կազմակերպվեց հատուկ իրավասության կոլեկիան, որը՝ որպես առաջին ատյան, կարող էր քննել Հայաստանի ՍԽՀ ԿԳԿ-ի, զերառույն դադարանի նախաձեռնության, հանրապետության դատախազի, պետական քաղաքական վարչության պետի առաջարկած զործերը: Գերառույն դատարանին ընդդատյա էին պետական հանցազործությունները և կառավարման կարգի դեմ ուղղված հանցազործությունները: Մնացած բոլոր զործերը, որոնք նախկինում ընդդատյա էին կոլեկիաներին, անցան ժողդատարանների ընդդատյանը: Գերառույն դատարանն իր հայեցողությամբ ժողովրդական դատարանին ընդդատյա ցանկացած զործ կարող էր վերցնել և հանձնել հատուկ կոլեկիայի լուծմանը: 1929 թ. սեպտեմբերի 4-ի որոշումն ուներ երկակի նշանակություն: Մի կողմից այն սահմանափակում էր Հայաստանի ՍԽՀ Գերառույն դատարանի իրավասությունը, ընդլայնում էր ժողովրդական դատարանի ընդդատյան շրջանակները, ինչը «կարևոր նշանակություն ուներ նրա հետազոտ ամրապնդման համար»¹⁰², իսկ մյուս կողմից, մեկ մարմնում կենտրոնացվում էին բոլոր երեք վերոնշյալ դատական զործառույթները՝ բավականին մեծ քանակի քրեական զործերով:

1930 թ. նոր վարչատարածքային բաժանման կապակցությամբ կազմակերպվեցին շրջանային ժողովրդական դատարանները¹⁰³: Այդ դատարանների համակարգը կառուցվեց ըստ վարչատարածքային բաժանման, ինչը դատարանների տեղական իշխանություններից կախվածությամբ նպաստող զործոններից մեկն էր:

¹⁰¹ Տե՛ս ՀՍԽՀ օրենքների և կարգադրությունների ժողովածու, 1929, թիվ 10, բաժ. 1, հոդվ. 151:

¹⁰² Տե՛ս *Պիվազյան Հ.Մ.*, Դատարանի կազմակերպումը և զարգացումը... էջ 91:

¹⁰³ Տե՛ս *Էնո՛ւ ձեյ՝ ա՛ի ռո՛ւսո՛ւնո՛ւն* è ì ձա՛ա՛ Ն՛ի ա՛սո՛ւնե՛ի é Աձի՛ ա՛ի èè, զիրք 1, Երևան, 1974, էջ 253:

1920-ական թթ. վերջերին վերականգնվեցին և իրենց զործունեությունը ծավալեցին արտակարգ դատական մարմինները: Եթե ՌԽՖՍՀ-ում Համառուսական ԿԳԿ-ի 1922 թ. փետրվարի 6-ի դեկրետով Համառուսական արտակարգ հանձնաժողովը և նրա տեղական մարմինները վերակազմավորվեցին պետական քաղաքական վարչության՝ ՌԽՖՍՀ-ի ներքին զործերի ժողովմասին կից¹⁰⁴, ապա Հայաստանի ՍԽՀ-ում չեկայի մարմինները շարունակում էին զործել: Ավելին, 1925 թ. Հայաստանի ՍԽՀ ԿԳԿ-ի որոշմամբ Հայաստանի Արտակարգ հանձնաժողովին կից հիմնադրվեց Հատուկ խորհրդակցությունը՝ կազմված Հայաստանի ԿԳԿ-ի նախաձեռնության կողմից նշանակված երեք անդամներից: Հատուկ խորհրդակցությունը լիազորված էր Հայաստանի սահմաններում աքսորի ենթարկելու հասարակության համար վտանգավոր ճանաչված անձանց՝ մինչև 3 տարի ժամանակով¹⁰⁵: Հատուկ խորհրդակցության նիստերին մասնակցում էին հանրապետության դատախազը կամ նրա տեղակալը: Վերջիններս իրավունք ունեին կասեցնել խորհրդակցության ապօրինի որոշումները և բողոքարկել դրանք Հայաստանի ԿԳԿ-ի նախաձեռնություն:

Հայաստանի արտակարգ հանձնաժողովը և նրա զավատային բաժինները վերացվեցին Հայաստանի ԿԳԿ-ի 1926 թ. սեպտեմբերի 8-ի որոշմամբ: Հայաստանի Ժողկոմխորհին կից ստեղծվեց Պետական քաղաքական վարչություն, որը ենթարկվում էր Անդրֆեդերացիայի պետական քաղաքական վարչությանը¹⁰⁶: Հայաստանի պետական քաղաքական վարչության խնդիրներն էին՝ պայքարը հակահեղափոխական հացազործությունների, լրտեսության, բանդիտիզմի, մաքսանենքության դեմ, սահմանների, երկաթուղային և ջրային հաղորդակցության ուղիների պահպանությունը, հեղափոխական կարգերի պահպանությունը՝ հանրապետության ԿԳԿ-ի և Ժողկոմխորհի հատուկ հանձնարարությունների հիման վրա: Հայաստանի ԿԳԿ-ի 1926 թ. սեպտեմբերի 8-ի որոշմամբ Պետական քաղաքական վարչությունն իրավունք ստացավ կիրառելու արտադատական ռեպրեսիաներ ընդհուպ մինչև զնդակահարություն՝ հակահեղափոխական, մաքսանեն-

¹⁰⁴ Տե՛ս *Էնո՛ւն Է.Ա.* *Էնո՛ւ ձեյ՝ ա՛ի ռո՛ւսո՛ւնո՛ւն* è ì ձա՛ա՛ ձի՛ ռո՛ւնե՛. Ի ., 1996, էջ 366:

¹⁰⁵ Տե՛ս *Էնո՛ւ ձեյ՝ ա՛ի ռո՛ւսո՛ւնո՛ւն* è ì ձա՛ա՛ Ն՛ի ա՛սո՛ւնե՛ի é Աձի՛ ա՛ի èè, զիրք 1, Երևան, 1974, էջ 261:

¹⁰⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 262:

ության, պաշտոնական հանցանքները և վերաբերյալ օրոճերով¹⁰⁷: Այդ դրությունը մնաց անփոփոխ մինչև 1934 թ.՝ ներքին օրոճերի նախարարությունը վերականգնելուց հետո, որի կազմում ստեղծվեց պետական անվտանգության վարչությունը: Պետական քաղաքական վարչության դատական կոլեկիան վերացվեց, իսկ նրան ընդհատվեց օրոճերը, բացի հակահեղափոխական բնույթի օրոճերից, հանձնվեցին Հայաստանի ՍԽՀ Գերաօրոճում դատարանի ընդդատությունը: Բայց դա չէր նշանակում, որ արտադատական մարմինները վերացվեցին: Հայաստանի ՍԽՀ ներքին օրոճերի ժողովուստին կից ստեղծվեց հատուկ խորհրդակցություն, որի կազմի մեջ մտնում էին ներքին օրոճերի ժողովուստը (նախաօրոճ), նրա տեղակալները և հանրապետության միլիցիայի կոմիսարը: Այդ խորհրդակցության նիստերին պարտադիր մասնակցում էր հանրապետության դատախազը կամ նրա տեղակալը: Խորհրդակցությունը քննում էր հակահեղափոխական բնույթի քրեական օրոճերը:

Քննարկվող ժամանակաշրջանում Հայաստանի ՍԽՀ 1923 թ. քրեական դատավարության օրենսգրքի մեջ կատարվեցին որոշակի փոփոխություններ և լրացումներ, որոնցից մի քանիսը հակաժողովրդավարական բնույթ ունեին: ԽՍՀ Միության կազմավորումից հետո քրեական դատավարական և դատարանական կազմակերպության օրենսդրության համակարգը որոշվել էր ԽՍՀՄ 1924 թ. Սահմանադրությամբ, որը, ինչպես արդեն նշել ենք, ԽՍՀ Միության իրավասությանը վերապահեց քրեական դատավարության և դատարանական կազմության օրենսդրության հիմունքների սահմանումը: 1924 թ. հոկտեմբերի 31-ին ընդունվեց ԽՍՀ Միության և միութենական հանրապետությունների քրեական դատավարության հիմունքները¹⁰⁸: Այդ հիմունքներում ամրագրվել էին ապացուցողական իրավունքի հիմնական դրույթները: Դատական վարույթում ստացված բոլոր ապացույցները մանրազնի պետք է ստուգվեին դատական նիստում և օրենքի հիման վրա, դատավորի ներքին համոզմամբ, դատական քննության նյութերի համակցության հետ պետք է անհատվեին դատարանի կողմից: Սակայն 1924 թ. հիմունքները չէին պարունակում այնպիսի սկզբունքային դրույթներ, ինչպիսիք են՝ բոլոր դատարաններում օրոճերի

¹⁰⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 262:

¹⁰⁸ Տե՛ս ՌՇ ՌՆՆՊ, 1924, թիվ 24, հոդվ. 206:

քննությունը ժողովրդական ատենակալների մասնակցությամբ, դատավորների անկախությունը և նրանց ենթարկվելը միայն օրենքին, մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովումը, քրեական պատժի նշանակումը միայն դատարանի դատավճռով և այլն: Դրանում չէին սահմանված քրեական դատավարության խնդիրները և տուժողի իրավունքները: Հիմունքների ընդունման կապակցությամբ Հայաստանի ՍԽՀ արդժողկոմատը ձեռնարկեց ակտիվ աշխատանքներ՝ 1923 թ. քրեական դատավարության օրենսգրքում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու և այն հիմունքներին համապատասխանեցնելու համար: Հայաստանի ԿԳԿ-ի 1926 թ. մայիսի 20-ի որոշմամբ այդ փոփոխությունները տեղ օտան քրեական դատավարության օրենսգրքում¹⁰⁹:

1926-27 թթ. ընթացքում հանրապետության դատական և դատախազության համակարգերում կատարվեցին բազմաթիվ փոփոխություններ, ինչպես նաև ընդունվեցին զինվորական տրիբունալների և զինվորական դատախազության կանոնադրությունները: Այդ կապակցությամբ Հայաստանի ԿԳԿ-ն 1927 թ. սեպտեմբերի 18-ի որոշմամբ մի շարք էական փոփոխություններ կատարեց 1923 թ. քրեական դատավարության օրենսգրքում և այն հրապարակեց նոր խմբագրությամբ¹¹⁰:

Բացի վերոնշյալ փոփոխություններից 1923 թ. քրեական դատավարության օրենսգրքում կատարվեցին այլ փոփոխություններ և լրացումներ, որոնք նորովի էին կարգավորում դատախազության, հետաքննության և նախաքննության մարմինների փոխհարաբերությունները: Համաձայն այդ փոփոխությունների՝ նախաքննական մարմինները դուրս բերվեցին դատական ենթակայությունից և հանձնվեցին դատախազության ենթակայությանը: Այդ միջոցառմամբ վերացվեց քննչական մարմնի երկակի ենթակայությունը¹¹¹: Քննիչներին նշանակում և ազատում էր հանրապետության դատախազը: Երկրորդ՝ հետաքննության վրա հսկողությունը դրվում էր քննիչների վրա: Հետաքննության և նախաքննության մարմինների միջև ծածկվեցին լուծում էր դա-

¹⁰⁹ Տե՛ս ՀՍԽՀ օրենքների և կարգադրությունների ժողովածու, 1926, թիվ 9, բաժ. 1, հոդվ. 82:

¹¹⁰ Տե՛ս ՀՍԽՀ օրենքների և կարգադրությունների ժողովածու, 1927, թիվ 10, բաժ. 10, հոդվ. 72-73:

¹¹¹ Տե՛ս Պիվազյան Հ.Մ., Դատարանի կազմակերպումը և զարգացումը..., էջ 99-100:

տախազը: Վերջինս իրականացնում էր ընդհանուր հսկողություն հետաքննության և նախաքննության նկատմամբ: Ընդլայնվեցին դատախազի լիազորությունները նախաքննության ոլորտում¹¹²: Սահմանվում էր, որ դատախազը կարող էր կարճել օրոժը, կասեցնել օրոժով վարույթը, ուղարկել օրոժը դատարանի նախապատրաստական նիստի՝ մեղադրյալին դատի տալու համար:

Բուրժուական իրավունքի ջարդի դոկտրինայից հեղափոխական օրինականության դոկտրինային անցնելով՝ 1923 թ. դատարավական բարենորոգման ընթացքում մասամբ հաղթահարվեց իրավական նիհիլիզմը դատավարական ձևի նկատմամբ: Սակայն ժամանակ առ ժամանակ ծավալվող տեսական վիճաբանությունների ընթացքում դասակարգային-մարքսիստական մոտեցումներն ընդհանրապես իրավունքի և, մասնավորապես, քրեադատավարական իրավունքի նկատմամբ իրենց զգացնել էին տալիս: Քրեադատավարական իրավունքին վերաբերում էր միայն դասակարգային էություն. «Խորհրդային քրեական դատավարությունը ևս դասակարգային դատավարություն է, քանի որ այդ դատավարությունը կազմող դատավարական հարաբերությունները կառուցվում են անցման շրջանի պայմաններին համապատասխան, սոցիալիստական շինարարությանը առավելաօրոն օժանդակության օտիկն...»¹¹³: Խորհրդային քրեական դատավարության էության այդպիսի բնորոշումից ելնելով՝ նրա առջև դրվում էր հետևյալ խնդիրը՝ չախչախված, սակայն չոչնչացված դասակարգային թշնամիների դեմ պայքարը համարվում է արդարադատության մարմինների լիազոր խնդիրը: Դրան համապատասխան շատ զգալի է դատավարական ձևի դերը, որը ևս դասակարգային թշնամիների դեմ արագ և վճռական պայքարի միջոց էր¹¹⁴:

1927 թ. Ն.Ն. Պոլյանսկին հրատարակեց իր «Քրեական դատավարության ընդհանուր տեսության ակնարկներ» աշխատությունը, որում հեղինակը հանդես էր գալիս «ձևական դատավարական երաշխիքների» դիրքերից: Համաձայն այդ տեսության՝ քրեական դատավարությունը չպետք է դիտարկվեր որպես պետության քրեական քաղաքականության իրականացան նպատակ:

¹¹² Տե՛ս ՀՍԽՀ օրենքների և կարգադրությունների ժողովածու, 1928, թիվ 7, բաժ., 1, հոդվ. 87:

¹¹³ Տե՛ս *Ստրոկովիչ Մ.Ս.*, Քրեական դատավարություն, Երևան, 1937, էջ 4:

¹¹⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 34-36:

Ընդհակառակը, քրեական դատավարության խնդիրն է յուրաքանչյուր առանձին դեպքում լուծելու այն հարցը, թե պետությունն իրավունք ունի՞ արդյոք կիրառել պատիժ: Այլ խոսքով՝ քրեական դատավարության իրավունքը սահման, արժեք է պետության համար՝ ընդդեմ կամայականության, այլ ոչ թե քրեական քաղաքականության իրականացման միջոց: Քրեադատավարական իրավունքի էության նման ըմբռնումն արմատական ձևով հակասում էր դասակարգային բնորոշմանը, որի արտահայտողներից մեկը Մ.Ս. Ստրոկովիչն էր: Պատահական չէր, որ Մ.Ս. Ստրոկովիչը Ն.Ն. Պոլյանսկու վերոնշյալ մոտեցումը որակեց որպես ազատական-բուրժուական և պնդում էր, որ պրոլետարական պետության պայմաններում այդ մոտեցումն օբյեկտիվորեն նշանակում է դատարանի՝ որպես պրոլետարիատի դիկտատուրայի մարմնի, զինաթափում, թուլացում: «Անկասկած քրեական դատավարությունը պարունակում է մի շարք երաշխիքներ քաղաքացիների համար, որպեսզի նրանց առանց հիմքերի դատի չտան և չդատապարտեն: Սակայն այդ տեսությունը (Պոլյանսկու տեսությունը) քրեական դատավարության ողջ էությունը հանդես է դնում դրան, առանձնացնում է դատավարությունը խորհրդային պետության քաղաքականությունից, դատարանը վերածում է անզգա, արտաքաղաքական արբիտրի պետության և քաղաքացու միջև»¹¹⁵:

Այսպիսի տեսական դրույթներից ելնելով էլ կառուցվեց ամբողջ քրեադատավարական համակարգը, որում դատավարական ձևը ևս դիտարկվում էր պրոլետարիատի դիկտատուրայի շահերի դրսևորում ու արտահայտություն: Դատավարական ձևի նկատմամբ նման մոտեցումը տրամաբանորեն հանդես էր քրեական դատավարության պարզեցման անհրաժեշտության, մի շարք դատավարական երաշխիքներից հրաժարման, ինչն էլ հեշտացնում էր դատական ռեպրեսիաների կիրառումը: Բնական է, որ մրցակցային ժողովրդավարական դատավարության պայմաններում այն դժվարանում էր: Այդպիսի տեսական նախադրյալները հանդես էին նրան, որ, օրինակ, մրցակցության սկզբունքը ևս դիտարկվում էր դասակարգային տեսանկյունից՝ պայմանավորված հասարակության սոցիալ-քաղաքական կացությամբ: «Մրցակցության սկզբունքը չի կարելի և չպետք է վերածել պաշ-

¹¹⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 39-40:

տամուռքի: Դատավարական մրցակցության շրջանակները և կողմերի իրավունքների սահմանները քարացած չեն և չեն կարող արժեք հանդիսանալ հանցաքննության դեմ պայքարի խնդիրների իրականացման օրոճում: Ահա թե ինչու, ելնելով սոցիալ-քաղաքական շրջապատից, դասակարգային պայքարի ձևերից և սոցիալիստական շինարարության պայմաններից, դրանք կարող են ինչպես ընդլայնվել, այնպես էլ նեղացվել»¹¹⁶:

Մրցակցության բովանդակության այդպիսի մեկնաբանությունը՝ սկզբունքը և ընդհանրապես դատավարական ձևը դնում էր դասակարգային պայքարի պահանջներից կախվածության մեջ: Նման հայեցակարգային մոտեցումը ընկալում էր պրակտիկայի և օրենսդրի կողմից:

Դատավարական պարզունակացումն իր արտահայտությունը օտավ նաև Հայաստանի ՍԽՀ քրեադատավարական օրենսդրության մեջ: Հայաստանի արդժողկոմատը մշակեց և 1929 թ. սեպտեմբերի 4-ին Հայաստանի ԿԳԿ-ի հաստատմանը ներկայացրեց օրինափոխ, որը դատարաններին իրավունք էր տալիս «ակնհայտ հանցաքննությունների» դեպքում արժեք պաշտպանի մասնակցությունը օրոճին, ինչպես նաև չթույլատրել կողմերի վիճաբանություն կամ սահմանափակել այն որոշակի ժամկետով¹¹⁷: Համաձայն այդ պահին օրոճող Հայաստանի ՍԽՀ քրեական դատավարության օրենսօրոճի 218 հոդվ.՝ օրոճը քննիչից կամ դատախազից ստանալով՝ օրոճով նախաձահող դատավորը նշանակում էր դատական նիստ, այդ մասին հայտնում էր օրոճին մասնակցող անձանց, իսկ ամբաստանյալին ուղարկում էր մեղադրական եզրակացության պատճենը, որը պետք է հանձնվեր նրան օրոճի լսման օրվանից երկու օր առաջ: 1929 թ. սեպտեմբերի 4-ի օրենքը դատարանին իրավունք էր տալիս ամբաստանյալի համաձայնությամբ օրոճը լսել մեղադրական եզրակացությունը նրան հանձնելուց հետո՝ երկօրյա ժամկետից ավելի շուտ, սահմանափակել կամ կրճատել վկաների հարցաքննությունը¹¹⁸: Այդ օրենքով վերացվեցին դատարանի տնօրինական նիստերը (նախապատրաստական նիստերը), ինչը նշանակում էր դատի տալու՝ որպես քրեական դատավարության առանձին փուլի,

¹¹⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 32:

¹¹⁷ Տե՛ս ՀՍԽՀ օրենքների և կարգադրությունների ժողովածու, 1929, թիվ 10, բաժ. 1, հոդվ. 150:

¹¹⁸ Տե՛ս նույն տեղը:

վերացում: Դատի տալու օրոճառույթն այն օրոճերով, որոնցով անցկացվում էր նախաքննություն, հանձնվեց դատախազին: Նրա կողմից մեղադրական եզրակացության հաստատումը միաժամանակ համարվում էր մեղադրյալին դատի տալու ակտ: Այն օրոճերով, որոնցով նախաքննություն չէր անցկացվում, դատի տալն իրականացնում էր քննիչը: Քրեական դատավարության օրենսօրոճի այս նորմերը պարզեցնում և արաձացնում էին դատավարությունը, սակայն չէին երաշխավորում ճշմարտության բացահայտումը, քաղաքացիների իրավունքները: 1923 թ. քրեական դատավարության օրենսօրոճը նախատեսում էր պարզեցված վարույթի այնպիսի ձևեր, ինչպես, օրինակ՝ հեռակա վարույթը, օրոճերի լսումը ժողովրդավարական դատարանի հերթապահ կամերայում, օրոճի լուծումը դատական հրամանի կարգով, այսինքն՝ առանց դատական նիստում քննության:

1930-ական թթ. սկզբներին ԽՍՀՄ ԿԳԿ-ի և Ժողկոմխորհի «Հեղափոխական օրինականության մասին» հատուկ որոշման ազդեցության տակ ինչ-որ չափով հաղթահարվեցին պարզունակ մոտեցումները դատավարական ձևի նկատմամբ և դատավարական երաշխիքների անտեսումը: Այդ որոշումը թելադրում էր հատուկ ուշադրություն դարձնել աշխատավորների անձանցի լուծմանը, ընդօճում էր այդ ուղղությամբ դատարանի աշխատանքի նշանակությունը: Այն կտրականապես արժեքում էր ժողովրդական դատավորներին պաշտոնից հանելը կամ տեղափոխելն այլ կերպ, քան մարզային (երկրամասային) օրոճադիր կոմիտեների կողմից¹¹⁹: Հայաստանի ՍԽՀ պայմաններում այդ իրավունքը պատկանում էր միայն հանրապետության ԿԳԿ-ին: Դատախազը կարող էր ազատվել կամ տեղափոխվել այլ աշխատանքի միայն վերադաս դատախազի կողմից: Այդ որոշման ազդեցության տակ քրեական դատավարության տեսության մեջ վերանայվում էին նախկին զուտ դասակարգային մոտեցումները: Նոր պայմաններում նույն ինքը՝ Մ.Ս. Ստրոկովիչը, արդեն քրեադատավարական ձևը դիտարկում էր որպես «քննության մարմինների, դատարանի, դատախազության օրոճունեության մեջ սոցիալիստական օրինականության իրականացման և անցկացման մեթոդ... Հենց դրանում է քրեադատավարական ձևի առաջին խնդիրը, առաջին նշանակությունը... Դատավարական ձևի խախտումները միշտ սպառ-

¹¹⁹ Տե՛ս ՌՇ ՌՌՌՌ, թիվ 50, հոդվ. 298:

նալիքի տակ են դնում լուծելու և զործը ճիշտ քննելը, ըստ էության լուծելը, միշտ բացասաբար են ազդում քննության և լուծման էության վրա: Այդպիսով, դատավարական ձևի պահպանման համար պայքարը, պայքարը ընդդեմ դատավարական պարզունակացման միշտ պայքար է քննության և դատական աշխատանքի բարձր որակի համար: Հենց սա էլ դատավարական ձևի երկորդ նշանակությունն է»¹²⁰:

Այս տեսանկյունից կարիք առաջացավ լուրջ փոփոխություններ կատարել Հայաստանի ՍՍՀ 1923 թ. քրեական դատավարության օրենսգրքում, և հատկապես վերացնել այն նորությունները, որոնք ներմուծվել էին 1929 թ. դատավարական պարզունակացման ազդեցությամբ:

Վերջապես, 30-ական թթ սկզբներին մյուս լուծումը, որ պայմանավորում էր լուրջ փոփոխությունների կատարումը քրեական դատավարության օրենսգրքում, ՍՍՀՄ իրավապահպան և դատական համակարգերում 20-ական թթ. սկսած և շարունակվող կենտրոնացումն էր:

1933 թ. հունիսի 20-ին ՍՍՀՄ ԿԳԿ-ն և ժողկոմխորհը համատեղ որոշմամբ հիմնադրեցին ՍՍՀՄ դատախազությունը¹²¹: Այդ որոշմամբ վերացվեց ՍՍՀՄ Գերապետության դատախազությունը: Զինվորական և տրանսպորտային մասնաօրհաններում հատուկ դատախազությունները ընդգրկվեցին ՍՍՀՄ դատախազության համակարգում: Միութենական հանրապետությունների դատախազությունները ենթարկվեցին ՍՍՀՄ դատախազությանը: ՍՍՀՄ դատախազության մասին 1933 թ. դեկտեմբերի 17-ի կանոնադրությամբ դատախազության առջև այլ խնդիրների հետ միասին դրվեց հսկողությունը դատական հիմնարկությունների կողմից օրենքի ճիշտ և միատեսակ կիրառման նկատմամբ, քրեական հետապնդման հարուցումը և մեղադրանքի պաշտպանությունը բոլոր դատական ատյաններում, հսկողությունը միասնական պետական քաղաքական վարչության և միլիցիայի մարմինների, ուղղիչ աշխատանքային հիմարկների լուծողությունների օրինակաչության նկատմամբ: Դատախազին իրավունք էր վերապահվում ստուգման համար պահանջել և ստանալ քննչական և դատական լուծումներ, բողոքարկել դատարանների դատավճիռները, կա-

¹²⁰ Տե՛ս *Նովատիստիկա. I. Մ. Օնիսիմովի ի ծի ծանոթ. I* ., 1940, էջ 72-73:

¹²¹ ՌԿ ՌՆՆՊ, 1933, թիվ 40, հոդվ. 239:

սեցնել դատավճիռների կատարումը, ցուցումներ տալ քննության մարմիններին:

ՍՍՀՄ ԿԳԿ-ն 1933 թ. դեկտեմբերին ընդունեց որոշում՝ ՍՍՀՄ Գերապետության դատարանի լուծողությունները միութենական հանրապետությունների դատական մարմինների լուծողությունների վրա հսկողության ոլորտում ընդլայնելու մասին: ՍՍՀՄ Գերապետության դատարանը ստացավ միութենական հանրապետությունների Գերապետության դատարանների դատական պրակտիկայի դիրեկտիվ ղեկավարման իրավունք: Այդ որոշմամբ ՍՍՀՄ Գերապետության դատարանին նաև իրավունք վերապահվեց վերացնել և փոփոխել միութենական հանրապետությունների բոլոր դատական մարմինների դատավճիռները և որոշումները: Այդ նպատակի իրացման համար ՍՍՀՄ Գերապետության դատարանի կառուցվածքում հիմնադրվեց կոլեկտիվ՝ կազմված ՍՍՀՄ Գերապետության դատարանի նախագահից և նրա երկու տեղակալներից: Այդ կոլեկտիվին իրավունք ուներ վերացնել և փոփոխել նաև ՍՍՀՄ Գերապետության դատարանի մասցած բոլոր կոլեկտիվների դատավճիռները և որոշումները¹²²:

1934 թ. հունիսի 10-ին ՍՍՀՄ ԿԳԿ-ն ընդունեց «ՍՍՀ Միութենական ներքին լուծողության ժողկոմատի և նրա տեղական մարմինների կողմից քննվող հանցալուծողությունների վերաբերյալ լուծողությունների լուծման մասին» որոշումը, որով ստեղծվեց հատուկ դատարանների և հատուկ կոլեկտիվների յուրատեսակ համակարգ: Համաձայն այս որոշման՝ պետական հանցալուծողությունների վերաբերյալ լուծողությունները ընդդատյալ էին ՍՍՀՄ Գերապետության դատարանին, միութենական հանրապետությունների Գերապետության դատարաններին, երկրամասային և մարզային դատարաններին, ինչպես նաև ինքնավար հանրապետությունների Գերապետության դատարաններին: Այդ նպատակով ՍՍՀ Միության, միութենական և ինքնավար հանրապետությունների վերոնշյալ դատարաններում կազմակերպվեցին հատուկ դատական կոլեկտիվներ՝ կազմված նախագահից և երկու անդամներից: Հայրենիքի դավաճանության, լրտեսության, տեղորի և դիվերսիայի վերաբերյալ լուծողությունները ընդդատյալ էին ՍՍՀՄ Գերապետության դատարանի զինվորական կոլեկտիվին և

¹²² Տե՛ս *Պիլազյան Հ.Մ.*, Դատարանի կազմակերպումը և զարգացումը..., էջ 111:

զինվորական օկրու՞ների տրիբունալներին: Երկաթուղային և ջրային տրանսպորտում կատարված հանցա՞ործությունների վերաբերյալ զործերն ընդդատյա էին ԽՍՀՄ Գերա՞ույն դատարանի տրանսպորտային և ջրային կոլե՞կիաներին, երկաթուղային և ջրային զժային դատարաններին¹²³: Հատուկ դատարանների համակար՞ը ներառում էր զինվորական, զժային դատարանները¹²⁴: 30-ական թթ. սկզբների այդ բոլոր մասշտաբային վերափոխումները հան՞եցրին քրեական դատավարության նոր օրենս՞րքի մշակման անհրաժեշտությանը: Նոր օրենս՞իրքն ընդունվեց Հայաստանի ԿԳԿ-ի և Ժողկոմխորհի 1934 թ. հունիսի 22-ի համատեղ որոշմամբ:

1934 թ. քրեական դատավարության օրենս՞իրքը նախորդից ամենից առաջ տարբերվում էր իր ծավալով: Այն 465 հոդվ. փոխարեն պարունակում էր 411-ը: Կրճատումը պայմանավորված էր Հայաստանի ՍԽՀ-ի դատական համակար՞ում կատարված փոփոխություններով: Նոր օրենս՞րքում հիմնական ինստիտուտների և սկզբունքների պահպանմամբ հանդերձ որոշ էական փոփոխություններ էին անցկացված: Նախ՞ ընդլայնվել էին դատախազի իրավունքները և պարտականությունները հետաքննության և նախաքննության ոլորտում: Դատախազը հսկում էր քննության մարմինների և դատարանի զործունեության օրինականության վրա: Երկրորդ՞ վերանայվեց հետաքննության մարմինների վրա հսկողության հարցը, այն իմաստով, որ այդ իրավունքից զրկվում էին քննիչները, և դրանով օժտվում էին դատախազները: Երրորդ՞ ընդլայնվեցին դատախազության հսկողական լիազորությունները: Հանրապետության դատախազին իրավունք վերապահվեց հսկողական կար՞ով բողոքարկել դատարանների դատավճիռները: Չորրորդ՞ վերական՞նվեց դատարանի տնօրինական միտի ինստիտուտը, և դատի տալը ճանաչվեց քրեական դատավարության ինքնուրույն փուլ: Հին՞երորդ՞ վերացվեցին 1929 թ. սեպտեմբերի 4-ի օրենքով ներմուծված հակաժողովրդավարական նորույթները՝ որպես պարզունակացման դրսևորում քրեադատավարա-

¹²³ Տե՛ս ՆՇ ՆՆՆԹ, 1934, թիվ 36, հոդվ. 284:

¹²⁴ ԽՍՀՄ Գերա՞ույն խորհրդի 1944 թ. դեկտեմբերի 30-ի հրամանա՞րով ստեղծվեցին նաև ճամբարային հատուկ դատարանները և ԽՍՀՄ Գերա՞ույն դատարանի ճամբարային զործերով դատական կոլե՞կան:

կան զործունեության մեջ (դատարանի իրավունքը՝ թույլ չտալ կողմերի վիճաբանությունը և այլն):

Այդ տարիների քրեադատավարական օրենսդրության ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս արձանա՞րել, որ խորհրդային քրեական դատավարությունն աստիճանաբար ձեռք էր բերում ժողովրդավարական բնույթ: Սակայն 1934 թ. քրեական դատավարության օրենս՞րքի ընդունումից ընդամենը հին՞ամիս հետո, Կիրովի սպանության առիթով ԽՍՀՄ ԿԳԿ-ի 1934 թ. դեկտեմբերի 1-ի որոշմամբ, տեղորիստական հանցա՞ործությունների դեմ վճռական պայքարի նպատակով սահմանվեցին մեղադրյալի իրավունքների մի շարք դատավարական սահմանափակումներ տեղորիստական կազմակերպությունների և տեղորիստական ակտերի վերաբերյալ զործերով¹²⁵: Ի կատարումն այդ որոշման՝ 1934 թ. դեկտեմբերի 11-ին Հայաստանի ՍԽՀ ԿԳԿ-ն և Ժողկոմխորհը ընդունեցին օրենք 1934 թ. քրեական դատավարության օրենս՞րքի 115, 349, 367, 397 հոդվածները ծանոթություններով լրացնելու մասին¹²⁶: Համաձայն այդ լրացումների՝ տեղորիստական կազմակերպությունների և տեղորիստական ակտերի վերաբերյալ զործերով քննությունը պետք է ավարտվեր 10 օրվա ընթացքում: Նախնական քննության սովորական ժամկետը երկու ամիսն էր: 1934 թ. քրեական դատավարության օրենս՞րքի 349 հոդվ. լրացումը (ծանոթությունը) վատթարացնում էր ամբաստանյալի վիճակը: 349 հոդվ. սահմանում էր, որ Հայաստանի ՍԽՀ Գերա՞ույն դատարանին՝ որպես առաջին աստիճանի, ընդդատյա զործերով պաշտպանության և մեղադրանքի կողմերի մասնակցությունը դատական միտերին պարտադիր չէ, և յուրաքանչյուր ան՞ամ զործով նախա՞ահողը միանձնյա կերպով լուծում է այդ հարցը: 349 հոդվ. ծանոթությունը ար՞ելում էր դատարանին տեղորիստական կազմակերպությունների և տեղորիստական ակտերի վերաբերյալ զործերով թույլատրել կողմերի մասնակցությունը:

359 հոդվ. սահմանում էր սովորական կար՞ը, ըստ որի՝ մեղադրական եզրակացության պատճենները պետք է հանձնվեին

¹²⁵ Տե՛ս ՆՇ ՆՆՆԹ, 1934, թիվ 12, հոդվ. 124:

¹²⁶ Տե՛ս ՀՍԽՀ օրենքների և կար՞ադրությունների ժողովածու, 1934, թիվ 12, հոդվ. 124:

մեղադրյալներից յուրաքանչյուրին Պործը լսելուց 3 օր առաջ: Ծանոթությունը սահմանում էր, որ տեղորհաստական կազմակերպությունների և ակտերի վերաբերյալ Պործերով մեղադրական եզրակացությունը մեղադրյալին հանձնվում է Պործի դատական քննությունից մեկ օր առաջ:

367 հոդվ. ծանոթությունը սահմանում էր, որ այդ բնույթի Պործերով դատավճիռները ենթակա չեն ՊանՊատարկման վճռաբեկության կարժով, ինչպես նաև արժելում էր այդ Պործերով ներման միջնորդաՊրությունների ընդունումը:

397 հոդվ. սահմանում էր դատավճիռի կատարման սովորական կարժը, ըստ որի՝ դրանք ի կատար էին ածվում անհապաղ՝ օրինական ուժի մեջ մտնելուց հետո: Այդ հոդվածի նոր՝ երկրորդ ծանոթությունը սահմանում էր, որ տեղորհաստական կազմակերպությունների և տեղորհաստական ակտերի վերաբերյալ Պործերով մահապատիժ սահմանած դատավճիռները ենթակա են անհապաղ կատարման:

Կարծում ենք՝ ահաբեկչության դեմ պայքարի ուժեղացումը չպետք է բացառեր քրեական դատավարությունում անհատի պաշտպանության դատավարական երաշխիքները՝ որպես դատական սխալներ և քաղաքական կամայականություն թույլ չտալու միջոցներ:

Բացասական, հակաժողովրդավարական միտումները քրեական դատավարական օրենսդրության մեջ պայմանավորված էին նաև այն բանով, որ արդարադատության մարմինների համակարժը, արդարադատության սկզբունքները և երաշխիքներն այն ժամանակ չունեին սահմանադրական ամրաՊրում և պատշաճ սահմանադրաիրավական կարժավորում: ԽՍՀՄ 1936 թ. Սահմանադրությունը ամրաՊրեց ԽՍՀ Միության և միութենական, ինքնավար հանրապետությունների դատական համակարժերի, դատախազության կազմակերպման և Պործունեության հիմունքները, ինչպես նաև արդարադատության որոշ սկզբունքներ: Հայկական ԽՍՀ 1937 թ. Սահմանադրության ընդունմամբ հասարակական հարաբերությունների այդ ոլորտն առաջին անՊամ ենթարկվեց սահմանադրական-իրավական կարժավորման: 1936 թ. ԽՍՀՄ Սահմանադրությունը, անտեսելով հանրապետությունների ինքնիշխան իրավունքները, նրանց զրկեց սեփական օրենսդրություն (այդ թվում և՛ դատարանակազմության և դատավարության ոլոր-

տում) սահմանելու իրավունքից: Ելնելով ԽՍՀՄ Սահմանադրության դրույթներից՝ Հայկական ԽՍՀ 1937 թ. Սահմանադրությունը «Դատարանները և դատախազությունը» 7-րդ Պխում վերարտադրում էր դատարանի և դատախազության կազմակերպման և Պործունեության հիմունքները Հայկական ԽՍՀ-ի համար: Համաձայն Հայկական ԽՍՀ Սահմանադրության՝ արդարադատությունը իրականացնում էին Հայկական ԽՍՀ ԳերաՊույն դատարանը, ԽՍՀՄ ԳերաՊույն խորհրդի որոշմամբ հիմնադրված ԽՍՀՄ հատուկ դատարանները, ժողովրդական դատարանները (Հայկական ԽՍՀ 1937 թ. Սահմ. հոդվ. 82): Սահմանադրությունը ամրաՊրում էր դատարանի կազմակերպման և Պործունեության հետևյալ սկզբունքները՝ դատավորների ընտրովիություն, բոլոր դատարաններում Պործերի քննությունը ժողովրդական ատենակալների մասնակցությամբ, բացի օրենքով հատուկ սահմանված դեպքերից, բոլոր դատարաններում Պործերի բաց քննություն՝ օրենքով նախատեսված բացառություններով հանդերձ, մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովումը դատավորների անկախությունը և նրանց ենթարկվելը միայն օրենքին:

Հայկական ԽՍՀ Սահմանադրության 86 հոդվ. ամրաՊրում էր դատավարության ազժային լեզվի սկզբունքը. «Հայկական ԽՍՀ-ում դատավարությունը կատարվում է հայերեն լեզվով, իսկ բնակչության ոուսական կամ ադրբեջանական մեծամասնություն ունեցող շրջաններում՝ համապատասխանորեն ոուսերեն կամ ադրբեջաներեն լեզուներով, այդ լեզվին չտիրապետող անձերի համար ապահովելով լիակատար ծանոթացում Պործի նյութերին թարժմանի միջոցով, ինչպես նաև դատարանում մայրենի լեզվով հանդես Պալու իրավունք»:

Այս շրջանի սահմանադրական օրենսդրությունը չէր ամրաՊրում արդարադատության բոլոր ժողովրդավարական սկզբունքները՝ այդ հիմնախնդիրների լուծումը թողնելով ընթացիկ օրենսդրությանը: Արդեն հաստատված ամբողջատիրական իշխանության պայմաններում դա հանժեցրեց նրան, որ խորհրդային դատարանները և դատավարությունը չփոխեցին իրենց էությունը, մնացին որպես դասակարժային պայքարի Պործիք: Չնայած մարքս-լենինյան Պաղափարախոսության վրա հենվող սոցիալիստական օրինականության դոկտրինան էլնում էր իրավունքի մասին նորմատիվիստական պատկերացումներից, սակայն դա չէր

նշանակում օրենքի և Սահմանադրության օրենսդրության հաստատում, քանի որ քրեադատավարական օրենսդրության մեջ և դրա կիրառման պրակտիկայում առաջնային էին համարվում նպատակահարմարությունը, անալոգիան և օբյեկտիվ մեղսալիցությունը: Դա իր հերթին հանգեցնում էր օրենքի բազմաթիվ խախտումների: Քրեական իրավունքում անալոգիայի պահպանման պատճառով Հայկական ԽՍՀ 1934 թ. քրեական դատավարության օրենսգրքի 2 հոդվ. 2-րդ մասը սահմանում էր, որ «դատական մարմիններն իրավունք չունեն հրաժարվելու՝ ի քննություն ընդունելուց կամ կարճելու քրեական հետապնդումը, կամ առկա թողնելու օրոժի վճռահատությունը հասարակության համար վտանգավոր արարքի վերաբերմամբ այն հիման վրա, թե քրեական օրենքի մեջ մատնանշված չեն այդ արարքի հատկանիշները, այլ օրենքների թերության, մթության կամ հակասության պատճառաբանությամբ»:

Հայկական ԽՍՀ ԿԳԿ-ի և ժողկոմխորհի 1938 թ. փետրվարի 2-ի որոշմամբ քրեական դատավարության օրենսգրքի 325 հոդվ. ենթարկվեց էական փոփոխության¹²⁷: Այդ որոշմամբ վերացվեց մինչ այդ օղություն ունեցող կարգը, ըստ որի նվազ վտանգավորություններ կայացնող հանցագործությունների վերաբերյալ որոշ կատեգորիայի գործերով ժողդատարանի դատավճիռները վճռաբեկության կարգով ենթակա չէին անատարկման և բողոքարկման: Փոփոխությունը կարևոր նշանակություն ունեցավ դատավարության մասնակիցների օրինական իրավունքների ապահովման համար, լրացուցիչ երաշխիքներ ստեղծեց այդ գործերով օրինական ուժի մեջ մտած դատավճիռների օրինականության և հիմնավորվածության համար:

Քննարկվող ժամանակաշրջանի քրեադատավարական օրենսդրության մյուս բնութագրական փոփոխությունն էր: Ձևականորեն իշխանությունները և պաշտոնական իրավափոխությունը քարոզում էին սահմանադրականություն և օրինականություն, սակայն Սահմանադրության շատ թե քիչ ժողովրդավարական դրույթները տարրալուծվում էին ընթացիկ օրենսդրության մեջ, երբեմն նաև ձեռք էին բերում հակասահմանադրական բնույթ:

¹²⁷ Տե՛ս ՀՍԽՀ օրենքների և կարգադրությունների ժողովածու, 1939, թիվ 2, հոդվ. 9:

ԽՍՀՄ 1936 թ. Սահմանադրության դրույթները զարգացվեցին ԽՍՀՄ, միութենական, ինքնավար հանրապետությունների 1938 թ. օգոստոսի 16-ի դատարանակազմության մասին օրենքում: Այդ օրենքով սահմանվեցին արդարադատության հետևյալ հիմունքները՝ բոլոր քաղաքացիների համար, անկախ նրանց սոցիալական, օլիգարխի և ծառայական դրությունից, ազգային և ռասայական պատկանելությունից միասնական, հավասար դատարան (հոդվ. 5), բոլոր դատարանների համար միասնական և պարտադիր ԽՍՀՄ քրեական, քաղաքացիական և դատավարական օրենսդրություն¹²⁸: Չնայած համամիութենական օրենքը հուշակում էր «բոլոր քաղաքացիների համար միասնական և հավասար դատարան», այնուհանդերձ միութենական հանրապետություններում պահպանվում էին ԽՍՀՄ 1934 թ. դեկտեմբերի 1-ի վերոնշյալ օրենքի դրույթները: Ավելին, ԽՍՀՄ 1937 թ. սեպտեմբերի 14-ի օրենքով սահմանվեցին դատավարական սահմանափակումներ հակահեղափոխական վնասարարությունների և դիվերսիաների վերաբերյալ գործերով: Ի կատարումն այդ օրենքի՝ Հայկական ԽՍՀ ԿԳԿ-ն և ժողկոմխորհը 1937 թ. սեպտեմբերի 8-ին ընդունեցին որոշում Հայկական ԽՍՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին: Համաձայն այդ օրենքի՝ քրեական դատավարության օրենսգրքի 359, 367 հոդվածներին ավելացվում էին երկրորդ, իսկ 397 հոդվ.՝ երրորդ ծանոթություն-լրացումները¹²⁹: Այդ ծանոթություններով հակահեղափոխական վնասարարության և դիվերսիայի վերաբերյալ գործերով մեղադրյալին մեղադրական եզրակացությունը հանձնելու ժամկետը կրճատվեց մինչև մեկ օր դատական քննությունից առաջ, և վերացվեց դրանցով կայացված դատավճիռների վճռաբեկ անատարկման իրավունքը (ի տարբերություն 1934 թ. դեկտեմբերի 11-ի օրենքի՝ պահպանվեց դատարանում պաշտպանի և մեղադրողի մասնակցության իրավունքը, ինչպես նաև ներման

¹²⁸ Համաձայն այդ դրույթի՝ ակնկալվում էր միասնական համամիութենական քրեական դատավարության օրենսգրքի ընդունումը: ԽՍՀՄ արդժողկոմատի համամիութենական իրավաբանական ինստիտուտում ստեղծվել էին ԽՍՀՄ քաղաքացիական և քրեական դատավարությունների օրենսգրքերի նախագծերի մշակման հանձնաժողովներ: Այդ նախագծերը մշակվեցին, սակայն պատերազմը և հետպատերազմական ժամանակաշրջանի իրադարձություններն ու պայմանները թույլ չտվեցին այդ աշխատանքը հասցնել ավարտին:

¹²⁹ Տե՛ս Հայկական ԽՍՀ օրենքների և կարգադրությունների ժողովածու, 1937, թիվ 10, հոդվ. 45:

միջնորդաօրհնական գերակայացնելու իրավունքը): Հակահեղափոխական վնասարարության և դիվերսիայի օրոճերով կայացված և մահապատիժներ սահմանած դատավճիռները պետք է ի կատար ածվեն անհապաղ՝ դատապարտյալների ներման միջնորդաօրհնական մեթոդներով:

ԽՍՀՄ դատարանակազմության մասին օրենքը սահմանում էր վճարելի օանօատ և բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը՝ այդ իրավունքով օժտելով միայն դատավարության մասնակիցներին: Համաձայն այդ օրենքի 15 հոդվ.՝ բացի ԽՍՀՄ Գերաօույն դատարանից և միութենական հանրապետությունների Գերաօույն դատարաններից, մնացած բոլոր դատարանների դատավճիռներն ու որոշումները կարող էին օրենքով սահմանված կարօով օանօատարկվել դատապարտյալների, նրանց պաշտպանների, հաշվորդների, պատասխանողների և վերջիններիս շահերը պաշտպանող անձանց կողմից կամ կարող էին բողոքարկվել դատախազի կողմից: Սակայն 1938 թ. դատարանակազմության մասին օրենքով նեղացվեցին հսկողության կարօով օորժերը վերանայող ատյանների, ինչպես նաև հսկողության կարօով բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակները. Հայկական ԽՍՀ-ում օրինական ուժի մեջ մտած դատավճիռներն ու որոշումները վերանայելու իրավունք ուներ միայն հանրապետության օերաօույն դադարանը: Բողոքներ կարող էին բերել միայն ԽՍՀՄ դատախազը և ԽՍՀՄ Գերաօույն դատարանի նախաօահը, հանրապետության դատախազը և օերաօույն դադարանի նախաօահը:

Նախապատերազմական և պատերազմական տարիներին քրեադատավարական օրենսդրությունը ԽՍՀՄ 1936 թ. Սահմանադրության 14 հոդվ. ուժով զարօանում էր միայն համամիութենական նորմատիվ ակտերի ընդունման ճանապարհով, որոնք կամ առանց փոփոխության ընդօրկվում էին միութենական հանրապետությունների քրեական դատավարության օրենսօրքում կամ օորժում էին որպես համամիութենական օրենսքեր: Այսպես, ԽՍՀՄ Գերաօույն խորհրդի նախաօահության 1940 թ. օոստոսի 10-ի հրամանաօիրը սահմանում էր, որ առանց հարօելի պատճառների աշխատանքից բացակայելու և ձեռնարկություններից ու հիմնարկություններից ինքնաօլուխ կերպով հեռանալու վերաբերյալ օորժերը ժողովրդական դատավորները քննում են միանձնյա: ԽՍՀՄ Գերաօույն խորհրդի նախաօահության 1940 թ.

օոստոսի 10-ի հրամանաօիրը սահմանում էր նաև խուլիօանության վերաբերյալ օորժերի քննության պարզեցված կարօ: Համաձայն այդ օրենսդրական ակտի՝ ձեռնարկություններում, հիմնարկություններում, հասարակական վայրերում խուլիօանություն կատարած և տեղում ձերբակալված անձանց օորժերը միլիցիայի մարմիններն անմիջականորեն ուղարկում էին ժողովրդական դատարան: Նախնական քննություն այդ բնույթի օորժերով կատարվում էր միայն այն դեպքերում, երբ դա համարվում էր անհրաժեշտ: Այդ օորժերի համար սահմանվում էր քննության երկօրյա ժամկետ: Դատավճիռն ի կատար էր ածվում անմիջապես:

1941-45 թթ. ընթացքում քրեադատավարական իրավունքը կրեց փոփոխություններ, որոնք բխում էին պատերազմական ժամանակի պայմաններից: Մեծ հայրենականի տարիներին Հայկական ԽՍՀ-ում օորժում էին ԽՍՀՄ Գերաօույն խորհրդի նախաօահության 1941 թ. հունիսի 22-ի «Ռազմական դրության մասին», «Պատերազմական դրության մեջ հայտարարված վայրերում և ռազմական օորժողությունների շրջաններում ռազմական տրիբունալների կանոնադրության հաստատման մասին»¹³⁰ և 1943 թ. ապրիլի 15-ի «Բոլոր երկաթօժերում ռազմական դրություն մտցնելու մասին»¹³¹ հրամանաօրերը:

«Ռազմական դրության մասին» հրամանաօիրը նշանակալիորեն ընդունեց զինվորական տրիբունալների ընդհատությունը: Ժողովրդական դատարանների և հանրապետության օերաօույն դադարանի ընդհատությունից հանվեցին և զինվորական տրիբունալների քննությանը հանձնվեցին պետական հանցաօորժությունների վերաբերյալ օորժերը, զինժառայողների կատարած հանցանքների, ավազակության, դիտավորյալ սպանությունների, կալանավայրերից և ազատագրկման վայրերից բռնի կերպով ազատվելու, համընդհանուր զինվորական պարտավորության մասին օրենքի կատարումից խուսափելու, իշխանության ներկայացուցիչների դիմադրելու, ապօրինի զենք կրելու, վաճառելու և պահելու վերաբերյալ քրեական օորժերը: Զինվորական իշխանություններին իրավունք էր տրվում զինվորական տրիբունալների քննությանը հանձնել նաև սպեկուլյացիայի, չարամիտ խուլիօանության և այլ հանցաօորժությունների վերաբերյալ օորժերը,

¹³⁰ Տե՛ս ԴԻՄՍԻ ԻՆՅԵ ԴԻՃՈՒՅԻՆԻՆԻ ՆԻՆՅՈՒՆՆԵՐ, 1941, թիվ 29:

¹³¹ Տե՛ս նույն տեղը, 1943, թիվ 15:

եթե հրամանատարությունը, ուսումնական ժամանակների հանձնարարական գործերից ելնելով, դա կհամարեն անհրաժեշտ: Պատերազմի տարիներին Հայկական ԽՍՀ-ում ստեղծվեցին Կարմիր բանակի, ներքին զորքերի ժողովրդական զորքերի և երկաթուղիի զինվորական տրիբունալներ: Դատավարությունը զինվորական տրիբունալներում այքի էր ընկնում իր առանձնահատկություններով: Զինվորական տրիբունալները ուսումնական դրության մեջ հայտարարված տարածքներում զորքերը քննում էին առանց ժողովրդական աստեղանակների մասնակցության՝ դատարանի երեք մշտական անդամների կազմով: Զինվորական տրիբունալն իրավունք ուներ մեղադրյալին մեղադրական եզրակացությունը հանձնելուց 24 ժամ հետո սկսել զործի լուծումը: Զինվորական տրիբունալների դատավճիռները վճռաբեկ քանակատարկման ենթակա չէին և կարող էին վերացվել կամ փոխվել միայն դատական հսկողության կարգով:

Պատերազմից հետո վերականգնվեց խաղաղ ժամանակի օրենքների զործողությունը: Զինվորական տրիբունալները սկսեցին զործերը քննել ընդհանուր կարգին համապատասխան: Սակայն հետպատերազմյան տարիներին ևս տեղի էին ունենում օրինականության խախտումներ քրեական դատավարության ոլորտում, հատկապես՝ քաղաքական աստառ ունեցող քրեական զործերով:

Այսպիսով, 1925-53 թթ. միջև ընկած ժամանակաշրջանը, ինչպես ամբողջ խորհրդային, այնպես էլ Հայաստանի քրեադատավարական օրենսդրության պատմության մեջ առանձնանում է նախորդ շրջանի որոշ ժողովրդավարական նվաճումներից հրաժարումով և խառը ձևի դատավարությունից առավելապես հետախուզական ձևի դատավարության անցումով: Ամբողջատիրական վարչաձևը դասակարգային թշնամիների դեմ պայքարելու համար ստեղծեց արտադատական հաշվեհարդարի մարմիններ, սահմանափակեց մեղադրյալի պաշտպանության իրավունքը, դատական պրակտիկա ներմուծեց ապացուցման մեջ մեղադրյալի խոստովանության վճռական նշանակության մասին թեզը: Քրեական դատավարության ժողովրդավարական ձևերից հետ կանգնելը տեղի էր ունենում պետական շահերի՝ անձնական շահերի նկատմամբ առաջնությունից սոցիալիստական դոկտրինայի ազդեցության ներքո:

§ 4. Խորհրդային Հայաստանի քրեադատավարական օրենսդրությունը 1956-1990 թթ.

Մինչև 1956-1990 թթ. քրեադատավարական օրենսդրության պատմության լուսաբանմանն անցնելը անհրաժեշտ ենք համարում ընդհանուր պարբերացման շրջանակներում համակարգել Հայաստանի քրեական դատավարության զարգացման այս շրջանը և առանձնացնել դրանում հետևյալ փուլերը՝

1) 1956-1964 թթ.՝ ԽՍՀՄ XX համաժողովի կուրսով պայմանավորված քաղաքական վարչաձևի ազատականացման և դատական բարեփոխումների անցկացման (1958-61թթ.) փուլ, որն ուղեկցվեց ինչպես միութենական, այնպես էլ Հայաստանի մասշտաբով քրեական դատավարության խառը ձևին բնորոշ մի շարք դրույթների վերականգնումով,

2) 1965-90 թթ.՝ Հայաստանի քրեական դատավարության զարգացման «լճացման» փուլը, որն իրականում առավելապես հետախուզական էր, սակայն մատուցվում էր որպես խառը:

1953 թ. Ստալինի մահից հետո իրադրությունը ԽՍՀՄ-ում աստիճանաբար փոխվում էր: Տեղի էր ունենում քաղաքականության ազատականացում: Վրա հասան այսպես կոչված «խրուշչովյան հալոցքի» տարիները: 1956 թ. փետրվարին ԽՍՀՄ XX համաժողովի փակ նիստում Ն.Ս. Խրուշչովը կարգաց գեկուցում Ստալինի անձի պաշտանմունքի մերկացման մասին, որում բացահայտորեն հրապարակվեցին զանվածային բռնությունների և օրինականության խախտումների փաստերը: Հասարակական-քաղաքական կյանքի ժողովրդավարականացման կուրսն իր համապատասխան շարունակությունն ստացավ իրավական ոլորտում՝ իրավաբանական մեջ, դատաիրավական բարեփոխումներում, քաղաքական բռնությունների զոհերի արդարացմամբ: Իրավունքի պոզիտիվ-նորմատիվիստական բնորոշումը՝ տրված 1938 թ. խորհրդակցությունում և դրան համապատասխանող իրավահասկացումը ըստ էության հետադարձ բոլոր տարիներին ամբողջ խորհրդային իրավախոսության համար դարձավ պաշտոնական, համապարտադիր դիրքորոշում: Իրավունքի նույնացումն ամբողջատիրական օրենսդրության հետ, ոչ քննադատական, զուլաբանական պոզիտիվիզմը բացառում էին օրենքի իրավական արժե-

քավորման, իրավունքի և օրենքի տարբերակման և համադրման, իրավունքի և իրավախախտող օրենսդրության հակադրման բուն հնարավորությունը¹³²:

ԽՄԿԿ XX համաժողովից հետո հնարավոր դարձան տեսական վիճաբանություններն իրավունքի հասկացության և բնորոշման հիմնախնդիրների շուրջ: Այնուամենայնիվ իրավունքի նախկին հասկացությունը, բնորոշումը և մեկնաբանումը ըստ էության պահպանվեց նաև հետագա տարիներին, նույնիսկ երբ 60-ական թթ. սկզբներից սոցիալիստական համաժողովրդական պետության օրինակով սկսեցին խոսել սոցիալիստական համաժողովրդական իրավունքի մասին: 1962 թ. ԽՄԿԿ XXII համաժողովում արձանագրվեց, որ ժամանակակից պայմաններում, երբ սոցիալիզմը հաղթել է ոչ միայն լրիվ, այլև վերջնականապես, երբ խորհրդային հասարակությունը թևակոխել է կոմունիզմի շինարարության փուլ, ԽՍՀՄ-ում պրոլետարիատի դիկտատուրան ներքին զարգացման տեսակետից անհրաժեշտություն չէ: Սոցիալիստական պետությունը, որ ծագել է որպես պրոլետարիատի դիկտատուրայի պետություն, արդի պայմաններում, ասվում էր համաժողովի որոշման մեջ, վերածվել է համաժողովրդական պետության: «Սակայն պրոլետարիատի դիկտատուրայի պետությունից և իրավունքից համաժողովրդական պետության և իրավունքի անցնելու վերաբերյալ դրույթը, ըստ էության, կրում էր դեկլարատիվ և քարոզչական բնույթ, քանի որ երկրի քաղաքական վարչաձևում, օրենսդրության մեջ, տնտեսական, հոկտոբրյան կատարված որոշ փոփոխությունները և «Ստալինի անձի պաշտամունքի հետևանքների հաղթահարման» միջոցառումներ ամբողջությամբ փաստորեն չջրջափեցին հասարակության սոցիալիստական և տնտեսական բնութագիրը, պրոլետարիատի դիկտատուրայի հիմնարար սկզբունքները, ժողովուրդները և կառույցները, ինչպես նաև նրա հարկադրահրամայական կարգավորիչ համակարգը: Համաժողովրդական պետության և իրավունքի դեկլարատիվ անցման պայմաններում ևս խորհրդային իրավաբանության մեջ, հազվադեպ բացառություններով հանդերձ, շարունակում էին լինելու բառացիորեն թեթևակիորեն արդիականացված, սակայն ըստ էության, նախկին պատկերացումները ընդհանրապես իրավունքի մասին և մասնավորապես սոցիալի-

¹³² Տե՛ս *Էնո՛ւ ժե՛յ ի՛ ղե՛ծե՛-անղե՛ծ Է ի՛ ժա՛նի՛ս Է՛-ա՛նի՛ Է՛*. Ի ., 1998, էջ 656:

ստական խորհրդային իրավունքի մասին՝ որպես վարքագծի կանոնների (նորմերի) համակցություն (կամ համակարգ) սահմանված պետության կողմից և ապահովված նրա հարկադրանքով»¹³³:

Ասվածը վերաբերում է նաև քրեական դատավարության իրավունքի իտությանը և քրեադատավարական օրենսդրությանը: Այդպիսի մոտեցման հետևանքն այն փաստն էր, որ 50-ական թթ. վերջերի դատական բարեփոխումները կրում էին կիսատ ու անհետևողական բնույթ: Հակասական բնույթ ուներ նաև քաղաքական ահաբեկչության զոհերի արդարացման ռեժիմը, որն սկսվեց իրավապահպան մարմինների ռեժիմի մեջ, օրինակության վերականգնման համատեքստում, 1953 թ. սեպտեմբերին ԽՍՀՄ ՆԳ մինիստրությանը կից «հատուկ խորհրդակցության» վերացման մասին որոշման ընդունմամբ: Հատուկ խորհրդակցությունը ստեղծվել էր 1934 թ. նոյեմբերի 5-ին, ԽՍՀՄ ԿԳԿ-ի և ժողկոմխորհի համատեղ որոշմամբ¹³⁴: ԽՍՀՄ Գերագույն դատարանն իրավունք ստացավ վերանայելու այդ արտադատական մարմնի կողմից 30-40-ական թթ. և 50-ական թթ. սկզբներին կայացրած դատավճիռները՝ ԽՍՀՄ լիազոր դատախազի բողոքների հիման վրա: 1954-1966 թթ. արդարացվեց ավելի քան 700 հազար մարդ, շատերը՝ հետմահու:¹³⁵ Ստալինյան ապօրինությունների և կամայականությունների զոհերի արդարացումը դարձավ դատական մարմինների ռեժիմի հիմնական ուղղություններից մեկը: Սակայն արդարացման ռեժիմը ևս հակասական էր, քանի որ սկզբնական շրջանում արդարացումը, որպես կանոն, հանգեցվում էր ապօրինի որոշումների վերացմանը և «ռեժիմի» կարճման: Վերականգնվում էր բռնադատվածների բարի անունը, իսկ ռեժիմի, աշխատանքային, բնակարանային և այլ իրավունքները՝ ոչ: Ավելի ուշ (1955-56 թթ.) առաջ եկան ակտեր, որոնք թույլ էին տալիս վերականգնել նաև այդ իրավունքները, բայց ոչ լրիվ ծավալով:

Քննարկվող ժամանակաշրջանի առաջին տարիներին աշխատանքներ իրականացվեցին այն անձանց մերկացնելու ուղ-

¹³³ Տե՛ս *Ի ղե՛ծե՛-անղե՛ծ Է՛. Ն. Օե՛նի՛ն Օե՛յ ի՛ ժա՛ն. Ի ., 1997, էջ 304-305:*

¹³⁴ Տե՛ս *Պի՛վազյան Հ.Մ.*, Դատարանի կազմակերպումը և զարգացումը..., էջ 143:

¹³⁵ Տե՛ս *Ի ղե՛ծե՛-անղե՛ծ Է՛. Ի ., Օնղե՛նի՛ Է՛. Ի ., 1999, էջ 677:*

դրությամբ, ովքեր մեղավոր էին կամայականության ակտերում, քաղաքացիների ապօրինի հետապնդումներում և նրանց նկատմամբ զործեր կեղծելու մեջ: Սակայն 30-40-ական թթ. և 50-ական թթ. սկզբների բռնությունների հետևանքների լրիվ վերացումը չիրականացվեց մի շարք՝ լիսավորապես, քաղաքական պատճառներով¹³⁶:

Այսպիսով, 1956-64 թթ. միջև ընկած շրջանը խորհրդային հասարակության քաղաքական վարչաձևի ազատականացման շրջանն է: Այդ ազատականացումը պայմանավորված էր ԽՍՀՄ XX համաժողովում առաջ քաշված «կուսակցական և պետական կյանքի լեճիճյան նորմերի վերականգնման» քաղաքականությամբ, որի համատեքստում ենթադրվում էր ներքաղաքական կյանքի բոլոր ոլորտների ժողովրդավարացում և ընդհանուր օրենսդրական ու դատաիրավական բարեփոխման անցկացում: Քրեադատավարական իրավունքի համար այդ շրջանը նշանավորվեց քրեական դատավարության խառը, մրցակցային-հետախուզական ձևի վերականգնմամբ: Սակայն ժողովրդավարական վերափոխումների կիսատպոտությունը և անհետևողականությունը հանգեցին միայն խառը ձևի արտաքին բնութագրերի վերականգնմանը, համարյա չշոշափեցին առկա՝ առավելապես հետախուզական քրեական դատավարության էությունը¹³⁷:

50-ական թթ. վերջերի դատական բարեփոխման ընթացքում քրեադատավարական օրենսդրության մեջ կատարվեցին որոշ փոփոխություններ հետևյալ հիմնական ուղղություններով՝ արդարադատության իրականացումը միայն դատարանի կողմից սկզբունքի հետևողական իրացում, մեղադրյալի իրավունքների դատավարական երաշխիքների ամրապնդում, հրաժարում դատավարության արտակարգ ձևերից, դատական հսկողության նոր ձևերի սահմանում:

Ամենից առաջ վերանայվեց դատական հսկողության կարգը: «ԽՍՀՄ, միութենական և ինքնավար հանրապետությունների դատարանական զբոսանքի մասին» 1938 թ. օրենքով դատական հսկողությունը խիստ կենտրոնացված էր, իսկ հսկողական բողոք բե-

¹³⁶ Տե՛ս *Áðóáí éř É.Ó., Éřááéáá Ĩ .Á.* Ĩ ðááĨ Ĩ ðááĨ éðáéúĨ úá Ĩ ðááĨ ú. Ĩ ., 1997, էջ 251:

¹³⁷ Տե՛ս *ÉřñòĨ ðéý çáéĨ Ĩ Ĩ ááðáéúĨ ðááá ÑÑÑĐ è ĐÑŌÑĐ Ĩ Ĩ óáĨ éř áĨ Ĩ Ĩ ó Ĩ ðĨ óáĨ ñó.* 1955-1991 áá. *ÑĨ áðáĨ éá Ĩ Ĩ ðĨ áðéáĨ úð áéòĨ á.* Ĩ ., 1997, էջ 56:

րելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը՝ սահմանափակ: Նոր պայմաններում, երբ օրինականության ապահովումը իրավապահական համակարգում դարձել էր առաջնային, բողոքարկման սուբյեկտների շրջանակի սահմանափակումը, այսինքն՝ հսկողական լիազորությունները միայն ԽՍՀՄ Գերապետության դատարանին և միութենական հանրապետությունների լիազորության դատարաններին տրամադրելը անարդյունավետ էր, հատկապես այն հանրապետություններում, որոնք ունեին մարզային վարչատարածքային բաժանում: Օրինակ, Հայկական Հանրապետության Գերապետության դատարանի համար հսկողական ատյան էր ԽՍՀՄ Գերապետության դատարանը: Այդ պատճառով դատական հսկողությունը խիստ սահմանափակ էր, իսկ իրականացման դեպքում՝ ոչ օպերատիվ: Դրանից ելնելով, ԽՍՀՄ Գերապետության խորհրդի նախագահությունն իր 1954 թ. օգոստոսի 14-ի «Միութենական և ինքնավար հանրապետությունների, լիազորության դատարանների, մարզային և ինքնավար մարզերի դատարանների կազմում նախագահություններ կազմակերպելու մասին» հրամանագրով բոլոր մարզային և դրանց հավասար դատարաններում, այդ թվում նաև Հայկական ԽՍՀ Գերապետության դատարանի կազմում, կազմակերպվեցին նախագահություններ¹³⁸: 1955 թ. ապրիլի 25-ին ԽՍՀՄ Գերապետության խորհրդի նախագահությունը հրապարակեց «Դատարանների նախագահություններում զործերը քննելու կարգի մասին» հրամանագիրը¹³⁹: Նախագահությանը՝ որպես դատական ատյանի, իրավունք վերապահվեց հսկողության կարգով վերանայել Հայկական ԽՍՀ Գերապետության դատարանի կողմից կայացրած դատավճիռները և որոշումները: Հսկողական բողոք բերելու իրավունք ուներ ԽՍՀՄ լիսավոր դատախազը, ԽՍՀՄ Գերապետության դատարանի նախագահը, Հայկական ԽՍՀ դատախազը, Հայկական ԽՍՀ Գերապետության դատարանի նախագահը և նրա տեղակալները: Դատական հսկողության այդպիսի կարգը հնարավորություն էր տալիս ուժեղացնել վերահսկողությունը դատական մարմինների օրինական ուժի մեջ մտած ակտերի օրինականության և հիմնավորվածության վրա և ավելի օպերատիվ արձանագրել դատական սխալներին:

¹³⁸ Տե՛ս *ÁááĨ Ĩ Ĩ ñòè ÁÑ ÑÑÑĐ, 1954,* թիվ 17, հոդվ. 300:

¹³⁹ Տե՛ս *ÁááĨ Ĩ Ĩ ñòè ÁÑ ÑÑÑĐ, 1955,* թիվ 7, հոդվ. 166:

Օրինականության ասպահովման էր ուղղված ԽՍՀՄ-ում դատախազական հսկողության մասին կանոնադրության ընդունումը՝ 1955 թ.¹⁴⁰: 1933 թ. դեկտեմբերի 17-ի Դատախազական հսկողության մասին կանոնադրությունը լիաավորապես վերաբերում էր դատախազության դաշնային ասպարատին և պարունակում էր միայն ընդհանուր դրույթներ, առանց դատախազական հսկողության իրականացման կարգի մասին կոնկրետ ցուցումների¹⁴¹: 1955 թ. կանոնադրությունը, էլնելով ԽՍՀՄ 1936 թ. Սահմանադրության դրույթներից (հոդվ. 113), կոնկրետ և մանրամասն սահմանում էր ԽՍՀՄ-ում դատախազության մարմինների կազմակերպման և լործունեության սկզբունքները, կարգը: Համաձայն այդ կանոնադրության՝ բոլոր մինիստրությունների և նրանց ենթակա հիմնարկությունների, առանձին պաշտոնատար անձանց, ինչպես նաև ԽՍՀՄ քաղաքացիների կողմից օրենքների ճշգրիտ կատարման վրա հսկողությունն իրականացնում էր ԽՍՀՄ լիաավոր դատախազը (հոդվ. 2): ԽՍՀՄ-ում դատախազության մարմինները կազմում էին միասնական կենտրոնացված համակարգ՝ ԽՍՀՄ լիաավոր դատախազի լիաավորությամբ, ստորադաս դատախազների՝ վերադաս դատախազներին ենթակայությամբ (ԽՍՀՄ-ում դատախազական հսկողության կանոնադրություն 5 հոդվ.): Կանոնադրության 3 հոդվ. ամրապրում էր դատախազական հսկողության ուղղությունները՝

- 1) ընդհանուր հսկողություն,
- 2) հանցանք կատարելու մեջ մեղավոր անձանց քրեական պատասխանատվության ենթարկելը,
- 3) հետաքննության և նախաքննության մարմինների լործունեության մեջ օրինականության պահպանման նկատմամբ հսկողությունը,
- 4) հսկողությունը դատական մարմինների դատավճիռների, որոշումների և վճիռների օրինականության նկատմամբ,
- 5) հսկողությունը դատավճիռների կատարման օրինականության վրա,
- 6) հսկողությունը ազատագրկման վայրերում ազատագրկվածներին պահելիս օրինականության պահպանման նկատմամբ:

¹⁴⁰ Տե՛ս *Աձձի ի նո՞ժ ԱՆ ՆՆՆՊ*, 1955, թիվ 9, հոդվ. 222:

¹⁴¹ Տե՛ս *Պիվազյան Հ.Մ.*, Դատարանի կազմակերպումը և զարգացումը..., էջ 146:

ԽՍՀՄ-ում դատախազական հսկողության մասին կանոնադրության ընդունումից հետո դրանից բխող անհրաժեշտ փոփոխություններ կատարվեցին նաև Հայկական ԽՍՀ դատախազության կազմակերպման և լործունեության մեջ¹⁴²: Փաստորեն, միայն այդ վերակառուցումից հետո՝ ԽՍՀՄ 1936 թ. Սահմանադրությունն ընդունելուց 19 տարի անց, ավարտվեց դատախազական հսկողության մարմինները սահմանադրական սկզբունքներին համապատասխան կազմակերպելու լործընթացը:

1953-57 թթ. ընթացքում ԽՍՀՄ քրեական դատավարության զարգացման միտումներից մեկն էլ արդարադատության իրականացումը միայն ընդհանուր դատարանների միջոցով սկզբունքի իրացումն էր և դատավարության որոշ արտակարգ, ոչ իրավական ձևերից հրաժարվելը: Վերացվեցին հատուկ խորհրդակցությունը, հատուկ եղակները, ճամբարային դատարանները, ՆԳ մինիստրության գորքերի տրիբունալները: Նրանց ընդդատյա լործերը հանձնվեցին ընդհանուր դատարաններին: ԽՍՀՄ 1957 թ. փետրվարի 12-ի «Տրանսպորտային դատարանների վերացման մասին» օրենքով վերացվեցին լծային և օկրուլային տրանսպորտային դատարանները երկաթուղային և ջրային տրանսպորտում¹⁴³: Տրանսպորտային դատարաններին ընդդատյա լործերը ևս հանձնվեցին ընդհանուր դատարաններին (մեր հանրապետությունում՝ ժողովրդական դատարաններին և լերալույն դատարանին):

ԽՍՀՄ Գերալույն խորհրդի նախալահության ապրիլի 19-ի հրամանալորով վերացվեցին ԽՍՀՄ ԿԳԿ-ի նախալահության 1934 թ. դեկտեմբերի 1-ի «Ահաբեկչական ակտերի նախապատրաստման կամ կատարման վերաբերյալ լործերի վարման կարգի մասին» և ԽՍՀՄ ԿԳԿ-ի 1937 թ. սեպտեմբերի 14-ի «Միութենական հանրապետությունների քրեական դատավարության լործող օրենալորքերի մեջ փոփոխություններ կատարելու մասին»

¹⁴² Հայկական ԽՍՀ Գերալույն խորհրդի նախալահության 1952 թ. հունվարի 17-ի հրամանալորով հանրապետությունում կազմակերպվեցին երեք օկրուլներ՝ որպես նոր վարչատարածքային միավորներ: Համապատասխանաբար կազմակերպվեցին երեք օկրուլային դատախազություններ: Սակայն նման վարչատարածքային բաժանումը չարդարացրեց իրեն և նույն տարվա վերջին օկրուլները և օկրուլային դատախազությունները վերացվեցին: 1955 թ. ստեղծվեցին միջջրջանային դատախազությունները: (տե՛ս *Պիվազյան Հ.Մ.*, Դատարանի կազմակերպումը և զարգացումը..., էջ 149):

¹⁴³ Տե՛ս *Աձձի ի նո՞ժ ԱՆ ՆՆՆՊ*, 1957, թիվ 4, հոդվ. 86:

(սահմանում էր հակահեղափոխական վնասարարության և դիվերսիաների վերաբերյալ ռոբոտների վարման բացառիկ կարգը) որոշումները¹⁴⁴: Ի կատարումն այդ հրամանագրի՝ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը վերացրեց վերոնշյալ ակտերով քրեական դատավարության օրենսգրքում մտցված սահմանափակումները և վարույթի բացառիկ կարգերը՝ սահմանելով, որ այդ բնույթի ռոբոտերով նախնական քննությունը և դատական քննությունը կատարելիս քննության մարմինները և դատարանները պետք է ղեկավարվեն ընդհանուր քրեադատավարական նորմերով¹⁴⁵:

50-ական թթ. վերջերի դատական բարեփոխումը թափ առավ 1957 թ. փետրվարի 11-ի «միութենական հանրապետության դատարանակազմության մասին օրենսդրությունը, քաղաքացիական, քրեական և դատավարական օրենսգրքերի ընդունումը միութենական հանրապետությունների իրավասությանը վերապահելու մասին» ԽՍՀՄ օրենքի ընդունումից հետո¹⁴⁶: Այդ օրենքը փոխեց ԽՍՀՄ Սահմանադրությունը և մասամբ վերականգնեց միութենական հանրապետությունների ինքնիշխան իրավունքները, ԽՍՀՄ Միության իրավասությանը թողնելով միայն դատարանակազմության և դատավարության օրենսդրության հիմունքների, ինչպես նաև քրեական ու քաղաքացիական օրենսդրության հիմունքների ընդունումը:

Օրենսդրության նշված ոլորտներում համամիութենական և հանրապետական իրավասության նման սահմանազատումը պայմանավորեց համամիութենական և հանրապետական օրենսդրության մեջ հետևյալ հարաբերակցությունը: ԽՍՀՄ օրենսդրությունը կազմված էր համամիութենական հիմունքներից, որոնք ամրագրում էին բոլոր միութենական հանրապետությունների համար պարտադիր իրավունքի համապատասխան ճյուղի սկզբունքային դրույթները, ինչպես նաև այդ հիմունքներին համապատասխանող առանձին օրենսդրական ակտերից, որոնք ապահովում էին համապետական, առանձին հանրապետությունների միջև չբաժանված հասարակական հարաբերությունների կարգավորումը: Միութենական հանրապետությունների օրենսդրությունը

¹⁴⁴ Տե՛ս *Ասիի ինօե ԱՆ ՆՆՆՊ*, 1956, թիվ 9, հոդվ. 193:

¹⁴⁵ Տե՛ս Հայկական ԽՍՀ ԳԽ Տեղեկագիր, 1956, թիվ 4, հոդվ. 34:

¹⁴⁶ Տե՛ս *Ասիի ինօե ԱՆ ՆՆՆՊ*, 1957, թիվ 4, հոդվ. 63:

կազմված էր համամիութենական հիմունքներին լրիվ համապատասխան կառուցված օրենսգրքերից, որոնք հաշվի էին առնում համապատասխան հանրապետության հատուկ պայմանները, ինչպես նաև միութենական հանրապետության իրավասության մեջ մտնող հասարակական հարաբերությունների ոլորտները կարգավորող առանձին օրենսդրական ակտերից:

1957 թ. մարտի 18-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը ընդունեց օրենք հանրապետության Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու մասին¹⁴⁷: Այնուհետև միութենական մաստշաբով ձեռնարկվեցին նշված ոլորտներում ԽՍՀ Միության օրենսդրության հիմունքների մշակման և ընդունման աշխատանքներ: 1958 թ. դեկտեմբերի 25-ին ընդունվեցին մեզ հետաքրքրող ԽՍՀ Միության, միութենական և ինքնավար հանրապետությունների քրեական դատավարության հիմունքները¹⁴⁸: «Հիմունքները իրենցում կուտակել էին խորհրդային իրավապահպան մարմինների աշխատանքի փորձը, խորհրդային դատավարական իրողության զարգացումը և նշանակալիորեն կատարելափոխում էին խորհրդային քրեական դատավարությունը»¹⁴⁹: Մինչ այդ ռոբոտը հիմունքները քրեական դատավարության մասին պարունակում էին նորմեր, որոնք հակասում էին ԽՍՀՄ 1936 թ. Սահմանադրությանը և ավելի ուշ ընդունված օրենքներին: Այսպես, 1924 թ. հիմունքները նախատեսում էին ոչ մի հանցաքրոջություն չկատարած, բայց հանրորեն վտանգավոր ճանաչված անձի նկատմամբ ազատազրկումը որպես խափանման միջոց կիրառելու հնարավորությունը, կալանքի սանկցիավորման պարզեցված կարգի քննիչի կողմից, որոշ դատավճիռների քանադատարկման արգելքը, վճարելի ատյանի դատարանների կողմից ռոբոտի փաստական հանցանքները ստուգելու արգելքը և այլն:

Գնահատելով 1958 թ. հիմունքների դերը և նշանակությունը՝ պետք է ասել, որ 50-ական թթ. երկրորդ կեսին սկսված ժողովրդավարացման ռոբոտընթացը դատաիրավական բարեփոխումների

¹⁴⁷ Տե՛ս *Շահահաի Եյ Ասիի ինօե ԱՆ ՆՆՆՊ*, 1957, էջ 286:

¹⁴⁸ Տե՛ս *Ասիի ինօե ԱՆ ՆՆՆՊ*, 1959, թիվ 1, հոդվ. 12:

¹⁴⁹ Տե՛ս *Էօժոն ինօե ԱՆ ՆՆՆՊ* թիվ 1, հոդվ. 12: *Արեւիկա, Է.Է. Էօժիկա. Ի . .*, 1989, էջ 412:

չրջանակներում բնութափոխում էր կիսատպոստությանը և անհետևողականությանը, լիսավորապես քաղաքական բնույթի պատճառներով: Այդ թերությունները չէին կարող չարտացոլվել քրեական դատավարության տեսության մեջ և զործնականում: Դա դրսևորվեց մասնավորապես ժողովրդավարական քրեական դատավարության այնպիսի կարևոր ինստիտուտների ակատամարտի սխալ հայացքների պահպանմամբ, ինչպիսիք են մրցակցությունը և անմեղության կանխավարկածը:

Մինչև 50-ական թթ. վերջերի դատական բարեփոխումները և դրանից հետո դատավարափոխների հայացքները կտրուկ բևեռացան: Մի կողմից հանդես էին գալիս մեծամասնական բնույթի «արմատական բարեփոխիչներ» Ս.Ա. Գոլունսկին, Մ.Ա. Չելցովը, Յ. Օ. Մոտովիլովները և այլք¹⁵⁰, իսկ մյուս կողմից՝ «պահպանողական» Մ.Ա. Ստրոկովիչը և ուրիշներ: Առաջինները մերժում էին բուրժուական իրավունքի հնացած դոգմաները, իսկ Ստրոկովիչը ձգտում էր դրանք ամրապնդել տալ քրեադատավարական օրենսդրության մեջ: 1958 թ. հրատարակվեց Մ.Ա. Ստրոկովիչի «Մորհրդային քրեական դատավարության կուրսը», որը պարունակում էր մի շարք կարևոր տեսական դրույթներ: Դրանում հեղինակն անմեղության կանխավարկածը համարում էր խորհրդային քրեական դատավարության սկզբունք¹⁵¹: Սակայն 50-ական թթ. վերջերին դատական բարեփոխումները իրականացնելիս օրենսդիրը հնարավոր չհամարեց մի շարք դատավարափոխների ցանկությունների բավարարումն այն մասին, որ անմեղության կանխավարկածի սկզբունքն ընդգրկվի քրեական դատավարության հիմունքներում: Նման վերաբերմունքը որոշ դատավարափոխների հիմք տվեց առաջ քաշելու փաստարկներ՝ ուղղված անմեղության կանխավարկածի դեմ: Օրինակ, «մեղադրյալը խորհրդային դատավարությունում կանխավարկածվում է ո՛չ մեղավոր,

¹⁵⁰ Տե՛ս *Хороша І.А. И́аа́иіо́но̀еи і́но̀е і́а̀а́іа́а́іе́у а́о̀д̀а́о̀а́і́у̀о̀ е́іі́но̀-д̀о̀ѐо̀е́ а́ н́іа́о̀е́о́р о́а́іе́іа́іі-і́д́іо́а́н́о́а́е́уі́о́р о́а́ід̀е́р. — О́:а́і́íúа́ çа́іе́е́е́ А́нн́і́рçа́ííа́і́ б̀д̀е́а́:а́н́е́íа́í çа́í+ííа́í е́і́но̀е́о́о́а. а́ú.í. VI. Í ., 1958:*

¹⁵¹ Մ.Ա. Ստրոկովիչը ոչ միայն այդ աշխատանքում, այլև մեկ այլ մեծափորությունում՝ *И́ а́о̀д̀е́а́е́уі́а́у́ е́н́о́е́íа́ è н́о́а́а́í úа́ а́íе́а́çа́д̀а́е́уі́но́а́а́ а́ н́íа́а́о̀н́е́íí о́а́íе́íа́ííí і́д́і́о́а́н́а́ (Մ., 1955, էջ 183-184), ինչպես նաև Ն.Ն. Պոլյանսկին (տե՛ս *А́и́і́д́і́н́ú о́а́і́д̀е́è н́íа́а́о̀н́е́íа́í о́а́íе́íа́ííа́í і́д́і́о́а́н́а́. Í ., 1956, էջ 112), «անմեղության կանխավարկածը»* հայտարարում էին խորհրդային քրեական դատավարության սկզբունք:*

ո՛չ էլ անմեղ»¹⁵², իսկ Յ. Օ. Մատովիլովների դատողություններն այդ առիթով ավելի շատ հեփնական են, քան փոսական. «Օրենսդիրը հրաժարվել է քրեական դատավարության հիմունքների և միութենական հանրապետությունների քրեական դատավարության օրենսփոքերի տեքստում այսպես կոչված՝ անմեղության կանխավարկածի բանաձևն ընդգրկելուց: Ո՛չ մեղադրյալի իրավունքների երաշխիքները, ո՛չ մեր դատավարության ողջ ժողովրդավարական կարգը դրանից ոչ մի կերպ չեն տուժել»¹⁵³:

Անտեսվեց նաև խառը ձևի քրեական դատավարության այնպիսի հիմնարար սկզբունք, ինչպիսին էր մրցակցությունը: 1958 թ. հիմունքները և Հայկական ԽՍՀ 1961 թ. քրեական դատավարության օրենսփոքը, անմիջականորեն չամրապնդելով մրցակցության սկզբունքը և չդարձնելով այն զուգահեռ դատական փուլի անկյունաքար, 3 հոդվ. (Քրեական զործ հարուցելու և հանցափործությունը բացահայտելու պարտականությունը) սահմանում էին, որ դատարանը, դատախազը, քննիչը և հետաքննության մարմինը պարտավոր են իրենց իրավասության սահմաններում քրեական զործ հարուցել հանցափործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում, ձեռք առնել օրենքով նախատեսված բոլոր միջոցները հանցափործության դեպքը պարզելու, հանցափործություն կատարելու մեջ մեղադրվող անձանց հայտնաբերելու և նրանց պատժելու համար: Խնդիրը ոչ թե այն է, որ նոր օրենսդրությունը անմիջականորեն չամրապնդեց մրցակցության սկզբունքը, այլ այն, որ այս սկզբունքը դատարանը դրեց մեկ շարքում մեղադրանքի մարմինների հետ և մի շարք դատավարափոխների հիմք տվեց հիմնավորելու տեսական փաստարկներ մրցակցային դատավարության՝ մեզանում անընդունելիության մասին և մերժելու այն՝ որպես բուրժուական քրեական դատավարությունում օտարփորձող ոչ ճիշտ, կեղծ տեսական հայեցակարգ: «Օրենքի այդ պահանջի էությունը (նկատի է առնվում հիմունքների վերոնշ-

¹⁵² Տե՛ս *А́іе́о́і́н́е́е́é N.А. А́и́і́д́і́н́ú а́íе́а́çа́д̀а́е́уі́но́а́а́íííа́í і́д̀а́а́а́ а́ Í н́ííа́а́о̀ о́а́íе́íа́ííа́í н́о́а́íí́д́і́е́çа́ííа́но́а́а́é Н́íрçа́ Н́НД́ è н́íрçа́íúо̀ д̀а́н́і́о́а́е́е́é. А́ е́íе́а́а́ А́и́і́д́і́н́ú н́о́а́íí́д́і́е́çа́ííа́но́а́а́ è н́о́а́íо́н́о́д́і́е́ն́о́а́а́ а́ ííа́ííí çа́е́ííííа́а́о́е́уі́но́а́а́ Н́íрçа́ Н́НД́. Í ., 1959, էջ 139:*

¹⁵³ Տե՛ս *И́ і́о́ѓа́е́ííа́eа́д́ B.Í. Í а́е́íо́í́д́úа́ а́и́і́д́і́н́ú о́а́íд̀е́è н́íа́а́о̀н́е́íа́í о́а́íе́íа́ííа́í і́д́і́о́а́н́а́ а́ н́áа́о́а́ íííа́ííа́í о́а́íе́íа́ííí-í́д́і́о́а́н́о́а́éуíííа́í çа́е́ííííáá-о́а́éуííո́áа́. Èа́í а́д́íа́í, 1962, էջ 154:*

օրենսփորձը կարևոր դեր խաղացին քրեական դատավարության մի շարք կարևոր սկզբունքների (օրինականության, արդարադատության իրականացումը միայն դատարանի միջոցով) հռչակման և կենսափորձման հարցում: Այդ երկու օրենքները նպաստեցին նաև մեղադրյալի պաշտպանության իրավունքի ընդլայնմանը, քաղաքացիների իրավունքների և ազատությունների պահպանության փորձում փաստաբանության դերի բարձրացմանը, հասարակայնության ներկայացուցիչների ընդգրկմանը քննչական և դատական մարմինների փորձունեության մեջ: Այդ ակտերը միաժամանակ հիմք, յուրօրինակ խթան հանդիսացան խորհրդային քրեադատավարական իրավունքի փոփոխության որոշակի զարգացման համար, նոր տեսական հիմնախնդիրների և մոտեցումների մշակման համար, որոնց ընթացքում աստիճանաբար հաղթահարվեցին քրեական դատավարության հիմնարար դրույթների նկատմամբ միջնորդական և անտեսումը:

Միութենական հիմունքները նաև իրաբավական կամ ծանուցեցին Հայկական ԽՍՀ-ում դատաիրավական բարեփոխումներ իրականացնելու համար սկզբունքային նշանակություն ունեցող 4 օրենսդրության (Հայկական ԽՍՀ դատարանակազմության մասին (1959 թ. 20 նոյեմբերի), Հայկական ԽՍՀ քրեական օրենսփորձը (1961 թ. մարտի 7)¹⁵⁵, Հայկական ԽՍՀ քաղաքացիական դատավարության օրենսփորձը (1964 թ. հունիսի 4)¹⁵⁶ և Հայկական ԽՍՀ քրեական դատավարության օրենսփորձը (1961 թ. մարտի 7)¹⁵⁷) մշակման և ընդունման համար:

Հայկական ԽՍՀ 1961 թ. քրեական դատավարության օրենսփորձի ընդունման պայմանները և նրա հայեցակարգային առանձնահատկություններն ապահովող փորձունքներն ամբողջովին դրական չէին: Այդ իսկ պատճառով էլ օրենսփորձն ուներ էական թերություններ: Իհարկե, Հայկական ԽՍՀ-ի 1961 թ. քրեական դատավարության օրենսփորձը վերացրեց ստալինյան շրջանի քրեական դատավարության ամենից հետադիմական դրույթները, առանձին քրեական փորձերի համար սահմանված հատուկ վարույթները վերացնելու և բոլոր փորձերով վարույթի միասնական

¹⁵⁵ Տե՛ս Հայկական ԽՍՀ ԳԽ տեղեկափոր, 1961, թիվ 7, հոդվ. 41:

¹⁵⁶ Տե՛ս նույն տեղը, 1962, թիվ 11, հոդվ. 69:

¹⁵⁷ Տե՛ս նույն տեղը, 1961, թիվ 7, հոդվ. 42:

կարգ սահմանելու միջոցով մասամբ ժողովրդավարական դարձրեց քրեական դատավարությունը, էականորեն ընդլայնեց քրեական պատասխանատվության ենթարկվող անձանց իրավունքները, նախատեսեց նախաքննությանը պաշտպանի մասնակցությունը թույլատրելու հնարավորություն, ամրափորձեց տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի իրավունքները, ավելի հստակ սահմանեց ապացույցի և ապացուցման հասկացությունը և այլն: Սակայն ամբողջատիրական վարչաձևի պայմաններում քրեական դատավարության որոշակի ազատականացումը չփոխեց Հայկական ԽՍՀ-ի 1961 թ. քրեական դատավարության օրենսփորձի հայեցակարգի որոշիչ մոտեցումների բնույթը: Ինչպես ԽՍՀ Միության քրեական դատավարության հիմունքները, այնպես էլ Հայկական ԽՍՀ-ի 1961 թ. քրեական դատավարության օրենսփորձը «կառուցված էին նախկին Խաղափարախոսական հիմքի վրա, այն է՝ պետական իշխանության և նրան դատավարությունում ներկայացնող մարմինների միասնության հայեցակարգի, պետական շահերի և անհատի շահերի, մեղադրանքի և պաշտպանության փոխհարաբերակցություններում առաջինների առաջնայնության ճանաչման վրա»¹⁵⁸: Հայկական ԽՍՀ-ի 1961 թ. քրեական դատավարության օրենսփորձի այդ և մնացած թերությունները հիմք են տալիս եզրակացնելու, որ դրանով սահմանված՝ քրեական փորձերով վարույթի կարգը միայն արտաքինապես էր մնում դատավարության խառը ձևին: Ըստ էության այն մնում էր առավելապես հետախուզական:

50-ական թթ. վերջերի բարեփոխումների անհետևողականության վառ ապացույցը համարվում է արդարադատության իրականացումը միայն դատարանի միջոցով սկզբունքի հռչակումը և դրա կիսատպոստ իրացումը: Խորհրդային ընթացիկ օրենսդրությունը նախատեսում էր փորձերի արտադատական լուծման մի շարք ձևեր: Օրինակ՝ խորհրդային քաղաքացիությունից զրկելը, առանց ինչ-որ մեղադրանքի առաջադրման և դատական քննության ԽՍՀՄ սահմաններից բռնի արտաքսելը, արտադատական մարմնի որոշման հիման վրա այսպես կոչված՝ հանրորեն

¹⁵⁸ Տե՛ս Օáí èî áí úé ì ðí óáññ. Ì î ä ðáá. *Y. A. Éoréíneré. Ì .*, 1995, էջ 19:

օտակար աշխատանքից խուսափող և հակահասարակական, պարազիտ կյանքով ապրող անձանց վարչական արտաքսումը¹⁵⁹, անչափահասների նկատմամբ հարկադրանքի միջոցների կիրառումը անչափահասների զործերով հանձնաժողովների միջոցով¹⁶⁰ և այլն:

Ինչպես արդեն ասել ենք, ԽՍՀ Միության և միութենական հանրապետությունների քրեական դատավարության հիմունքները մեծապես նախորոշել էին Հայկական ԽՍՀ-ի 1961 թ. քրեական դատավարության օրենսգրքի բովանդակությունը և կառուցվածքը: Ի տարբերություն 1934 թ. քրեական դատավարության օրենսգրքի՝ այն ավելի կատարյալ էր և կառուցված էր ըստ քրեական զործերով վարույթի փուլերի: Ամբողջ նորմատիվ նյութը դրանում բաժանված էր 7 հատվածների և 34 լուխների, ուներ 384 հոդվածներ:

Այդ հատվածների հերթականությունը 1961 թ. դրությամբ հետևյալն էր՝

— ընդհանուր դրույթներ (հիմնական դրույթներ, դատարան և ընդդատություն, դատախազը, քննիչը և հետաքննություն կատարող անձը, դատավարության մասնակիցները, նրանց իրավունքներն ու պարտականությունները, ապացույցների մասին, խափանման միջոցներ, արձանագրությունների մասին, ժամկետների և դատական ծախսերի մասին),

— քրեական զործի հարուցումը,

— հետաքննություն և նախաքննություն (հետաքննություն, նախաքննություն կատարելու ընդհանուր պայմանները, մեղադրանքի առաջադրումը և մեղադրյալի հարցաքննությունը, վկայի և տուժողի հարցաքննությունը, առերեսում, ճանաչման ներկայացնել, առօրվում, խուզարկություն, զույքի վրա կալանք դնելը, զննում և քննում, փորձաքննության կատարում, նախաքննության կասեցում, նախաքննության ավարտումը, դատախազի հսկողությունը հետաքննության և նախաքննության մարմինների կողմից օրենքների կատարման նկատմամբ, հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի զործողությունների անօտարկումը),

¹⁵⁹ Այդ ակտերն իրենց ուժը կորցրեցին միայն 1990 թ.: Տե՛ս *Áaãî ì îñòè Ñúáçää íãðíáí ùò áaíóðáóí à ÑÑÑÐ è ÁÑ ÑÑÑÐ*, 1990, թիվ 23, հոդվ. 418, 1990, թիվ 39, հոդվ. 773, 1990, թիվ 47, հոդվ. 1004:

¹⁶⁰ Տե՛ս *Ĭ èðáéíáá Ě. Áaðñèèè òðéáóí àè. — Ĭ ðááää*, 1989, 26 հուլիսի:

— վարույթն առաջին ատյանի դատարանում (մեղադրյալին դատի տալը և դատական նիստը նախապատրաստելու զործողությունները, դատական քննության ընդհանուր պայմանները, դատական նիստի նախապատրաստական մասը, դատաքննություն, դատական վիճաբանությունները և ամբաստանյալի վերջին խոսքը, դատավճիռը կայացնելը, դրամական տույժեր և տուֆանքներ դնելու վարույթը, բժշկական բնույթի հարկադրական միջոցների կիրառման վարույթը),

— վարույթը վճռաբեկ ատյանում (առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ չմտած դատավճիռների, որոշումների և դատավորների որոշումների անօտարկումն ու բողոքարկումը, զործի քննարկումը վճռաբեկ անօտարկ և բողոքի հիման վրա),

— դատավճիռի կատարումը,

— օրինական ուժի մեջ մտած դատավճիռների ու որոշումների վերանայումը (վարույթը հսկողական ատյանում, զործերի նորոշումը նոր երևան եկած հանգամանքների հետևանքով):

Հայկական ԽՍՀ-ի 1961 թ. քրեական դատավարության օրենսգրքը հիմունքներին համապատասխան առաջին անօտարկ օրենսդրորեն ձևակերպեց քրեական դատավարության խնդիրները՝ հանցազործությունների արաօ և լրիվ բացումը, հանցավորների մերկացումը և օրենքի ճիշտ կիրառման ապահովումն այն հաշվով, որպեսզի հանցազործություն կատարած յուրաքանչյուր ոք ենթարկվի արդարացի պատժի և ոչ մի անմեղ մարդ քրեական պատասխանատվության չենթարկվի ու չդատապարտվի (1961 թ. քր. դատ. օր. հոդվ. 2): Նախկին քրեադատավարական օրենսդրությունը քրեական դատավարության խնդիրները չէր ամրաօրում¹⁶¹:

Հայկական ԽՍՀ 1961 թ. քրեական դատավարության օրենսգրքի առաջին հատվածում արտացոլված էին քրեական դատավարության որոշ սկզբունքները՝ անձի անձեռնմխելիությունը (հոդվ. 6), արդարադատության իրականացումը միայն դատարանի միջոցով (հոդվ. 7), արդարադատության իրականացումը օրեն-

¹⁶¹ Ըիշտ է ԽՍՀՄ, միութենական և ինքնավար հանրապետությունների 1938 թ. օրենքը դատարանակազմության մասին սահմանում էր սոցիալիստական արդարադատության խնդիրները (հոդվ. 2), սակայն այն արմատականորեն տարբերվում էր 1958 հիմունքների և Հայկական ԽՍՀ 1961 թ. քրեական դատավարության օրենսգրքի սահմանումներից:

քի և դատարանի առաջ քաղաքացիների հավասարության հիմունքներով (հոդվ. 8), ժողովրդական ատենակալների մասնակցությունը և կոլեկտիվությունը լործերը քննելիս (հոդվ. 9), դատավորների անկախությունը և նրանց ենթարկվելը միայն օրենքին (հոդվ. 10), դատավարության լեզուն (հոդվ. 11), դատական քննության հրապարակայնությունը (հոդվ. 12), մեղադրյալի համար պաշտպանության իրավունքի ապահովումը (հոդվ. 13), լործի հանձնարարների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտումը (հոդվ. 14), դատախազական հսկողությունը քրեական դատավարությունում (հոդվ. 16), վերադաս դատարանների հսկողությունը ստորադաս դատարանների լործունեության վրա (հոդվ. 15): Դատական քննության փուլի համար քրեական դատավարության օրենսդրում ամրապահում էր անմիջականության, անընդհատության (հոդվ. 230) և դատական քննության մասնակիցների իրավունքների հավասարության սկզբունքները (հոդվ. 238): Իհարկե, իրավական պետության հռչակման և կառուցման ժամանակակից դիրքերից քրեական դատավարության նոր օրենսդրում ամրապահված սկզբունքների շրջանակը և բովանդակությունը թերի էր, սակայն նախորդ շրջանի քրեադատավարական օրենսդրության համեմատ դա մի քայլ առաջ էր:

Նոր քրեադատավարական օրենսդրությունը կարճավորում էր ապացուցողական իրավունքի հիմնական հարցերը, մասնավորապես՝ քրեական լործով ապացուցման ենթակա հանձնարարները, տալիս էր ապացույցի հասկացությունը և թվարկում էր ապացույցների տեսակները քրեական դատավարությունում, էսպես հստակեցնում էր ապացույցների նահատմանը վերաբերող նորմի ձևակերպումը (Հայկական ԽՍՀ 1961 թ. քր. դատ. օր. 54, 56, 58 հոդվածներ): Համեմատության համար նշենք, որ Հայաստանի ՍՍՀ 1934 թ. քրեական դատավարության օրենսդրում այդ հարցերին հատուկ ուշադրություն չի դարձրել, իսկ ապացուցողական իրավունքի հիմնական դրույթների մասին դրանում եղած նորմերը բավական չէին այդ հարաբերությունների լիարժեք կարճավորման համար: Այսպես, նշված օրենսդրության 56 հոդվ. սահմանում էր, որ դատարանը չի սահմանափակված ոչ մի ձևական ապացույցով և, ելնելով լործի հանձնարարներից, նա է որոշում թույլատրել այս կամ այն ապացույցը կամ պահանջել դրանք երրորդ անձանցից: Իսկ հոդվ. 57-ը սահմանում էր, որ ապացույցներ են հա-

մարվում վկաների ցուցմունքները, փորձատեսների եզրակացությունները, իրեղեն ապացույցները, զննության արձանագրությունները և այլ լորավոր փաստաթղթերը, մեղադրյալի անձնական բացատրությունները: Այդ օրենսդրության 65 հոդվ. ամրապահում էր միայն իրեղեն ապացույցների հասկացության բնորոշումը: 1961 թ. քրեական դատավարության օրենսդրում, բացի ապացուցողական իրավունքին վերաբերող վերոնշյալ նորմերից, 56 հոդվ. ամրապահում էր, որ քրեական լործով փաստական տվյալները հաստատվում են՝ վկայի ցուցմունքներով, տուժողի ցուցմունքներով, կասկածյալի ցուցմունքներով, մեղադրյալի ցուցմունքներով, փորձատեսի եզրակացությամբ, իրեղեն ապացույցներով, քննչական և դատական լործողությունների արձանագրություններով ու այլ փաստաթղթերով: Հետագայում հոդվածներում սահմանվում էին ապացույցի յուրաքանչյուր տեսակի դատավարական-իրավական հատկանիշները:

1958 թ. հիմունքներին համապատասխան՝ Հայկական ԽՍՀ-ի 1961 թ. քրեական դատավարության օրենսդրում ընդլայնում էր դատավարության մասնակիցների իրավունքների շրջանակը: Նախ՝ քրեական դատավարության օրենսդրում առանձին լույս էր նվիրել դատավարության մասնակիցների իրավական կարճավիճակի սահմանմանը: Համաձայն այդ օրենսդրության՝ դատավարության մասնակիցներ էին ճանաչվում՝ մեղադրյալը (ամբաստանյալը), պաշտպանը, տուժողը, քաղաքացիական հայցվորը, քաղաքացիական պատասխանողը և վերջիններիս ներկայացուցիչները:

Հայկական ԽՍՀ-ի 1961 թ. քրեական դատավարության օրենսդրում, նշանակալիորեն ընդլայնելով մեղադրյալի իրավունքները, թվարկում էր դրանք և սահմանում էր դրանց իրացումն ապահովող երաշխիքները: Մեղադրյալի իրավունքների մեջ կարևոր տեղ էր զբաղեցնում պաշտպանության իրավունքը: Մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովումը համարվում էր քրեական դատավարության սկզբունք (1961 թ. քր. դատ. օր. հոդվ. 13): Մեղադրյալի պաշտպանության իրավունքի բաղադրատարրերից մեկն էլ, ըստ 1961 թ. օրենսդրության՝ մեղադրյալի՝ պաշտպան ունենալու իրավունքն էր: Համաձայն այդ օրենսդրության 43 հոդվ.՝ պաշտպանի մասնակցությունը լործին թույլատրվում էր նախաքննության ավարտման մասին մեղադրյալին հայտնե-

լու և ծանոթանալու համար՝ Պործի ամբողջ վարույթը մեղադրյալին ներկայացնելու պահից: Այն Պործերով, որոնցով նախաքննությունն չէր կատարվում, պաշտպանի մասնակցությունը թույլատրվում էր մեղադրյալին դատի տալու պահից: Նախաքննությանը պաշտպանի մասնակցությունը մեղադրանք առաջադրելու պահից պարտադիր էր այն հանցա֊ործությունների վերաբերյալ Պործերով, որոնք կատարել էին անչափահասները, համրերը, խուլերը, կույրերը և այլ այնպիսի անձինք, ովքեր իրենց ֆիզիկական կամ հո֊եկան պակասությունների պատճառով չեն կարող անձամբ իրականացնել պաշտպանության իրենց իրավունքը, ինչպես նաև այն հանցա֊ործությունների վերաբերյալ Պործերով, որոնց համար որպես պատժամիջոց կարող էր մահապատիժ սահմանվել: Այն անձանց վերաբերյալ Պործերով, ովքեր չէին տիրապետում այն լեզվին, որով տարվում էր նախաքննությունը, ինչպես նաև ովքեր մեղադրվում էին այնպիսի հանցա֊ործությունների մեջ, որոնց համար որպես պատժամիջոց կարող էր մահապատիժ նշանակվել, պաշտպանի մասնակցությունը պարտադիր էր նախաքննության ավարտման մասին մեղադրյալին հայտնելու և Պործի ամբողջ վարույթը, ծանոթանալու համար, մեղադրյալին ներկայացնելու պահից:

Հայկական ԽՍՀ 1961 թ. քրեական դատավարության օրենս֊գրքը քրեական դատավարության մասնակիցների շարքում չէր թվարկում կասկածյալին, ինչպես նաև հասարակական մեղադրողին և հասարակական պաշտպանին: Հասարակական մեղադրողի և հասարակական պաշտպանի դատավարական կար֊ավիճակն ամրա֊րկվում էր օրենս֊գրքի այլ հատվածներում: Հայկական ԽՍՀ Գերա֊ույն խորհրդի նախա֊ահույթյան 1977 թ. հուլիսի 27-ի հրամանա֊րով քրեական դատավարության օրենս֊գրքը լրացվեց երկու նոր հոդվածներով՝ 47¹ և 111¹, որոնք սահմանում էին «կասկածյալի» հասկացության բնորոշումը, նրա իրավունքները, հանցա֊ործության կատարման մեջ կասկածվող անձի կարճաժամկետ ձերբակալման կար֊ը¹⁶²:

Հայկական ԽՍՀ 1961 թ. քրեական դատավարության օրենս֊գրքը խորհրդային Հայաստանի քրեադատավարական օրենսդրության ողջ պատմության մեջ առաջին ան֊ամ տուժողին ճանաչեց քրեական դատավարության մասնակից և սահմանեց

¹⁶² Տե՛ս Հայկական ԽՍՀ ԳԽ տեղեկա֊իր, 1977, թիվ 14, հոդ. 137:

նրա իրավական կար֊ավիճակը: Այդ օրենս֊գրքի 48 հոդվ. իմաստից բխում էր, որ տուժողն օժտված էր դատավարության սուբյեկտի համարյա բոլոր իրավունքներով: Սակայն հանրային մեղադրանքի Պործերով նրա իրավունքները սահմանափակված էին, որովհետև նա իրավունք չուներ մասնակցելու դատական վիճաբանություններին:

Զար֊ացնելով 1958 թ. հիմունքների դրույթները՝ Հայկական ԽՍՀ 1961 թ. քրեական դատավարության օրենս֊գրքը սահմանում էր հասարակական մեղադրողների և հասարակական պաշտպանների դատավարական կար֊ավիճակը: Այդ անձինք ունեին միջնորդության, ապացույցներ ներկայացնելու և դրանց հետազոտմանը մասնակցելու իրավունքներ:

Ինչպես 1934 թ. քրեական դատավարության օրենս֊գրքը, այնպես էլ 1961 թ. քրեական դատավարության օրենս֊գրքը պարունակում էր առանձին Պլուխ՝ «Խափանման միջոցներ», որտեղ ավելի մանրամասն կար֊ավորված էին խափանման միջոցների ընտրության և կիրառման դատավարական կար֊երը: 1961 թ. քրեական դատավարության օրենս֊գրքը հրաժարվեց այնպիսի խափանման միջոցներից, ինչպիսին էին Պուլքային երաշխավորությունը, Պրավը, տնային կալանքը (1934 թ. քր. դատ. օր. 142 հոդվ.) և թողեց կալանքը, ստորա֊րություն չհետանալու մասին, անձնական երաշխավորությունը և մտցրեց նոր խափանման միջոց՝ հասարակական կազմակերպության երաշխավորությունը (1961 թ. քր. դատ. օր. 81 հոդվ.): 1961 թ. օրենս֊գրքը անչափահասների Պործերով թույլատրում էր այնպիսի խափանման միջոցի կիրառումը, ինչպիսին էր անչափահասներին ծնողների, խնամակալների, հո֊աբարձուների կամ փակ մանկական հիմնարկների ադմինիստրացիայի հսկողությանը հանձնելը (1961 թ. քր. դատ. օր. 79 հոդվ.): Զինվորական ծառայող կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ օրենս֊գրքի 80 հոդվ. հնարավոր էր համարում որպես խափանման միջոց զորամասի հրամանատարության հսկողությանը հանձնելը:

Հայկական ԽՍՀ 1961 թ. քրեական դատավարության օրենս֊գրքը առանձին հատվածում կար֊ավորում էր քրեական Պործ հարուցելու կար֊ը: Օրենս֊գրքը դատախազին, քննիչին, հետաքննության մարմնին, դատավորին պարտավորեցնում էր հարուցել քրեական Պործ հանցա֊ործության հատկանիշներ

հայտնաբերելու բոլոր դեպքերում (հոդվ. 98): 1961 թ. օրենսփոփոխությունը վերացրեց 1934 թ. օրենսփոփոխության այն դրույթը, համաձայն որի՝ քրեական օրենսդրության հարուցման առիթ էր համարվում նաև հետաքննության մարմնի, քննիչի կամ դատարանի անմիջական հայեցողությունը (1934 թ. քր. դատ. օր. 91 հոդվ.): Սակայն, ինչպես նախորդ օրենսփոփոխությունը, նորը ևս դատավորին դիտում էր որպես քրեական օրենսդրության հարուցման սուբյեկտ, որը խորհրդային դատարանին հաղորդում էր մեղադրական թեքում:

Հայկական ԽՍՀ 1961 թ. քրեական դատավարության օրենսփոփոխության երրորդ բաժինը կարգավորում էր վարույթի կարգը նախնական քննության փուլում: Այս փուլի համար նորույթ էր հետաքննության միասնական և պարտադիր կարգի սահմանումը, ինչը չկար 1934 թ. քրեական դատավարության օրենսփոփոխություն, որի 106 հոդվ. ծանոթությունը սահմանում էր, որ միասնական պետական քաղաքական վարչության (ավելի ուշ՝ պետական անվտանգության մինիստրության) մարմինների կողմից հետաքննություն կատարելու կարգը սահմանվում է հատուկ կանոնադրությամբ:

Հայկական ԽՍՀ 1961 թ. քրեական դատավարության օրենսփոփոխության պարունակում էր քննիչի լիազորությունները կարգավորող նոր (հոդվ. 38), համաձայն որի՝ նախաքննություն կատարելիս քննությանը ուղղություն տալու և քննչական օրոճողություններ կատարելու վերաբերյալ բոլոր որոշումները քննիչն ընդունում էր ինքնուրույն, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով նախատեսված էր դատախազից սանկցիա ստանալը, և լրիվ պատասխանատվություն էր կրում դրանք օրինական կարգով ու ժամանակին կատարելու համար: Այն դեպքում, երբ քննիչը համաձայն չէր դատախազի ցուցումներին՝ որպես մեղադրյալ պատասխանատվության ենթարկելու, հանցաօրոճությունը որակելու և մեղադրանքի ծավալի, մեղադրյալին դատի տալու համար օրոճն ուղարկելու կամ այն կարճելու մասին, նա իրավունք ուներ օրոճը ներկայացնել վերադաս դատախազին՝ օրավոր շարադրելով իր առարկությունները: Այս դեպքում դատախազը կամ վերացնում էր ստորադաս դատախազի ցուցումները, կամ այդ օրոճի քննությունը հանձնարարում էր մեկ այլ քննիչի: Խնդրի նման լուծումը պայմանավորում էր քննիչի դատավարական ինքնուրույնությունը և բարձրացնում էր նրա՝ որպես քրեական դատավարության սուբյեկտի, պատասխանատվությունը:

Ելնելով 1958 թ. հիմունքների դրույթներից՝ Հայկական ԽՍՀ 1961 թ. քրեական դատավարության օրենսփոփոխությունը դատի տալուն ուղղված օրոճողությունների համակցությունը վերածեց քրեական դատավարության առանձին փուլի: Ինչպես նշել ենք, դեռ 1929 թ. ժողովրդական դատարաններում տնօրինական գիտերը վերացվեցին, և դատի տալու օրոճատույթը հանձնվեց դատախազին: 1934 թ. քրեական դատավարության օրենսփոփոխության և չէր նախատեսում տնօրինական գիտերը դատարանում, իսկ մեղադրական եզրակացության հաստատումը դատախազի կողմից համարվում էր դատի տալու ակտ: Դրանով իսկ դատի տալը զրկվում էր քրեական դատավարության ինքնուրույն փուլի նշանակությունից և ձուլվում նախնական քննության ավարտի հետ¹⁶³:

Հայկական ԽՍՀ 1934 թ. քրեական դատավարության օրենսփոփոխության 210 հոդվ. սահմանում էր, որ դատախազը, քննություն կատարող մարմնից ստանալով, օրոճը կարող էր՝

ա) կասեցնել կամ դադարեցնել վարույթը դրանց համար հիմքերի առկայության դեպքում,

բ) օրոճը իր ցուցումների հետ միասին վերադարձնել լրացուցիչ քննության,

գ) հաստատել մեղադրական եզրակացությունը, «որով քննության տակ օտնվողը տրվում էր դատի»:

Հաստատված մեղադրական եզրակացությունը օրոճի հետ միասին ուղարկվում էր դատարան, ընդ որում, եթե դատախազն իր անձնական մասնակցությունը դատական գիտին համարում էր անհրաժեշտ, ապա նա այդ մասին հայտնում էր դատարանին (1934 թ. քր. դատ. օր. 214 հոդվ.):

Գործը քննություն կատարող մարմնից անմիջապես ստանալով՝ ժողովրդական դատավորը քննությունը բավարար համարելու դեպքում հաստատում էր մեղադրական եզրակացությունը և օրոճը նշանակում էր դատական գիտում լսելու: Ըստ Հայկական ԽՍՀ 1934 թ. քրեական դատավարության օրենսփոփոխության 219 հոդվ.՝ օրոճը նախապատրաստական գիտին կարելի էր դնել հետևյալ դեպքերում.

¹⁶³ Միաժամանակ 1934 թ. քրեական դատավարության օրենսփոփոխությունը ներմուծում էր նախապատրաստական գիտերի ինստիտուտը, որ սակայն պարտադիր չէր բոլոր օրոճերի համար:

կան նորմերը: Եթե այս տեսակետից օգնահատենք 1961 թ. քրեական դատավարության օրենսգրքի այն նորմերը, որոնք կարգավորում էին նախաքննությանն ակատմամբ դատախազական հսկողությունը, քննիչի դատավարական ինքնուրույնությունը, նրա իրավունքը՝ չկատարել դատախազի ցուցումները, ապա դրանք, ըստ էության, բարի ցանկություն էին: Այդպիսի դրության պատճառը քննիչի ծառայողական կախվածությունն էր դատախազից: Ակնհայտ է եզրակացությունը՝ քննիչի դատավարական ինքնուրույնության իրական ապահովման համար անհրաժեշտ է նրան դուրս բերել դատախազի ծառայական ենթակայությունից:

Ինչպես տեսնում ենք, օրենսգրքի ընդունմամբ նախնական քննության և քննչական ապարատի կազմակերպման օրենսդրական կարգավորման մեջ առկա էին մի շարք հիմնախնդիրներ, որոնք լուծման կարիք ունեին: Սակայն օրենսդիրը ուշադրություն չէր դարձնում դրանց վրա և անտեսում էր քրեական դատավարության օրենսդրության խորհուրդները: Ցավոք, այդ հիմնախնդիրները լուծելու փոխարեն օրենսդիրն էլ, ավելի խճճեց իրադրությունը: Ելնելով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1963 թ. ապրիլի 6-ի «Հասարակական կարգի պահպանության մարմիններին նախաքննություն վարելու իրավունք տալու մասին»¹⁶⁷ հրամանագրից՝ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունն իր 1963 թ. հունիսի 10-ի հրամանագրով լրացում կատարեց 1961 թ. քրեական դատավարության օրենսգրքի 116 հոդով¹⁶⁸: Այդ լրացմամբ նախաքննություն վարելու իրավունք ստացան նաև հասարակական կարգի պահպանության (ներքին օրոճերի) մարմինները: Ներքին օրոճերի նախարարության համակարգում ստեղծվեցին քննչական վարչություններ, բաժիններ, բաժանմունքներ: Սահմանվեց այդ համակարգի քննիչների ենթակայությունը: Այդպիսով՝ ձևավորվել և օրոճում էին քննչական ապարատի երեք ենթահամակարգեր՝ դատախազության քննչական ապարատը, ներքին օրոճերի քննչական ապարատը, անվտանգության մարմինների քննչական ապարատը: Եթե հաշվի առնենք, որ հետաքննության մարմինները որոշ քրեական օրոճեր ավարտում էին ինքնուրույն՝ դրանք ուղարկելով դատարան, ապա ակնհայտ կդառնա նախնական քննության չորրորդ ենթահամակար-

¹⁶⁷ Տե՛ս ԱձձԻ Ի ըժե ԱՆ ՆՆՆԾ, 1963, թիվ 16, հոդվ. 181:

¹⁶⁸ Տե՛ս Հայկական ԽՍՀ ԳԽ տեղեկագիր, 1963, թիվ 17, հոդվ. 154:

ը: Քրեական դատավարության օրենսգրքը տարբեր իրավապահական ենթատեսչությունների քննիչների միջև սահմանում էր միայն մեկ՝ օրոճերի ենթակայության տարբերություն: Ընդ որում, ենթակայությունը լրիվ իմպերատիվ չէր, այլ նաև երկրնորելի (1961 թ. քր. դատ. օր. 117 հոդվ.), ինչը չէր կարող վեճեր չծնել ենթակայության շուրջ:

Քննչական վարչությունների, բաժինների հիմնադրմամբ առաջ եկան դրանց պետերի լիազորությունների հիմնախնդիրները: Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունն իր 1966 թ. հունվարի 12-ի հրամանագրով 1961 թ. քրեական դատավարության օրենսգրքը լրացրեց 38¹ հոդվածով, իսկ 20 հոդվ.⁷ կետով: Վերջինը սահմանում էր, որ «քննչական բաժնի պետ» հասկացությունը ենթադրում է իրենց իրավասության սահմաններում օրոճող ներքին օրոճերի, պետական անվտանգության մարմինների քննչական վարչության, բաժնի, բաժանմունքի պետերին և նրանց տեղակալներին: Իսկ 38¹ հոդվ. սահմանում էր քննչական բաժնի պետի լիազորությունները: Քննչական բաժնի պետի օրոճատուրային խնդիրն էր օրենստեսչական վերահսկողության իրականացումը՝ քննիչի դատավարական օրոճունեությանն ակատմամբ: Սակայն 1961 թ. քրեական դատավարության օրենսգրքի 38¹ հոդվ. վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենքը քննչական բաժնի պետին օժտում էր որոշակի դատավարական լիազորություններով և դրանով իսկ դատախազին զուգահեռ ստեղծում էր դատավարական ղեկավարման լրացուցիչ մարմին: Այդպիսի օրենսդրական լուծումը հակասում էր քրեադատավարական օրոճունեության կառուցման օրոճատուրային մոտեցմանը, սահմանափակում էր քննիչի դատավարական ինքնուրույնությունը, հանգեցնում էր կրկնողության՝ դատախազի և քննչական բաժնի պետի աշխատանքներում:

Ինչպես հայտնի է, 1965-1990 թթ. խորհրդային հասարակության և պետության պատմության մեջ հայտնի են որպես «լճացման» և դրան հաջորդող «վերակառուցման» քաղաքականության ժամանակաշրջաններ: Խորհրդային քրեադատավարական օրենսդրության զարգացման այս փուլը արդի քրեադատավարական օրոճությունը ևս բնութագրում է որպես «լճացման» և քրեական դատավարության վերակառուցման փուլ: «Լճացման» տարիներին «աճում էր խզումը իդեալական, քարոզվող և իրականում

առկա քրեական դատավարության պատմական ձևերի միջև, որն առաջվա պես մնում էր առավելապես հետախուզական, այլ ոչ թե մրցակցային դատավարություն»¹⁶⁹ : Վերակառուցման շրջանի խորհրդային դատավարությունները շատ արտահայտիչ և ընդ-ծուն բնութագրել են լնացման ժամանակների քրեական դատավարության զարգացման ընթացքը, որը Հայաստանում փաստորեն, տևեց մինչև 90-ական թթ. սկիզբը: «50-ական թթ. կեսերին ձեռնարկված պետական և կուսակցական զործունեության ժողովրդավարականացման զործընթացը խորհրդային քրեական դատավարության կատարելագործման և այն անհատի պաշտպամունքի ժառանգությունից ազատագրման սկիզբը դրեց: Ցավոք, 70-ական թթ. կեսերից կուսակցական-պետական զործունեության մեջ և հասարակական իտակցությունում առաջ եկան լնացման երևույթներ՝ բյուրոկրատիզմ, անպատասխանատվություն, դոմատիզմ: Խոսքի և զործի, հայտարարագրերի և իրական արդյունքների միջև ակնհայտ խզումը հանգրեց օրինականության հիմունքների և սոցիալական արդարության բացահայտ անտեսման: Քննադատության համար անհասանելի զոտիների ծառունն ուղեկցվում էր հասարակական վերահսկողությունից իրավապահպան մարմինների զործունեության ոլորտի դուրս բերմամբ: Ներքին զործերի մարմինների աշխատանքի զնահատումը կատարվում էր զրանցված հանցազործությունների թվով, որն առաջ բերեց հանցազործությունները թաքցնելու զանվածային փաստեր և հանցազործությունների բացահայտման կեղծ վիճակազորություն: Իրավունքի կարավորիչ հնարավորությունների անտեսման, իրավաբանական դրույթները ճնշմամբ և մերկ վարչարարությամբ փոխարինելու պատճառով դատարանը վերածվեց սովորական պետական հիմնարկության, որն էլ ծնեց իշխանության ու կառավարման տեղական մարմինների կողմից արդարադատության իրականացմանը միջամտելու արտավոր պրակտիկան: Դա վկայում էր դատավորների անկախության սահմանադրական սկզբունքի խախտման մասին, որը հանգրեց ծանր դատական սխալների, կեղծված դատավարությունների, անմեղների դատապարտման: Ըստ բեկանված դատավճիռների քանակի՝ դատավորի աշխատանքի զնահատման սխալ մեթոդը հեղինակագր-

¹⁶⁹ Տե՛ս *Էնօ՛ւ Էնօ՛ւ ծեյ՛ շա՛է՛ի ի՛ ձա՛օ՛ւննօ՛ն ՆՆՆՆԾ Է ԾՆՕՆՆԻ ի՛ ձա՛ի Է՛ի ձա՛ի ի՛ ձա՛ի ձա՛ննօ՛ 1955-1991 ձա՛. Նա՛ի ձա՛ի Է՛ ձա՛ննօ՛նն Է՛ննօ՛ն Է՛. , 1997, էջ 6:*

կում էր ապացուցման կարևորագույն սկզբունքը՝ ապացուցների զնահատումը ներքին համոզման հիման վրա: Դատավորների ոչ քննադատական վերաբերմունքը նախաքննության նյութերին, կողմնակալությունը և մարդկանց ճակատագրերի նկատմամբ անտարբերությունը զրեթե ամենուր դատական պրակտիկայից բացասեցին արդարացման դատավճիռների կայացման դեպքերը: 70-ական թթ. կեսերին քաղաքական, իսկ այնուհետև քրեական դատավարության ոլորտներում զերակշռեց ժողովրդավարականացման զործընթացի հարաբերական ավարտվածության վերաբերյալ կարծիքը: Կուսակցության և պետության դեկավարների՝ ոչնչնով չհիմնավորված հանգստությունը հանգրեց նրան, որ սկսած 70-ական թվականներից մինչև 80-ական թթ. կեսերը, ժողովրդավարությունը, ըստ էության, չէր զարգանում»¹⁷⁰:

Քննարկվող շրջանի օրինաստեղծությունը յուրահատուկ բնույթ էր կրում: Եթե դատենք քանակական ցուցանիշներով, ապա Հայկական ԽՍՀ 1961 թ. քրեական դատավարության օրենսզորքում այդ տարիներին կատարված փոփոխություններն ու լրացումները կարելի է հաշվել հարյուրներով: Սակայն դրանք չէին փոխում օրենսզորքի հայեցակարգը, չէին շոշափում նրա զաղափարախոսական հիմքերը:

Որպեսզի կարողանանք վեր հանել լնացման տարիներին քրեադատավարական օրենսդրության զարգացման միտումները և որոշենլ այդ օրենսդրության էությունը, անհրաժեշտ է վերլուծել ամենաէական փոփոխությունները և լրացումները, որոնք այդ տարիներին կատարվել են 1961 թ. քրեական դատավարության օրենսզորքում:

50-ական թթ. վերջերի և 60-ական թթ. սկզբի քրեադատավարական նոր օրենսդրության բնութագրական զիծը, նախորդի հետ համեմատած, միասնական դատավարության սկզբունքի ամրագրումն էր: Համաձայն այդ սկզբունքի՝ «քրեական դատավարության օրենսզորքով սահմանված դատավարության կարգը միասնական է և պարտադիր բոլոր քրեական զործերով և բոլոր դատարանների, դատախազության, նախաքննության և հետաքննության մարմինների համար» (1961 թ. քր. դատ. օր. 1 հոդվ. 2-րդ մաս):

¹⁷⁰ Տե՛ս *Էօ՛ճն մ՛ ձա՛օննն ձա՛ ձա՛ի Է՛ի ձա՛ի ձա՛ ձա՛ննն. Է՛ ձա՛ննն +ննն. Է՛ ձա՛ննն. Է՛. Է՛. Է՛նննն. Է՛. , 1989, էջ 414-415:*

Աշխարհի շատ երկրներում (ինչպես մայրցամաքային, այնպես էլ անօվոսաքսոնական իրավական համակարգերով) առկա դատավարության տարբերակումը դրսևորվում է ոչ մեծ վտանգավորությունն աներկայացնող հանցաօրոճությունների համար պարզեցված կարգի սահմանմամբ:

Այդ շրջանի խորհրդային դատավարությունում ևս դրսևորվեց մինչդատական վարույթի ձևերի տարբերակման միտումը, որը սակայն հանգեցրեց օրինականության և դատավարական օրոճունեության հիմնավորվածության դատավարական երաշխիքների կրճատման: Պատճառը պարզեցված դատավարության չհաջողված կառուցումն էր, որն էլ ավելի խորացրեց խորհրդային արդարադատության մեղադրական թեքումը: Խոսքը վերաբերում է Այուրթերի մինչդատական նախապատրաստման արձանագրային ձևին: Ցավոք, այդ ձևը չէր բխում դատավարության միասնական կարգից և հիմնված չէր հանրային մեծ վտանգավորություն չներկայացնող օրոճերով դատավարական ընթացակարգի մտածված սահմանափակման վրա, ինչը հնարավորություն կտար արագ բացահայտելու հանցաօրոճությունը, առավելապես մոտեցնելու մեղավորի նկատմամբ դատավճռի կայացման և իրավախախտման կատարման պահերը և դրանով իսկ բարձրացնելու հանցավորության դեմ պայքարի արդյունավետությունը¹⁷¹: Ընդհակառակն, արձանագրային ձևը, որի ներմուծումը պայմանավորված էր իրավապահպան համակարգը քրեական օրոճերի ահանցող ալիքից թեթևացնելով, օտար էր դատավարության միասնական կարգին ինչպես իր ձևով, այնպես էլ իր բովանդակությամբ: Այն սկզբնապես չէր կարող պատշաճ կերպով ապահովել ո՛չ քրեական դատավարության խնդիրների լուծումը, ո՛չ էլ դատավարության մասնակիցների, ամենից առաջ՝ մեղադրյալների՝ օրինական շահերն ու իրավունքները: Ահա թե ինչու Հայաստանի Հանրապետության 1998 թ. քրեական դատավարության օրենսդրությունը կտրականապես հրաժարվեց արձանագրային ձևից: Ամեն ինչ սկսվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1966 թ. հուլիսի 26-ի «Խոսքի օրենսդրության համար պատասխանատվության ուժեղացման մասին» հրամանագրից¹⁷²: Այդ հրամանագրին համապատասխան՝ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի

նախագահությունն իր 1966 թ. սեպտեմբերի 26-ի հրամանագրով 1961 թ. քրեական դատավարության օրենսդրությունը նորոգելու նպատակով (385-391 հհ.), որը սահմանում էր խոսքի օրենսդրության վերաբերյալ օրոճերի վարույթի հատուկ կարգը¹⁷³: Խոսքի օրենսդրության օրոճողություններ կատարելու համար ձեռքարկված անձանց նկատմամբ թույլատրվում էր մինչև քրեական օրոճի հարուցումը որպես խափանման միջոց կիրառել կալանքը: Սակայն Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության 1977 թ. ապրիլի 28-ի հրամանագրով վերականգնվեց այդ օրոճերով խափանման միջոցների կիրառման ընդհանուր կարգը¹⁷⁴: Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության 1978 թ. ապրիլի 26-ի հրամանագրով պարզեցված վարույթը տարածվեց նաև պետական կամ հասարակական օրոճի մանր հափշտակությունների վերաբերյալ օրոճերի վրա¹⁷⁵: Եվ վերջապես, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության 1985 թ. փետրվարի 27-ի հրամանագրով 1961 թ. քրեական դատավարության օրենսդրության օրոճերով հատվածը վերանվանվեց «Նյութերի մինչդատական նախապատրաստման արձանագրային ձևը» և քրեական դատավարության այդ տարբերակված ձևը տարածվեց ևս տասներեք հանցակազմերի վրա¹⁷⁶:

Այդպիսով, Այուրթերի մինչդատական նախապատրաստման արձանագրային ձևի տեսքով պարզեցված վարույթի ներմուծմամբ խախտվեց 1961 թ. քրեական դատավարության օրենսդրության 1 հոդվ. նորմը դատավարության միասնական կարգի մասին: Բայց ոչ միայն այդ. 1966 թ. օրինականացվեց հրաժարումը նախնական քննությունից, որը պատշաճ կատարման դեպքում լուծում է մի շարք կարևոր խնդիրներ: Առանց քրեական օրոճի հարուցելու, հանձնարարվում էր վարչական կարգով տասը օրվա ընթացքում պարզել կատարված հանցաօրոճության հանձնառուները և բացահայտել իրավախախտողի անձը: Առաջարկվեց ստանալ այն ակնանատեսի բացատրությունները, որն ազատված էր ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ դրանց ակնհայտ կեղծ լինելու համար պատասխանատվությունից, քանի որ մինչև քրեական օրոճի հարուցումը նրան չէր կարելի համարել վրա: Կատարված հան-

¹⁷¹ Տե՛ս Օáî éî áî úé ì ðî óáññ. Ĭ î ä ðáä. *Ē. Ō. Áóóáí éř. Ĭ* ., 1998, էջ 495:

¹⁷² Տե՛ս Áááî ì î ñòè ÁÑ ÑÑÑÑ, 1966, թիվ 151, հոդվ. 595:

¹⁷³ Տե՛ս Հայկական ԽՍՀ Գլխ տեղեկագրի, 1966, թիվ 19, հոդվ. 151:

¹⁷⁴ Տե՛ս Հայկական ԽՍՀ Գլխ տեղեկագրի, 1977, թիվ 3, հոդվ. 61:

¹⁷⁵ Տե՛ս Հայկական ԽՍՀ Գլխ տեղեկագրի, 1978, թիվ 8, հոդվ. 91:

¹⁷⁶ Տե՛ս Հայկական ԽՍՀ Գլխ տեղեկագրի, 1985, թիվ 4, հոդվ. 29:

ցանքի հանձնարարների մասին մեղադրական եզրակացության փոխարեն կազմվում էր արձանագրություն և զործն ուղարկվում էր դատարան: «Քրեական զործ հարուցելու և մեղադրանքը ձևակերպելու՝ արդարադատությանը օտար պարտականությունը դրվում էր դատարանի կամ դատավորի վրա: Դատարանի կողմից զործ մասին թույլատրվում էր «իրավախախտողի» նկատմամբ մինչև նրան մեղադրանք առաջադրելը խափանման միջոց կիրառել: Վերոնշյալ մեջբերումը վերաբերում է ոչ թե միջնադարյան, այլ խորհրդային դատավարությանը, Հայկական ԽՍՀ 1961 թ. քրեական դատավարության օրենսգրքին, որի 290 հոդվ. սահմանում էր. «Գտնելով, որ օրենքում թվարկված հանցանքների վերաբերյալ նյութերը բավարար են դատական գիտում քննելու համար, դատարանը որոշում է կայացնում քրեական զործ հարուցելու, իրավախախտողին դատի տալու մասին, անհրաժեշտության դեպքում նրա նկատմամբ ընտրում է խափանման միջոց և զործը քննում է դատական գիտում կամ նյութերը վերադարձնում է հետաքննություն կամ նախաքննություն կատարելու, իսկ քրեական զործի հարուցման համար հիմքերի բացակայության դեպքում մերժում է քրեական զործի հարուցումը:

Դատավորը միանձնյա կարող է որոշում ընդունել քրեական զործ հարուցելու, իրավախախտողին դատի տալու և դատական գիտում զործը քննության նշանակելու մասին: Դատարանի կամ դատավորի որոշման մեջ շարադրվում է մեղադրանքի ձևակերպումը, նշելով քրեական օրենքի այն հոդվածը, որով անձը դատի է տրվում»:

Քրեական դատավարության կարգավորման տարբերակված մոտեցման մեկ այլ դրսևորում էր անչափահասների զործերով վարույթի հատուկ կանոնների սահմանումը: Ի տարբերություն ՌԽՖՍՀ 1960 թ. քրեական դատավարության օրենսգրքի, Հայկական ԽՍՀ 1961 թ. քրեական դատավարության օրենսգրքը չէր պարունակում անչափահասների զործերով վարույթին նվիրված առանձին հատված: Հայկական ԽՍՀ Գերատույն խորհրդի նախագահության 1974 թ. մայիսի 22-ի հրամանագրով քրեական դատավարության օրենսգրքը լրացվեց նոր՝ իններորդ հատվածով (392-404 հոդվ.)¹⁷⁷: Այդ հատվածում սահմանվում էր անչափահասների զործերով վարույթի կարգը: Ըստ էության, այնտեղ

¹⁷⁷ Տե՛ս Հայկական ԽՍՀ ԳԽ տեղեկագիր, 1974, թիվ 10, հոդվ. 98, մաս 2:

ամրագրված էին հատուկ կանոններ, որոնք լրացնում կամ զարգացնում էին քրեական դատավարության օրենսգրքի ընդհանուր կանոնները՝ անչափահասների վերաբերյալ:

Ի տարբերություն տարբերակված մոտեցման նախորդ դրսևորման, այս դեպքում սահմանվում էին անչափահաս մեղադրյալների իրավունքների լրացուցիչ երաշխիքներ: Անչափահասների քրեական զործերով վարույթի հատուկ կարգը պայմանավորված էր անչափահասների տարիքային, սոցիալ-հոգեբանական ու այլ հատկություններով և լրիվ համապատասխանում էր ՄԱԿ-ի լիակարգ ասամբլեայի ընդունած՝ անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու նվազագույն չափորոշիչներին¹⁷⁸: Լճացման տարիներին Հայկական ԽՍՀ 1961 թ. քրեական դատավարության օրենսգրքում կատարված մնացած փոփոխություններն էական չէին: Իսկապես, լճացման տարիները լճացում էին նաև քրեական դատավարության համար, քանի որ այն նույնիսկ 70-ական թթ վերջերի սահմանադրական-իրավական բարեփոխումներից հետո, ըստ էության, չգարգացավ¹⁷⁹: 70-ական թթ. վերջերին անցկացված սահմանադրական-իրավական բարեփոխումները ԽՍՀՄ 1977 թ. Սահմանադրության մեջ, իսկ այնուհետև Հայկական ԽՍՀ 1978 թ. Սահմանադրության մեջ համաժողովրդավարական պետության, հասարակական և պետական կյանքի իրավական հիմունքների, սոցիալիստական ժողովրդավարության և օրինականության գարգացման վերաբերյալ դրույթների (Հայկական ԽՍՀ 1978 թ. Սահմանադրության 1, 4, 9 հոդվածներ) ամրագրումը նոր հնարավորություններ էին բացում խորհրդային քրեական դատավարության գարգացման և հետագա ժողովրդավարացման համար: Սակայն այդ հնարավոր-

¹⁷⁸ Այդ կանոնները հայտնի են «պեկինյան կանոններ» անունով (տե՛ս *Մ. Ի. Բաբայանի* «Պեկինյան կանոնները» և *Մ. Ի. Բաբայանի* «Պեկինյան կանոնները» 1993, էջ 66-71):

¹⁷⁹ Եթե ելնենք քանակական ցուցանիշներից, ապա 1961 թ. քրեական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխություններն ու լրացումները կարելի է հաշվել հարյուրներով: Սակայն, չնայած դրան, դրանք չէին փոխում օրենսգրքի հայեցակարգը, նրա որոշիչ մոտեցումները: Այդ իսկ պատճառով մենք առանձին չենք քննարկի դրանք: Առավել ևս, որ 1989 թ. լույս է տեսել *Հ. Մ. Պիվազյանի* «Քրեական դատավարությունը ըստ Հայկական ԽՍՀ քրեական դատավարության օրենսգրքի» (Ընդհանուր մաս, Երևան, 1989) զործը, որում ժամանակակից դատական կարգով ձևական-իրավաբանական վերլուծության են ենթարկվել այդ փոփոխություններն ու լրացումները:

րությունների իրացմանը խոչընդոտում էր այն ժամանակների իրադրությունը, քաղաքական ղեկավարության պահպանողականությունը, որը պայմանավորում էր նաև օրինաստեղծափորձության պահպանողականությունը:

Հայկական ԽՍՀ 1978 թ. Սահմանադրության բովանդակության վերլուծությունը ցույց է տալիս, որ այն նախ և առաջ՝ վերարտադրում էր 1937 թ. Սահմանադրության մեջ ամրափակված քրեական դատավարության մի շարք սկզբունքներ, երկրորդ՝ ընդլայնում էր հասարակական հարաբերությունների այդ ոլորտի սահմանադրական կարգավորման շրջանակները՝ քրեական դատավարությանը վերաբերող մի շարք հիմնադրույթներ դարձնելով սահմանադրական: Հայկական ԽՍՀ 1978 Սահմանադրությունը վերարտադրեց 1937 թ. Սահմանադրության որոշ սկզբունքներ՝ մասամբ խմբափակելով դրանք: Այսպես, դատավորների անկախության և միայն օրենքին ենթարկվելու հողվածում ավելացվում էր ժողովրդական ատենակալների անկախության մասին դրույթը: 1937 թ. Սահմանադրությունից վերարտադրվել էին նաև փորձերի հրապարակային քննության, մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման, դատավարության ազդեցիկ լեզվի սկզբունքները: Առաջին անգամ սահմանադրական մակարդակով ամրափակվում էին հետևյալ սկզբունքները՝

— Հայկական ԽՍՀ-ում արդարադատությունն իրականացվում է միայն դատարանի միջոցով: Հայկական ԽՍՀ դատարաններ են Հայկական ԽՍՀ Գերափույն դատարանը և շրջանային (քաղաքային) ժողովրդական դատարանները (հոդվ. 149): Այս սահմանադրական սկզբունքից բխում էր, որ արտադատական հարկադրանքներն արգելված էին, և որ ոչ մի այլ պետական մարմին իրավունք չուներ իրականացնելու արդարադատություն:

— Ոչ ոք չի կարող հանցափորձության մեջ մեղավոր ճանաչվել, ինչպես նաև քրեական պատժի ենթարկվել այլ կերպ, քան դատարանի դատավճռով և օրենքին համապատասխան (հոդվ. 158): Խորհրդային իրավափոփոխությունը այս դրույթը դիտարկում էր որպես անմեղության կանխավարկածի սկզբունքի արտացոլում խորհրդային քրեական դատավարությունում:

— Գործերի քննության կոլեկտիվությունը. քաղաքացիական և քրեական փորձերի քննությունը բոլոր դատարաններում կատարվում է կոլեկտիվ կարգով, առաջին ատյանի դատարա-

նում՝ ժողովրդական ատենակալների մասնակցությամբ: Ժողովրդական ատենակալները արդարադատությունն իրականացնելիս օժտվում են դատավորի բոլոր իրավունքներով (հոդվ. 152):

— Արդարադատությունն իրականացվում է օրենքի և դատարանի առջև քաղաքացիների հավասարության սկզբունքներով (հոդվ. 154):

— Հասարակայնության մասնակցությունը դատավարությանը. քաղաքացիական և քրեական փորձերի դատավարությանը թույլատրվում է աշխատավորական կոնկրետների ներկայացուցիչների մասնակցությունը (հոդվ. 159): Այս սկզբունքը 1961 թ. քրեական դատավարության օրենսփոխում արտահայտված էր հասարակական մեղադրողի և պաշտպանի ինստիտուտների տեսքով:

— Մեղադրյալի համար ապահովվում է պաշտպանության իրավունք (հոդվ. 156):

Արդարադատության սահմանադրական հիմունքների որոշակի ընդլայնումը սակայն չէր ճշանակում, որ 1978 թ. Սահմանադրության մեջ ամրափակված էին արդարադատության համընդհանուր ճանաչում փորձ սկզբունքները: Այդ փոփոխությունները նույնիսկ ոչ մի կերպ չազդեցին քրեական դատավարության էության վրա, քանի որ Սահմանադրությունը ամփոփեց քրեական դատավարության այն դրույթներն ու սկզբունքները, որոնք արդեն ամրափակված էին ընթացիկ խորհրդային օրենսդրության մեջ՝ ընդունված 50-ական թթ. վերջերի դատաիրավական բարեփոխումների արդյունքում: Այլ խոսքերով՝ Հայկական ԽՍՀ 1978 թ. Սահմանադրությունը չպայմանավորեց նոր դատաիրավական բարեփոխումների անցկացման անհրաժեշտությունը: Այն միայն ամրափակեց 50-ական թթ. վերջերի դատական բարեփոխումների արդյունքները:

Հայկական ԽՍՀ Սահմանադրությունում առկա որոշ ժողովրդավարական դրույթներ, ինչպես, օրինակ, դատական պաշտպանության իրավունքը, (55 հոդվ. 2-րդ մաս), քաղաքացիների իրավունքը՝ օրենքով սահմանված կարգով փանախտարկել դատարանում պաշտոնատար անձանց այն փորձությունները, որոնք կատարվել են օրենքի խախտումով, լիազորությունների սահմանազանցությամբ և սահմանափակում են քաղաքացիների իրա-

վունքները (56 հոդվ. 2-րդ մաս), հետևողականորեն չկենսաօրոժվեցին և մնացին որպես հոչակաօրեր:

Այսպիսով՝ ԽՍՀՄ 1977 թ. և Հայկական ԽՍՀ 1978 թ. Սահմանադրությունների ընդունումը և հետագա փոփոխություններն ու լրացումները քրեադատավարական օրենսդրության մեջ կրում էին հիմնականում կոսմետիկ բնույթ. դրանք չփոխեցին քրեական դատավարության էությունը: «Դատարանները, որոնց բարձր կոչումը լայնորեն հոչակվում էր տարբեր մակարդակի ակտերում, իրականում հաճախ դիտարկվում էին որպես իրավապահպան մարմինների համակարգի սովորական, շարքային, բաղկացուցիչ մաս: Տեղի էր ունենում բացահայտ և օաղտնի միջամտություն արդարադատության իրականացմանը: Դատարանի և օրենքի առաջ քաղաքացիների հավասարության սկզբունքը, փաստորեն, չէր համարվում համընդհանուր, բոլորի նկատմամբ առանց որևէ բացառության կիրառելի: Դրա օրոժողության շրջանակներից կամայականորեն դուրս էին մղվել ոչ միայն որոշ պատասխանատու աշխատողներ, այլև նրանց հովանավորյալները»¹⁸⁰:

Այդուհանդերձ համամիութենական և հանրապետական օրենսդրությունը նոր Սահմանադրություններին համապատասխանեցնելու համար սկզբում համամիութենական, իսկ այնուհետև հանրապետական մակարդակներում նախապատրաստվեցին և ընդունվեցին մի շարք հիմնարար օրենքներ: Այսպես, 1979 թ. նոյեմբերի 30-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդն ընդունեց օրենք ԽՍՀՄ Գերագույն դատարանի մասին, օրենք ԽՍՀՄ դատախազության մասին, օրենք ԽՍՀՄ-ում փաստաբանության մասին¹⁸¹:

Ընթացիկ քրեադատավարական օրենսդրությունը ԽՍՀ Միության Սահմանադրությանը համապատասխանեցնելու նպատակով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունն իր 1981 թ. օգոստոսի 13-ի հրամանագրով փոփոխություններ և լրացումներ կատարեց 1958 թ. քրեական դատավարության հիմունքներում¹⁸²: Որոշ դատավարաօրենքներ այդ փոփոխություններն ու

¹⁸⁰ Տե՛ս *Ассалет Е.О., Егзаева Л.А.* *И дааг и дааг едөөгүүг үгэ и дааг үгэ.* 1997, էջ 251:

¹⁸¹ Տե՛ս *Аааг и иноэ АН НННД*, 1979, թիվ 49, հոդվ. 842, հոդվ. 843, հոդվ. 846:

¹⁸² Տե՛ս *Аааг и иноэ АН НННД*, 1981, թիվ 33, հոդվ. 966:

լրացումները դիտարկում էին որպես խորհրդային քրեական դատավարությունում անհատի իրավական կարգավիճակի կատարելաօրոժման միտում¹⁸³: Այդպիսի եզրակացության համար հիմք էր ծառայել այն հանգամանքը, որ այդ ակտով խորհրդային քրեական դատավարության խնդիրների շրջանակի մեջ մտցվեց քաղաքացիների իրավունքների և ազատությունների պահպանությունը (հիմունքների 2 հոդվ. 2-րդ մաս): Հանցաօրոժության հատկանիշներ պարունակող արարք կատարած անձին իրավունք տրվեց առարկել այսպես կոչված չարդարացնող հիմքերով օրոժի կարճման դեմ (հիմունքներ, 5¹ հոդվ. 2-րդ մաս): Քրեական դատավարության սկզբունքների կարգավիճակի բարձրացվեցին բնակարանի անձեռնմխելիությունը, անձնական կյանքի և նամակաօրության օաղտնիության պահպանումը, սահմանվեց պաշտպանի պարտականությունը՝ չհրապարակել պաշտպանության իրականացման կապակցությամբ հայտնի դարձած տեղեկությունները և այլն:

Այս և այլ փոփոխություններն ու լրացումները 1961 թ. քրեական դատավարության օրենսօրքում կատարվեցին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության 1984 թ. հուլիսի 25-ի հրամանագրով¹⁸⁴: Այդ ակտով նոր խմբագրությամբ շարադրվեցին քրեական դատավարության օրենսօրքի 21 հոդվածներ, 85 հոդվածներում մտցվեցին փոփոխություններ, ավելացվեցին 7 նոր հոդվածներ (5¹, 6¹, 52¹, 53¹, 55¹, 55² և 360³): Վերջիններից կարևոր նշանակություն ունեն 53¹ հոդվ., որը սահմանում էր, որ հանցաօրոժության դեպքի բացակայության, արարքի մեջ հանցակազմի բացակայության, կա՛մ կատարված հանցաօրոժության մեջ քաղաքացու հանցակազմի բացակայության, կա՛մ կատարված հանցաօրոժության մեջ քաղաքացու մասնակցությունը ապացուցված չլինելու պատճառով քրեական օրոժը կարճելու, ինչպես նաև արդարացման դատավճիռ կայացնելու դեպքում հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարտավոր են քաղաքացուն բացատրել նրա խախտված իրավունքների վերականգնման կարգը և օրենքով նախատեսված միջոցներ ձեռնարկել անօրինական դատապարտության, անօրինական

¹⁸³ Տե՛ս *Еодн м ааоһегаг оаг егагагаг и дгаоаһа. И аунэ +аһоу. И га даа. А.А. Агегага, Е.Е. Еадргаа. И .*, 1989, էջ 416:

¹⁸⁴ Տե՛ս Հայկական ԽՍՀ ԳԽ տեղեկագիր, 1984, թիվ 14, հոդվ. 141:

ղաղրական դիրքորոշումից, տեղական և այլ իշխանություններից¹⁸⁷:

Սկսվել էր խորհրդային արդարադատության ճգնաժամի շրջանը, որը նոր պայմաններում ցույց տվեց իր անընդունակությունն իրականության կողմից դրված հիմնական խնդիրների արդյունավետ լուծման հարցում:

Իրավափոփոխության հիմնավորած ընդհանուր իրավական և դատաիրավական բարեփոխումների անցկացման անհրաժեշտությունն աստիճանաբար ճանաչում փոփոխումն անհրաժեշտության և կոմունիստական կուսակցության ղեկավարության կողմից: ԽՍՀՄ XIX համամիութենական խորհրդակցության (1988 թ. հունիս) որոշումներում ընդօրինակվում էր, որ դատական համակարգի, պետության ու քաղաքացիների միջև փոխհարաբերությունների իրավական կարգավորումը, հասարակության քաղաքական, տնտեսական, սոցիալական և անձնական իրավունքների պահպանությունն ապահովող այլ ինստիտուտների բարեփոխումները վերջին հաշվով ուղղված են սոցիալիստական իրավական պետության կառուցմանը¹⁸⁸: Սոցիալիստական իրավական պետության փառաբանի իրացման ընթացքում ենթադրվում էր դատական բարեփոխման անցկացում, որն իր հերթին կոչված էր քրեադատավարական ոլորտում բարձրացնել դատարանի դերը սոցիալիստական ժողովրդավարության համակարգում՝ նրա հեղինակության և անկախության ամրապնդման, մրցակցության և հրապարակայնության երաշխիքների ապահովման, անմեղության կանխավարկածի պահպանման, մեղադրական թեքման վերացման, դատախազների անկախության ամրապնդման, դատավարությանը պաշտպանական կողմի մասնակցության ընդլայնման, բարդ դեպքերի դատական քննությանը ժողովրդական ատենակալների քանակի ավելացման միջոցով¹⁸⁹: Արդյունքում համամիութենական մակարդակում ձեռնարկվեցին այդ որոշումների իրացման առաջին քայլերը: Նկատի ունենալով ԽՍՀՄ Սահմանադրության մեջ մտցված փոփոխություններն ու լրացումները, Դատավորների կարգավիճակի մասին օրենքը,

¹⁸⁷ St' u Èñòèíà è ì ì èüèí èñòèíà! Ì ýòù ááñáá ì ñóáááí ì-ì èðíáí è ðáðí ðì á. Ì ., 1990, էջ 142:

¹⁸⁸ St' u Ðàçíèðòèý XIX Áñáñ ì çáí í è ì ì ðáðáí ðè è Ì Ì ÑÑ.— È ì ì ì óí èñò, 1988, թիվ 10, էջ 65:

¹⁸⁹ St' u նույն տեղը, էջ 87:

ԽՍՀ Միության և միութենական հանրապետությունների դատարանակազմության մասին օրենսդրության հիմունքները: Պրոֆեսոր Վ. Մ. Սավիցկու փոփոխության մշակվեցին ԽՍՀ Միության և միութենական հանրապետությունների քրեադատավարական օրենսդրության հիմունքների, ինչպես նաև ՌԽՖՍՀ քրեական դատավարության օրենսփոխության տեսական մոդելները¹⁹⁰: Սակայն այս օրենսդրական նորությունները չհասան Հայկական ԽՍՀ, քանի որ այստեղ 1988 թ. փետրվարին սկսվեց Ղարաբաղյան շարժումը: Հանրապետությունում ձևավորված բարդ քաղաքական իրադրությունը կասեցրեց և՛ վերակառուցման քաղաքականությունը, և՛ ենթադրվող դատաիրավական բարեփոխումները: 1986-1991 թթ. ողջ շրջանում 1961 թ. քրեական դատավարության օրենսփոխում չի կատարվել ոչ մի փոփոխություն և լրացում:

1990 թ. օգոստոսի 23-ին հանրապետության Գերագույն խորհուրդը ընդունեց Հայաստանի Հանրապետության անկախության հռչակագիրը, որն ամրապնդեց պետության և անհատի փոխհարաբերության նոր մոդել, ճանաչեց իրավական, ժողովրդավարական պետության կառուցման անհրաժեշտությունը, պետություն, որի կազմակերպման հիմնական սկզբունքը պիտի լինի իշխանությունների տարանջատումը: Չնայած դրան՝ դատական բարեփոխումների իրականացման առումով իրադրությունը մնաց անփոփոխ, քանի որ ԽՍՀՄ տապալմամբ և իրական անկախության ձեռքբերմամբ Հայաստանի Հանրապետությունը ընկավ շատ բարդ արտաքին քաղաքական կացության մեջ, որը վերջին հաշվով հանգեցրեց հանրապետության տնտեսական շրջափակմանը և չհայտարարված պատերազմին՝ Ղարաբաղում: Այդպիսի պայմաններում դատաիրավական բարեփոխումների անցկացումը դարձավ անհնարին: Բացի այդ, սպասվում էր սահմանադրական իրավական բարեփոխում՝ Հայաստանի Հանրապետության նոր Սահմանադրության ընդունումը:

1991-1998 թթ. 1961 թ. քրեական դատավարության օրենսփոխում կատարվեցին որոշ փոփոխություններ ու լրացումներ:

1) Հայաստանի Հանրապետության անկախության ձեռք բերմամբ օրենսփոխում կատարվեցին խմբագրական, տերմինաբանական, ոճաբանական բնույթի փոփոխություններ և լրացումներ,

¹⁹⁰ St' u Óáí è ì áí ì-ì ðí óáññóá èüí ì á çá è ì í í áàòá èüñóáí Ñí ì çá ÑÑÐ è ÐÑÓÑÐ. Óáí ðáòè-áñèàý ì í á èü. Ì ì á ðáá. *Á.Ì . Nàáèòèíáí. Ì .*, 1990:

չմտած դատավճիռները վճարելության կարող կարող էին անատարկվել և բողոքարկվել քերական դատարանի նախահրապարակումները:

Այդպիսով, չնայած հետագա բազմաթիվ փոփոխություններին ու լրացումներին՝ 1961 թ. քրեական դատավարության օրենսգրքը մինչև իր զորությունը (1999 թ. հունվարի 12-ը) պահպանեց իր սկզբնական էությունը, շարունակում էր մնալ սոցիալիստական քրեական դատավարության օրենսգրք, որում առաջին պլան էին մղված հանրային (պետության) շահերը, իսկ դատարանը պահպանել էր իր մեղադրական թեքումը: 1961 թ. քրեական դատավարության օրենսգրքի թերությունները հատկապես ակնհայտ դարձան հասարակական, քաղաքական, քաղաքացիական կյանքի մոր պայմաններում, երբ այդ օրենսգրքը սկսեցին անհատել համամարդկային արժեքների՝ կողմերի հավասարության և մրցակցության, անմեղության կանխավարկածի, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների անքակտելիության, մեղադրյալի պաշտպանության իրավունքի, իշխանությունների տարանջատման համակարգում անկախ և անկողմնակալ դատարանի և այլ տեսանկյուններից: Անխուսափելի էր եզրակացությունը՝ դատական և քրեական դատավարության բարեփոխումները հանգեցնել «հին շավարը կարկատելուն»՝ անհնարին է: Անհրաժեշտ է անցկացնել արմատական դատաիրավական բարեփոխումներ և վերջինիս համատեքստում մշակել ու ընդունել մարդու բնական իրավունքների ու ազատությունների անպայման առաջնայնության վրա կառուցված, հայրենական դրական փորձը հաշվի առնող և մեր իրականության պահանջներից ելնելով արտասահմանյան ժողովրդավարական, իրավական պետությունների դատավարական իմաստիտուտները օտարոտորձ քրեական դատավարության մոր օրենսգրքը:

Ըստ էության, խոսքը ոչ միայն և ոչ այնքան դատաիրավական բարեփոխումների, որքան նախորդ կոմունիստական քաղաքականացված իրավափոխություններից ու իրավական կարգավորումներից իրավափոխության և իրավական կարգավորման մոր հայեցակարգին անցնելու մասին էր: Արմատական բարեփոխումների այդ ճանապարհին հաջողվողը 1995 թ. հունիսի 5-ին

հանրաքվեի միջոցով ընդունեց մոր Սահմանադրություն, որը Հայաստանի Հանրապետությունը հռչակում էր ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն, որի կառուցման և զորության հիմնական սկզբունքը համարվում է օրենսդիր, զործադիր և դատական իշխանությունների տարանջատումը: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունումից հետո, արդեն խաղաղ պայմաններում, հրատապ դարձավ դատական բարեփոխման հայեցակարգի մշակումը և դրա կենսահանգումը, որը պետք է հանգեցնի լիիրավ, անկախ, ինքնիշխան դատական իշխանության ստեղծմանը, իշխանություն, որի հիմնական կոչումը իրավապաշտպան զործառույթն էր, իսկ իրացման կարևորագույն եղանակները՝ քաղաքացիական, քրեական, վարչական զործերով արդարադատության իրականացումը և սահմանադրական վերահսկողությունը: Դրա հետ միասին կարևորագույն խնդիր էր քրեական դատավարության հետևողական ժողովրդավարականացումը: Թե ինչքանով մեզ հաջողվեց որակական թոփաք կատարել և ստեղծել ժողովրդավարական քրեական դատավարություն (քանզի հայտարարելը և ստեղծելը տարբեր բաներ են), դա արդեն առանձին քննարկման առարկա է: Այստեղ միայն պետք է նշենք, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունումից հետո կառավարական հանձնաժողովը մշակեց Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումների հայեցակարգ, որը նախատեսում էր Հայաստանի Հանրապետությունում դատավարության ողջ ոլորտի, ներառյալ քրեական դատավարության կատարելագործում: Այդ զործընթացների արդյունքում՝ 1998 թ. հունիսի մեկին Ազգային ժողովը ընդունեց Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության մոր օրենսգրքը, որը զործության մեջ դրվեց 1999 թ. հունվարի 12-ից:

ծածոծոծոծ. — Անիսիմով Ե. Ի. 1994, թիվ 6, էջ 103:

կումր: Այսպես՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 44 հոդվ. սահմանում է, որ մարդու և քաղաքացու առանձին իրավունքներ և ազատություններ կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների ու ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար: Այդպիսով, Սահմանադրությունը թույլ է տալիս քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսել դատավարության մասնակիցների և ամենից առաջ կասկածյալի, մեղադրյալի, դատապարտյալի սահմանադրական իրավունքների սահմանափակման հնարավորություն: Դա առաջին հերթին արտահայտվում է դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման դեպքում:

Անձի իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելու համաիրավական, սահմանադրական սկզբունքի պահանջներից մեկն էլ այն է, որ իրավունքների և ազատությունների ժամանակավոր սահմանափակումը կատարվում է դատարանի թույլտվությամբ: Այդ պահանջը իրացված է և՛ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ, և՛ համապատասխանաբար, քրեական դատավարության նոր օրենսդրությամբ: Սահմանադրության 18, 20, 21, 28 հոդվածները սահմանում են՝

— Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն չի կարելի ձերբակալել, խուզարկել այլ կերպ, քան օրենքով սահմանված կարգով: Նա կարող է կալանավորվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

— Յուրաքանչյուր ոք ունի նամակադրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռադրական և այլ հաղորդումների օտարման իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ:

— Յուրաքանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք: Արգելվում է մարդու կամքին հակառակ մուտք գործել նրա բնակարանը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Բնակարանը կարող է խուզարկվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

— Յուրաքանչյուր ոք ունի սեփականության և ժառանգման իրավունք: Սեփականությունից կարող է զրկվել միայն դատարանը՝ օրենքով նախատեսված դեպքերում:

Այս սահմանադրական դրույթները վերարտադրված են քրեական դատավարության նոր օրենսդրության երկրորդ օլիսում՝ որպես քրեական դատավարության սկզբունքներ՝ անձի անձեռնմխելիություն (քր. դատ. օր. հոդվ. 11), բնակարանի անձեռնմխելիություն (քր. դատ. օր. հոդվ. 12), օուքի անձեռնմխելիություն (քր. դատ. օր. հոդվ. 13), նամակադրության, հեռադրական և այլ հաղորդումների օտարման (քր. դատ. օր. հոդվ. 14): Այդ սկզբունքները՝ որպես ամենից ընդհանուր առաջնային նորմեր՝ նախորոշում են քրեադատավարական նոր օրենսդրության ավելի մասնավոր կանոնները և դրույթները: Այսպես՝ քրեական դատավարության օրենսդրության հաջորդ օլուխներում ու հոդվածներում դրանք ստանում են ավելի մանրամասն կարգավորում, մասնավորապես, քրեական դատավարության օրենսդրության 39 օլիսում («Դատական հսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ»): Այս օլիսի նորմերը սահմանում են, որ դատարանը քննում է քննչական (բնակարանի խուզարկություն, նամակադրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռադրական և այլ հաղորդումների օտարման սահմանափակումը) և օպերատիվ հետախուզական գործողությունների անցկացման (որոնք կապված են նամակադրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռադրական և այլ հաղորդումների սահմանափակման հետ), ինչպես նաև անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման մասին (կալանք, բժշկական հաստատությունում տեղավորումը՝ դատահոգեբանական կամ դատաբժշկական փորձաքննություն կատարելու համար) միջնորդությունները:

Դատարանը քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով քննում է հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի և օպերատիվ հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների բողոքները, ինչպես նաև այլ անձանց, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով ու գործողություններով, բողոքները, եթե այդ բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից:

Անձի իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարձելու սկզբունքի երաշխիքներից մեկն էլ Սահմանադրության այն դրույթն է, համաձայն որի տուժողին պատճառված վնասի հատուցումը ապահովվում է օրենքով սահմանված կարճով (Սահմանադրության 40 հոդվ. 4-րդ մաս): Այս սահմանադրական դրույթը քրեական դատավարության նոր օրենսդրությամբ վերարտադրված է որպես դատական սխալներից տուժածների իրավունքների վերականգնման սկզբունք (քր. դատ. օր. հոդվ. 22):

«Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան...», «Պետական մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի լիազորություններ, որոնց համար լիազորված են օրենսդրությամբ», «Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է օրենքի լեգիտիմությունը», «Արձեվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օտարոթումը», «Յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը և օրենքները...» Հայաստանի Հանրապետության Սահմանադրության դրույթները անուղղակիորեն ամրագրում են *օրինականության համաիրավական սկզբունքը*, որն արդեն Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսդրության 7 հոդվ. արտահայտված է հետևյալ կերպ. «1. Հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք պարտավոր են պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, քրեական դատավարության օրենսդրությունը և մյուս օրենքները:

2. Ոչ ոք չի կարող քրեական լիազորված ձեռքարկվել, խուզարկվել, կալանավորվել, դատապարտվել, բերման ենթարկվել և դատավարական հարկադրանքի այլ միջոցների, ինչպես նաև իրավունքների ու ազատությունների այլ սահմանափակումների այլ կերպ, քան օրենքով սահմանված հիմքերով և կարճով»:

Օրինականության սկզբունքը քրեական դատավարությունում ապահովվում է դատավարության այնպիսի կառուցվածքով, երբ յուրաքանչյուր հաջորդ փուլում ստուգվում է նախորդ փուլում ընդունված որոշումների օրինականությունը և հիմնավորվածությունը: Օրենքի խախտումներ հայտնաբերվելու դեպքում երաշխավորված է դրանց վերացման միջոցների ձեռնարկումը: Օրենքի

պահանջների պահպանման կարևոր երաշխիքներից են քրեական դատավարության բոլոր փուլերում այս կամ այն չափով իրականացվող դատական վերահսկողությունը և դատախազական հսկողությունը, ինչպես նաև արտաքին վերահսկողության այնպիսի ձևերը, ինչպիսիք են զանգվածային տեղեկատվության միջոցները, հասարակայնությունը, փաստաբանությունը և այլն:

Օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքն ամրագրված է Սահմանադրության 16 հոդվ. «Բոլորը հավասար են օրենքի առջև և առանց խտրականության հավասարապես պաշտպանվում են օրենքով»: Այս սահմանադրական հիմունքը նույն ձևակերպմամբ վերարտադրված է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսդրության 8 հոդվ.: Այս սկզբունքի հիմքում ընկած են «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 7 և 8 հոդվածների դրույթները: Նախորդ սահմանադրական և քրեադատավարական օրենսդրություններն ամրագրում էին նաև դատարանի առջև հավասարության մասին դրույթը: Որոշ պետական գործեր ենթադրում են, որ «հավասարապես պաշտպանվում են օրենքով» ձևակերպումն առաջին հերթին նշանակում է հավասարություն դատարանի առջև, քանզի վեճերի և խախտումների փաստերի առկայության դեպքում հենց դատարանն է իրավունքների և ազատությունների պաշտպանության և վերականգնման ամենարդյունավետ միջոցը²⁰⁵:

Հայաստանի Հանրապետության դատարանակազմության մասին օրենքի 5 հոդվ. այդ սկզբունքն ամրագրում է հետևյալ բանաձևի տեսքով. «Բոլորը հավասար են օրենքի և դատարանի առջև և առանց խտրականության հավասարապես պաշտպանվում են օրենքով:

Քաղաքացիները անկախ ազդությունից, ուսույցից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ դրույթներից ունեն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված բոլոր իրավունքները, ազատությունները և պարտականությունները»:

Կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետության դատարանակազմության մասին օրենքի այս հոդվածը վերախմբափոխման

²⁰⁵ Տե՛ս *Խաչատրյան Հ.Մ.*, Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրությունը, Երևան, 1997, էջ 61:

կարիք ունի, քանի որ այն խախտում է օրենսդրական տեխնիկայի պահանջներն իրավական ձևակերպումների միասնականության մասին, իսկ հողվածի երկրորդ մասը տվյալ դեպքում անտեղի է, որովհետև այն ունի սահմանադրաիրավական, այլ ոչ թե քրեադատավարական բովանդակություն: Իհարկե, սահմանադրական նորմերն ուղղակի լիարժեքության նորմեր են, բայց մյուս կողմից սահմանադրական դրույթները պետք է ինկորպորացվեն ճյուղային օրենքների մեջ: Վերջիններում սահմանադրական կանոնները ձեռք են բերում կոնկրետացված արտահայտություն՝ հաշվի առնելով իրավունքի այս կամ այն ճյուղի կողմից կարգավորվող հարաբերությունների բնույթը²⁰⁶:

Մեր կարծիքով այդ հարցն ավելի ճիշտ լուծված է Ռուսաստանի Դաշնության դատական համակարգի մասին սահմանադրական օրենքում, որի 7 հոդվ., տեղայնացնելով սահմանադրական նորմը, սահմանում է, որ.

«1. Բոլորը հավասար են օրենքի և դատարանի առջև:

2. Դատարանները չեն նախընտրում ինչ-որ մարմինների, անձանց, դատավարությանը մասնակցող կողմերի՝ ելնելով նրանց պետական, սոցիալական, սեռային, ռասայական, ազգային, լեզվական հատկանիշներից կամ քաղաքական պատկանելությունից կամ ծառայության, լուսավորության և պաշտոնական դրությունից, բնակության վայրից, ծննդավայրից, կրոնի նկատմամբ վերաբերմունքից, համոզմունքներից, հասարակական կազմակերպություններին անդամակցելուց, հավասարապես նաև դաշնային օրենքով չնախատեսված այլ հիմքերից»:

Հավասարությունը օրենքի առջև նշանակում է միասնական, ներառյալ նաև քրեադատավարական օրենսդրության առկայություն, հանրապետությունում արտակարգ դատարանների, բնակչության առանձին սոցիալական խմբերի համար սահմանված հատուկ դատավարական կարգերի լիարժեքության բացառում: Այս իմաստով Հայաստանի Հանրապետությունում լիարժեքություն չունի նույնիսկ զինվորական դատարանների առանձին համակարգ և զինվորական հանցագործությունները ևս ընդդատյա են համաքաղա-

²⁰⁶ Տե՛ս *×óáèèáá Á., Ááááá Ó. Í ðíáèàì à ðááèèçàðèè èííñðèðóðèííííáí ìðèíðèè à ðáááíñðáá áñáð ìáðáá çàèííí è ñóáíì á óáíèíáíí ñóáíí ðíèçáí áñóáá.* — *Óáí èíáí í á ìðááí, 1999, թիվ 2, էջ 71:*

քացիական դատարաններին²⁰⁷: Դատաիրավական բարենորոգումների շրջանակներում ընդունված քրեադատավարական նոր օրենսդրությունը վերացրեց օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքի այնպիսի խախտումներ, ինչպես վերադաս դատարանի իրավունքը՝ իր վարույթ ընդունելու ստորադաս դատարանին ընդդատյա լիարժեք, ինչպես նաև հետաքննության այն տեսակը, որը նախնական քննության ավարտման ձև էր: Այսպես, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 188 հոդվ. սահմանում է, որ «նախաքննության ձևով նախնական քննությունը պարտադիր է բոլոր լիարժեքով: Հետաքննությունը կարող է լինել քննության սկզբնական փուլ՝ քրեական լիարժեք հարուցելու պահից 10 օրվա ընթացքում»:

Չնայած այդ ամենին, կարծում ենք, որ օրենքի առջև հավասարության սկզբունքը քրեական դատավարության նոր օրենսգրքում արտահայտված է ոչ հետևողականորեն: Այն փաստը, որ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում պահպանված են քննչական ենթակայության հասկացությունը և դրա վերաբերյալ կանոնները, արդեն իսկ կարելի է համարել անհավասարության դրսևորում այն անձանց նկատմամբ, ովքեր հայտնվում են քննության մարմինների լիարժեքության ուղեծրում: Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 189 հոդվ. սահմանում է, որ քրեական լիարժեքով նախաքննությունը կատարում են դատախազության, ներքին լիարժեքի և ազգային անվտանգության մարմինների քննիչները: Անվիճելի է, որ այդպիսի մոտեցումը «չի երաշխավորում ոչ քննչական լիարժեքության կազմակերպման, ոչ դրա դեկավարման, ոչ էլ դրա ռեսուրսային (նյութատեխնիկական և կադ-

²⁰⁷ ՀՀ Սահմանադրության 92 հոդվ. 2-րդ մասը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունում լիարժեք են նաև տնտեսական, զինվորական, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դատարաններ, սակայն դրանք, որպես դատարանների առանձին համակարգ, չեն ստեղծված: Դատաիրավական բարենորոգումների ընթացքում օրենսդիրը լիարժեք զինվորական արդարադատությունը համաքաղաքացիական դատական համակարգում ինտեգրացնելու ճանապարհով (Տե՛ս ՀՀ օրենքը դատարանակազմության մասին 13, 18, 22 հոդվածներ):

քննության համատեքստում: Օրինակ, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսփոխության 35 հոդվ. 4-րդ մասն անհիմն սահմանափակում է տուժողի կողմից մեղադրանքի պաշտպանության լիազորությունը՝ սահմանելով, որ ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին մեղադրողի հայտարարությունը դատարանի համար քրեական փորձի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք է: Քրեական դատավարության օրենսփոխության մեկ այլ՝ 376 հոդվ. 1-ին մասը սահմանում է, որ տուժողն իրավունք չունի վերաքննիչ բողոք բերել հանրային մեղադրանքի փորձերով: Այսպիսի օրենսդրական դրույթները խախտում են օրենքի առջև հավասարության սահմանադրական սկզբունքը: Հետևաբար դրանք օրենսդրական կարգով պետք է վերացվեն:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 39 հոդվ. սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարադատության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իր փորձի հրապարակային քննության իրավունք: Հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, կողմերի անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով լրատվության միջոցների և հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը դատական քննության ընթացքում կամ նրա մի մասում կարող է արգելվել օրենքով»: Այս սահմանադրական նորմը քրեական դատավարության նոր օրենսփոխում արտահայտված է երկու առանձին սկզբունքների տեսքով՝ *դատական քննության հրապարակայնությունը* և *փորձի արդարացի քննությունը*:

Դատական քննության հրապարակայնության սկզբունքն ամրափակված է քրեական դատավարության օրենսփոխության 16 հոդվ. «1. Գործերի դատական քննությունը դոնբաց է: 2. Դոնփակ դատական քննություն անցկացվում է օրենքով նախատեսված դեպքերում» հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, կողմերի անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով:

Դատարանների դատավճիռները և վերջնական որոշումները բոլոր դեպքերում հայտարարվում են հրապարակայնորեն»:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 39 հոդվ. և քրեական դատավարության օրենսփոխության 16 հոդվ. համեմատական վերլուծությունից երևում է, որ նախ՝ դրանք ձևակերպված են ոչ միատեսակ, ինչը հակասում է օրենսդրական տեխնիկայի կանոններին, համաձայն որոնց՝ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի, հատկապես Սահմանադրության, նորմերը ստորադաս ակտում վերարտադրելիս չպետք է փոխվեն դրանց ձևակերպումները և իմաստը: Ստորադաս ակտը պետք է վերարտադրի վերադասի նորմը՝ ընդօրկելով այն իր ընդհանուր համակարգում, որպեսզի առաջ չբերի կոլիզիաներ և տարրնթերցումներ, որոնք մեր կարծիքով առկա են տվյալ դեպքում: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 39 հոդվ. խոսվում է նաև մասամբ փակ միստի մասին, ինչը որևէ կերպ չի արտացոլվում քրեական դատավարության օրենսփոխության 16 հոդվ.: Երկրորդ՝ 1961 թ. քրեական դատավարության օրենսփոխության 12 հոդվ. «դոնփակ դատական քննությունը թույլատրվում է դատարանի պատճառաբանված որոշմամբ...» ձևակերպումն իրավաբանորեն ավելի ճիշտ էր, քան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և քրեական դատավարության նոր օրենսփոխության «դոնփակ դատական քննություն անցկացվում է օրենքով նախատեսված դեպքերում...» բանաձևը, որովհետև օրենքն ուղղակիորեն չի պարտադրում դոնփակ դատական քննության անցկացում, այլ սահմանում է այն հիմքերը, որոնց առկայության դեպքում դատարանը կարող է կայացնել որոշում դոնփակ դատական միստ անցկացնելու մասին: Երրորդ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 39 հոդվ. և քրեական դատավարության օրենսփոխության 16 հոդվ. սահմանում են միատեսակ հիմքեր, որոնց դեպքում կարող է անցկացվել փակ դատական քննություն: Դրանք են՝ հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, կողմերի անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումները: Քրեական դատավարության օրենսփոխության 172 հոդվ. 5-րդ մասը թույլատրում է դոնփակ դատական միստի անցկացում ծառայական, առևտրային և օրենքով պահպանվող այլ օտարազգի պարունակող տեղեկությունների հրապարակման սպառնալիքի դեպքում, ինչի մասին չի նշված քրեական դատավարության օրենսփոխության 16

հողվ.: Կարծում ենք՝ այս դեպքում առկա է Սահմանադրության 39 և քրեական դատավարության օրենսգրքի 16 հոդվածների տարածական մեկնաբանում, ինչն անթույլատրելի է: Հետևաբար, նախ և առաջ պետք է վերացվի այդ հակասությունը և վերականգնվի սահմանադրական նորմի լիարժեքությունը, իսկ ապա-
օպյում վերախմբաբանության մասն բուն սահմանադրական նորմը՝ հաշվի առնելով վերոնշյալ դիտողությունները:

Հրապարակայնության սկզբունքն ապահովում է սոցիալական վերահսկողությունը քրեական դատավարությունը վարող մարմինների լիարժեքության անկասկած: Դրանք քննության ընթացքում ստուգվում և հետազոտվում են լիարժեքությամբ, ինչը դատական միտին գերկա քաղաքացիներին հնարավորություն է տալիս ինքնուրույն կշռադատել և՛ լիարժեքության հանձնարարները, և՛ ամբաստանյալի անձը, օգնահատել դատավարության ընթացքն ու արդյունքները և դրանով իսկ ձևավորել հասարակական կարծիք քրեական դատավարության մասին: Հրապարակային դատավարությունը բարձրացնում է դատավորների, երդվյալ ատենակալների պատասխանատվության զգացումը, նպաստում է դատավարության սկզբունքների առավել լրիվ իրականացմանը, ամրապնդում է անհատի իրավունքների և օրինական շահերի երաշխիքները, թողնում է որոշակի իրավական գերություն քաղաքացիների վրա²¹⁰:

Գործի արդարացի քննության սկզբունքը քրեական դատավարության օրենսգրքի 17 հոդվ. 1-ին մասում ձևակերպված է հետևյալ կերպ. «Յուրաքանչյուր ոք ունի արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իր շահերին առնչվող քրեական լիարժեքության իրավունք»: Այս դրույթի աղբյուրներ են մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերը, մասնավորապես, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային պակտը, որն ընդունվել է ՄԱԿ-ի լիարժեք Ասամբլեայի 1966 թ. դեկտեմբերի 16-ի որոշմամբ: Բազմադարյան փորձը վկայում է, որ դատարանի կայացրած որոշումները, շոշափելով բազմազան հասարակական շահեր, օտնվում են այլ պետական մարմինների,

²¹⁰ Տե՛ս Օձիեթիեթ-Իժիթոնթեթիթ Իժիթեթ. Ի Իթ ժաթ. *Y.A. Évères* Ի ., 1999, էջ 136-137: *Պիվազյան Հ.Մ.*, Քրեական դատավարությունը..., էջ 155-156:

տարբեր մակարդակի պաշտոնատար անձանց, քաղաքացիների ուշադրության կենտրոնում, որոնք բոլորն այս կամ այն չափով շահագրգռված են կոնկրետ լիարժեքության կամ վեճերի քննության արդյունքներում: Այդ իսկ պատճառով առաջացել են դատարանի վրա ազդելու բազմաթիվ եղանակներ և մեթոդներ: Դատարանի արդարացիության և անկախության պահանջն ապահովելու համար Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և նոր դատարանակազմական ու դատավարական օրենսդրությունը սահմանել են իրականում դատարանի այդ որակներն ապահովող բազմաթիվ երաշխիքներ և ինստիտուտներ: Դրանք կարելի է բաժանել 4 խմբի.

1. Օրենսդրական կանոններ, որոնք սահմանում են դատավորի թեկնածուներին ներկայացվող պահանջներ, որոշում նրանց նշանակման կարգը: Այդ կանոնների հիմունքները սահմանված են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, իսկ մանրամասն կարգավորում դրանք ստացել են «Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում: Այդ կանոնների իրացումը կոչված է ստեղծել կառուցակարգ, որի օգնությամբ դատական լիարժեքների իրացումից հեռացվում են դրանք կատարելուն անընդունակ մարդիկ: Վերջին հաշվով այս խմբի կանոնները կոչված են առավելապես երաշխավորելու դատարանի ձեռնհասությունը: Քանի որ այդ կանոններն ունեն դատարանակազմական բնույթ, ապա մենք այստեղ դրանք չենք քննարկի: Բայց մեր կարծիքով այդ հարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում չեն ստացել պատշաճ իրավական կարգավորում, որովհետև դրանք լիարժեք իշխանությանը հնարավորություն են տալիս միջամտել դատական կորպուսի կազմավորման հարցերի լուծմանը:

2. Օրենսդրական կանոններ, որոնք ապահովում են դատարանի և դատավորի անկախությունը:

3. Օրենսդրական կանոններ, որոնք սահմանում են քրեական լիարժեք ընդդատությունը:

4. Օրենսդրական կանոններ, որոնք կոչված են սահմանափակելու այն անձանց սուբյեկտիվության կամ կողմնակալության հնարավորությունը, ովքեր քրեական դատավարությունում օժտված են իրավունքով՝ ընդունելու որոշումներ՝ ըստ հարցերի էության: Դա հատկապես վերաբերում է դատարանին:

Մինչև այս կանոնների առանձին-առանձին քննարկմանն անցնելը կարևոր է ընդօժեղ, որ դրանց միջև օղջություն չունեն «անացանելի անդունդ» և հստակ սահմաններ, քանի որ դրանք սերտորեն փոխկապակցված են և լրացնում են միմյանց:

Այդ կանոնների երկրորդ խումբը հոչակում է, որ դատավորը արդարադատություն իրականացնելիս անկախ է և ենթարկվում է միայն օրենքին (Սահմանադրության 97 հոդվ.): Դատավորների անկախությունը համարվում է քրեական օրոճերի արդարացի լուծման անհրաժեշտ պայմանը: Այս սահմանադրական դրույթի զանազան երաշխիքները սահմանված են ՀՀ Սահմանադրության այլ նորմերում, ինչպես նաև դատաիրավական բարեկորոնմների հիմքը կազմող մի շարք օրենքներում: Դրանցից կարևորագույնը դատավորների անփոփոխելիության մասին դրույթն է (Սահմանադրության 96 հոդվ.): Դատարանի անկախության և անկողմնակալության ապահովման երաշխիքներից մեկն էլ Սահմանադրության այն նորմն է, որն արօելում է դատավորին և սահմանադրական դատարանի անդամին զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի օիտական, մանկավարժական և ստեղծաօորժական աշխատանքից (Սահմանադրության 98 հոդվ.):

Դատարանի և դատավորի անկախությունն ապահովվում է նաև նրանով, որ դատավորի պատասխանատվության հիմքերը և կարօը սահմանված են Սահմանադրությամբ և օրենքներով: «Դատավորի կարօավիճակի մասին» ՀՀ օրենքն ամրաօրել է դրույթներ դատարանի օորժուներության միջամտության անթույլատրելիության մասին (հոդվ. 6), դատարանի և դատավորի նկատմամբ ոչ հարօալից վերաբերմունքի համար պատասխանատվության մասին (հոդվ. 1), դատավորների անձեռնմխելիության մասին (11 հոդվ.) և այլն: Զարօացնելով դատավորի անկախության երաշխիքները՝ դատավորի կարօավիճակի մասին օրենքը սահմանում է դատավորների օորժուներության նյութական, սոցիալական և այլ երաշխիքներ:

Քրեական օորժերի արդարացի լուծումն ապահովվում է նաև քրեական օորժերի ենթակալության և ընդդատության որոշման օրենսդրական կանոններով: Դրանց ճիշտ սահմանումը նշանակում է դատարանի անկողմնակալության ապահովում: Հետևաբար դրանք չպետք է լուծվեն ինչ-որ պաշտոնատար անձի հայեցողությամբ: Այդ իսկ պատճառով Հայաստանի Հանրապետությո-

յան քրեական դատավարության օրենսօորքի 24 հոդվ. սահմանում է, որ «ոչ ոքի չի կարելի զրկել իր օորժն այն դատարանում և այն դատավորի կողմից քննելու իրավունքից, որոնց ընդդատությանն այն վերապահված է օրենքով: Քրեական օորժով դատարանի դատավճիորը և այլ որոշումները կարող են վերանայել միայն համապատասխան վերադաս դատարանները՝ քրեական դատավարության օրենսօորքում սահմանված կարօով»: 38-51 հոդվածներում քրեական դատավարության նոր օրենսօորիքը սահմանում է ենթակալության և ընդդատության կանոնները, թույլ չտալով բացառություններ այդ կանոններից և նույնիսկ օորժը ստորադաս դատարանից վերադաս դատարանի կողմից իր վարույթը վերցնելը, ինչը թույլատրվում էր հին օրենսդրությամբ: Քրեական դատավարության օրենսօորքի 44 հոդվ. սահմանում է, որ առաջին ատյանի դատարանը քննում է բոլոր հանցաօորժությունների վերաբերյալ օորժերը, իսկ 50 հոդվ.՝ որ քրեական օորժի տարածքային ընդդատությունը կարող է փոխվել բոլոր մեղադրյալների համաձայնությամբ, եթե տվյալ օորժով քրեական դատավարությանը մասնակցող անձանցից շատերը բնակվում են տվյալ առաջին ատյանի դատարանի դատական տարածքից դուրս:

Դատարանի օրյեկտիվության, անկողմնակալության, անկաշատության երաշխիքները հետևյալներն են: **Առաջին՝** արդարադատության իրականացման՝ օրենքով նախատեսված ընթացակարօը: **Երկրորդ՝** դատավորը, դատախազը, քննիչը, հետաքննության մարմնի աշխատակիցը չեն կարող մասնակցել քրեական օորժով վարույթին, եթե բանք ուղղակի կամ անուղղակի շահաօրօոված են օորժի ելքով: Խոսքը նշված անձանց բացարկներ հայտարարելու և նրանց քրեկան դատավարությանը մասնակցելուց հետացնելու մասին է (քր. դատ. օր. 88-97, 321-327 հոդվածներ): **Երրորդ՝** քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել օրենքով նախատեսված բոլոր միջոցները՝ օորժի հանօամանքների բազմակողմանի, լրիվ և օրյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես կասկածյալի և մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանօամանքները (քր. դատ. օր. 17 հոդվ. 3-րդ մաս)²¹¹:

²¹¹ Ըստ էության այս պահանջը համարվում է քրեական դատավարությունում բազմակողմանիության, լրիվության և օրյեկտիվության սկզբունքի արտահայտություն, որն ամրաօրված չէ ՀՀ Սահմանադրության մեջ՝

կան դատավարության տեսության խորհուրդներին՝ համաձայն որոնց «չի կարելի կացությունը այնպես ներկայացնել, որ վկաները և պաշտոնատար անձինք հավասարապես պարտավոր են Ռործել հօ՞րուտ հանրային շահերի՝ քրեական դատավարության նպատակներին համապատասխանող անհրաժեշտ արդյունքին հասնելու համար... Ինչ վերաբերում է քաղաքացիներին, ապա նրանք պարտավոր են միայն աջակցել իրավապահպան և դատական իշխանության մարմիններին հանցավորությունը զսպելու Ռործում... Սակայն այդ աջակցությունը չպետք է ապահովվի առավելապես հարկադրաբար, քաղաքացիներին պատճառելով անընդունելի զրկանքներ»²¹⁴, քրեական դատավարության նոր օրենսօրոքը վերացնում է վկաների հարցում հանրային և մասնավոր շահերի միջև հակասության դրսևորումներից մեկը՝ նախապատվություն տալով անձնական շահերին:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 40 հոդվ. ամրաօրում է **իրավաբանական օ՞նություն ստանալու և պաշտպան ունենալու իրավունքները**. «Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օ՞նություն ստանալու իրավունք: Օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օ՞նությունը ցույց է տրվում անվճար:

Յուրաքանչյուր ոք ունի ձերբակալման, կալանավորման կամ մեղադրանքի առաջադրման պահից պաշտպան ունենալու իրավունք»: Այս սահմանադրական դրույթները քրեական դատավարության նոր օրենսօրոքում վերարտադրված են իրավաբանական օ՞նության իրավունքի ապահովման սկզբունքի տեսքով (քր. դատ. օր. հոդվ. 10):

Իրավաբանական օ՞նության իրավունքի ապահովման սկզբունքը ենթադրում է՝

— յուրաքանչյուր ոք քրեական դատավարության օրենսօրոքով նախատեսված կար՞ով իրավունք ունի ստանալ իրավաբանական օ՞նություն,

— քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ապահովել կասկածյալի և մեղադրյալի՝ իրավաբանական օ՞նություն ստանալու իրավունքը,

²¹⁴ Տե՛ս *Áai eáŕá E.Ō. Ī dī áeáì à ĩ ðáá +áeĭááeâ...*, էջ 40:

— քաղաքացիական հաշվորդ, կամ նրա օրինական ներկայացուցիչը, կասկածյալի և մեղադրյալի օրինական ներկայացուցիչը, ինչպես նաև քաղաքացիական պատասխանողը քրեական դատավարության ընթացքում իրավունք ունեն օ՞տվել իրենց հրավիրած ներկայացուցիչների իրավաբանական օ՞նությունից (քր. դատ. օր. 10 հոդվ. 3-րդ մաս, 59 հոդվ. 1-ին մաս 18-րդ կետ, 61 հոդվ. 1-ին մաս 19-րդ կետ, 78, 79 հոդվածներ և այլն),

— քրեական հետապնդման մարմինը տուժողի հարցաքննության ժամանակ իրավունք չունի ար՞ելել նրա կողմից որպես ներկայացուցիչ հրավիրված փաստաբանի մասնակցությունը,

— քրեական վարույթն իրականացնող մարմինը կարող է որոշում կայացնել կասկածյալին կամ մեղադրյալին անվճար իրավաբանական օ՞նություն տրամադրելու մասին՝ ելնելով նրա Ռույքային դրույթունից:

Կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը և դրա ապահովումը՝ որպես քրեական դատավարության սկզբունք՝ ամրաօրված է քրեական դատավարության օրենսօրքի 19 հոդվ.: Այս սկզբունքը «յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատությունները օրենքով չար՞ելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք» սահմանադրական դրույթի արտահայտությունն է:

Կասկածյալի և մեղադրյալի (ամբաստանյալի, դատապարտյալի, արդարացվածի) պաշտպանության իրավունքն ամփոփում է նրանց պատկանող իրավունքների ողջ համակցությունը, որոնց իրականացումը հնարավորություն է տալիս վիճարկել իրենց առաջադրված կասկածանքները կամ մեղադրանքը, ապացուցել իրենց անմեղությունը կամ մեղքի փոքր աստիճանը, պաշտպանել իրենց այլ օրինական շահերը (բարոյական, Ռույքային, աշխատանքային և այլն): Այս սկզբունքի էությունը հետևյալն է՝

— քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին բացատրել նրանց իրավունքները և ապահովել օրենքով չար՞ելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու փաստացի հնարավորությունը (քր. դատ. օր. 19 հոդվ. 2-րդ մաս, 63 հոդվ. 1-ին մաս, 65 հոդվ. 1-ին մաս),

— կասկածյալը և մեղադրյալը իրավունք ունեն իմանալ, թե ինչում են նրանք կասկածվում կամ մեղադրվում (քր. դատ. օր. 63 հոդվ. 2-րդ մաս 1-ին կետ, 65 հոդվ. 2-րդ մաս 1-ին կետ),

— քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է համապատասխան դեպքերում Պործին մասնակից դարձնել կասկածյալի և մեղադրյալի օրինական ներկայացուցչին (քր. դատ. օր. 19 հոդվ. 3-րդ մաս, 76 հոդվ.),

— կասկածյալը և մեղադրյալն իրավունք ունեն մեղադրանքից պաշտպանվել ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի և օրինական ներկայացուցչի միջոցով: Կասկածյալի և մեղադրյալի պաշտպանի, օրինական ներկայացուցչի մասնակցությունը քրեական դատավարությանը չի սահմանափակում կասկածյալի և մեղադրյալի իրավունքները (քր. դատ. օր. 19 հոդվ. 4-րդ մաս),

— կասկածյալին և մեղադրյալին չի կարելի հարկադրել ցուցմունքներ տալ, նյութեր ներկայացնել քրեական վարույթն իրականացնող մարմնին կամ նրան որևէ աջակցություն ցույց տալ (քր. դատ. օր. 19 հոդվ. 5-րդ մաս):

Կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի երաշխիքներից են նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսդրության բազմաթիվ այլ նորմերն ու ինստիտուտները, ինչպես օրինակ, դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ, կրկնակի դատապարտման և քրեական հետապնդման, ինչպես նաև մեղադրյալի վիճակի վատթարացման անթույլատրելիությունը: Այս արժեքները սահմանող նորմը քրեական դատավարության նոր օրենսդրում ունի քրեական դատավարության սկզբունքի կարճավիճակ (հոդվ. 21):

«Պաշտպանության իրավունքը ոչ միայն անհատի շահերի, այլ նաև արդարադատության շահերի երաշխիք է: Այն սոցիալական արժեք է: Պաշտպանին տրված լայն հնարավորությունները՝ վիճարկել մեղադրական իշխանության եզրակացությունները, ներկայացնել ապացույցներ և փաստարկներ ի օրոտ պաշտպանյալի, ստեղծում են ամենալավ պայմանները Պործով հանձնարանների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, ճշմարտության բացահայտման համար»²¹⁵: ԿատարելաՊործելով այս սկզբունքի կազմակերպարավական կառուցակարՊերը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և քրեական դատավարության նոր օրենսդրությունը սահմանել են նոր արժեքներ դրա լրիվ իրականացման համար: Դրանցից մեկը կա-

²¹⁵ Տե՛ս Օաիեիաի-իծոանոաեւիա իծաի Ճիմեեեիե Օաաձաձե. Իիա ձա. Ի.Ա. Էօրեիե. Ի ., 1999, էջ 143-144:

րելի է համարել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 93 հոդվ., որը վերարտադրված է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսդրության 404 հոդվ. և սահմանում է, որ օրինական ուժի մեջ մտած վճիռները, դատավճիռները և որոշումները վճռաբեկ դատարանում վերանայվում են լիազոր դատախազի, նրա տեղակալների կամ հատուկ արտոնաՊիր ունեցող և վճռաբեկ դատարանում Պրանցված փաստաբանների բողոքների հիման վրա: Անհերթեթ պետք է համարել բողոքարկման այնպիսի սուբյեկտի Պոյությունը, ինչպիսին է հատուկ արտոնաՊիր ունեցող և վճռաբեկ դատարանում Պրանցված փաստաբանը, որովհետև ընդհանուր արտոնաՊիր ունեցող փաստաբանները այդ իրավունքը չունեն: Նման լուծումը, մեր կարծիքով, կարող է ծառայել չարաշահումների աղբյուր. դա իրավաբանական օՊնություն ստանալու և պաշտպանության իրավունքի սահմանափակում է:

Հայաստանի Հանրապետության 1995 թ. Սահմանադրությունը առաջին անՊամ սահմանադրական մակարդակում անմիջականորեն ամրաՊրեց *անմեղության կանխավարկածի սկզբունքը*²¹⁶: Սահմանադրության 41 հոդվ. սահմանում է, որ «հանցաՊործության համար մեղավորը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունը ապացուցված չէ օրենքով սահմանված կարճով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Չփաստված կասկածները մեկնաբանվում են հօՊուտ մեղադրյալի»: Այս սկզբունքը կոչված է կանխելու մարդու նկատմամբ՝ որպես հանցաՊործի, ժամանակից շուտ և անհիմն վերաբերմունքը և անհատի՝ լայն շրջանակի իրավունքների ու ազատությունների պահպանման ու պաշտպանության երաշխիք է:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսդրության 18 հոդվ., ամրաՊրելով անմեղության կանխավարկա-

²¹⁶ Խորհրդային սահմանադրություններում քննարկվող սկզբունքը ուղղակի չէր ամրաՊրվել, չնայած որոշ սահմանադրական նորմերում այն Պտել էր իր անուղղակի արտահայտությունը: Դեռ Խորհրդային իրավաՊետները Պտնում էին, որ այդ սկզբունքը միայն սահմանադրական-իրավական հիմունքի վերածման դեպքում կդառնա անհատի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության Պործուն միջոց (տե՛ս. *Աօբյաա Ա.Ի. Նիծեաւի-իեծե-աիեե աիաեծ իծաճո իծե իաեիիաիիծե. — Նիաաոեիա իիոաձոնաի ե իծաի. 1988, թիվ 4, էջ 34*):

ծը՝ որպես քրեական դատավարության սկզբունք, զարգացնում է դրա բովանդակությունը՝ տարածելով դրա օրոժողությունը մաս կասկածյալի վրա և որպես այդ սկզբունքի լրացուցիչ երաշխիքներ՝ սահմանում է:

1) Կասկածյալի կամ մեղադրյալի անմեղության ապացուցման պարտականությունը չի կարող դրվել պաշտպանության կողմի վրա: Մեղադրանքի ապացուցման և կասկածյալին կամ մեղադրյալին ի պաշտպանություն բերված փաստարկների հերքման պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը (քր. դատ. օր. 18 հոդվ. 2-րդ մաս):

2) Հանցանք օրոժելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա. դա պետք է հաստատվի օրոժին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ (քր. դատ. օր. 18 հոդվ. 3-րդ մաս):

3) Կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կիրառվող խափանման միջոցները չեն կարող պարունակել պատժի տարրեր (քր. դատ. օր. 18 հոդվ. 5-րդ մաս):

Քրեական դատավարության օրենսգրքի վերջին դրույթը շատ կարևոր է և ունի ոչ միայն տեսական, այլև օրոժական նշանակություն, քանի որ որոշում է դատավարական հարկադրանքի բնույթը անմեղության կանխավարկածի տեսանկյունից: Անմեղության կանխավարկածը երաշխավորվում է ոչ միայն վերոնշյալ կոնկրետ մոմենտով ու ինստիտուտներով, այլև «դատավարության բազմաթիվ այլ սկզբունքների կարգադրանքներով: Մյուս կողմից անմեղության կանխավարկածը ընկած է այլ սկզբունքների հիմքում: Համենայն դեպս դրանք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ելնում են նրանից, որ քրեական պատասխանատվության ենթակա անձի մեղավորությունը պետք է ապացուցվի օրենքով նախատեսված կարգով, իսկ մինչ այդ ոչ ոք իրավունք չունի նրա հետ վերաբերվել որպես մեղավորի: Այլ խոսքով, անմեղության կանխավարկածը, հենվելով դատավարության այլ սկզբունքների վրա, միաժամանակ ելակետային դրույթ է դրանց համար, դրանք կյանքում հետևողականորեն կենսաօրոժելու համար»²¹⁷:

²¹⁷ Տե՛ս *Î àæéłŷí Āæ. Ð. Î ðáčóı ï öèÿ íáâéíîáíîñòè...*, էջ 41:

Արդարադատության հիմունքներից մեկն էլ ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91 հոդվ., համաձայն որի՝ *Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:* Այս սահմանադրական դրույթը քրեական դատավարության նոր օրենսգրքում վերարտադրված է «արդարադատության իրականացումը միայն դատարանի կողմից» սկզբունքի տեսքով:

Ելնելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-92 հոդվածների և Հայաստանի Հանրապետության դատարանակազմության մասին օրենքի 1-10 հոդվածների դրույթներից՝ կարելի է արձանագրել, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական օրոժերով արդարադատությունն իրականացնում են ընդհանուր իրավասության դատարանները: Արտակարգ դատարանների ստեղծումն արգելվում է: Դա նշանակում է, որ քրեական արդարադատություն իրականացնելու իրավունք չունի ուրիշ ոչ մի պետական կամ այլ մարմին: Քրեական դատավարության օրենսգրքի 24 հոդվ., զարգացնելով այս սկզբունքի բովանդակությունը, սահմանում է, որ ոչ ոք չի կարող հանցաօրոժության համար մեղավոր ճանաչվել, ինչպես մաս ենթարկվել քրեական պատժի այլ կերպ, քան դատարանի դատավճռով և օրենքին համապատասխան: Դատարանի լիազորությունների շրջանում պատժվում է քրեական օրենքով: Դատարանի իրավասությունը, նրա կողմից քրեական դատավարության իրականացման կարգը չեն կարող կամայականորեն փոփոխվել առանձին օրոժերի կամ անձանց կամ որոշակի իրավիճակի համար կամ որևէ ժամանակահատվածով:

Ավարտելով դատավարության սահմանադրական սկզբունքների և քրեական դատավարության նոր օրենսգրքում դրանց կենսաօրոժման հիմնախնդիրների վերլուծությունը՝ եզրակացնում ենք, որ Հայաստանի սահմանադրական զարգացման պատմության համատեքստում 1995 թ. Սահմանադրության ընդունումը նշանավորում է որակական թռիչք իրավական, ժողովրդավարական պետության ստեղծման ճանապարհին: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ամրագրում է դատական իշխանության կազմակերպման և օրոժունեության հատուկ կանոններ, որոնք ուղղված են նրա անկախության և անկողմնակալության ա-

եղակետային պետք է համարվեն օրինական շահերը, որովհետև սուբյեկտիվ իրավունքները տրվում են օրինական շահերի իրացման համար: Այդ իսկ պատճառով ճիշտ կլինի խոսել քրեական դատավարության մասնակիցների օրինական շահերի և իրավունքների մասին: Է.Ֆ. Կուցովան ենթադրում է, որ մեղադրյալի օրինական շահերը միայն իրավունքի նորմերում արտահայտված էական շահերն են²²¹: Սակայն պետք է համաձայնել Լ.Գ. Կոկորևի այն կարծիքին, որ այդպիսի դատողությունը «օրինական շահ» հասկացությանը զրկում է իր յուրօրինակ իմաստից, հանձնելով է դրանք անհատի իրավունքների հետ լրիվ նույնացման: Լ.Գ. Կոկորևը օրինական շահերի մեջ ընդօրկում է նաև այն շահերը, որոնք չնայած չեն նախատեսված կոնկրետ իրավական նորմով, սակայն բխում են օրենքից, համապատասխանում են օրենքին²²²:

Քրեադատավարական օրենսօրրքում կապը օրինական շահերի և իրավունքների միջև ակնհայտ չէ: Դատավարության մասնակիցների օրինական շահերի բովանդակության մասին կարելի է դատել՝ ելնելով քրեադատավարական օրենսօրրքով նրանց տրված իրավունքներից, ինչը, կարծում ենք, օրենսդրական տեխնիկայի թերություններից է: Օրենքում պետք է արտացոլվեն նաև դատավարության մասնակիցների օրինական շահերը:

Բացի վերը նշվածներից, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում սույն են մի շարք դրույթներ, որոնք պետք է օտարօրծվեն քրեադատավարական օրենսօրրքում դատավարության մասնակիցների օրինական շահերը և իրավունքները ձևակերպելիս: Դրանք են.

1. Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պետական պաշտպանությունը երաշխավորված է: Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատությունները օրենքով չարօրծված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:

2. Յուրաքանչյուր ոք պարտավոր է հարօրել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը:

3. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն չի կարելի ձերբակալել, խուզարկել այլ կերպ, քան օրենքով սահմանված կարօրով: Նա կարող է կալանա-

²²¹ Տե՛ս *Εὐδοκία Ὑ.Ὀ.* Ἀἀδαί δὲὲ ἰδἀἀ ἐὲ+ἰἰἠδὲ..., էջ 58:

²²² Տե՛ս *Εἰτεἰ δἀἀ Ἐ.Ἄ. ε̇ ἀδ.* Ἰ ἂαἰἠδἀἀἰ ἰ ἰἀ ε̇ ἐὲ+ἰ ἰἀ εἰ ὀἀδἠἠ ἂ ὀἠἰ εἰ ἠἰ ἠἰ ἠἰ ἠἰ ὀἠἰ ἰ ὀἠἰ ἠἰ ἠἰ ἠἰ. Ἄἰ ὀἠἰ ἰ ἀε, 1984, էջ 21:

վորվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարօրով:

4. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական և ընտանեկան կյանքը անօրինական միջամտությունից, պատիվը և բարի համբավը ոտնձոությունից պաշտպանելու իրավունք: Արօրելվում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օտարօրծելը և տարածելը:

5. Յուրաքանչյուր ոք ունի նամակաօրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռաօրական և այլ հաղորդումների օաղտնիության իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ:

6. Յուրաքանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք: Արօրելվում է մարդու կամքին հակառակ մուտք օործել նրա բնակարանը՝ բացառությամբ օրենքով նախատեսած դեպքերի: Բնակարանը կարող է խուզարկվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարօրով:

7. Յուրաքանչյուր ոք ունի Սահմանադրությամբ և օրենքներով ամրաօրված իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք:

8. Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օոնություն ստանալու իրավունք: Օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օոնությունը ցույց է տրվում անվճար: Յուրաքանչյուր ոք ունի ձերբակալման, կալանավորման կամ մեղադրանքի առաջադրման պահից պաշտպան ունենալու իրավունք:

9. Հանցաօործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունը ապացուցված չէ օրենքով սահմանված կարօրով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Չփարատված կասկածները մեկնաբանվում են հօոնտ մեղադրյալի:

10. Արօրելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օոտարօրծումը:

11. Մարդը պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու և մերձավոր աօրականների դեմ:

12. Մարդուն չի կարելի ենթարկել խոշտանօումների, դաժան կամ նրա արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի:

պիսկալայան Աշուր է, որ «սոցիալական պետության մեջ հանրայնության սկզբունքի սոցիալ-իրավական իմաստը դրսևորվում է մարդու և քաղաքացու, այդ թվում նաև մեղադրյալի ու տուժողի իրավունքների ու ազատությունների պահպանությունը պետության շահերի, ինչպես նաև հանցաքործությունների կանխման և մեղավորներին արդարացի պատժի ենթարկելու խնդրի հետ օրօրանապես զուգակցելու մեջ... Գործին մասնակցող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը համարվում է պետական մարմինների հանրային իրավական պարտականությունը, հետևաբար դա հանրայնության սկզբունքի կառուցողական տարրն է»²²⁶։ Մ.Ս. Ստրոկովիչի և Պ.Ա. Լուպինսկայայի վերը բերված դատողությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը։ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 4 հոդվ. սահմանում է, որ պետությունն ապահովում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը Սահմանադրության և օրենքների հիման վրա՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան, իսկ 38 հոդվ. երաշխավորում է իրավունքները և ազատությունները օրենքով չարելված բոլոր միջոցներով պաշտպանելու ամենքի իրավունքը։ Այդպիսով, քանի որ անհատի շահերը պետության համար առաջնային են, ուրեմն հանրայնության սկզբունքն ընդօրկում է նաև պետության կողմից անհատի շահերի պաշտպանությունը։

Համաձայն Հայկական ԽՍՀ 1961 թ. քրեական դատավարության օրենսգրքի՝ հանրային շահերում որոշակի արտացոլվել էին նաև դատավարության մասնակիցների անձնական շահերը՝ հանցաքործության հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, դատավարության մասնակիցներին տրված իրավունքների դատավարական ընթացակարգի խստիվ պահպանում։ Սակայն անձնական շահերի պաշտպանության կարևորության տեսանկյունից դա բավարար չէր։ Կարծում ենք, որ դատավարության մասնակիցների անձնական շահերը քրեական դատավարությունում պետք է առանձնացվեն որպես պաշտպանության ենթակա ինքնուրույն առաջնայնություն, ինչը պետք է արտահայտվի դատավարության մասնակիցների իրավունքների

²²⁶ Տե՛ս Օăĭ ēĭăĭĭ-ĭđĭōăĭñōăēüĭĭă ĭđăăĭ. Ĩ ĭă đăă. *Y.A. Évret nére. Ĩ ..*, 1999, էջ 123:

շրջանակի ընդլայնմամբ և, հատկապես, քրեական դատավարության խնդիրները սահմանելիս։ Այս առիթով պետք է նշել, որ ԱՊՀ երկրների համար ստեղծված քրեական դատավարության մոդելային օրենսգրքն անձի, հասարակության և պետության պաշտպանությունը հանցաքործությունից համարում է քրեական դատավարության խնդիրներից մեկը։ Հարցը նույն կերպ է լուծված նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում, որի 2 հոդվ. 1-ին մասը սահմանում է. «Քրեական դատավարությունն իրականացվում է՝ ապահովելու համար՝

1) անձի, հասարակության և պետության պաշտպանությունը հանցաքործությունից.

2) անձի և հասարակության պաշտպանությունը պետական իշխանության ինքնիրավ քործողություններից և չարաշահումներից՝ կապված իրական կամ ենթադրվող հանցավոր արարքի հետ»։

Սակայն, մեր կարծիքով, դատավարության մասնակիցների օրինական շահերն առավել լրիվ արտացոլվել են ՌԻ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 6 հոդվ. (Քրեական դատավարության խնդիրները), որտեղ սաված է՝

1) քրեական դատավարության խնդիրներն են՝ քրեական քործով վարույթի այնպիսի կարգի հաստատումը, որը կապահովի հանցաքործությունից անձի, նրա իրավունքների և ազատությունների, հասարակության ու պետության շահերի պաշտպանությունը՝ հանցաքործությունը արագ և լրիվ բացահայտելու, մեղավոր անձանց մերկացնելու և քրեական պատասխանատվության ենթարկելու, արդարացի դատական քննության, քրեական դատավարության մասնակիցների և այլ անձանց իրավունքները և օրինական շահերը երաշխավորող դատավարական նորմերի հիման վրա, քրեական օրենքի կիրառման ճանապարհով.

2) քրեական քործերով օրենքով սահմանված վարույթի կարգը պետք է ապահովի պաշտպանության հնարավորություն անհիմն մեղադրանքից և դատապարտումից, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների անօրինական սահմանափակումից, իսկ անմեղ անձին մեղադրելու և դատապարտելու դեպքում՝ անհապաղ և լրիվ արդարացում²²⁷։

²²⁷ P ðëäë-ăñêëë âăñòĭ êë, ñăĭ òyăđü 1995 ä. թիվ 31(122):

յալ զործով՝ քաղաքացիներ Սմիճուլիանայի և Ապանասենկոյի՝ իրենց սահմանադրական իրավունքների խախտման և անօրինակությունների: Իր եղբոր զոհվելու փաստով տուժող ճանաչված Սմիճուլիանան բազմիցս դիմել էր դատախազության մարմիններին և դատարաններ՝ անօրինակությունները քննիչի որոշումը տվյալ զործը հանցակազմի բացակայության պատճառով կարճելու մասին: Դատական մարմինները մերժում էին տուժողի անօրինակությունները՝ վկայակոչելով ՌԽՖՍՀ քրեական դատավարության օրենսգրքի 209 հոդվ. 5-րդ մասը, ըստ որի՝ նախաքննության ընթացքում կայացված զործի կարճման մասին որոշումը կարող էր անօրինակությունները միայն դատախազին: Սմիճուլիանան խնդրում էր ՌԽՖՍՀ քրեական դատավարության օրենսգրքի 209 հոդվ. 5-րդ մասում պարունակվող դրույթը ճանաչել ՌԴ Սահմանադրությանը հակասող՝ այն պատճառով, որ այդ նորմը իրավակիրառ մարմիններին հնարավորություն էր տալիս սահմանափակել տուժողի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը: Նման բնույթի պահանջով ՌԴ Սահմանադրական դատարան էր դիմել նաև տուժող Ապանասենկոն: ՌԴ սահմանադրական դատարանը ՌԽՖՍՀ քրեական դատավարության օրենսգրքի 209 հոդվ. 5-րդ մասը ճանաչեց ՌԴ Սահմանադրության 46 հոդվ. 1-ին և 2-րդ մասերին, ինչպես նաև 52 հոդվ. չհամապատասխանող²³⁰: Այդ որոշման հիման վրա օրենսդիրը փոխեց նշված հոդվածի ձևակերպումը, որն արդեն նախատեսում է զործի կարճման որոշումը նաև դատարանին անօրինակությունները հանրավորությունը: ՌԴ սահմանադրական դատարանի պրակտիկայում նման օրինակները բազմաթիվ են²³¹:

Վերը բերված և այլ օրինակները վկայում են քրեադատավարական օրենսդրության կատարելաօրինակ զործում ՌԴ սահմանադրական դատարանի դրական, կառուցողական դերի մասին, ինչը չի կարելի ասել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի մասին, քանի որ մեզ մոտ, սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակի անհիմն սահմանափակումը չի համապատասխանում

²³⁰ Տե՛ս *Áañoí eé Êííñòèòóèííííáí Ñóää ÐÕ, 6'95, էջ 18-21:*

²³¹ Տե՛ս *Áañoí eé Êííñòèòóèííííáí Ñóää ÐÕ, 4'98, էջ 36-40: Ðíññèéñêäý ààçàðà íò 28 ýíáàðý 1999 á., էջ 4:*

պետության և անհատի փոխհարաբերությունների ժամանակակից պահանջներին և, մեր կարծիքով, պետք է ընդլայնվի:

§ 3. Դատարանի տեղը և դերը քրեական դատավարությունում

Հայաստանի երրորդ Հանրապետությունում անցկացվող դատավարական բարեփոխումների հիմնական նպատակն էր պետական կառուցակարգում հիմնադրել դատական իշխանությունը՝ որպես անկախ և ազդեցիկ ուժ, որը կոչված է ապահովելու մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը և պահպանումը:

Խորհրդային շրջանում տնում էին, որ դատարանը լուծում է իր առջև դրված խնդիրները՝ իրականացնելով իրավապահպան պետական զործառույթն այլ պետական մարմինների (դատախազություն, ՆԳՆ, ՊԱԿ), ինչպես նաև հասարակական որոշ կազմավորումների (փաստաբանություն, ընկերական դատարաններ և այլոց) հետ համատեղ: Մարմինների ու կազմակերպությունների այդ համակցությունը կազմում էր իրավակարգի պահպանության մարմինների համակարգը²³²: Պետության այդ միասնական զործառույթի՝ իրավակարգի պահպանության շրջանակում, որպես դրա կառուցվածքային տարր, առանձնացվում էր նաև արդարադատության յուրահատուկ զործառույթը²³³: Ժամանակակից հետազոտողներն իրավացիորեն նշում են, որ արդարադատության զործառույթի նման տարրալուծումը պետության ամբողջական զործառույթի մեջ մի կողմից զրկում էր դատարանին որևէ յուրահատկությունից, միլիցիայի, դատախազության և այլ մարմինների համեմատ, իսկ մյուս կողմից արդարադատությանը, որպես զործունեության ձևի, վերաօրում էր դրան ոչ հատուկ զործառույթներ, մասնավորապես՝ իրավակարգի պահպանությունը: Իրավական պետության համար այդպիսի մոտեցումն անընդունելի է: Արդարադատությունը՝ որպես պետական զործունեության տեսակ, անկախ է: Այն կոչված է ոչ թե ապահովելու հանցավորության դեմ պայքարը, այլև վերահսկելու հանցավորության դեմ

²³² Տե՛ս *Ï áàðòòèí È.È. Ï ðàáí ñóàèà á ñèñòàí á áí ñóáàðñòááí í ùò Õóí èòèé.— Ï ðàáí ááááí èà, 1983, թիվ 3, էջ 36:*

²³³ Տե՛ս նույն տեղը, էջ 40:

պալքարի մեթոդների օրինականությունը²³⁴: Իշխանությունների տարանջատման սկզբունքի և համակարգային մոտեցման կիրառումը թույլ են տալիս իրավական պետության կառուցակարգում առանձնացնել դատական մարմիններին՝ որպես պետական իշխանության հավասարակշռված և փոխկապակցված մարմինների ամբողջական համակարգի տարր, որը միաժամանակ համակարգի այլ տարրերի, իշխանության այլ ճյուղերի նկատմամբ ինքնուրույն է²³⁵: Դատական իշխանության լիարժեք կոչումը արդարադատության իրականացումն է: Ընդ որում, արդարադատությունը դատարանի բացառիկ իրավագործությունն է, քանի որ «Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան» (Սահմանադրության 91 հոդվ. 1-ին մաս):

Այսպիսով, անցումը արդարադատության համակարգից դատական իշխանության համակարգին անհրաժեշտաբար հանգեցրեց հասարակության մեջ, այդ թվում նաև քրեական դատավարությունում, դատարանի դերի վերաբերմանը: Քրեական դատավարության բարեփոխման կարևոր նպատակներից էր նաև քրեական դատավարության բոլոր փուլերում դատարանի օրենսդրության համակարգի ապահովումը, անկախ և անկողմնակալ դատավարության, ինչպես նաև քրեական դատավարությունում քաղաքացիների իրավունքների և ազատությունների իրավաբանական երաշխիքների զարգացած համակարգի ստեղծումը: Դատարանը քրեական դատավարությունում իրացնում է դատական իշխանությունը՝ քրեական օրոճերով արդարադատության իրականացման միջոցով: Հայաստանի Հանրապետությունում ոչ ոք չի կարող հանցագործության համար մեղավոր ճանաչվել, ինչպես նաև ենթարկվել քրեական պատժի այլ կերպ, քան դատարանի դատավճռով և օրենքին համապատասխան (քր. դատ. օր. 24 հոդվ. 2-րդ մաս):

Արդարադատությունը ավանդաբար հասկացվում է որպես դատարանի կողմից իրականացվող պետական օրոճումների տեսակ՝ ուղղված քրեական և քաղաքացիական օրոճերի քննու-

յանը և լուծմանը²³⁶: Խորհրդային շրջանում արդարադատությունը քաղաքականացված էր և ուղղված էր սոցիալիստական կարգերի ու դրանցով պայմանավորված հասարակական հարաբերությունների պաշտպանությանը: Օրինակ, Մ.Ս. Ստրոգովիչը օտնում էր, որ «խորհրդային սոցիալիստական արդարադատությունը խորհրդային դատարանի կողմից իրականացվող պետական օրոճումներն է, որի ընթացքում դատարանը օրենքով սահմանված իրավական (դատավարական) ձևերով, քրեական և քաղաքացիական օրոճերի քննության և լուծման միջոցով ամեն տեսակ ոտնձուրություններից պաշտպանում է խորհրդային պետությունը, ԽՍՀՄ քաղաքացիների, հիմնարկությունների ու կազմակերպությունների իրավունքներն ու օրինական շահերը, ապահովում է օրինականությունը հիմնարկությունների, կազմակերպությունների, պաշտոնատար անձանց օրոճումների մեջ և քաղաքացիների վարքածու»²³⁷:

Վերլուծելով արդարադատության հասկացությունը՝ Ա.Գ. Բոյկովն անհրաժեշտ է համարել ընդօժեղ դրա հետևյալ կարևոր հատկանիշները.

1. Արդարադատությունն իրականացնում է միայն դատարանը, որն ընտրովի, կոլեկիալ, անկախ և միայն օրենքին ենթարկվող պետական մարմին է²³⁸:

2. Արդարադատությունը իրականացվում է հատուկ կարգով, դատավարական ձևերով: Ներառելով արդարադատության բոլոր ժողովրդավարական հատկանիշները՝ դատավարական ձևը ապահովում է օրոճի օբյեկտիվ, անկողմնակալ, արդարացի լուծման ամենից լայն երաշխիքների համակարգ, դատավարությանը

²³⁶ Տե՛ս *Նիաոնեթե Կի օթեթի Կաթեթե թեթի Կաթի*. *Էթաթի Եթ օթաթի*. Ի ., 1984, էջ 1047:

²³⁷ Տե՛ս *Նոթիթիթե Ի Ն*. *Էթիթ թի Կաթեթիթի օթիթիթիթի Կաթիթիթի*. Ծ.1, Ի ., 1968, էջ 14:

²³⁸ 90-ական թթ. Ռուսաստանում և ԱՊՀ մի շարք երկրներում, այդ թվում և Հայաստանում անցկացված դատական բարեփոխումները օճացին կոլեկիալության և ընտրովիության սկզբունքներից հրաժարվելու ճանապարհով: Ներկայումս Ռուսաստանում քրեական օրոճերի 40% և քաղաքացիական օրոճերի 80% քննում են դատավորները՝ միանձնյա: Հայաստանի Հանրապետությունում առաջին ատյանի դատարաններում բոլոր քրեական և քաղաքացիական օրոճերը դատավորի կողմից քննվում են միանձնյա:

²³⁴ Տե՛ս *Ծաթիթեթե Կ.Կ., Կաթիթիթի Կ.Կ.* Նոթաթի Կթ Կաթիթի... , էջ 80-81:
²³⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 82:

դատավարությունում, ընդլայնել դատարանի հնարավորությունները քրեական դատավարության մասնակիցների իրավունքների պաշտպանության ուղղությամբ, այդ թվում նաև մինչդատական փուլերում: Այդ դեպքում ծափում էր քրեական դատավարության սկզբունքների վերաբերման, դրանց ժողովրդավարական բովանդակություն հաղորդելու անհրաժեշտությունը: Բոլոր առաջարկվող վերափոխումներն այս կամ այն կերպ վերաբերում էին լիսավոր հիմնախնդրին՝ ուժեղացնել դատարանի դերը, դարձնել այն անկախ և ազդեցիկ, դատական քննությունը վերածել քրեական դատավարության կենտրոնական փուլի:

Ներկայումս դատարանի անկախության հիմնախնդիրը դրվում է ավելի լայն առումով. խոսքը ոչ միայն դատավորների անկախության և անձեռնմխելիության մասին է, այլև իշխանության երեք ճյուղերից յուրաքանչյուրի «ինքնիշխանության» մասին է, որը կոչված է ապահովել պետական իշխանության կայունությունը և նրա ենթարկումը քաղաքացիական հասարակության շահերին:

Մրցակցության սկզբունքը հետևողականորեն անցկացնելու անհրաժեշտությունը օրենսդրի առջև դնում էր քրեադատավարական օրենսդրության լուրջ վերափոխումների խնդիրը: Ամենից առաջ անհրաժեշտ էր դատարանին ազատել իրեն ոչ յուրահատուկ զործառույթներից, մասնավորապես քրեական հետապնդմանը մասնակցելուց: Խոսքը մասնավորապես, մեղադրական դատավարությանը բնորոշ դատարանի այնպիսի լիազորությունների մասին է, ինչպես քրեական զործի հարուցումը, մեղադրյալին դատի տալը, մեղադրական եզրակացության հրապարակումը, ամբաստանյալին և վկաներին առաջինը հարցաքննելու իրավունքը, զերափույն դատարանի նախաձեռնի իրավունքը՝ բողոքարկելու օրինական ուժի մեջ մտած դատավճիռները: Մեղադրանքից դատախազի հրաժարվելու դեպքում դատարանն իրավունք ուներ կայացնել մեղադրական դատավճիռ: Նշված լիազորությունները վկայում են, որ մրցակցության սկզբունքը խախտելով՝ դատարանը որոշակիորեն մասնակցում էր քրեական հետապնդմանը, ինչը անհամատեղելի էր նրա՝ որպես արդարադատության մարմնի կարգավիճակի հետ: Որոշ դատավարափետներ առաջարկում էին մրցակցության սկզբունքը տարածել նաև քրեական դատավարության մինչդատական փուլերի վրա: Բնականաբար, օբյեկտիվ պատճառների ուժով դա լրիվ չափով, ինչպես դատարանում,

իրացնել հնարավոր չէ: Խոսքը միայն նախաքննության փուլում մրցակցության որոշ տարրերի ներմուծման մասին է: Դրա համար անհրաժեշտ էր դատարանին օժտել վերահսկողական լիազորություններով, որոնց ուժով նա կարող էր ստուգել մարդու սահմանադրական իրավունքները սահմանափակող դատավարական զործողությունների օրինականությունը: Նման ձևով կառուցված դատական վերահսկողությունը դատախազական հսկողության հետ կայուն երաշխիք է օրինականության համար: Այսպիսով, մրցակցային դատավարության պայմաններում դատարանը, բացի հիմնական զործառույթից, մինչդատական փուլերում պետք է իրականացնի նաև կարևոր լրացուցիչ զործառույթ՝ դատավարության մասնակիցների սահմանադրական իրավունքները և ազատությունները սահմանափակող հիմնական դատավարական որոշումների և զործողությունների օրինականության և հիմնավորվածության նկատմամբ վերահսկողությունը:

Անցումը մրցակցային դատավարության՝ տեսության և պրակտիկայի առջև դրեց երկու սկզբունքային հարցեր, որոնց լուծումից մեծապես կախված էր դատարանի կարգավիճակը և դերը քրեական դատավարությունում: Առաջին հարցը վերաբերում էր դատական քննության ընթացքում դատարանի ակտիվության աստիճանին: Ցավոք, որոշ իտալականներ, մասնավորապես ՌԴ-ում դատական բարեփոխումների հայեցակարգի հեղինակները հակված են զերափույն հատելու մրցակցության նշանակությունը, նույնիսկ բացարձակացնելու այն՝ բուն մրցակցությունը համարելով արդարադատության լիսավոր երաշխիք²⁴⁴: Բայց դա այդպես չէ: Քրեական դատավարությունում կողմերի վեճը կարող է վեր հանել ճշմարտությունը, բայց կարող է նաև խոչընդոտել՝ կախված այն բանից, թե արդյոք կողմերը շահագրգռված են օբյեկտիվ ճշմարտության բացահայտման մեջ, թե՞ դա հակասում է նրանց շահերին: Օբյեկտիվությունը հատուկ չէ պաշտպանին, եթե դրա իրացումը հակասում է պաշտպանյալի շահերին: Նույնը կարելի է ասել նաև մեղադրողի մասին, երբ վերջինս ազատված էր դատական քննության ժամանակ օրենքների կատարման նկատմամբ հսկողությունից:

²⁴⁴ Տե՛ս *Èi í òái òèy ñóáááí íé ðáóí ði ù...*, էջ 85:

Մրցակցությունը ոչ միանշանակ արդյունք ապահովող դատական ճանաչողության լրացում է միայն: Ամեն ինչ կախված է նրանից, թե ո՞ւմ ձեռքին է այդ լրացումը, այսինքն՝ դատավորներից, նրանց կամքից, նախաձեռնությունից ու ակտիվությունից²⁴⁵: Այդպիսի ակտիվությունը չպետք է շփոթել մեղադրական թեքման հետ, որը բնորոշ էր նախկին դատարանին: Նման բնույթի ակտիվությունը թելադրված է դատարանի խնդիրներով՝ օճել կողմերին օբյեկտիվորեն և բազմակողմանի ուսումնասիրել լրացումի բոլոր հանգամանքները, պարզել ճշմարտությունը և կայացնել օրինական, հիմնավորված ու արդարացի դատավճիռ: Այն, ինչ առաջարկում են ՌԴ դատական բարեփոխումների հայեցակարգի հեղինակները՝ կողմերի վիճաբանություն պասիվ դատավորի ներկայությամբ (որն իրավունք չունի միջամտել ապացույցների ուսումնասիրության լրացմանը, պահանջել ապացույցներ սեփական նախաձեռնությամբ և այլն), կհանգեցնի այն բանին, որ այդպիսի վեճում կհաղթի ոչ թե ճշմարտությունը, այլ կողմերից մեկը, ով ավելի խորամանկ ու ճարպիկ է²⁴⁶:

Ապացույցների հետազոտման լրացումը դատարանի ակտիվության օճումն է վկայում մեկ կողմից անցկացված ՀՀ մարզային դատարանների դատավորների հարցման արդյունքները: Հարցման ենթարկվածների ավելի քան 70% օտնում են, որ դատարանը, ազատված լինելով ապացույցման պարտականությունից, պետք է իրավունք ունենա ակտիվորեն մասնակցելու ապացույցների հետազոտմանը, լրացում ճշմարտության բացահայտմանը:

Դատարանն իր ակտիվ դիրքով չպետք է պաշտպանի կողմերից ոչ մեկին: Նա պետք է իր ջանքերն ուղղի ճշմարտության որոնմանը և այդ ճանապարհին անհրաժեշտության դեպքում այս կամ այն կողմին օճություն ցույց տա հանցալրացման հանգամանքները վեր հանելու լրացում: Դատարանը չի կարող նախապես ընդունել մեղադրանքի փաստարկները, ինչպես մեկ պաշտպանել պաշտպանության կողմին: Արդարադատությունը ենթադրում է դատարանի անկողմնակալություն: Հայաստանի

Հանրապետությունում օրենսդիրը հենց այդպիսի դեր է վերաօրել դատարանին: Համաձայն քրեական դատավարության օրենսօրենքի 23 հոդվ. 4-րդ մասի՝ դատարանը կաշկանդված չէ կողմերի կարծիքներով և իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել քրեական լրացում ճշմարտությունը բացահայտելու համար: Անհրաժեշտ է նշել, որ օրենքը դատարանին չի պարտադրում մասնակցել ապացույցմանը, ինչպես նախկինում, այլ նրան իրավունք է տալիս անհրաժեշտության դեպքում, լրացում ճշմարտությունը վեր հանելու նպատակով մասնակցել ապացույցների հետազոտմանը:

Քրեական դատավարությունում դատարանի դերը և տեղը որոշելիս առաջացող երկրորդ կարևոր հարցը մրցակցության սկզբունքի լրացման սահմաններն են: Արդյոք այդ կարևոր սկզբունքը քրեական դատավարության բոլոր փուլերում է լրացում, թե՞ միայն դատական քննության փուլում: ՌԴ-ում դատական բարեփոխումների հայեցակարգի, ինչպես նաև ԱՊՀ երկրների մոդելային քրեական դատավարության օրենսօրենքի (որը կողմնորոշիչ է ծառայել ՀՀ քրեական դատավարության օրենսօրենքը մշակելիս) հեղինակները նպատակ են հետապնդում ամբողջ քրեական դատավարությունը կառուցել մրցակցության սկզբունքով: Այդ դեպքում անտեսվում են ձևավորված ավանդույթները և մինչդատական փուլերում մրցակցության ներմուծումն արժեքավորող որոշակի հանգամանքներ: Մրցակցության նկատմամբ այդպիսի լայն մոտեցումն իր օրենսդրական ամրապնդումն է ստացել ՀՀ քրեական դատավարության օրենսօրենքի ընդհանուր մասում: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսօրենքի 23 հոդվ. վերնաօրված է. «Մրցակցությունը քրեական դատավարության ընթացքում»: Բացի այդ քրեական դատավարության բոլոր սուբյեկտները բաժանված են կողմերի, և մեղադրանքի կողմը ներկայացնում են դատախազը, հետաքննության մարմինը, քննիչը, ինչը ակնհայտորեն վկայում է նախաքննության մեջ մեխանիկորեն մրցակցության սկզբունքի ներմուծման մասին: ՀՀ քրեական դատավարության օրենսօրենքի համապատասխան նորմերի և դրանց կիրառման պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ այստեղ խոսք կարող է լինել ոչ թե լրիվ մրցակցության, այլ միայն դրա առանձին տարրերի առկայության մասին, որն անհրաժեշտ է դատարանում իրական մրցակցության ապահովման համար:

²⁴⁵ Տե՛ս *Atésta A.A.* Είϊόαίόοάέυί úá ìðíáέáì ú ìðíáέòá ííáíáí Óáíέíá-íí-íðíóáññóáέύííáí éíááέñá Ðíññέέ.— Í ðíέóðíðñέáÿ è ñéáññóááíáíÿ ìðáέòééá. Í .., 1997, թիվ 2, էջ 106:

²⁴⁶ Տե՛ս *Atésta A.A.* Óðáòüÿ áéáñòü...,, էջ 67:

այլ օրենքների, դրանց համապատասխանող՝ նախաօրհի նորմատիվ հրամանաօրրի, ինչպես նաև միջազգային ակտերի կատարումը²⁵¹: Այս բնորոշումը ևս քրեադատավարական իրավունքի աղբյուրների շրջանակի հարցում չի հաղթահարում որոշակի բացթողումներ: Հայաստանի Հանրապետությունում դատական բարեփոխումներ իրականացնելու ընթացքում քրեական դատավարությունում օրինականության հասկացության նկատմամբ անհավասարակշիռ մոտեցումը վերացվեց, քանի որ քրեական դատավարության նոր օրենսգրքի մոտեցումն այդ հարցում հիմնված է քրեադատավարական իրավունքի աղբյուրների ունիֆիկացման (միասնականացման) վրա: Հայաստանի Հանրապետության 1998 թ. քրեական դատավարության օրենսգրքի 1 հոդվ. սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական օրրծերով վարույթի կարգը սահմանվում է *Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, քրեական դատավարության օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով*: Քրեադատավարական օրենսդրության աղբյուրների շրջանակի և աստիճանակարգման մասն օրենսդրական ամրագրումը, մեր կարծիքով, ունի մի շարք առավելություններ և հիմք է տալիս ձևակերպել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում օրինականության հասկացությունն իրավաիրացման առումով: *իրավակիրառ օրրծունեության օրինականությունը քրեական դատավարությունում հետաքննության մարմնի, քննիչի, քննչական բաժնի պետի, դատախազի, դատարանի և դատավարության այլ մասնակիցների կողմից Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, քրեական դատավարության օրենսգրքի և դրանց համապատասխան ընդունված օրենքների պարտադիր, ճշգրիտ և անշեղ կատարումն է*:

Օրինականության մեկնաբանումը՝ որպես իրավունքի բոլոր սուբյեկտների կողմից իրավունքի նորմերի անշեղ պահպանման պահանջ, հիմնականում ճիշտ մոտեցում է, սակայն այն միակողմանիորեն է արտահայտում օրինականության՝ որպես համալիր քաղաքական-իրավական երևույթի, բովանդակությունը և էությունը: Այս դեպքում օրինականության պահանջը, ինչպես և խորհր-

դային շրջանում, տարածվում է միայն իրավաիրացման (իրավակիրառումն) վրա: Իրավական կարգավորման համակարգն ապահովող մարմինների իրավաստեղծ օրրծունեությունն այս դեպքում դուրս է մնում օրինականության բովանդակությունից: Նախկինում օրինականության մասն հասկացությունը միակողմանիորեն էր կողմնորոշում նաև իրավաբանական պրակտիկային: Օրինականության ապահովումը լիաավորապես հանգեցվում էր վերահսկիչ ու իրավապահպան մարմինների աշխատանքին, իրավական կարգադրաօրերը խախտողների բացահայտմանը և նրանց հետաօա պատասխանատվությանը, որի հետևանքով այդ մարմինների, նույնիսկ դատարանի օրրծունեության մեջ դրսևորվում էր մեղադրական թեքումը: Օրինականության մասն հասկացումը, որ բավարարում էր ամբողջատիրական վարչաձևի պահանջումները, չի բավարարում ժողովրդավարության պահանջներին, ավելին՝ չի նպաստում իրավական պետության ձևավորմանը և ամրապնդմանը:

Օրինականության մեկնաբանումը միայն իրավաիրացման առումով իրավունքի և օրենքի նույնացման արդյունք է, երբ պետությունից ելնող ցանկացած նորմատիվ ակտ (նույնիսկ հակամարդասիրական, հետադիմական) համարվում է «իրավունք» և համապատասխանաբար պահանջում է անշեղ իրացում: Բայց չէ՞ որ այդ ակտերը, որոնք չեն համապատասխանում իրենց օրրծության պայմաններին, կարող են և չապահովել իրավական կարգավորման նպատակի իրականացումը, օրինականությունը: Ընդհակառակը, դրանք հաճախ կարող են ծնել սոցիալական լարվածություն, սահմանափակել քաղաքացիական հասարակության անդամների ազատությունը, նրանց բնական իրավունքները, թույլ տալ կամայականություններ պաշտոնատար անձանց օրրծունեության մեջ: Բացի այդ, դժվար չէ նկատել, որ օրինականության՝ վերը բերված հասկացության դեպքում շեշտը դրվում է միայն իրավունքի նորմերի իրացման վրա, իսկ դրանց բովանդակության հարցը, որը շատ դեպքերում կամային բնույթ ունի, շրջանցվում է: Հետևաբար, օրինականության՝ որպես ամբողջ իրավական համակարգի անբաժանելի որակի, իրավական պետության օրրծունեության վարչաձևի ճիշտ ըմբռնման համար էական նշանակություն ունի բուն իրավունքի նորմերի և դրանց աղբյուրների (Սահմանադրության, եմթաօրենսդրական ակտերի և այլն) բովանդակային բնութագիրը, վերջիններիս արժեքաբանա-

²⁵¹ Տե՛ս *Օրենսդրություն I. A. Nīādaī āīūā īdīāēāī ū çāēīīīīnōē è īdīēōdīdñēēē īāāçīd ā āīnōāāī ūō nōāāēyō ōāīēīāīīāī īdīōāññā. Āēññ. „, āīē. Իծ. 1āōē ā ōīdī ā 1āō-īīāī āīēēāā. I ., 1997, էջ 24:*

կան օրհնականության հիմքում պետք է դրված լինի ոչ թե ցանկացած օրենսդրություն, այլ այնպիսի օրենսդրություն, որը մարմնավորում է իրավական սկզբունքները, համամարդկային օաղափարներն ու արժեքները, մարդու պահանջ-մունքներն ու շահերը, հասարակական առաջադիմության օբյեկտիվ միտումները:

Հաղթահարելով միակողմանի մոտեցումը օրհնականության հասկացության (որպես միայն իրավական նորմերի իրացման պահանջ) նկատմամբ՝ արդի իրավափիտությունը այն դիտարկում է ավելի լայն իմաստով, ձևակերպելով օրհնականության հասկացության հետևյալ ընդհանուր բնորոշումը՝ օրհնականությունը հասարակության պետաիրավական ձևի կազմակերպական կատարելաօրծման օրծընթացը բնութաօրող և սոցիալական արդարության օաղափարը օործող օրենսդրության խիստ և անշեղ պահպանման ու կատարման ճանապարհով իրացնող քաղաքական իրավական երևույթ է²⁵²:

Մեկ ուրիշ մոտեցում է կա Վ.Վ. Կլոչկովի՝ օրհնականությանը տրված բնորոշման մեջ, համաձայն որի՝ օրհնականությունը «հասարակության կողմից պետությանը և իրավունքին, իրավունքի կողմից պետությանը և հասարակական հարաբերությունների այլ մասնակիցներին ներկայացվող փոխկապակցված պահանջների համակացություն է, այդ պահանջների արտացոլումն ու արտահայտումն է հասարակական, ներառյալ նաև քաղաքական և իրավական փոխակցության ու օրենսդրության մեջ, այդ պահանջների իրացումն է սոցիալական պրակտիկայում ու հասարակական հարաբերությունների մասնակիցների օործունեության մեջ»²⁵³:

Ահա թե ինչու Մ.Ե. Տոկորևան առաջարկում է քրեական դատավարությունում օրհնականության հասկացության մեջ առանձնացնել երկու հիմնական առումներ՝

1) օրհնականությունը՝ որպես իրավական կարօավորման խնդիրները և սկզբունքները սահմանող, իրավահարաբերությունների մասնակիցների իրավունքները և պարտականությունները,

²⁵² Տե՛ս Օաիձեյ՝ աի՛նոաձոձոա է իձաա. Էձոձի՛ էաեձե. Ի՛ իձաա. **Ի.Է. Ի՛ աձոճիձա է Ա. Ա. Ի՛ աեւեր. Ի՛ ., 1999, էջ 515:**

²⁵³ Տե՛ս **Էեր+երձ Ա.Ա. Ի՛ աձիձիձեյ է իձիձեձ էձո+աիձեյ միձիձիձեյ ճաիձիձե. — Ա՛ էի.:** Նիձիձիձեձ ճաիձիձիձեձ ա՛ ձիձիձեձիձեձ Օաձաձաձեձ (1993-1995 ձձ.). Ի՛ ., 1995, էջ 9-10:

ինչպես նաև քրեական օործի հարուցման և նախնական քննության փուլերում վարույթը կարօավորող իրավական նորմերի համակարօի կատարյալություն, ինչը նախորոշում է այդ համակարօը կազմող նորմերի ներքին համաձայնեցվածությունը, դրանց համապատասխանությունը քրեադատավարական իրավունքի նորմերի ամբողջ համակարօին, պետության ամբողջ իրավական համակարօին և այլ պահանջներին.

2) օրհնականությունը՝ որպես օործող իրավական նորմերի կատարում (իրացում) քրեական դատավարության մինչդատական փուլերի մասնակիցների կողմից և ամենից առաջ պետական մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից, որոնց պետության անունից հանձնարարված է քրեական օործով վարույթը, հսկողությունը և վերահսկողությունը, այսինքն՝ հետաքննության մարմնի, քննիչի, քննչական բաժնի պետի, դատախազի և դատաբանի կողմից²⁵⁴:

Նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության 1998 թ. քրեական դատավարության օրենսօրքի 1 հոդվ. վերը նշված ձևակերպումը և իրավաօետների դատողությունները օրհնականություն հասկացության բազմակողմ բնույթի վերաբերյալ՝ մենք կարող են արձանաօրել, որ ինչպես ամբողջ իրավական համակարօում, այնպես էլ քրեական դատավարությունում օրհնականությունը պետք է դիտարկել որպես համակարօային կազմավորում, որը բարդ և բազմակողմանի երևույթ է, պարունակում է մի շարք տարբեր առումներ:

Նախ՝ այն ենթադրում է քրեադատավարական օրենսդրության իրավական բնույթը, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Սահանադրությունը, քրեական դատավարության օրենսօիրքը և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքները պետք է ճիշտ արտահայտեն իդեալական իրավունքը, իրավական սկզբունքները, համամարդկային արժեքները, ազատ, ժողովրդավարական պետության իրավական իդեալները: Իրավունքի տեսության մեջ օրհնականությունն այդ իմաստով ընդունված է ան-

²⁵⁴ Տե՛ս **Օրեձաձա Ի՛ Ա. Նիձաիձիձիձ աիձիձիձ իձիձեձիձ ճաիձիձիձեձ է իձիձեձիձիձեձ է իձաճիձ...**, էջ 19-20:

կարճը կոչված է իրականում կենսաօրոճելու օրինականության լազարիարներն ու հիմունքները և ներառում է ինչպես վերահսկողությունը և հսկողությունը քրեադատավարական իրավունքի աղբյուրների բովանդակության նկատմամբ՝ իդեալական իրավունքին համապատասխանելու տեսանկյունից, այնպես էլ օրենքների օրոճողության նկատմամբ վերահսկողության և հսկողության՝ այսինքն՝ իրավակիրառ օրոճունեության ոլորտում օրինականության պահպանության համակարգը: Օրինականությունը կենսաօրոճելու համակարգը (օրինականության սկզբունքի իրացման կառուցակարգը)՝ որպես օրինականության բովանդակության երրորդ տարր, ինչպես ամբողջ իրավական համակարգում, այնպես էլ քրեական դատավարությունում կոչված է ապահովել իրավաստեղծ և իրավաիրացնող օրոճունեության մեջ իրավունքի և օրենքի խախտումների բացահայտումը, դրանց անհապաղ կանխումը և վերացումը, իրավունքի և օրենքի պաշտպանության միջոցները օրոճի դնելու ճանապարհով վերականգնել իրավունքը և իրավակարգը, երաշխավորել իրավունքի և օրենքի խախտման մեջ մեղավոր անձանց և մարմիններին պատասխանատվության ենթարկելը:

Օրինականությունը քրեական դատավարությունում ապահովվում է դատավարության այնպիսի կառուցով, որի դեպքում յուրաքանչյուր հետաքննարկում ստուգվում է նախորդ փուլերում ընդունված որոշումների օրինականությունը և հիմնավորվածությունը: Օրենքի խախտումների հայտնաբերման դեպքում ապահովվում է դրանց վերացմանն ուղղված միջոցների ձեռնարկումը: Ինչպես ողջ իրավական համակարգում, այնպես էլ քրեական դատավարությունում օրինականության իրացման կարևոր երաշխիքներ ու միջոցներ են համարվում սահմանադրական վերահսկողության և օրենսդրական նախաձեռնության ինստիտուտները, դատախազական հսկողությունը և դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ, քրեական դատավարության մասնակիցների օրոճունեությունը, արտաքին վերահսկողության ձևերը՝ զանվածային տեղեկատվության միջոցները, հասարակայնությունը, փաստաբանությունը և այլն:

Քրեական դատավարությունում օրինականության վիճակը «իրավական օրինականության» տեսանկյունից մենք վերլուծեցինք դատավարության սահմանադրական հիմունքները քննարկելիս: Ինչպես երևում է այդ վերլուծությունից, Հայաստանի Հան-

րապետությունում իրավական օրինականության ապահովման օղջություն ունեցող կառուցակարգը անարդյունավետ է օրոճում: Հենց իրավական օրինականության վիճակն է մեզ թելադրում դատախազությանը ճանաչել որպես օրինականության նկատմամբ արտաքին հսկողության լիիրավ մարմին, ներառյալ նաև իրավական օրինականության նկատմամբ հսկողությունը: Օրինականության վարչաձևի իրական ապահովման շահերը թելադրում են դատախազությունը դիտարկել ոչ միայն որպես Սահմանադրությամբ սահմանված ոլորտում իրավաիրացնող օրոճունեության նկատմամբ հսկողություն իրականացնող մարմին, այլև նույն ոլորտում իրավական օրինականության նկատմամբ հսկողության մարմին: Իրավական օրինականությունը քրեական դատավարությունում իրացնելու համար նպատակահարմար է դատախազությանը օրենսդրական նախաձեռնության և Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի դիմելու իրավունքներ տալու ճանապարհով ստեղծել իրավական օրինականության նկատմամբ հսկողության կառուցակարգը:

Դատաիրավական բարեփոխումների հիմնական խնդիրը պետական կառուցակարգում անկախ և ազդեցիկ դատական իշխանության հիմնադրումն էր, դատարանի օերակայության ապահովումը: Սակայն, ինչպես իրավագիտորեն նշում է Ա.Բ. Բոլյովը, «Դատաիրավական բարեփոխման միակ նպատակը դա չէր: Կային նաև այլ կարևոր սոցիալ-իրավական նպատակներ՝ երկրում ստեղծել օրինականության իրական երաշխիքներ, երաշխավորել անհատի և քաղաքացիական հասարակության իրական, այլ ոչ թե թվացյալ պաշտպանվածություն, իրավական միջոցներով ապահովել արդյունավետ պայքար հանցավորության դեմ: Պարզ է, որ դատական իշխանությունը չի կարող մասնակցել այդ խնդիրների լուծմանը առանց երկրի իրավապահպան համակարգի, մասնավորապես՝ դատախազության վրա հենվելու»²⁵⁷: Այսպիսով, դատական համակարգի բարեփոխումնան հետ միասին հրատապ էր նաև դատախազության ինստիտուտի բարենորոգումը, իրավական պետության կառուցակարգի շրջանակներում դրա կարգավիճակի որոշումը:

Դատախազությունը, լինելով սահմանադրական մարմին, պետական կառուցակարգում կատարում է կարևոր օրոճառույթ-

²⁵⁷ Տե՛ս *Атсѣла А.А.* *Общая теория...*, էջ 203:

ներ, որոնք պետք է սահմանվեն հիմնական օրենքով: Հայաստանի Հանրապետության 1995 թ. Սահմանադրությունը, ի տարբերություն ՌԴ Սահմանադրության, սահմանել է ոչ միայն դատախազության կազմակերպման հիմունքները, այլև՝ նրա սահմանադրական լիազորությունները: Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 103 հոդվ. դատախազությունը՝

1) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով հարուցում է քրեական հետապնդում,

2) հսկողություն է իրականացնում նախաքննության և հետաքննության օրինականության նկատմամբ,

3) դատարանում պաշտպանում է մեղադրանքը,

4) պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան,

5) բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները,

6) հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման նկատմամբ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 103 հոդվ. 3-րդ մասը սահմանում է, որ դատախազությունը լիազորված է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝ դատախազության մասին օրենքի հիման վրա:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 103 հոդվ. իմաստը թույլ է տալիս արձանագրել, որ Հայաստանի Հանրապետությունը այն երկրներից է, որոնցում դատախազությունն առանձնացված է որպես լիազոր դատախազի կողմից ղեկավարվող անջատ համակարգ²⁵⁸, որ դատախազության, որպես

²⁵⁸ Արևմտաեվրոպական երկրներում դատախազությունը սովորաբար չի մտնում սահմանադրական ինստիտուտների համակարգի մեջ: Դատախազության կարգավիճակը կարգավորվում է նրա կազմակերպման մասին հատուկ օրենքով և քրեադատավարական օրենսդրությամբ: Բացի այդ, ելնելով պետական մարմինների համակարգում դատախազության լիազորված տեղից, կարելի է առանձնացնել չորս խումբ երկրներ, *նախ*՝ երկրներ, որտեղ դատախազությունը լիազորվում է արդարադատության նախարարության կազմում, *երկրորդ*՝ երկրներ, որտեղ դատախազությունը ընդգրկված է դատական կորպուսի (մախտրատուրայի) կազմում և դատարաններից կից է, *երրորդ*՝ երկրներ, որտեղ դատախազությունն առանձնացված համակարգ է և ենթարկվում է խորհրդարանին, *չորրորդ*՝ երկրներ, որտեղ դատախազությունն ընդհանրապես լիազորում չունի (տե՛ս *Επίπλοδοδείοί (αί ποσάδοδοί) (αί ποσάδοδοί) ιδάαι γάδοάάειοδ ποδοί. 0.1-2. Ι άάαυ +άάο. Ι ., 1996, էջ. 647-650.*

սահմանադրական մարմնի, կարգավիճակը բազմաործառության է, իսկ նրա սահմանադրական լիազորությունների շրջանակը Սահմանադրության 5 հոդվ. և 103 հոդվ. 3-րդ մասի ուժով համարվում է սպառնիչ:

Դատախազը դատավարության մասնակից է, որի լիազորությունները տարածվում են դատավարության բոլոր փուլերի վրա և դրանցից յուրաքանչյուրում նա պարտավոր է ձեռնարկել օրենքով նախատեսված միջոցներ օրենքի խախտումները վերացնելու համար: Եթե հետևենք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 103 հոդվ. դատախազության լիազորությունների թվարկման կարգին, ապա կտեսնենք, որ դրանք սկսվում են հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողությունից և ավարտվում են պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման նկատմամբ հսկողությամբ: Դատախազության՝ Սահմանադրության մեջ թվարկված համարյա բոլոր լիազորությունները միանշանակորեն և պարզ պարունակում են «օրինականության նկատմամբ հսկողություն» ձևակերպումը կամ ենթադրում են այդ: «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24, 25, 27, 28, 29 հոդվածներում ևս այդ լիազորությունները մեկնաբանվում են որպես հսկողություն օրինականության նկատմամբ կամ արձանագրում օրինականության խախտման դեպքում: Միայն Սահմանադրության 103 հոդվ. երկրորդ մասի երրորդ կետում է խոսվում դատարանում մեղադրանքը պաշտպանելու մասին: Այդպիսի տրամաբանությունն անհետևողական է: Օրինականության նկատմամբ հսկողության սահմանադրական մարմինը չի կարող Սահմանադրությամբ ամրագրված բոլոր ոլորտներում և դատավարության փուլերում իրականացնել հսկողություն օրինականության նկատմամբ, իսկ դատական փուլերում վերածվել միակողմանի մեղադրական մարմնի և դատարանում իրացնել միայն քրեական հետապնդման լիազորություն՝ մեղադրանքը պաշտպանելու, դատարանի աճօրինական որոշումները բողոքարկելու ճանապարհով: Այստեղից հետևում է, որ դատարանում մեղադրանքի պաշտպանությունը համարվում է դատախազի կողմից նախնական քննության փուլում օրինականության նկատմամբ հսկողության լիազորության խորհրդարանական շարունակությունը, և դրանով է յուրահատուկ տեսքով՝ դատարանում մեղադրանքը պաշտպանելով: Ահա

նադրությամբ սահմանված ոլորտներում օրինականության ակատմամբ հսկող մարմին: Եթե օրինականության սկզբունքը համարվում է քրեական դատավարության լիարժեք սկզբունքը, ապա դատախազությունը, որի սահմանադրական կոչումը օրինականության ակատմամբ հսկողությունն է, հատուկ տեղ է զբաղեցնում պետական մարմինների, ներառյալ նաև քրեական դատավարությանը մասնակցող մարմինների համակարգում: Դատախազության հատուկ կարգավիճակը արտահայտվում է նրանում, որ նա բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող օրենքի՝ Սահմանադրության ուժով հսկողություն է իրականացնում օրինականության ակատմամբ՝ Սահմանադրությամբ սահմանված ոլորտներում: Միաժամանակ նա՝ որպես պետության մարմին և դատավարության մասնակից, պետք է զործի օրենքի շրջանակներում և օրենքին համապատասխան: Հենց Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ դատախազությանը վերաբերող դրույթները հերքում են փորձերը դատախազությունը կամ դատախազին քրեական դատավարությունում միայն որպես «մեղադրանքի կողմ», «մեղադրանքի մարմին», «մեղադրական իշխանություն» ներկայացնելու փորձերի հիմնավորվածությունը:

Որպեսզի պատկերացնենք, թե ինչքան լայն են իրավական պետության կառուցակարգում, իշխանությունների տարանջատման համակարգում դատախազության տեղի և դերի մասին ժամանակակից ռադիկալները, բավական է նշել, որ որոշ հեղինակներ, էլնելով որոշ երկրների պետական մարմինների համակարգի առանձնահատկություններից, դատախազությունը դիտարկում են այսպես կոչված՝ վերահսկող իշխանության մարմնավորում, դրա համակարգի տարր²⁶¹: Հետխորհրդային տարածքում նախ լուրի բարձրացրեց դատախազական հսկողության ոլորտի նեղացման միտումը, սակայն վերջին տարիներին, հաղթահարելով «ժողովրդավարական ռեֆորմությունը», առաջ քաշվեցին բավականին լայն հայացքներ և հայեցակարգեր պետական կառուցակարգում դատախազության դերի և նշանակության, դատական իշխանության հետ նրա փոխհարաբերությունների մասին: Օրինակ, Ի.Ֆ. Դեմիրճյանը դատախազությունը դիտարկում է «որպես հատուկ պետական կառույց, որն իրականացնում է «հակակշիռ-

²⁶¹ Տե՛ս *xedeei A.A.* *Āi nōāāđñōāi āāāāi ēā. Ī ., 1999, էջ 358-375:*

ների և զսպումների» զործառույթ իշխանությունների տարանջատման համակարգում և նպաստում է դատական իշխանության օրենքի ու արդարության շրջանակներում զործելուն...»²⁶²: Ժամանակակից դատավարաբանների մեծ մասը կողմնակից է դատախազության՝ որպես պետության բազմազործառույթային մարմնի, ռադիկալի²⁶³:

Քրեական դատավարությունում կարևորագույն զործառույթներից է օրինականության ապահովումը, որի իրացման համար ստեղծված է հատուկ մարմին՝ դատախազություն: Նույնիսկ եթե վերացնենք այդ մարմինը, միևնույն է, զործառույթը մնում է: Դատախազության համար հսկողական զործառույթը մենք դիտարկում ենք որպես հիմնական: Դատախազության մյուս զործառույթները բխում են հսկողականից և չպետք է հակասեն դրան: Քրեական դատավարությունում դատախազությունը համարվում է բազմազործառույթային մարմին, որը հսկողական զործառույթի հետ միասին իրականացնում է նաև քրեական հետապնդում, դատավարական ղեկավարում, մեղադրանքի պաշտպանություն դատարանում: Հսկողական զործառույթը չի կորցնում իր նշանակությունը և կշիռը նաև քրեական դատավարության դատական փուլերում: «Դատարանի զործունեության ակատմամբ արտաքին վերահսկողությունն այս կամ այն չափով իրականացնում են շահագործված անձինք, հասարակայնությունը, զանվածային տեղեկատվության միջոցները: Սակայն այդ վերահսկողությունը պատահական է, հատվածական և ոչ մշտական: Արդարադատության օրինականության և արդարադատության ակատմամբ մասնափոխական արտաքին վերահսկողությունը պետք է իրականացնեն դատախազությունը և փաստաբանությունը..., սակայն փաստաբանությունը ազդարարում է միայն այն խախտումների մասին, որոնք չեն նսեմացնում նրա պաշտպանչալի շահերը... Փաստաբանի ջանքերի սահմանները նախորոշված են հաճախորդի կամքով և հոնորարով... Օրենքների խախտումների (ոչ էլ որ թույլ

²⁶² Տե՛ս *Āai ēāiā E.Ō.* *Điēü nōāāāiē āēāñōē ā iāāñiā=āiēē çāēiīiīñōē óāiēiāiīāi iđāñēāāiāāiēy. — Ā ēi.: Çāēiīiīñōü ā ĐŌ. Ī ., 1998, էջ 154:*

²⁶³ Տե՛ս *Āiēēiā A.Ā.* *Ōđāōüy āēāñōü...: Ī đīāēāi ū ñiāāđōāiñōāiāāiēy iđi-ēōđiđñēiāi iāāçiđā (ē 275-ēāōēþ Đīññēēñēiē iđiēōđāōōđū)...: Ī đīēōđāōō-đā ā iđāāiāi i āiñōāāđñōāā...:*

52 և 53 հոդվածները, քանի որ դրանք շարադրված են առանց քրեական դատավարությունում դատախազի հիմնական և լրացուցիչ լիցենզիայի հարաբերակցության հաշվառման: Այդ ընթացքում առաջին պլան պետք է մղվեն օրինականությանն և կատարմանը հսկողությունը և դատախազի այն լիազորությունները, որոնք ուղղված են այդ լիցենզիայի իրացմանը: Երկրորդ պլանում պետք է տեղ լիցենզիայի քրեական հետապնդման և դատավարական ղեկավարման լիցենզիաները, որոնք իրականացվում են դատախազի հսկողական լիցենզիայի շրջանակներում՝ որպես այն լրացնող լիցենզիաներ: Այդպիսի մոտեցման դեպքում «դատախազի կողմից մեղադրական եզրակացության հաստատումը և դատարանում որպես պետական մեղադրող մասնակցելը համարվում է նախաքննության փուլում նրա հսկողական լիցենզիայի տրամաբանական ավարտը, ուղղված է նախաքննության արդյունքների իրացմանը և չի հակասում դրան»²⁶⁷:

Թյուրիմացության տեղիք է տալիս դատախազի վիճակը վճարել դատարանում՝ ըստ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի: Օրենսգրքի 418 հոդվ., կարճավորելով վճարել ատյանում լիցենզիայի կարգը, դատավարության մասնակիցների վերաբերմամբ սահմանում է՝

— բողոք բերած անձն իրավունք ունի ներկա լինել վճարել դատարանի նիստին (418 հոդվ. 4-րդ մաս),

— բացատրություններ տալու անհրաժեշտության դեպքում վճարել դատարանի նիստին կարող են կանչվել բողոք բերած անձը, ինչպես նաև դատավարության մասնակիցները, որոնք ծանուցվում են նիստի ժամանակի և տեղի մասին: Նրանց չներկայանալն արգելք չէ լիցենզիայի համար (418 հոդվ. 5-րդ մաս):

Քրեական դատավարության օրենսգրքի այս դրույթից պարզվում է, որ վճարել ատյանի նիստերը կարող են կայանալ նաև առանց դատախազի մասնակցության, քանի որ օրենքը վճարել ատյանին չի պարտադրում լիցենզիայի դատախազին ծանուցել վճարել վարույթի իրականացման մասին: Նույնիսկ մասնակցության դեպքում նա վերածվում է հասարակ դիտորդի²⁶⁸:

²⁶⁷ Տե՛ս *Ὁρεάδαα Ι .Α.* Νῆαδαὶ ἀίίῖα ἰδιῖαὶ ὠ ζαῖίίίῖῖὸε è ἰδιῖὸδῖῖῖῖ-ἔεé ἰῖῖῖῖῖ... Էջ 67:

²⁶⁸ Այս մասին մանրամասն տե՛ս սույն աշխատության 7-րդ լիսի 3-րդ պարագրաֆում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 103 հոդվ. 2-րդ մասի 6-րդ կետը սահմանում է, որ դատախազությունն իրականացնում է հսկողություն պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման նկատմամբ: Սակայն ոչ դատախազության մասին օրենքը, ոչ էլ քրեական դատավարության օրենսգրքը չեն նախատեսում դատախազի մասնակցություն դատավիճակների կատարման փուլում, ինչը կարելի է համարել ակնհայտ բացթողում, քրեական դատավարության այդ փուլում դատախազի վիճակի խեղաթյուրում: Քանի որ հսկողությունը պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման նկատմամբ համարվում է դատախազության սահմանադրական լիազորությունը, ապա այդ լիազորության արդյունավետ իրացման համար դատախազը պետք է դառնա դատական որոշումների կատարման փուլի մասնակից: Ուրեմն անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել 1998 թ. քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կատարողական վարույթի կառուցում:

Ակնհայտ է, որ հանցավորության դեմ պայքարն իրականացվում է մի քանի սերտորեն փոխկապակցված ձևերով, որոնցից մեկն էլ օպերատիվ-հետախուզական լիցենզիայի է: Վերջինիս խնդիրն է՝ քննության մարմիններին ապահովել դատավարական և ամենից առաջ քննչական լիցենզիայի ունեցողների ավելի արդյունավետ կատարմանը նպաստող տեղեկատվությամբ: Օպերատիվ-հետախուզական լիցենզիայի շուրջափակումը բնույթով որոշակի բարդություններ է առաջացնում դրա իրավական հիմքերի մշակման, դրա կատարման օրինականության երաշխիքների հուսալի համակարգի ստեղծման համար: Հետևաբար օպերատիվ հետախուզական լիցենզիայի օրինականության երաշխիքներից մեկն էլ կարող է դառնալ դատախազական հսկողությունը: Սակայն ո՛չ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, ո՛չ «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, ո՛չ քրեական դատավարության օրենսգրքը օպերատիվ հետախուզական լիցենզիայի շուրջափակումը չեն դարձրել դատախազական հսկողության առարկա: Կարծում ենք՝ այս ակնհայտ և անվիճելի բացթողումը պետք է վերացվի, ինչպես դա արված է ՌԴ-ում: ՌԴ դատախազության մասին օրենքի 2 և 25 հոդվածները օպերատիվ-հետախուզական լիցենզիայի շուրջափակումը իրականացնող մարմինների կողմից օրենքների կատարման նկատմամբ հսկող

Քրեադատավարական լուրջությունները մոտավորապես նույն կերպ են բնորոշում Վ.Մ. Սավիցկին և Ա.Մ. Լարինը²⁷¹: Սակայն լուրջության մեջ կան քրեադատավարական լուրջություններ հասկացության ավելի ծավալուն բնորոշումներ: Մեր կարծիքով, այդ հասկացության առավել լրիվ բնորոշումը սովել է Ն.Ա. Յակուբովիչը, որն առաջարկում է քրեադատավարական լուրջությունները դիտարկել որպես «քրեական դատավարության մասնակիցների կողմից իրականացվող լուրջություն, որի բնույթը և բովանդակությունը, կախված դատավարության մասնակիցների դատավարական վիճակից (դերից և կոչումից), սահմանվում են օրենքով, և որը ուղղված է նրանց առջև կանգնած քրեադատավարական խնդիրների լուծմանը, դատավարական շահերի պաշտպանությանը կամ դատավարական պարտականությունների կատարմանը»²⁷²: Այնուամենայնիվ, լրիվ համաձայնել Ն.Ա. Յակուբովիչի այս բնորոշման հետ չենք կարող, որովհետև, մեր կարծիքով, լուրջությունը լուրջությունն է, այլ լուրջության ուղղություն: լուրջությունը հավաքական հասկացություն է, որ բնութագրում է սուբյեկտի լուրջությունն ամբողջությամբ: Այդ ամբողջության մեջ կարելի է առանձնացնել որոշակի ուղղություններ՝ լուրջություններ:

Քրեական դատավարությունում իրավակիրառ լուրջությունը հիմնված է նրա մասնակիցների կողմից առանձին լուրջությունների իրականացման և դրանց տարանջատման վրա: Գործառնության սկզբունքը, ըստ Ա.Բ. Սոլովյովի, «քրեական դատավարության համար ունի նույն հիմնարար նշանակությունը, ինչ իշխանությունների տարանջատման սկզբունքը քաղաքակիրթ պետության համար»²⁷³:

²⁷¹ Տե՛ս *Нааөөөө А.І. . Айноаадноааі і і а і ааеі аі еа а ноаа. І ., 1971, էջ 42: **Еадеі А.І. .** Ооіеөөй і діоаһноаеуі і аі діөеі аі аһоаа е і діөөдідһеөө і аа-сід...», էջ 75:*

²⁷² Տե՛ս *Бөоіае-І.А. .* І діоаһноаеуі ոа Ооіеөөө һеааіааөаеу.— А еі.: І діаеаі ո і діаааадеөаеуі і аі һеааһоаеу а оаіеіаі ո ոаі ո діөсәі аһоаа. І ., 1980, էջ 15:

²⁷³ Տե՛ս *Ніеіауаа А.А. .* Аөөөаеуі ոа і діаеаі ո і діөөдідһеіаі і аасідә сә сәеі і і ոуі і діаааадеөаеуі і аі діаһнеааі ааі еу.— А һа.: Нөаааі ау діөі ді а е і діаеаі ո оаіеіаі ո ոаі ո діөсәі аһоаа. І ., 1995, էջ 104:

Քրեական դատավարության տեսության մեջ դատավարական լուրջությունների վերաբերյալ արտահայտված տեսակետների համեմատական վերլուծությունը թույլ է տալիս դրանք դասակարգել երկու սկզբունքորեն տարբեր մոտեցումների շարքում, որոնցից յուրաքանչյուրը յուրովի է լուծում քրեական դատավարությունում լուրջությունների քանակի և դերի հիմնախնդիրը: Առաջին մոտեցման կողմնակիցները, հետևելով Մ.Ս. Ստրոկովիչին, առանձնացնում են քրեադատավարական լուրջության հիմնական ուղղությունների հետ կապված միայն երեք լուրջություններ՝ մեղադրանք, պաշտպանություն և լուրջների լուծում²⁷⁴:

Երկրորդ մոտեցման կողմնակիցները, ովքեր, ի դեպ, ներկայումս մեծամասնություն են կազմում, հակված են այն տեսակետին, որ քրեադատավարական լուրջության լուրջառնության կառուցվածքը չի սպառվում նշված լուրջություններով: Այսպես, Ն.Ա. Յակուբովիչն առաջարկում է դատավարական լուրջությունները բաժանել հիմնականների և լրացուցիչների: Այդ դեպքում դատավարական լուրջությունները կկրեն հիմնական բնույթ, եթե այդ մասնակցի դատավարական լուրջության ուղղվածությունը որոշվում է որևէ խթանից հիմքով՝ քրեական դատավարության խնդիրներով, կամ սուբյեկտիվ դատավարական շահով, կամ դատավարական պարտականությունների կատարումով: Միաժամանակ, մասնակիցը բացի հիմնական լուրջություններից կարող է կատարել նաև լրացուցիչ լուրջություններ: Վերջիններս կամ ածանցված են հիմնականներից, կամ դրանց իրականացումը պայմանավորված է դատավարության այլ մասնակիցների հետևյալ հիմնական լուրջություններին իրացնելիս աջակցություն ցույց տալու պարտականությամբ²⁷⁵:

Հիմնական և լրացուցիչ լուրջությունների առանձնացումը պայմանավորված է ամբողջ քրեադատավարական լուրջության բազմալուրջառնության բնույթով, որի ուժով դրա հիմնական մասնակիցները սովորաբար կատարում են մի քանի քրեադատա-

²⁷⁴ Տե՛ս *Нөдїаїае-І.Н. .* Еөдһ һі ааөһеіаі оаіеіаіаі ո і діоаһна. 0.1, І ., 1968, էջ 188-200: *Нөдїаїае-І.Н. .* Оаіеіаіа і діаһеааіааі еа а һі ааөһеіаі оаіеіаі ո і діоаһна. І ., 1951, էջ 15: *І і діаеіаеаө Б.І. .* І һі іаі ոа оаі-еіаі ո-і діоаһноаеуі ոа Ооіеөөө. Бді һеааеу, 1976, էջ 5-23: *І ааеі і а А.І. .* І а оаіеіаі ո-і діоаһноаеуі ոа Ооіеөөө.—І діаіааааі еа, 1973, թիվ 5, էջ 74-76 և այլն:

խաքննության ակտմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասն ամրաօրում է նախաքննության և հետաքննության ակտմամբ դատավարական ղեկավարում իրականացնելիս դատախազի բացառիկ լիազորությունները, իսկ այդ հոդվածի 3-րդ մասը թվարկում է նախաքննության և հետաքննության ակտմամբ դատավարական ղեկավարումը իրականացնելու դատախազի այլ լիազորությունները: Քննության դատավարական ղեկավարման օրծառույթի հակառակորդները օտնում են, որ դատախազի և քննչական բաժնի պետի կողմից իրականացվող դատավարական ղեկավարումը սահմանափակում է քննիչի դատավարական ինքնուրույնությունը, հետևաբար, անթույլատրելի է: Այս հարցադրմանը կարելի է համաձայնել միայն քննչական բաժնի պետի մասով, քանի որ դատախազի կողմից հսկողական օրծառույթի իրականացումը օրծանականում անհնարին է առանց դատավարական ղեկավարման: Քննչական բաժնի պետն իրեն ենթակա քննիչների ակտմամբ պետք է իրականացնի միայն կազմակերպական և վերահսկողական լիազորություններ, իսկ դատավարական ղեկավարման հնարավորությունը նրա կողմից պետք է բացառվի: Մեր կարծիքով դրանով իսկ կապահովվի քննիչի դատավարական ինքնուրույնությունը:

Ա.Գ. Խալիուլիյնը հիմնավորում է նաև այնպիսի լրացուցիչ դատավարական օրծառույթների առանձնացումը, ինչպիսիք են քրեադատավարական օրծուներության ապահովումը, քրեական դատավարության իրականացմանն օժանդակելը և իրավական օրծություն ցույց տալը:

Մինչև այժմ քննարկված դատավարական օրծառույթների համակարգում չի տեղավորվում քրեական դատավարության այլ մասնակիցների՝ վկաների, մասնաօրծների, թարգմանիչների, փորձաօրծների և ընթերակաների օրծուներությունը, որովհետև դատավարության այս մասնակիցները չունեն իրենց շահերը, անձնապես շահաօրծոված չեն օրծի ելքով: Նրանց օրծուներությունն ուղղված է քրեական դատավարության իրականացմանն օժանդակելուն:

Պաշտպանի օրծուներությունը բազմաօրծառույթային է: Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ նա ոչ միայն իրականացնում է կասկածյալների, մեղադրյալների և ամբաստանյալների իրավունքների և օրծնական շահերի պաշտպանությունը, այլև նրանց

ցույց է տալիս իրավաբանական օրծություն, որը կարող է դուրս օրծ մեղադրանքից պաշտպանվելու շրջանակներից: Իրավաբանական օրծություն ցույց տալու օրծառույթի ինքնուրույնության մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ այդ օրծությունից կարող են օրծվել քրեական դատավարության տարբեր մասնակիցներ, այդ թվում նաև նրանք, ովքեր օրծում չունեն սեփական շահեր, օրծնակ՝ վկաները:

Դատավարության մասնակիցների թվում հատուկ խումբ են կազմում դատական միտերի քարտուղարը, դատական ակտերի հարկադիր կատարման տեսչության պաշտոնատար անձինք, որոնց օրծառույթը քրեական դատավարությունում կարելի է բնութագրել ոչ այլ կերպ, քան քրեադատավարական օրծուներության ապահովում²⁸⁷:

Այսպիսով, քրեադատավարական օրծառույթների համակարգում հիմնարար, հիմնական և լրացուցիչ օրծառույթների առանձնացումը թույլ է տալիս ավելի լրիվ և բազմակողմանի ուսումնասիրել այս կարևոր իրավական հիմնախնդիրը, ինչպես նաև նախադրյալներ է ստեղծում քրեական դատավարությունը ավելի արդյունավետ իրականացնելու համար:

§ 2. Պաշտպանության օրծառույթը և պաշտպանության իրավունքը քրեական դատավարությունում

Անկախության հռչակումից հետո ժողովրդավարական վերափոխումները, ՀՀ նոր Սահմանադրության ընդունումը, որն առաջնայնությունը տալիս է անհատի իրավունքներին ու ազատություններին, ամրաօրծում է յուրաքանչյուրի՝ իր իրավունքները և ազատությունները օրծնքով չար օրծված բոլոր միջոցներով պաշտպանելու, իրավաբանական օրծություն ստանալու, ինչպես նաև ձերբակալման, կալանավորման, կամ մեղադրանքի առաջադրման պահից պաշտպան ունենալու իրավունքը, անհրաժեշտ դարձրին, նոր իրողություններից ելնելով, արժեքավորել պաշտպանության օրծառույթը և պաշտպանության իրավունքը քրեական դատավարությունում, կատարելաօրծել այդ հարաբերությունները կարգավորող օրծնադրական դրույթները:

²⁸⁷ Տե՛ս *Ὁ ἀεὶ ἐὸς εἶ Α.Α. Ἰ πὸ ἰ ἀπὸ ἀεὶ ἐὰ ὀ δὲ ἐὸ δὲ...*, էջ 21:

նեության զործառության տարանջատումը, ինչպես նաև պաշտպանության զործառության բովանդակությունը, պաշտպանության կողմում հանդես եկող սուբյեկտների շրջանակը, նրանցից յուրաքանչյուրի կարգավիճակը քրեական դատավարությունում: Քննարկվող հիմնախնդիրների կապակցությամբ քրեադատավարական նոր օրենսդրությունը իր նախորդի համեմատ աչքի է ընկնում որոշակիությամբ, պաշտպանության զործառության հետ առնչվող մի շարք հասկացությունների ամրապնդմամբ, այսինքն՝ նրանում պաշտպանության զործառության առնչությամբ առաջացող հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումը իրավաբանական տեխնիկայի տեսանկյունից ավելի կատարյալ է, ինչը կարելի է նահատել որպես քրեական դատավարությունում անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության լրացուցիչ երաշխիք: Այսպես, քրեական դատավարության նոր օրենսդրության 23 հոդվ. 1-ին և 2-րդ մասերը սահմանում են, որ **քրեական դատավարությունն իրականացվում է մրցակցության սկզբունքի հիման վրա: Քրեական հետապնդումը²⁹⁰, պաշտպանությունը և զործի լուծումը տարանջատված են. դրանք իրականացնում են տարբեր մարմիններ և անձինք:** Այսպիսով, քրեադատավարական նոր օրենսդրության հայեցակարգային հիմունքներից մեկն էլ քրեադատավարական զործառության հստակ տարանջատումն է: Այդ համատեքստում պաշտպանությունը դիտարկվում է ինքնուրույն քրեադատավարական զործառությամբ: Դրան համապատասխան քրեական դատավարության օրենսդրության 6 հոդվ. 28-րդ կետը սահմանում է, որ **պաշտպանությունը դատավարական զործունեությունն է, որն իրականացնում է պաշտպանության կողմը՝ նպատակ ունենալով հերքել մեղադրանքը կամ մեղմացնել պատասխանատվությունը, պաշտպանել այն անձանց իրավունքները և շահերը, որոնց վերաբերվում է քրեական օրենսդրության արդյունքում արտարած կատարումը, ինչպես նաև նպաստել ապօրինաբար քրեական հետապնդման ենթարկված անձանց իրավունքների վերականգնմանը:** Նույն հոդվածի 16-րդ

²⁹⁰ Կարծում ենք՝ այս համատեքստում ՀՀ 1998 թ. քրեական դատավարության օրենսդրության «քրեական հետապնդում» բառերի օտարաբանությունը ճիշտ է, որովհետև ընդհանրացված բնույթ ունի ոչ թե այդ, այլ «մեղադրանք» զործառությունը՝ պաշտպանության և զործի լուծման հետ միասին: Այդ մասին տե՛ս 6-րդ լրիվ 1-ին պարագրաֆում:

կետը սահմանում է, որ քրեական դատավարությունում կողմ են համարվում այն մարմինները և անձինք, որոնք քրեական դատավարությունում մրցակցային հիմունքներով իրականացնում են քրեական հետապնդում կամ պաշտպանություն, իսկ 29-րդ կետը՝ պաշտպանության կողմ համարվող սուբյեկտների շարքում թվարկում է **կասկածյալին, մեղադրյալին, նրանց օրինական ներկայացուցիչներին, պաշտպանին, քաղաքացիական պատասխանողին և նրա ներկայացուցիչին:** Միաժամանակ, որպես քրեական դատավարությունում մրցակցության սկզբունքի տարրեր՝ քրեական դատավարության օրենսդրության 23 հոդվ. 5-րդ և 6-րդ մասերը սահմանում են, որ **քրեական դատավարությանը մասնակցող կողմերը քրեական դատավարական օրենսդրությամբ օժտված են իրենց դիրքորոշումը պաշտպանելու հավասար հնարավորություններով: Դատարանը դատավիճող հիմնավորում է միայն այն ապացույցներով, որոնց հետազոտման ընթացքում կողմերից յուրաքանչյուրի համար ապահովվել են հավասար պայմաններ: Քրեական դատավարության ընթացքում կողմերն իրենց դիրքորոշումը, այն պաշտպանելու եղանակները և միջոցներն օրենքի շրջանակներում ընտրում են ինքնուրույն՝ անկախ դատարանից, այլ մարմիններից և անձանցից:**

Նախկին քրեադատավարական օրենսդրությունը չէր բովանդակում նման դրույթներ, իսկ պաշտպանության զործառության բովանդակությունը քննարկվում էր միայն քրեական դատավարության տեսության մեջ, ընդ որում՝ բավականին նեղ իմաստով:

Քրեական դատավարության իրավունքի իտության մեջ ավանդաբար պաշտպանությունը հասկացվում է երկու իմաստով՝ նյութական և ձևական: Ս.Ի. Վիկտորսկին նյութական իմաստով պաշտպանության բովանդակության մեջ ընդգրկում էր օրենքի այն դրույթները, ըստ որոնց.

- 1) Դատավորները պարտավոր են մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը որոշել իրենց ներքին համոզմամբ՝ հիմնված զործի բոլոր հանգամանքների քննարկման վրա:
- 2) Դատական քննիչը պարտավոր է վեր հանել ոչ միայն մեղադրյալին մերկացնող, այլև արդարացնող հանգամանքները: Մեղադրանքի մարմնին (դատախազությանը) արդյունք է զործը ներկայացնել միակողմանի տեսքով, դրանից վերցնել միայն մեղադրյալին մերկացնող հանգամանքները, վերահաստատել զոր-

ծում եղած ապացույցների նշանակությունը կամ քննվող հանցա-
□ործության նշանակությունը: Բացի այդ, դատախազը պարտավոր է չպաշտպանել մեղադրական ակտը՝ այդ մասին հայտնելով դատարանին, եթե նա մեղադրյալին արդարացնելը համարում է հար-
□անքի արժանի:

3) Մեղադրյալն իրավունք ունի պաշտպանվել անձամբ:

Բացի այդ, Ս.Խ. Վիկտորսկին ձևական պաշտպանության տակ ենթադրում է հատուկ դրա համար հիմնադրված մարմինների առկայությունը և □ործունեությունը, այսինքն՝ մեղադրյալի պաշտպան ունենալու իրավունքը²⁹¹:

Մ.Ս. Ստրոնովիչը ևս պաշտպանությանը տալիս է նյութական և ձևական իմաստ: Նա նյութական իմաստով պաշտպանություն է հավատում դատավարական □ործողությունների համակցությունը՝ ուղղված մեղադրանքը հերքելուն, մեղադրանքի չհիմնավորվածության կամ մեղադրյալի պատասխանատվության մեղմացումը ապացուցելուն: Ի տարբերություն Ս.Խ. Վիկտորսկու՝ Մ.Ս. Ստրոնովիչը նյութական իմաստով պաշտպանության □ործառույթը կազմող □ործողությունների համակցության մեջ առաջին և հիմնական տեղը հատկացնում է հենց մեղադրյալի պաշտպանական □ործողություններին: Այնուհետև նա նյութական իմաստով պաշտպանությունը կազմող □ործողությունների շարքում նշում է նաև այն □ործողությունները, որոնք քննության և դատախազության մարմինները պարտավոր են կատարել մեղադրանքը հերքելու կամ մեղադրյալի պատասխանատվությունը մեղմացնելու համար²⁹²:

Պաշտպանությունը ձևական իմաստով, ըստ Մ.Ս. Ստրոնովիչի, ենթադրում է պաշտպանի մասնակցությունը դատավարությանը, այն անձի, ով ներկայացնում է մեղադրյալին, պաշտպանում է նրան, օ□նում օ□տա□ործել իր դատավարական իրավունքները²⁹³:

Նշված հեղինակների դիրքորոշումների մեջ ամենից անընդունելի են քրեական վարույթն իրականացնող մարմիններին

պաշտպանական □ործառույթ վերա□րելն է²⁹⁴: Այդ տեսակետը, որը ժամանակակից պայմաններում լրիվ անհիմն է, արդարացիորեն քննադատվել է նաև նախկինում. «Երբ քննիչը փոխում է մեղադրանքը մեղադրյալի համար բարենպաստ ուղղությամբ, ապա նա այդ դեպքում չի իրականացնում իր ուղղվածությամբ հակադիր պաշտպանական □ործառույթ, այլ կատարում է նույն մեղադրանքի □ործառույթը, որը պետք է իրականացվի իրապես □ոյություն ունեցող փաստերին համապատասխան: Հերքվում (վիճարկվում) են միայն ուրիշի եզրակացությունները, այլ ոչ սեփական: Հենց այդ պատճառով էլ միևնույն անձի մոտ մեղադրանքի և պաշտպանության □ործառույթների համատեղումը հակասում է հո□եքանության բոլոր օրենքներին: Սեփական եզրակացությունները կարելի է միայն փոխել, հստակեցնել կամ դրանցից հրաժարվել, ինչը, բնականաբար, չի կարող հասկացվել որպես հո□եքանական օրինաչափություններին հակասող երևույթ...»²⁹⁵ : Քրեական վարույթն իրականացնող մարմինների և պաշտոնատար անձանց պարտականությունը՝ ձեռնարկել օրենքով նախատեսված բոլոր միջոցները՝ □ործի հան□ամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես կասկածյալի և մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող, նրանց պատասխանատվությունը մեղմացնող հան□ամանքները, ինչպես նաև կասկածյալին և մեղադրյալին բացատրել նրանց իրավունքները և ապահովել օրենքով չար□ելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու փաստացի հնարավորությունը, չի կարող համարվել պաշտպանական □ործառույթի իրականացում: Օրենքով ամրա□րված այս պարտականությունները ոչ թե պաշտպանական □ործառույթի դրսևորումներ են, այլ սկզբունքներ, որոնցով պետք է ղեկավարվեն քրեական վարույթն իրականացնող մարմիններն ու անձինք՝ իրենց մեղադրական կամ □ործի լուծման □ործառույթներն իրականացնելիս: Այսինքն՝ մեղադրանքը պետք է լինի օրինական և հիմնավորված: Քրեական դատավա-

²⁹¹ Տե՛ս *Ассольмеев Н.Е. Доводы оаі еіаі ւե і ді оаіі. Ի ., 1997, էջ 262-263:*

²⁹² Տե՛ս *Нодіаіае+ Ի .Ն. Оаі еіаі ւե і ді оаіі. Բ деае+аіеіа еçа-аі Ի е-і еіаіаіаа Բ ոөөөе НННӨ. Ի ., 1946, էջ 106:*

²⁹³ Տե՛ս նույն տեղը, էջ 107:

²⁹⁴ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս *Нодіаіае+ Ի .Ն. Էөдн ні ааөіеіаі оаі еіаіаіаі і ді оаііа. Ө. 1, էջ 225-226: Асөяаа А.Ի. Լөааіааөөі а оаі еіаіаіаі і ді оаііа. Ի ., 1985, էջ 27:*

²⁹⁵ Տե՛ս *Էөдн ні ааөіеіаі оаі еіаіаіаі і ді оаііа. Ի аùäy +аіаі. Ի іа дää. А.А. Аі еөіаа, Է.Է. Էадіаöа. Ի ., 1989, էջ 426:*

րությունում պաշտպանական զործառույթը և այդ զործառույթի սուբյեկտները պետք է հստակորեն տարանջատվեն մնացած զործառույթներից ու սուբյեկտներից, և միայն այդ դեպքում կարելի է խոսել մրցակցային հիմքերով կառուցված դատավարության, քրեական դատավարությունում անձի (պաշտպանության կողմի) իրավական պաշտպանվածության մասին:

ժամանակակից իրողություններից ելնելով, նշված դատավարաօձեռների դիրքորոշումները կարող ենք համարել ոչ ճիշտ մեկ այլ տեսանկյունից ևս: Նախ և առաջ, երկուսն էլ պաշտպանության զործառույթը դիտարկում են բավականին մեղ մոտեցմամբ՝ պաշտպանության կողմից սուբյեկտ ներկայացնելով միայն մեղադրյալին, և այդ կապակցությամբ նյութական իմաստով պաշտպանության իրավունքի տակ նկատի են ունենում միայն նրա անձամբ պաշտպանվելու իրավունքը, իսկ ձևական իմաստով պաշտպանություն են համարում միայն մեղադրյալի պաշտպան ունենալու իրավունքը: Այնինչ քրեադատավարական նոր օրենսդրության՝ վերը նշված նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ պաշտպանության զործառույթը նյութական իմաստով ներառում է ոչ միայն մեղադրյալի, այլ նաև պաշտպանության կողմում հանդես եկող մյուս սուբյեկտների զործունեությունը: Այդպիսով, քրեական դատավարությունում պաշտպանության կողմում հանդես են օալիս և պաշտպանության զործառույթ են իրականացնում ինչպես կասկածյալը, մեղադրյալը (ամբաստանյալը, դատապարտյալը, արդարացվածը), այնպես էլ քաղաքացիական պատասխանողը, երբ մեղադրյալը և քաղաքացիական պատասխանողը չեն նույնանում մեկ անձի մեջ: Նյութական իմաստով պաշտպանությունը ներառում է մեղադրանքը հերքելուն կամ պատասխանատվությունը մեղմացնելուն, պաշտպանության զործառույթի բովանդակությունը կազմող այլ խնդիրների իրացմանն ուղղված դատավարական զործողությունների համակցություն, որի սուբյեկտներ են՝ կասկածյալը, մեղադրյալը, ամբաստանյալը, դատապարտյալը, արդարացվածը, ինչպես նաև քաղաքացիական պատասխանողը: Նյութական իմաստով պաշտպանությունը կազմող դատավարական զործողությունների շարքում հիմնական և լիխավոր (բայց ոչ միակ) տեղը զբաղեցնում են այն զործողությունները, որոնք կատարում են կասկածյալը և մեղադրյալը՝ պաշտպանվելով առաջադրված մեղադրանքից, վիճարկելով այն՝

այդ նպատակով ներկայացնելով ապացույցներ և փաստեր: Նյութական իմաստով պաշտպանությունը ենթադրում է, որ այն անձը, ում վերաօրվում է քրեական օրենքով արօելված արարքի կատարում կամ ում ներկայացվում է քաղաքացիական հայց, ունի պաշտպանության իրավունք: Այդ հավաքական իրավունքը ներառում է դատավարական այն իրավունքների համակցությունը, որոնցով օրենքն օժտել է դատավարության տվյալ մասնակցին, և որոնք օտաօործելով՝ վերջինս կարող է պաշտպանվել իրեն առաջադրված մեղադրանքից, ներկայացված հայցից, ինչպես նաև վերականգնել իր խախտված իրավունքները: Պաշտպանության իրավունքին թղթակցում է քրեական վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը՝ ապահովել դատավարության համապատասխան մասնակցի պաշտպանության իրավունքը:

Սակայն արդարադատության նպատակների իրացման համար միայն նյութական իմաստով պաշտպանության իրավունքը, այսինքն՝ մեղադրյալի անձամբ պաշտպանվելու իրավունքը բավարար չէ: Մի շարք հանամանքների ուժով քրեական դատավարությունում ձևական իմաստով պաշտպանությունը դառնում է անհրաժեշտ: Կարծում ենք՝ սխալ է այն տեսակետը, որը ձևական իմաստով պաշտպանությունը մեկնաբանում է միայն որպես մեղադրյալի՝ պաշտպան ունենալու իրավունք: Ձևական իմաստով պաշտպանությունը հանում է նրան, որ քրեական դատավարությունում պաշտպանության կողմում ներմուծվում են դատավարության հատուկ սուբյեկտներ, ովքեր կոչված են նպատակելու կասկածյալի, մեղադրյալի (ամբաստանյալի, դատապարտյալի կամ արդարացվածի), ինչպես նաև քաղաքացիական պատասխանողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը, նրանց ցույց տալու իրավաբանական օնություն, այսինքն՝ սուբյեկտներ, ովքեր ներկայացնում են կասկածյալին ու մեղադրյալին, քաղաքացիական պատասխանողին, պաշտպանում և օնում են նրանց՝ օտաօործելու իրենց դատավարական իրավունքները: Ահա այս տեսանկյունից դիտարկելով ձևական իմաստով պաշտպանությանը՝ կարող ենք արձանաօրել, որ կասկածյալի և մեղադրյալի՝ նշված իմաստով պաշտպանության իրավունքը ենթադրում է կասկածյալի և մեղադրյալի իրավունքը՝ օրենքով սահմանված կարօով և դեպքերում ունենալ օործին մասնակցող

պաշտպան և օրինական ներկայացուցիչ, իսկ քաղաքացիական պատասխանողը՝ ներկայացուցիչ:

Որպեսզի կարողանանք իմաստավորել ՀՀ 1998 թ. քրեական դատավարության օրենսդրով պաշտպանության օրոճառույթի և պաշտպանության իրավունքի իրավական կարգավորման առանձնահատկությունները և արժանիքները, կարծում ենք՝ կարիք կա առանձին-առանձին քննարկել կասկածյալի, մեղադրյալի (ամբաստանյալի, դատապարտյալի կամ արդարացվածի), քաղաքացիական պատասխանողի պաշտպանության իրավունքը՝ նյութական և ձևական իմաստներով: Նման մոտեցումը մեզ հնարավորություն կտա վեր հանել նաև պաշտպանության օրոճառույթի իրավական կառույցում առկա հիմնախնդիրները:

ՀՀ քրեադատավարական նոր օրենսդրությունը կատարելաօրոճեց պաշտպանության իրավունքի կազմակերպարավական կառուցակարգերը, ընդլայնեց այդ իրավունքի երաշխիքների շրջանակները²⁹⁶: 1998 թ. քրեական դատավարության օրենսդրի 19 հոդվ. որպես քրեական դատավարության սկզբունք ամրագրում է «կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը և դրա ապահովումը» որով, ի տարբերություն նախորդ քրեադատավարական օրենսդրության, պաշտպանության իրավունքը տարածում է նաև կասկածյալի վրա: Բացի այդ, օրենսդրությամբ «մեղադրյալ» սեռային հասկացությունը, նոր օրենսդրի, հիմք ընդունելով 64 հոդվ. դրույթները, այդ իրավունքը տարածում է նաև ամբաստանյալի, դատապարտյալի, արդարացվածի վրա:

Կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը նյութական իմաստով ամփոփում է նրանց պատկանող իրավունքների ողջ համակցությունը, որոնց իրականացումը հնարավորություն է տալիս վիճարկել իրենց առաջադրված կասկածները կամ

²⁹⁶ 1961 թ. քրեական դատավարության օրենսդրի միայն մեղադրյալի պաշտպանության իրավունքն էր համարում քրեական դատավարության սկզբունք: Այդ օրենսդրի 13 հոդվ. սահմանում էր, որ «մեղադրյալի համար ապահովվում է պաշտպանության իրավունք»: Այդպիսով, այս իրավունքի օրոճողության ուղեծրից դուրս էր մնացել կասկածյալը: Բացի այդ, «մեղադրյալ» սեռային հասկացության օրենսդրի հարցականի տակ էր դնում այդ իրավունքը դատապարտյալի և արդարացվածի վրա տարածել, իսկ քրեադատավարական իրավունքի օրենսդրի պաշտպանության իրավունքի ապահովման սկզբունքը մեկնաբանում էր միայն և միայն մեղադրյալի պաշտպանության իրավունքի տեսանկյունից:

մեղադրանքը, ապացուցել իրենց անմեղությունը կամ մեղքի փոքր աստիճանը, պաշտպանել իրենց այլ օրինական շահերը և իրավունքները: Որպես այդ իրավունքի երաշխիքներ՝ քրեական դատավարության նոր օրենսդրի ամրագրում է հետևյալ դրույթները՝

1) Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կասկածյալին և մեղադրյալին բացատրել նրանց իրավունքները և ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց պաշտպանվելու փաստացի հնարավորությունը (քր. դատ. օր. 19 հոդվ. 2-րդ մաս, 63 հոդվ. 1-ին մաս 1-ին կետ, 65 հոդվ. 1-ին մաս):

2) Կասկածյալը և մեղադրյալը իրավունք ունեն իմանալու, թե ինչու են նրանք կասկածվում կամ մեղադրվում (քր. դատ. օր. 63 հոդվ. 2-րդ մաս 1-ին կետ, 65 հոդվ. 2-րդ մաս 1-ին կետ):

3) Քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է համապատասխան դեպքերում օրոճին մասնակից դարձնել կասկածյալի և մեղադրյալի օրինական ներկայացուցչին (քր. դատ. օր. 19 հոդվ. 3-րդ մաս, 16 հոդվ.):

4) Կասկածյալը և մեղադրյալը իրավունք ունեն մեղադրանքից պաշտպանվել ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի օրինական ներկայացուցչի միջոցով: Կասկածյալի և մեղադրյալի պաշտպանի, օրինական ներկայացուցչի մասնակցությունը քրեական դատավարությանը չի սահմանափակում կասկածյալի և մեղադրյալի իրավունքները (քր. դատ. օր. 19 հոդվ. 4-րդ մաս):

5) Կասկածյալին և մեղադրյալին չի կարելի հարկադրել ցուցմունքներ տալ, նյութեր ներկայացնել քրեական վարույթն իրականացնող մարմնին կամ նրան որևէ աջակցություն ցույց տալ (քր. դատ. օր. 19 հոդվ. 5-րդ մաս):

1998 թ. քրեական դատավարության օրենսդրի «Պաշտպանության կողմը» 8-րդ լիսում բավականին մանրամասն սահմանում է կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի և արդարացվածի հասկացությունը, իրավունքներն ու պարտականությունները (հոդվ. 62-66): Ընդ որում, այս հոդվածներում ամրագրված և պաշտպանության իրավունքի բաղադրատարրեր հանդիսացող իրավունքների ճշող մեծամասնությունը նորույթ է մեր քրեական դատավարության համար:

Կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքի երաշխիքներից են նաև ՀՀ քրեական դատավարության օրենսփոփոխության փուլերում և հետագայում, ինչպես, օրինակ՝ դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ, կրկնակի դատապարտման և քրեական հետապնդման, ինչպես նաև մեղադրյալի վիճակի վատթարացման անթույլատրելիությունը և այլն: Այսպիսով, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսփոխության աչքի է ընկնում պաշտպանության իրավունքի շրջանակների ընդլայնմամբ, դրա երաշխիքների բավականին ծավալուն համակարգի ամրապնդմամբ, ինչը ոչ մի կերպ չի կարելի դիտարկել որպես խոչընդոտ հանցավորության դեմ պայքարի օրոժում: Դա կոչված է նպաստելու քրեական դատավարության խնդիրների իրականացմանը: Բացառելով և կանխելով քննչական ու դատական սխալները, պետական մարմինների և պաշտոնատար անձանց ինքնիրավ օրոժողություններն ու չարաշահումները՝ պաշտպանության իրավունքը նպաստում է, որ ոչ մի անմեղ անձ հանցանքի կատարման մեջ չկասկածվի, չմեղադրվի և չդատապարտվի, ոչ ոք անօրինական կամ առանց անհրաժեշտության չենթարկվի դատավարական հարկադրանքի միջոցների, պատժի, իրավունքների և ազատությունների այլ սահմանափակման: Այս տեսանկյունից քրեական դատավարության օրոժառութային կառուցումը և դրանից բխող պաշտպանության օրոժառութի դրսևորման տարր հանդիսացող պաշտպանության իրավունքը նյութական իմաստով ոչ միայն անհատի շահերի, այլև լայն իմաստով արդարադատության շահերի երաշխիքներ են, հետևաբար նաև հասարակական և իրավական արժեքներ, որոնք նախադրյալներ են ստեղծում օրոժով ճշմարտության բացահայտման համար:

Կասկածյալի և մեղադրյալի ձևական իմաստով պաշտպանությունը ենթադրում է դատավարությանը ոչ միայն պաշտպանի մասնակցությունը, այլև որոշակի դեպքերում նրանց օրինական ներկայացուցիչների մասնակցությունը: Այդ մասին են վկայում ՀՀ քրեական դատավարության օրենսփոխության 19 հոդվ. սկզբունքային դրույթները, ըստ որոնց՝ **քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է համապատասխան դեպքերում օրոժին մասնակից դարձնել կասկածյալի և մեղադրյալի օրինական ներկայացուցիչին: Կասկածյալը և մեղադրյալն իրավունք ունեն մե-**

ղադրանքից պաշտպանվել ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի և օրինական ներկայացուցչի միջոցով: Կասկածյալի և մեղադրյալի պաշտպանի և օրինական ներկայացուցչի մասնակցությունը քրեական դատավարությանը չի սահմանափակում կասկածյալի և մեղադրյալի իրավունքները: Քրեական դատավարության օրենսփոխության այս դրույթներն ըստ էության արձանագրում են այն փաստը, որ դատավարական օրոժառութների և դրանք իրականացնող սուբյեկտների տարանջատման համատեքստում դատավարական օրենքը ինչպես պաշտպանին, այնպես էլ օրինական ներկայացուցչին դատում է պաշտպանության կողմում կամ համարում է պաշտպանական օրոժառութ իրականացնող դատավարական սուբյեկտներ: Այսպիսով, կասկածյալի և մեղադրյալի ձևական իմաստով պաշտպանության իրավունքը ենթադրում է նրանց պաշտպան կամ օրինական ներկայացուցիչ ունենալու իրավունքը: Այդ երկու իրավունքներից պաշտպան ունենալու իրավունքը ընդհանուր է այն իմաստով, որ բոլոր մեղադրյալներն են օժտված այդ իրավունքով, իսկ օրինական ներկայացուցչի ներքրավումը դատավարություն հնարավոր է ոչ բոլոր մեղադրյալների նկատմամբ, այլ միայն օրենքով նախատեսված որոշակի դեպքերում²⁹⁷:

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսփոխության 76 հոդվ. բխում է, որ քրեական օրոժով վարույթի ընթացքում օրինական ներկայացուցիչներ ունենալու և նրանց միջոցով իրենց օրինական շահերը ներկայացնելու իրավունք ունեն անչափահաս և անօրոժունակ տուժողը, քաղաքացիական հայցվորը, կասկածյալը, մեղադրյալը, այնինչ նախկին քրեադատավարական օրենսդրությունն այդ իրավունքով օժտում էր միայն մեղադրյալին և տուժողին,

²⁹⁷ Հայկական ԽՍՀ 1961 թ. քրեական դատավարության օրենսփոխության 76 հոդվ. նախատեսում էր օրինական ներկայացուցչի ինստիտուտը: Սակայն այդ օրենսփոխության օրինական ներկայացուցիչների կարգավիճակը նսեմացված էր, իսկ նրանց պատկանող դատավարական իրավունքները՝ սահմանափակված: Այնպես, այդ օրենսփոխության 20 հոդվ. 9-րդ կետը սահմանում էր, որ օրինական ներկայացուցիչներ են **մեղադրյալի** կամ **տուժողի** ծնողները, որդեփոխները, խնամակալները, հոգաբարձուները, այն հիմնարկների, կազմակերպությունների ներկայացուցիչները, որոնց խնամքի տակ է օտնվում մեղադրյալը կամ տուժողը: Այդ օրենսփոխության օրինական ներկայացուցիչների իրավական կարգավիճակը սահմանող հատուկ հոդված չէր նախատեսում: Վերջինիս իրավունքները նախատեսված էին դատավարության մասնակիցների դատավարական լիազորությունները սահմանող նորմերում:

օրինական ներկայացուցիչն ըստ էության չունի դատավարության լիարժեք մասնակցի կարգավիճակ՝ բացառությամբ անչափահաս մեղադրյալի օրինական ներկայացուցչի, որը միայն դատական քննության ժամանակ կարող էր ձեռք բերել կողմի կարգավիճակ՝ շատ սահմանափակ իրավունքներով: Այսպիսով, ըստ քրեադատավարական նոր օրենսդրության՝ անչափահաս կամ անգործունակ կասկածյալի և մեղադրյալի ձևական իմաստով պաշտպանության իրավունքը ենթադրում է նրանց օրինական ներկայացուցիչներ համարվող ծնողների, որդեգրողների, խնամակալների, հոգաբարձուների մասնակցությունը քրեական գործով վարույթին, որտեղ նրանք ներկայացնում են դատավարության այդ սուբյեկտների օրինական շահերը: Ի տարբերություն պաշտպանի, դատավարության սուբյեկտների ներկայացուցիչների, այդ թվում պաշտպանական կողմում հանդես եկող քաղաքացիական պատասխանողի ներկայացուցչի՝ օրինական ներկայացուցիչները քրեական գործով վարույթին մասնակցում են դատավարության համապատասխան սուբյեկտի «հետ ունեցած անմիջական, օրենքի ուժով ճանաչված կապի հիման վրա և դրա համար չի պահանջվում, որ օրինական ներկայացուցիչը հատուկ լիազորված լինի դատավարության այս կամ այն սուբյեկտի կողմից: Ավելին, օրինական ներկայացուցիչը գործով վարույթին մասնակցում է օրենքի ուժով²⁹⁸, և դրա համար» օրենքում նշված սուբյեկտի համաձայնությունը չի պահանջվում: Անչափահաս կամ անգործունակ մեղադրյալի օրինական ներկայացուցիչն իրականացնում է նրա իրավունքները նրա փոխարեն՝ օրենքով սահմանված կարգով (քր. դատ. օր. 65 հոդվ. 6-րդ մաս):

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի օրինական ներկայացուցիչներին ճանաչելով դատավարության կողմ, պաշտպանության կողմում հանդես եկող սուբյեկտ, դատավարության լիարժեք մասնակցի (քր. դատ. օր. 6 հոդվ. 16-րդ, 29-րդ և 31-րդ կետեր), օժտելով նրանց համապատասխան իրավունքներով ու պարտականություններով՝ այնուամենայնիվ «սպառիչ չի կարգավորել օրինական ներկայացուցչի՝ գործով վարույթին մասնակցելու ձևը, եղանակը: Մատնանշելով, որ վարույթն իրականացնող մարմինն այդ մասին կայացնում է համապատասխան որոշում, օրենսդիրը չի նշում, թե մասն որոշումը կայացվում է վարույթն ի-

²⁹⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, Ընդհանուր մաս.– Երևանի համալսարանի հրատարակչություն, էջ 246:

րականացնող մարմնի նախաձեռնությամբ, թե դրա համար անհրաժեշտ է, որ շահագրգռված անձը դիմում ներկայացնի վարույթն իրականացնող մարմնին իրեն որպես տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի կամ մեղադրյալի օրինական ներկայացուցիչ ճանաչելու մասին»²⁹⁹:

Օրինական ներկայացուցչի իրավունքների անհիմն սահմանափակում կարելի է համարել քրեական դատավարության օրենսգրքի 291 հոդվ., որը դատարանին պարտավորեցնում է քրեական գործն իր վարույթը ընդունելու պահից 3 օրվա ընթացքում դրա մասին տեղյակ պահել դատավարության մի շարք մասնակցների՝ նրանց ուղարկելով սահմանված ձևի հուշաթերթիկ, այդ մասնակցների թվում չնշելով օրինական ներկայացուցչին: Պակաս կարևոր չեն նաև օրինական ներկայացուցչի՝ գործով վարույթն ընդհատելու պահի, անձին որպես օրինական ներկայացուցիչ ներգրավելու արգելք հանդիսացող հանգամանքների և օրինական ներկայացուցչին վարույթից հեռացնելու կարգի ու ձևի իրավական կարգավորման անհրաժեշտությունը: Ահա այս տեսանկյունից դիտարկելով օրինական ներկայացուցչի կարգավիճակի սահմանմանը նվիրված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 76 և 77 հոդվածները՝ կարծում ենք, որ դրանք օրենսդրական կատարելագործման կարիք ունեն:

Քրեադատավարական մեխանիզմի և գործող օրենսդրության համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ պաշտպան ունենալու իրավունքի և պաշտպանի կարգավիճակի իրավական կարգավորման հարցում առկա են արմատական փոփոխություններ: **Նախ**՝ քրեական դատավարության նոր օրենսգրքը պաշտպան ունենալու իրավունքը վերապահեց նաև կասկածյալին: Կասկածյալն իրավունք ունի ձերբակալման մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը, ձերբակալման արձանագրությունը կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշումն իրեն հայտարարելու պահից ունենալ պաշտպան (քր. դատ. օր. 63 հոդվ. 2-րդ մաս 4-րդ կետ): Մեղադրյալը պաշտպան ունենալու իրավունքը ձեռք է բերում մեղադրանք առաջադրելու պահից (քր. դատ. օր. 65 հոդվ. 2-րդ մաս 3-րդ կետ): Այդպիսով, ձևական իմաստով պաշտպանության իրավունքը, այսինքն՝ պաշտպան ունենալու իրավունքը, ըստ քրեադատավարական նոր օրենսդրության,

²⁹⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 247:

պետք է նկատի ունենալ մեկ այլ համաձայնագրի և: Արդյոք այսօր մեր հասարակությունը և քրեադատավարական համակարգը պատրաստ են դրան, արդյոք մեղադրյալը և պաշտպանը չեն չարաշահի իրենց տրված այդ իրավունքը, դա չեն օտարոտործի ապացույցները վերացնելու, քննության նկատմամբ հակաքայլեր ձեռնարկելու համար՝ դրանով իսկ խոչընդոտելով հանցավորության դեմ տարվող պայքարին: Կարծում ենք, որ մենք այսօր ապահովված չենք այդպիսի հետևանքներից: Ուրեմն անցումային այս փուլում պետք է դրսևորել գոյություն և գերծ մնալ հեղափոխական կեցվածքից: Իհարկե, տվյալ հիմնախնդրի առկայությունն անվիճելի է: Ակնհայտ է, որ պաշտպանը նախաքննության փուլում հարկադրված է վարել «կույր պաշտպանություն»: Որպեսզի պաշտպանի լիարժեքությունը նախաքննության փուլում արդյունավետ լինի, առաջարկում ենք հիմնախնդրի լուծման հետևյալ միջանկյալ տարբերակը: Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73 հոդվ. 1-ին մասի 3-րդ կետի՝ պաշտպանն իրավունք ունի քրեական հետապնդման մարմնի առաջարկով մասնակցել իրականացվող քննչական կամ այլ դատավարական լիարժեքություններին, քրեական հետապնդման մարմնի թույլտվությամբ մասնակցել քրեական հետապնդման մարմնի կողմից իր միջնորդությամբ իրականացվող բոլոր քննչական և այլ դատավարական լիարժեքություններին, մասնակցել իր պաշտպանչալի մասնակցությամբ իրականացվող ցանկացած քննչական կամ այլ դատավարական լիարժեքության, եթե դա պահանջում է կասկածյալը կամ մեղադրյալը, կամ լիարժեքությունը սկսելիս դրա մասին միջնորդում է ինքը՝ պաշտպանը: Այս նորմում առկա «քրեական հետապնդման մարմնի առաջարկով», «քրեական հետապնդման մարմնի թույլտվությամբ», «մեղադրյալի պահանջով», «պաշտպանի միջնորդությունը» (նախ պետք է իմանան, հետո պահանջեն և միջնորդեն) ձևակերպումներն ուղղակիորեն անհամատեղելի են ժողովրդավարական կոչվելու հավակնություն

րավաճիտության հարցեր», ՌԽ. աշխ. միջբուհական ժողովածու, թիվ 1-2, 2000 թ., էջ 71): Եթե արդյոք չի տարածվում պաշտպանի և պաշտպանչալի հարաբերությունների վրա, ապա ըստ էության նախաքննության լիարժեքությունը մասամբ վերանում է, որովհետև քրեական դատավարության օրենսգրքի 201 հոդվ. պաշտպանի կողքին պաշտպանչալին չի նշում նախաքննության տվյալները չհրապարակելու պարտականություն կրող սուբյեկտների շարքում, ինչը, մեր կարծիքով, լրիվ արդարացի է:

ունեցող քրեական դատավարության օրենսգրքի համար, և ավելի շատ հիշեցնում են ինկվիզիցիոն դատավարության ոճը: Հետևաբար անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել յուրաքանչյուր քննչական կամ այլ դատավարական լիարժեքության բնույթի, տեղի և ժամանակի մասին պաշտպանին տեղեկացնելու՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը և դրանց՝ պաշտպանի մասնակցելու իրավունքը: Չմասնակցելու դեպքում առանց որևէ խոչընդոտի պետք է հնարավորություն տալ պաշտպանին ծանոթանալ քննչական կամ այլ դատավարական լիարժեքությունների արձանագրություններին և դիտողություններ գրելու արված լիարժեքության հավաստիության ու լրիվության վերաբերյալ: Հարցի մասն լուծման դեպքում օրենսգրքի 73 հոդվ. 1-ին մասի 3-րդ կետի խմբագրությունը նախ՝ կհամապատասխանի նույն հոդվածի 1-ին մասի 11-րդ կետին, երկրորդ՝ պաշտպանին հնարավորություն կտա ցանկության դեպքում մասնակցել քրեական դատավարությունում ապացույցների հավաքման, ամրագրման և ստուգման հիմնական միջոց համարվող քննչական և այլ դատավարական լիարժեքություններին, նպաստել լիարժեքության բազմակողմանիությանը, օբյեկտիվությանն ու լրիվությանը, իսկ այնուհետև առանձին կոնֆիդենցիալ, անարժեք տեսակցելով իր պաշտպանչալի հետ՝ քննարկել նշված հարցերը և մշակել լիարժեք պաշտպանության իրականացման տակտիկական և ստրատեգիան: Հարցի մասն լուծման դեպքում արդեն վերանում է նախաքննության նյութերին ծանոթանալու՝ պաշտպանի իրավունքի հրատապ անհրաժեշտությունը և, հետևաբար, նաև վերանում են վերը նշված բացասական, անկանխատեսելի հետևանքների առաջացման հնարավորությունները և քննության տակտիկայի ու ստրատեգիայի որոշումը, նախաձեռնությունը մնում է քննիչին, իսկ մյուս կողմից էլ իրական երաշխիքներ են ստեղծվում մեղադրվող կողմի պաշտպանության իրավունքի ապահովման համար:

Որոշակի խմբագրման է ենթակա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73 հոդվ. 1-ին մասի 6-րդ կետը, որում առկա «հարցման ենթարկել մասնավոր անձանց, ինչպես նաև տարբեր կազմակերպություններից պահանջել տեղեկանքներ, բնութագրեր և այլ փաստաթղթեր» ձևակերպումն անհաջող է: Ո՞րն է «մասնավոր անձինք» բառերի իմաստը քրեական դատավարությունում: Արդյոք այստեղից հետևո՞ւմ է, որ պաշտոնատար ան-

ձանց հարցման ենթարկել չի կարելի: Արդյոք փաստաբանը կազմակերպություններից բացի կարո՞ղ է տեղեկանքներ, բնութագրեր և այլ փաստաթղթեր պահանջել պետական մարմիններից:

Քրեական դատավարությունում տեսական և օրոճական կարևոր նշանակություն ունեն նաև պաշտպանին փոխարինելու և պաշտպանից հրաժարվելու հարցերի ճիշտ լուծումը: ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը նախ և առաջ ամրագրել է պաշտպանին օրենքով նախատեսված սուբյեկտների կողմից հրավիրելու սկզբունքը, որը, լինելով ձևական իմաստով պաշտպանության իրավունքի բաղադրատարր, կոչված է ապահովելու պաշտպանչալի վստահությունը պաշտպանի նկատմամբ: Որպես այս սկզբունքի երաշխիք՝ քրեական դատավարության օրենսդրությունը սահմանում է մի շարք դրույթներ. կասկածյալը և մեղադրյալը իրավունք ունեն ունենալ պաշպան, հրաժարվել պաշտպանից և պաշտպանվել ինքնուրույն, քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ապահովել նրանց այդ իրավունքը և իրավունք չունի որևէ մեկին երաշխավորել հրավիրելու որևէ պաշտպանի (քր. դատ. օր. 70 հոդվ. 2-րդ մաս): Բացի այդ, օրենքը քրեական վարույթն իրականացնող մարմնին արգելում է ՀՀ փաստաբանների միությունից պահանջել նշանակել պաշտպան, եթե մեղադրյալը ցանկություն ունի հրավիրել պաշտպան (քր. դատ. օր. 70 հոդվ. 3-րդ և 4-րդ մասեր): Քրեական վարույթն իրականացնող մարմինը նման պահանջով այն դեպքում է դիմում ՀՀ փաստաբանների միությանը, երբ այդ մասին միջնորդում են կասկածյալը և մեղադրյալը, երբ քրեական օրոճով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, իսկ կասկածյալը կամ մեղադրյալը պաշտպան չունեն: Վերջին դեպքում, համաձայն քրեական դատավարության օրենսդրության 70 հոդվ. 4-րդ մասի, քրեական վարույթն իրականացնող մարմնին իրավունք ունի կասկածյալին և մեղադրյալին առաջարկել, որ իրենք հրավիրեն այլ պաշտպան: Օրենքի այս դրույթը խմբագրման կարիք ունի: Քրեական վարույթն իրականացնող մարմնի համար այդպիսի իրավունք սահմանելը ճիշտ չէ, որովհետև կասկածյալի և մեղադրյալի պաշտպանության իրավունքը և դրա ապահովման սկզբունքը քրեական վարույթն իրականացնող մարմնին պարտավորեցնում է կասկածյալին և մեղադրյալին բացատրել նրանց իրավունքները և ապահովել օրենքով չարգելված բոլոր միջոցներով մեղադրանքից նրանց

պաշտպանվելու փաստացի հնարավորությունը: Հետևաբար քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է (այլ ոչ թե իրավունք ունի) կասկածյալին և մեղադրյալին առաջարկել, որ հրավիրեն այլ պաշտպան:

Պաշտպանչալի կողմից պաշտպանի անհատական հրավերքի սկզբունքից որպես բացառություն քրեական դատավարության օրենսդրության 70 հոդվ. 5-րդ մասը և 304 հոդվ. 2-րդ մասը սահմանում են վարույթն իրականացնող մարմնի նախաձեռնությամբ պաշտպանին փոխարինելու հնարավորությունը օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում: Անշուշտ, այս բացառությունն արտաոց երևույթ չէ, ունի օբյեկտիվ հիմքեր և կոչված է կանխելու քրեական դատավարությունը քաշքշուքի վերածելու փորձերը: Սակայն նախկին և օրոճող քրեադատավարական օրենսդրության համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ 1961 թ. քրեական դատավարության օրենսդրությունը նախատեսում էր պաշտպանի փոխարինման հնարավորությունը նաև մեղադրյալի միջնորդությամբ կամ նրա համաձայնությամբ (44 հոդվ.): Քրեական դատավարության օրոճությունը մեկ պաշտպանի փոխարինումը մեկ ուրիշով դիտարկում էր որպես մեղադրյալի ձևական իմաստով պաշտպանության էական երաշխիք³⁰⁵: Ընդ որում, խորհրդային շրջանում և՛ քրեական դատավարության իրավունքի օրոճությունը, և՛ դատական պրակտիկան, չնայած անընդհատության ու անմիջականության սկզբունքների օրոճողության հետևանքով առաջացող բարդություններին և կրկնություններին, մեղադրյալի այդ իրավունքի մերժումը դիտարկում էին մեղադրյալի պաշտպանության իրավունքի խախտում, այստեղից բխող բոլոր հետևանքներով³⁰⁶: Այնինչ ՀՀ քրեական դատավարության օրենսդրությունը չի նախատեսում և նույնիսկ չի ենթադրում կասկածյալի կամ մեղադրյալի այդ իրավունքը: Ստացվում է, որ եթե հանկարծ պաշտպանչալը համոզվի պաշտպանի պատշաճ կերպով պաշտպանության և իրավաբանական օրոճության օրոճատույթների իրականացման անկարողության կամ անընդունակության մեջ կամ դադարի վստահել նրան, ապա չի կարող միանգամից նրան փոխել այլ պաշտպանով: Դա կարելի է համարել էական բացթող

³⁰⁵ Տե՛ս *Նոսոյ անեթե Բ.Է. Նի անոնեյ անի անոնոն. Ի . .*, 1989, էջ 228:

³⁰⁶ Տե՛ս *Աբեանոյ և Անոնոյ անի անոնոն ՆՆՆՆ*, 1983, թիվ 4, էջ 25: 1987, թիվ 11, էջ 12:

ղում, կասկածյալի և մեղադրյալի ձևական իմաստով պաշտպանության իրավունքի անհիմն սահմանափակում:

ՀՀ քրեական դատավարության մասին օրենսգրքի, ի տարբերություն պաշտպանի փոխարինելու ինստիտուտի, պաշտպանից հրաժարվելու իրավական ինստիտուտը ոչ միայն պահպանեց, այլև զարգացրեց: Եթե կասկածյալը և մեղադրյալը ունեն պաշտպան ունենալու իրավունք, ապա նրանք պետք է ունենան նաև լիարժեք վարույթի ամեն մի պահին պաշտպանից հրաժարվելու իրավունք: Պաշտպանից հրաժարվելը, ի տարբերություն նրան մեկ ուրիշ պաշտպանով փոխարինելու, նշանակում է կասկածյալի կամ մեղադրյալի մտադրությունը՝ իր պաշտպանությունն իրականացնել առանց որևէ արդեն նշանակված կամ նշանակվող կամ հրավիրված պաշտպանի իրավաբանական օգնության: Պահպանելով պաշտպանյալի այս իրավունքը կարավորող նախկին օրենսդրության դրույթները (պաշտպանյալի կամավոր նախաձեռնությունը, պաշտպանի ներկայությունը պաշտպանից հրաժարվելու հայտարարությանը և այլն)՝ քրեական դատավարության մասին օրենսգրքի զարգացրեց այդ իրավունքը մոր երաշխիքներով ու դրույթներով: **Նախ**՝ պաշտպանից հրաժարվելը չի ընդունվում, եթե այն հարկադրված է իրավաբանական օգնության համար վճարման միջոցների բացակայությամբ: **Երկրորդ**՝ պաշտպանից հրաժարվելու պահից կասկածյալը և մեղադրյալը համարվում են իրենց պաշտպանությունը ինքնուրույն իրականացնողներ: **Երրորդ**՝ պաշտպանից հրաժարված կասկածյալը կամ մեղադրյալը իրավունք ունեն քրեական լիարժեք վարույթի ցանկացած պահի փոխել իրենց դիրքորոշումն այդ առիթով, այսինքն՝ պաշտպան ունենալու ցանկություն հայտնել:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 69 և 72 հոդվածների համեմատական վերլուծությունը և ձևական տրամաբանական մեկնաբանությունը ցույց են տալիս, որ կասկածյալը և մեղադրյալը պաշտպանից կարող են հրաժարվել նաև այն լիարժեքով, որոնցով օրենքը սահմանել է պաշտպանի պարտադիր մասնակցություն: Հետևաբար, քրեական լիարժեք վարույթին պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերի մի մասով (քր. դատ. օր. 69 հոդվ. 1-ին մաս 1-ին, 6-7-րդ և 9-րդ կետեր) պաշտպանից հրաժարվելը բացարձակ իրավունք է, իսկ քրեական դատավարության օրենսգրքի 69 հոդվ. 1-ին մասի 2-5-րդ և 8-րդ կետերում

նախատեսված կասկածյալի և մեղադրյալի համար պաշտպանից հրաժարվելը հարաբերական իրավունք է այն իմաստով, որ քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի նաև չընդունել կասկածյալի կամ մեղադրյալի կողմից պաշտպանից հրաժարվելը, որովհետև այս դեպքերում վերջիններս առանց պաշտպանի օգնության ի վիճակի չեն արդյունավետ և ինքնուրույն պաշտպանվել, լիարժեք իրականացնել իրենց պաշտպանության իրավունքը: Այս կասկածյալից պաշտպանից համարել լիարժեք վարույթի մեջ արտահայտված տեսակետը, թեև քրեական դատավարությունում պաշտպանի մասնակցությունը կախված է կասկածյալի կամ մեղադրյալի ցանկությունից, օրենսդիրն առանձին դեպքերում նպատակահարմար է ստանում պաշտպանի մասնակցության դեպքեր սահմանել անկախ նրանց կամահայտնությունից, թեկուզև նրա կամքին հակառակ: Այս տեսակետի հետ միանշանակ համաձայնել չի կարելի, որովհետև պաշտպանից հրաժարվելու ինստիտուտի լիարժեքությունը տարածվում է նաև պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերի վրա: Տվյալ դեպքում «պաշտպանի պարտադիր մասնակցություն» արտահայտությունը չի նշանակում, որ պաշտպանից հրաժարվելու ինստիտուտը չի լիարժեք: Այն ընդամենը նշանակում է, որ քրեական դատավարության օրենսգրքի 69 հոդվածում նշված հիմքերի առկայության դեպքում լիարժեք վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ապահովել պաշտպանի պարտադիր մասնակցություն՝ օրենքով սահմանված կարգով և ուրիշ ոչինչ: Նման կարգով վարույթ ներդրված պաշտպանից կասկածյալը և մեղադրյալն իրավունք ունեն հրաժարվել, որի դեպքում վարույթն իրականացնող մարմինը դեպքերի մի մասով (քր. դատ. օր. 69 հոդվ. 1-ին, 6-7-րդ և 9-րդ կետեր) անպայման պարտավոր է որոշում կայացնել՝ ընդունել կասկածյալի կամ մեղադրյալի պաշտպանից հրաժարվելը, եթե կասկածյալի կամ մեղադրյալի կողմից այդ մասին հայտարարվել է սեփական նախաձեռնությամբ, կամավոր և պաշտպանի ներկայությամբ, չի պայմանավորված իրավաբանական օգնության վճարման համար միջոցների բացակայությամբ, իսկ մյուս մասով (քր. դատ. օր. 69 հոդվ. 1-ին մաս, 2-5-րդ և 8-րդ կետեր)՝ իրավունք ունի նաև չընդունել:

Վարույթն իրականացնող մարմնի այդ իրավունքի օրենսդրական ձևակերպումը, մեր կարծիքով, ճշգրտման կարիք ունի,

նախնդիր է, որի տեսական մշակման օրծում էական տեղաշարժ կատարվեց վերջին տարիներին, ԱՊՀ մասնակից-պետությունների համար մոդելային քրեական դատավարության օրենսգրքի, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախապատրաստման և ընդունման, ինչպես նաև ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի նախաօժերի մշակման կապակցությամբ, որոնցում առաջ եկան բաժիններ և հոդվածներ՝ նվիրված քրեական հետապնդմանը: Օրինակի համար դիմենք ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի պաշտոնական նախաօժին, որում պարունակվում են քրեական հետապնդման կարգավորմանը վերաբերող մի շարք կարևոր դրույթներ: Նշված նախաօժի 3-րդ լուրջ կոչվում է «Քրեական հետապնդման տեսակները»: Այդ լուրջի 25, 26 և 27 հոդվածներում խոսվում է հանրային, հանրային-մասնավոր և մասնավոր հետապնդման օրծերի մասին, քրեական հետապնդմանը և մեղադրանքին կամ դրանց իրականացմանը մասնակցելու՝ քաղաքացիների իրավունքի մասին: Վերջապես, 5-րդ լուրջը նվիրված է քրեական հետապնդման օրծառույթ իրականացնող պետական մարմիններին և պաշտոնատար անձանց, այսինքն՝ դատախազին, քննիչին, հետաքննության մարմինին, հետաքննության մարմնի պետին և հետաքննիչին³⁰⁸:

Վերը նշված փաստաթղթերի, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին ծանոթանալիս աչքի է զարնում այն փաստը, որ դրանցում չի բացված «քրեական հետապնդում» հասկացության բովանդակությունը, և չեն լուծված քրեադատավարական օրծունեության այդ կողմին վերաբերող մի շարք կարևոր հարցեր: Իսկ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում

Օձեթեթի Ա.Ա. Ի ունաոնթեթի էձ օթի էթե...: Օձեթեթի Ա.Ա. Ի ծի օանթօթեթի այ օթի էթեթ օթի էթի ի թի Ի ծանթեթի թի էթ Ի թի օթթօթթ Ծի թեթ.—
Ա թա.: Ունաթի թի թի Ի ծի էթի թի օթի էթի թի թի Ի ծաթ, Ի ծի օանթ Ի էթի էթի էթեթեթ. Ի թեթա-Էթի թի թի, 1996: Ութի թի Ա.Ա., Եթթի էթ- Ի.Ա. Է թի թի ուն Ի էթի օթի էթեթ Ի ծաթի թի թի Ի թի թի էթ օթի էթեթ օթի էթի թի թի Ի ծանթեթի թի էթ.—
Ա թա.: Ունաթի թի թի Ի ծի էթի թի օթի էթի թի թի Ի ծաթ, Ի ծի օանթ Ի էթի էթի էթեթեթ. Ի թեթա-Էթի թի թի, 1996 և այլն:

ամրաօրված քրեական հետապնդման բնորոշումը, մեր կարծիքով, անորամաբանական է և ոչ լրիվ, չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության որոշ դրույթներին: Ասվածը դրոում է լուրջ տեսական վերլուծության ենթարկել այդ հրատապ հիմնախնդիրը:

Ամենից առաջ կարևոր է որոշել այդ հիմնախնդրի լուծման մոտեցման հարցը: Այս տեսանկյունից, կարծում ենք, որ ավելի արդյունավետ է այն օրծականների դիրքորոշումը, ովքեր քրեական հետապնդումը դիտարկում են քրեադատավարական օրծառույթների շրջանակներում: Այսպես, Ն.Ա. Յակուբովիչը օրծում է, որ հետաքննություն վարող անձը և քննիչը կատարում են հանցաօրծության բացահայտման, քրեական հետապնդման և հանցաօրծությունների նախականիման օրծառույթներ: Ընդ որում, նա էլնում է այն հանթամանքից, որ հանցաօրծության բացահայտումն ավարտվում է բավարար ապացույցների հավաքմամբ, որոնք հիմք են տալիս մեղադրանք առաջադրելու համար, իսկ քրեական հետապնդման օրծառույթն սկսվում է որպես մեղադրյալ ներթրավելու պահից³⁰⁹:

Ծարադրված տեսակետը ճշրոտման կարիք ունի: Քննության մարմինների օրծունեության ուղղություններից մեկի բնութաօրման համար «բացահայտում» բառեզրի օրծառույթունը որոշակի չէ: Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 2 հոդվ. ձևակերպված պահանջը, որ քրեական օրենսգրքով արթելված արարք կատարած յուրաքանչյուր ոք բացահայտվի, ըստ էության, հանցաօրծության բացահայտման պահանջն է, որը օրենսդիրը համարում է քրեական վարույթ իրականացնող մարմինների խնդիրը: Այդպիսին էր նաև քրեական դատավարության նախկին օրենսգրքի ամրաօրած մոտեցումը: Եթե վերլուծենք Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի քրեական դատավարության մինչդատական փուլերին վերաբերող հոդվածները, ապա կտեսնենք, որ

³⁰⁸ ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի այդ նախաօրծը հրապարակվել է համառոտական իրավաբանական թերթում՝ “Ք ծեթեթ-թեթեթ անթի էթ”, 1995 թ., թիվ 31:

³⁰⁹ Տե՛ս *Եթթի էթ- Ի.Ա. Ի ծի օանթօթեթի թի օթի էթեթ թեթի թի էթեթ.—* *Ա էթ.: Ի ծի էթի թի Ի ծաթթեթեթեթի թի թեթաթեթեթ Ի թի էթի թի թի թի թի թի էթի էթի էթեթեթ. Ի ., 1980, էջ 16-17:*

բակալման ժամկետն օբյեկտիվ պատճառների ուժով երկարացնելու հնարավորություն:

Քրեական օրոժի հարուցման կարգի և քրեական հետապնդման, ինչպես նաև այդպիսի լիազորություններ ունեցող սուբյեկտների շրջանակի վերաբերյալ հարցերի լուծման մեջ քրեական դատավարության օրենսգրքի առկա որոշակի անկատարությունը, մեր կարծիքով, բացատրվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ դատախազության լիազորությունների ոչ հստակ կարգավորմամբ: Այսպես, Սահմանադրության 103 հոդվ. 2-րդ մասի 1-ին կետում խոսվում է օրենքով նախատեսված դեպքերում և կարողով քրեական հետապնդում հարուցելու՝ դատախազության լիազորության մասին: Սակայն Սահմանադրության այդ հոդվածում ոչինչ չի ասված քրեական օրոժ հարուցելու մասին: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սպառնալից կերպով թվարկելով դատախազության լիազորությունները, մի շարք դեպքերում ստեղծում է անլուծելի արգելքներ որոշ օրենքների, մասնավորապես դատախազության մասին օրենքի և քրեական դատավարության օրենսգրքի մշակման և ընդունման համար: Ցավոք, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված դատախազության կարգավիճակն անհիմն կերպով նսեմացված է: Եթե քաղաքացիաիրավական ոլորտում դա կարելի է բացատրել ձևավորվող շուկայական հարաբերությունների պահանջմունքներով, ապա հանցավորության դեմ պայքարի ոլորտում դատախազության դերի սահմանափակումը ոչնչով արդարացված չէ: Սահմանադրական լուծումը, որը դատախազին իրավունք է տալիս հարուցել քրեական հետապնդում, սակայն նրան իրավունք չի տալիս հարուցել քրեական օրոժ, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքը մշակողների առջև դրել էր անլուծելի խնդիր: Գործնականում անհնարին էր հարցի այնպիսի լուծում, որ չհակասեր Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և միաժամանակ չխախտարեր դատախազության արդյունավետ օրոժունեությանը քրեական օրոժեր քննելիս³¹³:

³¹³ Այս հիմնախնդրի լուծման հնարավոր տարբերակները մեր կողմից քննարկվել են "Í í áúé ýòàí á ðàçàèðèè óàí èí áí í -í ðí ðáññóáèúí í áí çàèí í í -áàðáèúñóáá Áðí áí èè". — Í ðí èóðí ðñèàý è ñèááñóáá í àý í ðàèðèèà, 1998, թիվ 4, էջ 140-141:

Քրեական հետապնդման հարուցումը ենթադրում է հանցա-
օրոժության մեջ կասկածվող կամ մեղադրվող անձի առկայություն: Քանի որ մեծամասամբ քրեական օրոժերը հարուցվում են փաստի առիթով, երբ հանցաօրոժություն կատարած անձը դեռևս հայտնի չէ, հետևաբար քրեական հետապնդում սկսելու հարց չի ծառայում: Դատախազն իրականացնում է հսկողություն՝ քննության ընթացքում օրենքների կատարման նկատմամբ: Կասկածյալի ի հայտ գալով՝ դատախազն իրականացնում է քրեական հետապնդում հարուցելու իր բացառիկ իրավունքը: Ըստ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ դեպքերի այդպիսի զարգացումը չպետք է ճիշտ համարել: Բայցևայնպես, դժվար է պատկերացնել, թե ինչպես կարելի է իրականացնել քննության նկատմամբ հսկողություն և դատավարական ղեկավարում՝ չունենալով քրեական օրոժ հարուցելու իրավունք: Ամեն դեպքում այդ պայմաններում դժվար է սպասել դատախազի հսկողական օրոժունեության արդյունավետություն:

Ստեղծված իրադրությունից դուրս գալու համար քրեական դատավարության նոր օրենսգրքի մշակողները օնացին քննության արդյունավետության բարձրացման ճանապարհով՝ հակասության մեջ մտնելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 103 հոդվ. հետ: Դատախազին հետաքննության մարմնի և քննիչի հետ միասին իրավունք տրվեց հարուցել քրեական օրոժ (քր. դատ. օր. 175 հոդվ.)³¹⁴:

Նույնիսկ այս պայմաններում հարցի օրենսդրական կարգավորումը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում զերծ չմնաց հակասականությունից: Այսպես, քրեական դատավարության օրենսգրքի 175 հոդվ. և 182 հոդվ. 1-ին մասը սահմանում են, որ քրեական օրոժ հարուցելու՝ օրենքով նախատեսված առիթների և հիմքերի առկայության դեպքում դատախազը (քննիչը, հետաքննության մարմինը) իր իրավասության շրջանակներում պարտավոր է քրեական օրոժ հարուցել՝ այդ մասին որոշում կայացնելով: Բայց, չփոխելով ինչու, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 53

³¹⁴ Մեր կարծիքով դատախազին քրեական օրոժ հարուցելու իրավունք տալն անհրաժեշտ է: Հետևաբար, սահմանադրական օրինականությունը վերականգնելու նպատակով այդ հարցը պետք է քննարկվի ՀՀ Սահմանադրության մեջ կատարվող լրացումների և փոփոխությունների նախագիծը պատրաստելիս:

հողվ. 1-ին մասի 1-ին կետը դատախազին իրավագործում է քրեական լուրջ հարուցել միայն երկու դեպքերում՝ 1) դատարանի միջնորդության հիման վրա, 2) հետաքննության մարմնի և քննիչի քրեական լուրջ հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելիս: Մեզ համար անհասկանալի է այս անթույլատրելի հակասությունը: Կարծում ենք՝ քննության մեջ դատախազական հսկողության համար «փակ լուրջներ» չպետք է լինեն: Հետևաբար քրեական դատավարության օրենսգրքի 53 հոդվ. պետք է շտկվի:

Քրեական հետապնդման սուբյեկտների հարցը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում, ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի նախաօժերում, ԱՊՀ երկրների մոդելային քրեական դատավարության օրենսգրքում լուծված է միակերպ: Այդ շարքում դասվում են՝ հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, որոնք իրենց իրավասության և իրավագործությունների շրջանակներում մասնակցում են հանրային շահերի պաշտպանությանը՝ իրականացնելով քրեական հետապնդում³¹⁵:

Քրեական հետապնդման լուրջության իրացման մեջ բավականին յուրահատուկ է դատախազության դերը: Ս.Ի. Գերասիմովն իրավագիտորեն ուշադրություն է հրավիրում այն հանձնարարի վրա, որ քրեական հետապնդում իրականացնելիս առկա է դատախազության լուրջության երկու տեսակ, որոնցից յուրաքանչյուրին բնորոշ են իր ձևեր ու և մեթոդները: Առաջինը անմիջապես դատախազության կողմից իրականացվող քրեական հետապնդումն է՝ դատախազության քննչական ապարատի կող-

մից լուրջ հարուցելու և քննելու, դատարանում պետական մեղադրանքը պաշտպանելու ճանապարհով, իսկ երկրորդը դատախազի մասնակցությունն է այլ մարմինների իրականացրած քրեական հետապնդմանը՝ օրենքների կատարման նկատմամբ հսկողության և քննության կազմակերպման և ղեկավարման որոշ լիազորությունների կենսալուրջ մասնակցությամբ³¹⁶:

Ի տարբերություն քրեական հետապնդման այլ մարմինների՝ դատախազությունը քննության օրինականության, քննությանը մասնակցող անձանց օրինական շահերի և իրավունքների պահպանման լուրջ պարտավորված է: Քրեական հետապնդման մեջ դատախազության դերը պետք է անհատիկ օրինականության ապահովման լուրջ տակ: Այդ իսկ պատճառով հիմնավոր է թվում այն հեղինակների դիրքորոշումը, ովքեր ենթադրում են, որ դատախազի համար բոլորովին էլ պարտադիր չէ բոլոր դեպքերում քրեական լուրջ հարուցելը, անհետաձգելի քննչական լուրջություններ կատարելը, քրեական պատասխանատվության ենթարկելը և այլն: Դրա համար լուրջություն ունեն հետաքննություն, նախաքննություն իրականացնող պաշտոնատար անձինք, ինչպես նաև նրանց լուրջապետական ղեկավարները: Գրականության մեջ արտահայտվել է տեսակետ այն մասին, որ «դատախազը պետք է միջամտի քննությանը, իրականացնի քրեական հետապնդում միայն օրենքի խախտումները կանխելու, բացահայտելու և վերացնելու նպատակով: Հենց դա է քրեական դատավարության միջնորդական փուլերում քրեական հետապնդման լուրջության իրացմանը դատախազի մասնակցության յուրահատկությունը»³¹⁷: Սակայն դա ամենևին էլ չի նշանակում դատախազի պասիվություն, որը պետք է սպասի քննիչի կողմից օրենքի խախտման ազդանշանին: Քննիչի և դատախազի միջև կենդանի հաղորդակցությունը վերջինիս թույլ է տալիս կանխել օրենքի խախտումները և այդ նպատակով քննիչին ցուցումներ տալ այս կամ այն քննչական լուրջությունը կատարելու մասին, ըստ անհրաժեշտության լրիվ, օբյեկ-

³¹⁵ Ա.Բ. Սոլովյովն առաջարկում է ընդլայնել քրեական հետապնդման սուբյեկտների շրջանակը՝ դրանում ընդգրկելով նաև հետաքննիչին և հետաքննության մարմնի այլ պաշտոնատար անձանց, ինչպես նաև լուրջապետական վերահսկողության ղեկավարներին՝ հետաքննության մարմնի և քննչական բաժնի պետերին: Քանի որ խոսքը ավելի շատ քրեական հետապնդման սուբյեկտների շրջանակի մանրամասնեցման մասին է, այլ ոչ թե նոր սուբյեկտներ ներմուծելու հաշվին այդ շրջանակը ընդլայնելու մասին, ապա այս առաջարկության հետ կարելի է համաձայնել: Բացի այդ, հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի ընդգծումը պայմանավորված է նրանով, որ քրեական հետապնդման մեջ հենց նրանք են կատարում հիմնական դերը (տե՛ս *Նիեյսյա Ա.Ա. Օճի էօեյ օճի էի աի աի ի ճաճեաի աի էյ ա ի նոճաի ոճ նոճաեյօ ի ճի օաճնա.* — *Ա էի. : Ի ճի էօճաօճա է ի ճաճի նոճա է օճեի ճեյօ նոճաի ի - ի ճաճի աի է ճաճի ճի ու. Ի ., 1997, էջ 141-142):*

³¹⁶ Տե՛ս *Աճաճեի ի ա Ն. Օճի էօեյ օճի էի աի աի ի ճաճեաի աի էյ ա ճաճաեյի ի նոճ է ճի էօճաօճա. — Ա էի. : Ի ճի էօճաօճա է ի ճաճի աի աի ի նոճաճոճա. Ի ., 1997, էջ 48:*

յան ապահովմանը և իրացվում է հանցափորձությունը քննելիս կոնկրետ անձի դեմ քրեական փորձ հարուցելու, նրա ձերբակալման, նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու, նրան մերկացնելու և քրեական պատասխանատվության ենթարկելու, կասկածյալների և մեղադրյալների սահմանադրական իրավունքները սահմանափակող դատավարական փորձություններ կատարելու, մեղադրական եզրակացություն կազմելու, արդարադատություն իրականացնելու համար փորձը դատարան հանձնելու և դատարանում մեղադրանքը պաշտպանելու ճանապարհով:

ԳԼՈՒԽ 7.

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ

§ 1. Դատական վերահսկողությունը քրեական դատավարության մինչդատական փուլերում

Ժամանակակից պայմաններում հետխորհրդային տարածքում իրավափտության և իրավապահպան փորձուցության հրատապ հիմնախնդիրներից է քրեական դատավարությունում դատական վերահսկողության ինստիտուտի ձևավորումը և փորձությունը: Դատական վերահսկողության առանձին հարցերի անդրադարձել են բազմաթիվ հեղինակներ³²³:

Հիմնախնդիրը արդիական է նաև մեր հանրապետությունում, քանի որ ՀՀ 1998 քրեական դատավարության օրենսփրքում ամրափակված է քրեական փորձերով մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտը: ՀՀ քրեական դատավարության օրենսփրքի այդ ինստիտուտի առկայությունը պայմանավորված է դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի համընդհանրությամբ: Խորհրդային շրջանում դատարանի առջև որպես ինքնուրույն խնդիր չէր դրված քննության կամ որևէ այլ մարմինների փորձուցության օրինակա-

³²³ Տե՛ս *Արեւիճ Ա.Ա.* Օժաօյյ աեաճոյ...: *Բեւի իաե+ Բ.Է.* Ի ծիեօժի ծճեեե իաաւի ծ ե ռօաաիւե եիւօժիւ շա ի ժաաաժեօաեւիւ յի ժաճեաիւաի եաի: Էթաժաիւա ռօաօյե (1985-1996). Օիւ ռե, 1997: *Էթաժաաա Ա.Ա.* Նօաաիւայ աեաճոյ...: *Էթեթեթա Ի.Ա.* Նօաաիւե եիւօժիւ: Ի աեիւօժիւ յի ժաաիւ ե թօիւժեե ե ռիաժաիւ յի ռօ. Էօժճե, 1996: *Նեաիւաաա Է.Ա.* Ի ժիաաժեա շաեիւիւ ռօե ե իաիւիւաիւ յի ռօե յժիօաճեաիւ յօ ժաաիւա ժաճեաիւաիւ եյ ա ռիւաաաիւ յօ ռօաեյօ. Աաօիւժաօ. աեճճ. ... եաիա. իժ. իաօե. Աիւաիւաա, 1998: *Օնօեի իա Ի.Ա.* Նօաաիւե եիւօժիւ իա ռօաաեե յժաաաժեօաեւիւ յի ժաճեաիւաիւ եյ. Աաօիւժաօ. աեճճ. ... եաիա. իժ. իաօե. Նաժաիւ ռե, 1999: *Նիւթեթեթա Ա.Ա.* Նօաաիւե եիւօժիւ շա ի ժիաաաիւաիւ ռեաճեաիւ յօ աաեթօաեե ե ժաաիւեյի ե յժիեօժիւ ժա ե յժաաիւա ժաճեաիւաիւ եյ, իաժաիւե+եաաիւեիւ ե եիւիւժեօօեիւիւ յի ժաաա ե ռիաիւաիւ աժաաաիւ ա օաիւիւաիւ յժիօաճեա ժիւ ռե. Աաօիւժաօ. աեճճ. ... եաիա. իժ. իաօե. Օիւ ռե, 1999 և այլն:

մենք կվերլուծենք ՀՀ քրեական դատավարության օրենսփոքում պարունակվող դրույթները մինչդատական վարույթի նկատմամբ նախնական դատական վերահսկողության վերաբերյալ սկզբում պարզելով, թե ինչո՞վ է պայմանավորված այդ ինստիտուտի օրենսդրական ամրափրումը և որքանո՞վ է այն համապատասխանում արդարադատության խնդիրներին ու ՀՀ քրեական դատավարության օրենսփոքի հայեցակարգին: Այդ ընթացքում կփորձենք պարզել նաև մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության և դատախազական հսկողության հարաբերակցությունը:

Ամենից առաջ պետք է նշել, որ ցանկացած իրավական համակարգում առկա է վերահսկողության որոշակի կառուցակարգ: Այս տեսանկյունից բացառություն չի կազմում նաև քրեական դատավարությունը, որտեղ հանցագործությունները քննելիս օրինականությունը երաշխավորվում է դատախազական հսկողության իրականացման, ինչպես նաև դատական վերահսկողության ինստիտուտի ներմուծման միջոցով: Սակայն խոսքը ոչ թե քրեական դատավարությունից դատախազական հսկողությունը բացառելու, այլ այն դատական վերահսկողությամբ լրացնելու մասին է³²⁶:

Մենք համամիտ ենք այն հեղինակների տեսակետին, ովքեր օտնում են, որ դատական վերահսկողությունը որպես քրեական դատավարության մասնակիցների իրավունքների և ազատությունների պաշտպանության եղանակ, ունի մեծ նշանակություն, քանի որ այն կատարում է քրեական հետապնդման մարմիններից զսպող գործոնի դեր, ապահովում է խախտված իրավունքների արագ և արդյունավետ վերականգնման հնարավորություն և, վերջապես, թույլ է տալիս նախաքննության մեջ մտցնել մրցակցության որոշ տարրեր, որոնք միջնորդությունը, բողոքը արդարացիորեն քննելու և լուծելու երաշխիքներ են³²⁷: Մի խոսքով, դատական վերահսկողության ինստիտուտը անհատի շահերի պաշտպանությունն ապահովող գործուն միջոց է: Սակայն այստեղից ծափում է մեկ այլ, ոչ պակաս կարևոր հարց. ի՞նչ կերպ

³²⁶ ՌԴ Սահմանադրության 25 հոդվ. նախատեսված է ավելի ճկուն ձևակերպում. «Ոչ ոք իրավունք չունի այլ կերպ, քան ֆեդերալ օրենքով սահմանված դեպքերում կամ դատական որոշման հիման վրա թափանցել բնակարան, այնտեղ բնակվող անձանց կամքին հակառակ»:

կազդի այդ ինստիտուտը հանցավորության դեմ պայքարի գործընթացին:

Այս հարցին պատասխանելիս պետք է հաշվի առնել, որ դատախազը մինչդատական փուլերում իրականացնում է երկու կարևոր գործառույթ՝ քննության ընթացքում օրենքների կատարման նկատմամբ հսկողություն և քրեական հետապնդում: Քննիչի կարևորագույն դատավարական գործողությունների սանկցիավորումը դատախազի կողմից միշտ դիտարկվել է որպես հսկողական գործունեության բաղադրամաս: Մինչդատական փուլերում դատական վերահսկողության ներմուծման կապակցությամբ ծափում են երկու կարևոր և փոխկապակցված հարցեր: Նախ՝ դատարդը չի՞ հանգեցնի դատախազական հսկողության թուլացման: Երկրորդ՝ արդյոք դատախազը հսկողական մարմնից չի՞ վերածվի առավելապես հետապնդման մարմնի: Խոսքը կատարվող բարենորոգման էության մասին է. կամ դա քրեական դատավարությունում շեշտադրման որոշակի փոփոխություն է, կամ դատավարական գործառույթների ու իրավապահության մարմինների համակարգի լուրջ վերակազմավորում: Հենց այս հարցերին էլ կփորձենք պատասխանել՝ վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսփոքում ամրափակված մոտեցումները քննարկվող հիմնախնդիրների վերաբերյալ:

Նախ և առաջ պետք է պարզել, թե ինչ պետք է հասկանալ դատական վերահսկողություն ասելով: Վերահսկողությունը ստուգումն է, ինչպես նաև դիտարկումը ստուգման նպատակով³²⁸: Դատարանի կողմից մինչդատական վարույթի նկատմամբ իրականացվող վերահսկողության ձևերից մեկը նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսփոքի 278 հոդվ. 2-րդ մասում, որի համաձայն դատարանը քրեական դատավարության օրենսփոքում սահմանված դեպքերում և կարող է քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործողություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ

³²⁷ Տե՛ս *Éaçáðááá Á.Á.* Νόοάάί àÿ àèàñüü... , էջ 79:

³²⁸ Տե՛ս *Ñř ěř áüáá Á.Á., Őř èáðááá Ĭ .Á., ŐãèóèèĬ Á.Á., Bèóář àè÷ Ĭ .Á.* Çà-èĬ í Ĭ ñüü à äĬ ñóáááĬ üö ñðàäèÿö... , էջ 49:

բողոքները: Իսկ ինչ վերաբերում է քննիչի կողմից առանձին Պործողությունների կատարման սանկցիավորմանը, ապա դա մեծամասամբ վերաբերում է հսկողական Պործունեությանը³²⁹: Այսպիսով, ստեղծվում է կացություն, երբ մինչդեռ տակադուստրիան հանցաՊործության քննության օրինականության նկատմամբ հսկողության լիազորությունը դրված է երկու մարմինների՝ դատախազության և դատարանի վրա: Այդ Պործառույթը դատախազությունը կատարում է ՀՀ Սահմանադրության 103 հոդվ. ուժով: Ավելին, ՀՀ քրեական դատավարության օրենսՊրքով նախատեսված դատավարական և օպերատիվ-հետախուզական Պործողություններն (279, 280, 281 հոդվածներ) իրականացվում են դատարանի թույլտվությամբ, իսկ դրանց կատարման, արդյունքների ամրաՊրման և ստացված տվյալների օՊտաՊործման վրա հսկողությունն իրականացնում է դատախազությունը: Այստեղից ծաՊում է տրամաբանական հարց. կարելի՞ է արդյոք դատարանի և դատախազության միջև լիազորությունների այդպիսի տարանջատումը համարել արդյունավետ քրեական դատավարության խնդիրների լուծման տեսանկյունից, կամ նախընտրելի՞ է, որ դատախազությունն իրականացնի իր սահմանադրական լիազորությունը՝ հսկողությունը նախնական քննության վրա, լրիվ ծավալով, իսկ դատարանը վերահսկի դատավարության մասնակիցների սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակման հետ կապված Պործողությունների օրինականության վրա:

Պետք է հիշել, որ հսկողությունը մշտական, անընդհատ, իսկ հաճախ նաև օպերատիվ Պործունեություն է (օրինակ՝ բնակարանի խուզարկություն անցկացնելու հարցի լուծումը): Կարծում ենք՝ որ դատարանը ոչ միշտ է ի վիճակի ապահովելու այսպիսի Պործունեության արդյունավետ իրականացումը: Այդ է վկայում ՀՀ որոշ դատարանների Պործունեությունը քրեական դատավարության նոր օրենսՊրքի ուժի մեջ մտնելուց հետո: Որոշ Պործերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատարանների վերահսկողական Պործունեությունը ոչ միայն չի նպաստում նախաքննությամբ

³²⁹ Տե՛ս *Ntéráúáá Á.Á., Béoáíáé: Í.Á. Í dáááàðèòàéúí íá ðáññéááíááíèá è íðíéòðíðñéèé íááçíð á ñááòá ñóáááííé ðáòíðì ù.* — *Çâêííííñòù*, 1995, թիվ 8, էջ 5:

յան օրինականությանն ու արդյունավետությանը, այլև երբեմն նույնիսկ խանՊարում է դրան: Այսպես, ամփոփելով դատական վերահսկողության ինստիտուտի կիրառման երկամյա փորձը՝ Երևան քաղաքի դատախազությունը ընդՊծել է, որ այն ունի և դրական և բացասական կողմեր: Որպես խափանման միջոց՝ կալանքը կիրառելու Պործողության թույլտվության իրավունքը դատարանին տալը հիմնականում Պնահատվում է դրական՝ նկատի ունենալով այդ դատավարական որոշման բարդությունը և պատասխանատվությունը: Իսկ ինչ վերաբերում է խուզարկությանը, ապա այդ անհետաձՊելի քննչական Պործողությունը քրեական դատավարության նոր օրենսՊրքի ուժի մեջ մտնելու պահից դադարել է այդպիսին լինելուց, ինչն անպայմանորեն բացասաբար է ազդում քրեական դատավարության խնդիրների կատարման վրա: Այսօրվա դրությամբ, որպեսզի կատարվի այդ անհետաձՊելի քննչական Պործողությունը ժամեր և նույնիսկ օրեր են վատնվում դատարանի համաձայնությունը ստանալու համար: Դրա հետևանքով անհետանում են հանցաՊործության բացահայտման համար անհրաժեշտ իրեղեն ապացույցները³³⁰:

Այստեղ տեղին է հիշել ՌԴ-ում դատական բարեփոխումների հայեցակարՊի հեղինակներից մեկի՝ Ի.Լ. Պետրովսիինի նախաՊուշացումները դատարանին՝ կալանքի՝ որպես խափանման միջոցի կիրառման հարցը լուծելու իրավազորություն տալու բացասական հետևանքների մասին. «Կալանավորման թույլտվության և հաստատման Պործառույթների լրիվ փոխանցումը դատարանին պահանջում է իրավապահպան մարմինների միջև փոխհարաբերությունների լուրջ վերակառուցում, նրանց խնդիրների և Պործառույթների փոփոխում: Եթե կալանավորումը դատարանի իրավազորությունն է, ապա տրամաբանական է նրա իրավասությանը հանձնել դատավարական հարկադրանքի այլ միջոցների (ձերբակալման, խուզարկության, առՊրավման, Պույքի վրա կալանք դնելու և այլն) կիրառման սանկցիավորումը, ինչպես դա Պոլություն ունի, օրինակ, ԱնՊլիայում և ԱՄՆ-ում: Այդպիսով օրինականության վրա դատախազական հսկողության փոխարեն նախաքննության փուլում որոշակիորեն կներմուծվեր դատական հսկողություն:

³³⁰ Տե՛ս Դատական վերահսկողությունը մինչդեռ տակադուստրիան համախորհրդակցության նյութեր: «Իրավաբանական թերթ». 23 մարտի 1999 թ., Երևան:

Այդ ժամանակ ծափում է մեկ այլ հարց. ի՞նչ դատախազական հսկողություն է դա, եթե չի տարածվում նախաքննության վրա: Պե՞տք է արդյոք դատախազական հսկողությունը ընդհանրապես, եթե քրեական դատավարությունում հսկողական լուծումները ավելի արդյունավետ կարող է կատարել դատարանը, իսկ դատախազը կհամարվի միայն մեղադրող: Ավելի պարզ է մյուս տարբերակը՝ քննիչին թողնել տվյալ խափանման միջոցի ընտրության, դատախազին՝ դրա սանկցիավորման իրավունքը, իսկ մեղադրյալին և նրա պաշտպանին հնարավորություն տալ կալանքը լուծարելու և անհետն առաջին ատյանի դատարան»³³¹:

Հարցի այդպիսի լուծման դեպքում, մեր կարծիքով, դատախազական հսկողության և դատական վերահսկողության միջև կհաստատվեր լավագույն հարաբերակցություն: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հիմքում ընկած են ԱՊՀ երկրների մոդելային քրեական դատավարության օրենսգրքի դրույթները, որոնց մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մոդելային օրենսգրքում ամրապնդված մոտեցումներից մեկն էլ մինչդատական վարույթի օրինականության վրա դատախազական հսկողության լրիվ փոխարինումն է դատական վերահսկողությանը. դատավարական լուծումների կատարման և դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման թույլտվության իրավունքը տրված է քննիչ դատավորին, որը միաժամանակ համարվում է նաև նախաքննության մարմին:

Հայաստանի Հանրապետության քրեադատավարական համակարգը չի նպաստում դատական վերահսկողության արդյունավետ լուծումները, քանի որ լուծումներն ունի հակասություն մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող դատարանի և, ըստ Սահմանադրության 103 հոդվ., հետաքննության և նախաքննության մարմինների կողմից օրենքների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի միջև:

Քննարկվող առումով ուշադրության է արժանի ևս մեկ հանգամանք: Վերահսկիչ լիազորությունները Հայաստանի Հանրապետությունում տրված են առաջին ատյանի մարզային դատա-

³³¹Տե՛ս *Y'aadōōēl Ē.Ē. Nōāāáí ūā āāāíōēē īdāā ēē+ííñōē ā ōāīēīāíī īdī-ōāññā. — Āēōōāēūī ūā āī īdīññ āíđūā ūā ñ īđāñōōī ííñōūī ǃ Đīññēē ē çā đōāā-æīī. Āūī.8, Ī ., 1992, էջ 67-68:*

րաններին, որոնք դրա հետ միասին իրականացնում են արդարադատություն բոլոր քրեական լուծումներով: Դատավորը, ում սահմանափակ ժամանակահատվածում առաջարկվում է լուծել կալանքը որպես խափանման միջոց կիրառելու իրավաչափության հարցը, երբ նա մանրամասն ծանոթ չէ քրեական լուծման, հաճախ այդպես էլ հնարավորություն չունի պարզելու ներկայացված միջոցառության հիմնավորվածությունը: Այդ պայմաններում դատավորը ստիպված է կա՛մ կուրորեն վստահել քրեական հետապնդման մարմնի պաշտոնատար անձին՝ չխորանալով էության մեջ, համաձայնվել կալանքը որպես խափանման միջոց կիրառելու հետ և դրանով իսկ տվյալ լիազորությունը դարձնել դատարկ ձևականություն, կա՛մ էլ, ուշադրություն չդարձնելով ժամանակի սղության և քրեական լուծման ծավալի վրա, անձամբ հավաստիանալ հարցի հիմնավորվածության մեջ: Երկրորդ որոշումն ընդունելուն կարող է նպաստել տվյալ խափանման միջոցը փոխելու կամ վերացնելու՝ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով: Համաձայն քրեական դատավարության օրենսգրքի 142 հոդվ.՝ եթե քրեական վարույթն իրականացնող մարմինը պարզել է անձին կալանքի տակ պահելու անհրաժեշտության բացակայությունը, ապա այդ մարմնի որոշման հիման վրա մեղադրյալը ենթակա է կալանքից ազատման:

Երևան քաղաքի, Արարատի և Արմավիրի մարզերի առաջին ատյանի դատարանների դատավորների հարցման արդյունքները վկայում են, որ այս հարցերով հաճախ դատարանի և քրեական հետապնդման մարմինների միջև առաջանում են հակասություններ: Կալանավորման թույլտվության հարցը լուծելիս դատարանի վրա ճնշում է ընդունվող որոշման հետևանքների համար պատասխանատվության բեռը: Եթե դատավորը մերժի կալանք կիրառելը, ապա մեղադրյալը կարող է թաքնվել, և դատավորի մեղքով լուծում կկատարվի: Իհարկե, այդպիսի մոտեցումը կարելի է ընդհանրապես որպես անցյալի մնացուկ, սակայն չի կարելի հաշվի չառնել:

Հաջորդ կարևոր հարցը, որի կարգավորումը քրեական դատավարության օրենսգրքում կարելի է համարել անհաջող, դատական վերահսկողություն իրականացնելու իրավունք ունեցող դատական համակարգի օղակի հարցն է: Ըստ լուծումների օրենսդրության՝ այդ լիազորության իրականացումը դրված է առաջին

հետևանքով առաջացած բացը պետք է լրացնի դատարանը, ինչը կասկածելի է, եթե հաշվի առնենք նախաքննությանը դատարանի մասնակցության ոչ մշտական, դրվա□ային բնույթը³³³: Այսպիսով, մինչդատական վարույթում դատախազական հսկողությունը դատական վերահսկողությամբ փոխարինելը չի կարելի միանշանակ ընդունել: Այդ դեպքում մի կողմից՝ կորչում է դատավարական □ործողությունների արդյունավետության անհրաժեշտ նախադրյալ համարվող օպերատիվությունը, որոշումների ընդունման հանկարծակիությունը, աճում է ապացույցների կորստի և քննության նյութերի հրապարակման սպառնալիքը, մյուս կողմից՝ դատախազական հսկողությունը մասնակիորեն դատական վերահսկողությամբ փոխարինելը թելադրվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, որի համապատասխան նորմերը համահունչ են «Մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների հոչակա□րի» և այլ միջազ□ային նորմերին և դրանց ուժով փոփոխման ենթակա չէին: Բացի այդ, չենք կարող հերքել այն հան□ամանքը, որ հանցա□ործության քննության ընթացքի վրա դատարանի վերահսկողությունն ավելի օբյեկտիվ է, քան դատախազական հսկողությունը: Այս հակասության պայմաններում «դատավարական □իտության խնդիրն է փոխզիջումային լուծման որոնումը, լուծումը, որը կմիավորեր դատախազական հսկողության առավելություններն ու հնարավորությունները դատարանի հնարավորությունների հետ... Հետևաբար խոսք պետք է □նա ոչ թե դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման նկատմամբ դատախազական հսկողության վերացման և այն դատական հսկողությամբ փոխարինելու մասին, այլ, ինչպես քրեական հետապնդման, այնպես էլ քաղաքացիների իրավունքների պաշտպանության՝ ապահովման շահերից ելնելով, դատախազի և դատարանի □ործառույթների զու□ակցման մասին»³³⁴:

Այս հիմնախնդրի վերաբերյալ իրավապահպան մարմինների աշխատակիցների կարծիքը պարզելու համար մեր կողմից անցկացվել է Հայաստանի Հանրապետության առաջին աստիճանի դա-

տարանների դատավորների հարցում: Հարցման ենթարկվածների ավելի քան 65 %-ը □տնում է, որ դատավարական հարկադրանքի միջոցների կիրառման թույլտվության իրավունքը պետք է պատկանի միայն դատարանին, իսկ քննչական □ործողությունների կատարման թույլտվության իրավունք դատարանի հետ միասին պետք է ունենա նաև դատախազը՝ հիմքերը հետա□այում դատարան ներկայացնելու պայմանով:

Մեր կարծիքով, մինչդատական վարույթում դատախազական հսկողության և դատական վերահսկողության հարաբերակցության հարցի լուծման ամենաարդյունավետ տարբերակը հետևյալն է. դատական վերահսկողությունը պետք է սահմանափակվի նրանով որ բողոքների հիման վրա ստու□ի դատախազի և քննիչի կողմից սանկցիավորված քրեական դատավարության մասնակիցների սահմանադրական իրավունքները և ազատությունները սահմանափակող □ործողությունների ու որոշումների օրինակաճությունը: Դրանով իսկ դատական վերահսկողության շրջանակները (սահմանները) կընդ□րկեն քաղաքացիների ամենաէական իրավունքները: Այդ դեպքում դատական վերահսկողությունը չի փոխարինի դատախազական հսկողությանը, այլ կդառնա այն քննչական □ործողությունների ու դատավարական հարկադրանքի միջոցների օրինակաճության լրացուցիչ երաշխիք, որոնց կիրառումը պահանջում է դատախազի թույլտվությունը:

Բացի այդ, ինչպես արդեն նշել ենք, դատավարության յուրաքանչյուր սուբյեկտի հատուկ է որոշակի հիմնական □ործառույթ, որը չի կարող համընկնել այլ սուբյեկտների հիմնական □ործառույթի հետ: Իսկ ինչ վերաբերում է սուբյեկտի լրացուցիչ □ործառույթներին, ապա դրանք չեն կարող հակասել նրա հիմնական □ործառույթին: Այս պահանջը չկատարելը, անկասկած քայքայում է քրեադատավարական համակար□ի հիմքերը և իրական սպառնալիք է ստեղծում իրավակիրառման օրինակաճության համար: Ասվածն առաջին հերթին վերաբերում է դատարանին, որի հիմնական կոչումը արդարադատության իրականացումն է: Վերջինիս օրինակաճությունը պետք է կախվածության մեջ դրվի դատարանի այլ լիազորություններից, այդ թվում նաև այն □ործողություններից, որոնք բխում են մինչդատական վարույթի նկատմամբ հսկողություն իրականացնելուց: Հետևաբար, դատարանի վրա չի կարող դրվել մինչդատական վարույթի նկատմամբ հսկողության լիազորություններ իրականացնելու պարտականություն

³³³ Հարցման արդյունքների համաձայն՝ քննիչների 70%-ը (դատախազության քննիչների 100 %-ը) □տնում են, որ քրեական □ործերով մինչդատական վարույթի կառուցումը մրցակցության սկզբունքի հիման վրա նպատակահարմար չէ: Նրանց կարծիքով քննության այդ փուլում կարելի է ներմուծել միայն մրցակցության որոշ տարրեր:

³³⁴ Տե՛ս *Արե՛նի Ա.Ա. Օձա՞օյ՛յ ա՛նձո՞ւ...,* էջ 225:

այն ծավալով, որն ըստ Սահմանադրության կազմում է դատախազի հիմնական լիազորությունը:

Քանի որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը սահմանել է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության իրականացման որոշակի շրջանակներ, ապա խնդիրը հանում է նրան, որ ճշուդային օրենսդրությունների մեջ սահմանվի դատարանի նշված լիազորությունների իրականացման այնպիսի կարգ, որը թույլ չտա այդ փուլում դատախազական հսկողությունը դատական վերահսկողությամբ փոխարինումը և միաժամանակ նպաստի քաղաքացիների իրավունքների պաշտպանությանն ու հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ լույսը նվիրված է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությանը: Պետք է նշել, որ տվյալ լիազորությունները կարգավորում են ոչ միայն դատական վերահսկողության հարաբերությունները, այլև դատարանի հսկողական լիազորությունները՝ քննչական լիազորությունները և դատավարական հարկադրանքի միջոցները, որոնք կատարվում են դատարանի որոշմամբ: Հետևաբար քրեական դատավարության օրենսգրքի նշված լույսը պետք է վերանայվի «Դատական հսկողությունը և դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ»:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը սպառնիչ սահմանում է մարդու և քաղաքացու այն կարևորագույն իրավունքներն ու ազատությունները, որոնք կարող են դատավարական, օպերատիվ-հետախուզական լիազորությունների կատարման և հարկադրանքի միջոցների կիրառման հետևանքով սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ: Դրանք են՝ կալանքը որպես խափանման միջոց կիրառելը (քր. դատ. օր. 18 հոդվ.), նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, հեռախոսային և այլ հաղորդումների օտարացման սահմանափակմանն ուղղված լիազորությունները (20 հոդվ.), ինչպես նաև բնակարանի խուզարկությունը (21 հոդվ.):

1999 թ. մարտի 20-ին Երևանում կայացած լիազորությունների համաժողովում՝ նվիրված դատական վերահսկողության հիմնախնդիրներին, արտահայտվեցին տեսակետներ այն մասին, որ միայն դատարանի որոշմամբ կիրառվող քննչական լիազորությունների և դատավարական հարկադրանքի միջոցների շրջան-

ակն անհրաժեշտ է ընդլայնել ու տարածել լիազորությունները դեպի և մեղադրյալին ժամանակավորապես պաշտոնից հեռացնելու վրա³³⁵: Այդպիսի մոտեցումը հիմնավորվում էր նշված դատավարական լիազորությունների օրինականության համար լրացուցիչ երաշխիքներ ստեղծելով: Սակայն, կարծում ենք, այդպիսի մոտեցման հետ համաձայնել չի կարելի: Ընդլայնելով դատարանի կողմից թույլատրվող դատավարական լիազորությունների շրջանակը՝ մենք միաժամանակ նեղացնում ենք նախաքննության օրինականության նկատմամբ դատախազի սահմանադրական լիազորությունը, անհիմն կերպով դատախազական հսկողությունը փոխարինում ենք դատական վերահսկողությամբ: Այդպիսի լուծումն անհիմն է նաև այն պատճառով, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը չի նախատեսում նշված դատավարական լիազորությունների կատարման մասն կարգ: Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված զննության, առարկայման, լիազորությունների կալանք դնելու և մեղադրյալին պաշտոնից հեռացնելու կարգերը, երբ առաջին երեք դեպքերում դրանք կատարում են հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի որոշմամբ, իսկ վերջին դեպքում՝ միայն դատախազի որոշմամբ կամ նրա համաձայնությամբ, երաշխավորում են դրանց կատարման օրինականությունը և միաժամանակ, որ քիչ կարևոր չէ, ապահովում են քննության մարմնների լիազորությունների ժամանակին կատարում՝ կանխելով ապացույցները ոչնչացնելը կամ թաքցնելը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված բնակարանի խուզարկության կարգը լիազորություններում իրականացնելիս առաջանում են լուրջ, իսկ երբեմն նաև անհաղթահարելի արգելքներ: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը կաշկանդված չլինելով ոչ մի միջազգային փաստաթղթով, չի նախատեսել այդ քննչական լիազորության կատարման այլընտրանքային կարգ՝ միայն դատարանին տալով խուզարկության կատարման թույլտվության իրավունքը: Հաշվի առնելով այդ քննչական լիազորության առանձնահատուկ ծերը (օպերատիվություն, հանկարծակիություն, օտարացում), որով պայմանավորված է դրա արդյունավետությունը, Սահմանադ-

³³⁵ Տե՛ս «Դատական վերահսկողությունը մինչդատական փուլերում» լիազորությունների համաժողովի նյութեր, – «Իրավաբանական թերթ», 23 մարտի, 1999 թ., Երևան:

րության մեջ անհրաժեշտ է նախատեսել բնակարանի խուզարկությունը նաև դատախազի սանկցիայի հիման վրա, ինչպես դա արված է ՌԴ և Վրաստանի Հանրապետության Սահմանադրություններում: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը չի նախատեսել որևէ բացառություն այդ քննչական Պործողության կատարման ընդհանուր կարգից, ինչը թույլ կտար քրեական դատավարության օրենսդրում ամրապնդել այն պայմանները, որոնց առկայության դեպքում Պործով վարույթն իրականացնող մարմինը հնարավորություն կունենար անհետաձեռելի դեպքերում, սեփական որոշման հիման վրա անհապաղ կատարել քննչական այդ Պործողությունը և դրանից հետո՝ 24 ժամվա ընթացքում, դատարան ներկայացնել խուզարկության կատարման օրինականությունը և հիմնավորվածությունը ապացուցող նյութեր:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսդրում ներկայումս օրենսդիրը նախատեսել է նորմ, որը խախտում է Հիմնական օրենքը: Այսպես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 21 հոդվ. սահմանում է, որ բնակարանը կարելի է խուզարկել միայն դատարանի որոշման հիման վրա: Այստեղ չի նախատեսված որևէ բացառություն, ինչը քրեական հետապնդման մարմինն դնում է ծայրահեղ կացության մեջ, երբ առաջանում է այդ անհետաձեռելի քննչական Պործողության անհապաղ կատարման անհրաժեշտությունը: Բայց, ղեկավարվելով այդ քննչական Պործողության անցկացման արդյունավետության ապահովման ձեռնարկով՝ օրենսդիրը, կանխամտածված խախտելով սահմանադրական նորմը, առարավման կատարման կարգը կարգավորող հոդվածում (որի համար օրենքով չի պահանջվում դատական որոշում) նախատեսել է քննիչի որոշման հիման վրա խուզարկության կատարման հնարավորություն, եթե առարավման ընթացքում հայտնաբերվում են հետախուզվող առարկաներ (քր դատ. օր. 228 հոդվ. 6-րդ մաս): Ակնհայտ է, որ այդ նորմը հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը: Սակայն պարզ է նաև, որ օրենսդիրը դիմել է այդ խախտմանը, որպեսզի զոնե մասամբ ապահովի խուզարկության՝ որպես քննչական Պործողության, արդյունավետությունը:

Մեկ այլ օրինակ: Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսդրի 284 հոդվ., որ կարգավորում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների կատարման վերաբերյալ միջնորդությունների քննարկման կարգը, նախատեսված են

հիմքեր, որոնց առկայության դեպքում օրենքը թույլատրում է դրանք իրականացնել և այդպիսով սահմանափակել նամակափոխության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռափոխական և այլ հաղորդումների ֆաղտնիության իրավունքը՝ առանց դատարանի որոշման՝ հիմք ընդունելով տվյալ միջոցառումն իրականացնող մարմնի ղեկավարի որոշումը: Այս դեպքում ևս առկա է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 20 հոդվ. ուղղակի խախտում:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսդիրը քաղաքացիների սահմանադրական իրավունքները և ազատությունները սահմանափակող՝ վերը նշված դատավարական Պործողությունների կատարման թույլտվություն ստանալու միջնորդության իրավունքով օժտել է ինչպես դատախազին, այնպես էլ քննիչին և հետաքննության մարմնի պետին: Մեր կարծիքով՝ այդպիսի մոտեցումը պետք է համարել անհիմն և նույնիսկ սխալ ելնելով հետևյալից. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսդրի համաձայն քրեական Պործի քննությունն իրականացվում է մրցակցության սկզբունքի հիման վրա: Դատախազը, որը դատարանում պաշտպանում է մեղադրանքը և կրում է ապացուցման պարտականություն, պետք է մինչդատական վարույթում ունենա լայն լիազորություններ՝ իր առջև դրված խնդիրները հաջող իրականացնելու համար: Ըստ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և քրեական դատավարության օրենսդրի՝ դատախազն իրականացնում է հսկողություն և դատավարական ղեկավարում հետաքննության և նախաքննության նկատմամբ: Դա նշանակում է, որ քաղաքացիների սահմանադրական իրավունքները և ազատությունները սահմանափակող կարևորագույն դատավարական Պործողությունները չեն կարող դատարանում միջնորդվել այլ կերպ, քան դատախազի միջոցով կամ զոնե, ծայրահեղ դեպքում, նրա համաձայնությամբ:

Քաղաքացիների սահմանադրական իրավունքները և ազատությունները սահմանափակող դատավարական Պործողությունների թույլտվության իրավունքը դատարանին հանձնելը չպետք է հանդեցնի այն բանին, որ դատախազը զրկվի այդ Պործողությունների կատարման վերաբերյալ հետաքննության մարմնի և քննիչի միջնորդությունների վրա հսկողության իրավունքից: Այդ իմաստով ճիշտ չպետք է համարել այն կարգը, որ սահմանված է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսդրով՝ վերը թվարկված քննչական Պործողությունների կա-

միայն հասկացության հիմնական բաղադրատարրերի թվարկումը չի բացահայտում քննարկվող համակարգային կազմավորման տարրերի բարդ բնույթը:

Մեր կարծիքով, հիմնախնդրում առկա հարցականները չի լուծում նաև Խ.Ու. Ռուստամովի առաջարկությունը՝ քրեական դատավարության ձևերի հասկացությունը բնորոշել որպես քրեական դատավարության սուբյեկտների լրացման ընթացքում որոշակի հերթականությամբ առաջացող հասարակական հարաբերությունների, որոշումների ընդունման կարգը և դրանց վերանայման պայմանները կարգավորող իրավական նորմերի համակարգ³⁴²: Այս բնորոշումը ևս այժմ չի ընկնում որոշակիությամբ և չի բացահայտում քրեական լրացման միջնադասական վարույթի դատավարական ձևերի էությունը, քանի որ նույնացնում է քրեադատավարական ձևը քրեադատավարական իրավունքի հետ, ինչի հետ համաձայնել չի կարելի: Այդ սահմանման հիմնական արժեքը դատավարական ձևը դատավարության որոշակի փուլից կախվածության մեջ դնելն է:

Դատավարական ձևի հասկացության մշակման հարցում որոշակի ներդրում ունի Տ. Յու. Իվանովան: Նա այդ հասկացությունը կապում է դատավարական լրացման կատարման հատուկ եղանակի հետ: Ելնելով ձևը կատարողի մասին ընդհանուր տեսական պատկերացումներից՝ հեղինակը դատավարական ձևը բնորոշում է որպես դատավարական լրացման իրականացման հատուկ եղանակ, որը ներառում է դատավարական լրացման կատարման և հավաստման պայմանները, կարգը, հերթականությունը և ժամկետները³⁴³:

Ինչպես լրացման, քրեական լրացման վարույթն անցնում է օրենքով սահմանված քրեական դատավարության փուլեր, որոնք դատավարության փոխկապված, սակայն հարաբերականորեն ինքնուրույն մասերն են: Քրեական լրացման միջնադասական վարույթը ներառում է երկու փուլեր՝ քրեական լրացման հարուցում և նախնական քննություն, որոնց հիմնական խնդիրն է համարվում հանցալրացման դեպքի և հանցանքների բացահայտումը,

հանցանք կատարած անձանց նկատմամբ քրեական հետապնդման իրականացումը՝ պահպանելով դատավարության մասնակիցների օրինական շահերը և իրավունքները, ավարտվում է քրեական լրացման դատարան ուղարկելու կամ այն կարճելու մասին արդյունքային դատավարական որոշման ընդունմամբ: Քրեական լրացման միջնադասական վարույթի դատավարական ձևերը պետք է ունենան ավարտական բնույթ, տարբերվեն միմյանցից և առավելապես պետք է նպաստեն նախնական քննության առջև դրված խնդիրների լուծմանը: **Հետևաբար, քրեական լրացման միջնադասական վարույթի ձևը պետք է բնորոշել որպես քրեական դատավարության այդ փուլում դատավարական լրացման իրականացման օրենքի պահանջներին համապատասխանող, դատավարության մասնակիցների օրինական շահերը և իրավունքները պահպանող հատուկ եղանակ, քրեական հետապնդում իրականացնող մարմինների դատավարական լրացման և որոշումների որոշակի հերթականություն, որն ուղղված է հանցալրացման դեպքի ու հանցանքների ապացուցմանը և ավարտվում է լրացման դատարան ուղարկելու կամ այն կարճելու մասին արդյունքային դատավարական որոշման ընդունմամբ:**

Վերջին տարիներին ամբողջ աշխարհում հատուկ ուշադրության է արժանացել միջնադասական վարույթի ձևերի տարբերակման հիմնախնդիրը, որը պայմանավորված է երկու կարևոր հանցանքներով՝ քրեական օրենքի ճիշտ կիրառման համար պատշաճ պայմանների ստեղծման և այդ խնդիրը ժամանակի ու ջանքերի նվազապես ծախսերով իրականացնելու անհրաժեշտությամբ: Քրեական օրենքի կիրառումն արդյունավետ է այնքանով, որքանով սեղմ է հանցալրացման կատարման պահի և լրացման ըստ էության լուծելու միջև ընկած ժամանակը:

Մեր կարծիքով, միջնադասական վարույթի և ընդհանրապես քրեական լրացման ողջ վարույթի ձևերի տարբերակման հիմնախնդրի լավագույն լուծումը մեծապես պայմանավորված է քրեադատավարական ձևի միասնության և տարբերակման միջև հարաբերակցությունը որոշելուց: Այս կողմից հիմնախնդրի էությունն այն է, թե ո՞ր ճանապարհով պետք է ընթանա քրեական լրացման միջնադասական վարույթի ձևերի բարեփոխումը՝ վարույթի կարգի միասնականությունը ուժեղացնելու, թե՞ տարբերակման ընդլայնման ուղղությամբ: Այս հարցերին, որոնք կարևոր տեսական և լրացման նշանակություն ունեն, պատաս-

³⁴² Տե՛ս *Δόμοι τὰ Ὁ.Θ.* Ἀεὸδῶδαίῳεἰσὸῦ ὀϊδὶ ὀαῖεῖαῖαῖ ἰδῖῳἰῳἰῳ. Ἀἰ-
οῖδῶδ. ἀεῖν. ... αῖε. ἰδ. ἰῶε. Ἰ ., 1998, էջ 11:

³⁴³ Տե՛ս *Ἐαῖ τὰ Ὁ.Θ.* Ὁ-ἄνῳεἰ ἰδῖῳἰδῶ ἄ αῖεἰῳἰῳἰῳ ἰῶ ἰδῶἰῳἰῳἰῳἰῳ-
ἰῖ ἰῳἰῳἰῳἰῳ. Ἀἰοῖδῶδ. ἀεῖν. ... εἰῳ. ἰῶε. Ἰῳ ἰῳ, 1999, էջ 12:

խանելու համար անհրաժեշտ է կատարել համեմատական վերլուծություն՝ քննարկման առարկա դարձնելով մինչդատական վարույթի ձևի տարբերակմանը վերաբերող ՀԽՍՀ 1961 թ. քրեական դատավարության օրենսգրքի, Հայաստանի Հանրապետության 1998 թ. քրեական դատավարության օրենսգրքի դրույթները, ինչպես նաև ՌԴ ու Եվրոպական մի շարք երկրների փորձն այս ոլորտում՝ համադրելով դրանք դատավարության տեսությունում առկա տեսակետների հետ: Այդպիսի մոտեցումը հետազոտման առարկայի նկատմամբ հնարավորություն կտա ավելի խոր ճանաչել հիմնախնդիրը, անհատել դրա լուծումը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքում և մշակել դրա արդյունավետ լուծմանն ուղղված առաջարկներ:

1961 թ. քրեական դատավարության օրենսգրքը սահմանում էր, որ հանցագործությունների նախնական քննությունը կատարվում է կա՛մ նախաքննության, կա՛մ հետաքննության ձևերով: Ընդ որում, օրենքը նախատեսում էր նախաքննություն՝ հանցակազմերի բացարձակ մեծամասնության համար: Հետաքննությունն իրականացվում էր երկու ձևերով: Նախ՝ հետաքննությունը՝ որպես քննության ինքնուրույն ձև, այն գործերով, որոնցով նախաքննությունը պարտադիր չէր: Այս գործերով հետաքննությունը պետք է ավարտվեր մեկամսյա ժամկետում, դատավարության որոշ մասնակիցներ (տուժողը, քաղաքացիական հայցվորը և պատասխանողը, նրանց ներկայացուցիչները) զրկվում էին գործի նյութերին ծանոթանալու իրավունքից, իսկ հսկող դատախազի ցուցումների անատարկումը վերադաս դատախազին չէր կասեցնում այդ ցուցումների կատարումը: Նկատելի է, որ այդ տարբերությունները չունեին բավարար իրավական հիմքեր, քանի որ դատավարության մասնակիցների մի մասին գործի նյութերին ծանոթանալու իրավունքից զրկելը հակասում էր դատավարության մասնակիցների իրավունքների հավասարության մասին ընդհանուր կանոնին, որը պարտադիր է քննության ցանկացած ձևի համար: Քննության հիմնական հարցերով դատախազի ցուցումների հետ չհամահայեցելու՝ հետաքննություն կատարող անձի իրավունքի մերժումը հակասում էր ապացույցները ներքին համոզմամբ անհատելու սկզբունքին, որը պետք է գործեր նաև հետաքննիչի պարագայում:

Դատավարության տարբերակումը գոյություն ունի աշխարհի շատ երկրներում, ինչպես ռոմանագերմանական, այնպես էլ անգլոսաքսոնական իրավական համակարգերում: Այստեղ տարբերակումը դրսևորվում է նախ և առաջ մեծ վտանգավորություն

չներկայացնող հանցագործությունների վերաբերյալ գործերով պարզեցված վարույթի սահմանման միջոցով: Վարույթի այդպիսի ձև գոյություն ունի օրինակ ԱՄՆ-ում: Որոշ երկրներում այդ բնույթի գործերով սահմանվել է ոչ թե պարզեցված դատավարություն, այլ արագված վարույթ, այսինքն՝ սահմանվել են սեղմ ժամկետներ նվազագույն դատավարական ընթացակարգեր կատարելու համար, ինչպես մինչդատական, այնպես էլ դատական քննության փուլի համար: Ընդ որում՝ և՛ պարզեցված, և՛ արագված վարույթները կապ չունեն դատավարության օրինականության երաշխիքներից հրաժարվելու հետ:

Խորհրդային քրեական դատավարությունում նյութերի մինչդատական նախապատրաստման պարզեցված ձևի ներմուծումը կատարվեց 1966 թ. և իր ավարտում տեսքով այն հանդես էր գալիս «Նյութերի մինչդատական նախապատրաստման արձանագրային ձևը» ինստիտուտի տեսքով³⁴⁴:

Խորհրդային շրջանի քրեական դատավարության տեսության մեջ ինչպես քրեական դատավարության միասնության և տարբերակման հիմնախնդրի շուրջ, այնպես էլ նյութերի մինչդատական նախապատրաստման արձանագրային ձևի անհատման հարցում չկար միասնական տեսակետ: 50-ական թվականների վերջին և 60-ական թվականների սկզբներին խորհրդային դատավարության նյութերի բացարձակ մեծամասնությունը պաշտպանում էր քրեական դատավարության միասնության սկզբունքը՝ որպես քրեական դատավարության օրինականության երաշխիք և դրա զարգացման ժողովրդավարականությունը բնութագրող գործոն, քննադատում էր տարբերակումը՝ այն համարելով քրեական դատավարության պարզեցում, որը հղի է վտանգներով³⁴⁵: Սկսած

³⁴⁴ Այդ մասին մանրամասն տե՛ս աշխատանքի 4-րդ գլխի 4-րդ պարագրաֆում:

³⁴⁵ Այդ տեսակետի մասին մանրամասն տե՛ս *xeñoyei a I. O. I a onēeai eē aadaiaōeē i daa iāaei yai i ai a oai eia i i i noai i di eca i a noāa.*— *Ā nā.:* *I di a eai ū i daai noāeē ē oai eia i i i i daāa.* *I „1978: I adōōei E. E. I a oi di ū ai i i ē (i di oi e i e i i ē) o i di a dānne ai i ai e y i da no i e ai ē e.*— *Ā nā.:* *I di a eai ū i daai noāeē ē oai eia i i i i daāa.* *I „1978: Nōd i r i a ē+ I. N. I aae i i ē o i di a no ai i di eca i a noāa ē i daāa eāo āa ēe o o a da i o e a o ē e.*— *Ni o. çae i i i i noū, 1974, թիվ 9, էջ 50-53: Ā i d n e e ē Ā. O., E i e i d a a E. Ā., Ye ū e e i a I. N. I di a e ai ū ai e a ç a o a e ū n o ā a ā n i ā a o n e i i o ai e i a i i i i di o a n n ā. Ā i di i a e, 1978, էջ 231-232: A ē a e n ā a ā I. N., E ō e a o a a ē+ Ā. Ç. I da o ai d ai e a e a i e i n e e o e ā a ē ā n i ā a o n e i i o ai e i a i i i no ai i di eca i a noāa. E., 1979, էջ 97-117:*

Նախ և առաջ, «միջանկյալ վարույթը» ըստ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսդրության, օժտված է այն բոլոր թերություններով, ինչ «դատի տալը» խորհրդային դատավարությունում: Ե՛վ խորհրդային դատի տալու ինստիտուտը, և՛ «դատական քննության նախապատրաստելը» ունեն ընդհանուր թերություն՝ երկու դեպքում էլ «միջանկյալ ընթացակարգի» վարող և զործն ըստ էության քննող դատարանը համընկնում են: Սակայն դատի տալը նախ՝ մասամբ իրականացվում էր կոլեկտիվ կարգով, երկրորդ՝ կողմերի մասնակցությամբ հրապարակային դատավարություն էր: Իսկ, ինչպես զիտենք, մեզ մոտ և՛ նախապատրաստական վարույթը, և՛ զխավոր վարույթն իրականացվում են միանձնյա: Տնօրինական գիտի վերացումը և զործը դատական քննության նախապատրաստելու վարույթի պարզեցումն օրենսդրի կողմից չեն փոխհատուցված դատախազական հսկողության և դատավարության մասնակիցների իրավունքների երաշխիքների ուժեղացմամբ: Նոր օրենսդրության միակ առավելությունը որոշակիությունն է մեղադրյալի՝ ամբաստանյալի վերածվելու հարցում: 1998 թ. քրեական դատավարության օրենսդրության 64 հոդվ. 2-րդ մասը սահմանում է, որ մեղադրյալը, որի զործով նշանակված է դատական քննություն, կոչվում է ամբաստանյալ:

Նոր «միջանկյալ վարույթի» հայեցակարգային բացերը պայմանավորել են նրանում այլ թերությունների ու բացթողումների առկայությունը, որոնցից հիմնականները հանում են հետևյալին.

1) ՀՀ 1998 թ. քրեական դատավարության օրենսդրության վիճելի է դարձնում «դատական քննության նախապատրաստելը» որպես քրեական դատավարության ինքնուրույն փուլ դիտարկելու հարցը, քանի որ օրենսդրության այն համարում է որպես դատական քննության սկզբնական մաս:

2) Անհաջող է նաև այդ ընթացակարգի անվանումը՝ «դատական քննության նախապատրաստելը», քանի որ այն չի արտահայտում դատավարության այդ փուլի էությունը: Մասնավորապես, դժվար թե կարելի է նախապատրաստական համարել քրեական զործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը: Անհաջող է նաև ՌԽՖՍՀ քրեական դատավարության օրենսդրության համապատասխան հատվածի նոր վերտառությունը՝ 1992 թ. մայիսի 2-ի օրենքն ընդունելուց հետո (դատավորի լիազորությունները միջև զործի դատական քննությունը և դատական գիտի նախապատրաստական զործողությունները), ինչպես նաև դատավարաբանների կողմից առաջադրվող «դատական գիտ նշանակելը» վերտառությունը, նորից դատավարության այդ փուլի էության և բովանդակության ոչ լրիվ արտահայտման պատճառով: Մեր կողմից առաջարկվող տվյալ փուլի անվանումը՝ «Նախնական դատական լուսմներ (կամ վարույթ)» նախ՝ կարճ է, և երկրորդ՝ արտահայտում է տվյալ փուլի և՛ էությունը, և՛ խնդիրները. դատարանը, կողմերի մասնակցությամբ նախնական կերպով լսելով զործի հանամանքները, ընդունում է տվյալ փուլի համար բնութագրական որոշումներից մեկը:

3) Այն, ինչի համար քննադատում էին դատի տալու ինստիտուտը խորհրդային քրեական դատավարությունում՝ դատարանի մասնակցությունը մեղադրական զործառույթին, բնութագրական է նաև «դատական քննության նախապատրաստելը» նոր ինստիտուտին: Այդպիսի եզրակացության համար հիմք է ծառայում 1998 թ. քրեական դատավարության օրենսդրության 300 հոդվ. «Որոշում՝ խափանման միջոցների մասին»: Հարց է առաջանում. իրավունք ունի՞ դատարանը փոխել նախկինում ընտրված խափանման միջոցը կամ ընտրել, եթե նախկինում այն չէր ընտրվել: Կարծում ենք, որ այդ հարցին կարելի է դրական պատասխան տալ: Հիմքը ի-

րադրության փոփոխությունն է, որ կարող է պահանջել նաև խափանման միջոցի փոփոխություն: Սակայն ցանկացած դեպքում անհրաժեշտ է, որ խափանման միջոցը փոխելու մասին միջնորդությունը ելնի կողմերից, այլ ոչ թե դատարանն իր նախաձեռնությամբ իրականացնի դա:

4) Դատական քննության նախապատրաստելուն կողմերի մասնակցության բացառումը, չնայած, որ դրա իրականացման ընթացքում ընդունվում են կողմերի համար կարևոր նշանակություն ունեցող որոշումներ: 291 հոդվ. 2-րդ մասում խոսվում է միայն կողմերի միջնորդության իրավունքի մասին: Կարծում ենք, որ այս վարույթի ընթացքում անպայման պետք է մասնակցեն մեղադրողը և պաշտպանը, ինչպես նաև տուժողը և նրա ներկայացուցիչը:

5) 1961 թ. քրեական դատավարության օրենսփրքը սահմանում էր դատի տալու փուլում լուծման ենթակա հարցերի երկու խումբ՝ վերահսկիչ և նախապատրաստական: Այդպիսի օրենսդրական լուծումը ամրափրում և կենտրոնացնում էր դատավարության այդ փուլի խնդիրները: Ընդ որում, դեռ խորհրդային դատավարափետները նկատել էին, որ դատի տալու փուլում մեղադրանքի հիմնավորվածության և օրինականության ստույգ հստակ սահմանների բացակայությունը կարող է հանգեցնել կամ զուտ ձևական դատական վերահսկողության, որն այս դեպքում չի հանդիսանա արդարադատության և մեղադրյալի օրինական շահերի հուսալի երաշխիք, կամ էլ՝ դատավորի կամ տնօրինական միստի կողմից մեղադրյալի մեղավորության հարցի նախորոշման, մինչև քրեական փորձի դատական քննությունը³⁹¹:

Քրեական դատավարության օրենսփրքի 292 հոդվ. 1-ին մասը սահմանում է, որ «դատավորը հետազոտում է փորձում եղած նյութերը և քրեական փորձն իր վարույթ ընդունելու պահից 15 օրվա ընթացքում կայացնում է հետևյալ որոշումներից մեկը...»: «Հետազոտում» բառեզրն այս դեպքում շատ ընդհանուր բնույթ ունի և օրենսդրական պարզաբանման կարիք ունի, քանի որ դատավորներն այն կարող են տարբեր կերպ մեկնաբանել, օրինակ՝ ապացույցների քննահատումը ոչ միայն թույլատրելիության, վերաբերելիության և բավարարության, այլ նաև դրանց հավաստիության տեսանկյունից:

³⁹¹ Տե՛ս *Εύελασάε• Α.Ç. Άδαί οέε ι δαά ίάάει γάι ίάι ά ñòääèè ι δάάάι έγ ñóáó. Ë., 1966, էջ 41:*

Ամփոփելով վերն ասվածը՝ հանդում ենք հետևյալ եզրակացության. նախնական քննության և դատական քննության միջև օրենսդրությունն անհրաժեշտ է «միջանկյալ վարույթ», որն ունի իր լուրահատուկ փորձառությունները, վերջիններից բխող դատավարական ձևը և այլն, այսինքն՝ օժտված է քրեական դատավարության փուլի բոլոր հատկանիշներով, որը մենք առաջարկում ենք անվանել «նախնական դատական լուծման (կամ վարույթ)»: Այս վերտառությունն արտահայտում է տվյալ ընթացակարգի և՛ էությունը, և՛ խնդիրները, ընդձույն է այդ փուլի դատավարական, այլ ոչ թե կազմակերպական բնույթը, ինչպես տվյալ փուլի մնացած բոլոր անվանումները:

1998 թ. քրեական դատավարության օրենսփրքը նախատեսել է «դատական քննության նախապատրաստելը» ինստիտուտը, որին բնորոշ են որոշակի հալեցակարգային թերություններ, ինչի հետևանքով դա որպես ձևական ընթացակարգ, օրենսդրությունն չի կարող դառնալ արդարադատության, դատավարության մասնակիցների օրինական իրավունքների ու շահերի հուսալի երաշխիք, հետևաբար առկա օրենսդրական կառույցն անհրաժեշտ է ենթարկել արմատական վերակառուցման՝ ուղղված «միջանկյալ վարույթում» մրցակցության տարրերի ներդրմանը, ինչի արդյունքում այն կվերածվի փորձում (այլ ոչ թե ձևական) նախնական դատական լուծման, քրեական դատավարության ինքնուրույն և լիիրավ փուլի՝ կազմակերպված դատական քննության ընդհանուր պայմանների և կողմերի մասնակցության հիման վրա: Կատարելափորձելով քրեական դատավարության օրենսփրքն այդ ուղղությամբ՝ օրենսդիրը պետք է հետևի դատարանի և կողմերի փորձառությունների տարանջատման սկզբունքին: Մեղադրողը պետք է ներկայացնի ապացույցներ մեղադրյալի մեղավորության մասին, պաշտպանությունը՝ համոզի դատարանին, եթե դրա համար կան հիմքեր, որ առկա ապացույցները և նյութերը բավարար չեն դատական քննությունն նշանակելու համար: Այս դեպքում դատարանի խնդիրն է ապահովել կողմերի դատավարական իրավունքները, քննարկել նրանց հայտարարություններն ու միջնորդությունները, ձեռնարկել նախապատրաստական փորձողություններ: Եթե նախնական լուծման արդյունքում դատարանը կհանդի դատական քննությունն նշանակելու եզրակացության, ապա այդ մասին կկայացնի որոշում:

§ 2. Դատական քննության հիմնախնդիրները

Դատական քննությունը քրեական դատավարության կենտրոնական փուլն է: Այդ փուլում դատարանն ըստ էության քննում և լուծում է քրեական լուրջ, դատավճռում պատասխան է տալիս քրեական լուրջի բոլոր հիմնական՝ ամբաստանչալի մեղավորության կամ անմեղության, նրա նկատմամբ պատիժ կիրառելու կամ չկիրառելու հարցերին: Դատական քննության առարկան, եթե խոսքը մասնավոր մեղադրանքով լուրջի մասին չէ, համարվում է իրավական վեճը պետության և ամբաստանչալի միջև: Ընդ որում, այդ վարույթում շոշափվում են ոչ միայն ամբաստանչալի, այլև հանցալուրջության զոհ դարձած անձանց սահմանադրական իրավունքները և ազատությունները:

Չարքայացած երկրների փորձը հաստատում է, որ քրեական դատավարության հիմնական խնդիրների հաջող լուծման համար, այսինքն՝ հանցավորության դեմ պայքարի արդյունավետության ապահովման և անձի իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ է բանականորեն կազմակերպված, կողմերի իրավական բանավեճի հիման վրա կառուցված ընթացակարգ, որի դեպքում մեղադրողը և մեղադրյալը մրցում են անկախ դատարանի առջև: Այդպիսի մոտեցումը բնութագրական է մասնավորապես Ֆրանսիայի, Անգլիայի, ԱՄՆ-ի և մի շարք այլ երկրների քրեական դատավարություններին: Հայաստանի Հանրապետության քրեադատավարական մոր օրենսդրությունը դատական քննությանը վերաբերող մասով կառուցված է այդպիսի մոտեցման հիման վրա: Նախկինում լուրջ օրենսդրությունը, ըստ որի՝ դատարանն իրավունք ուներ հարուցել քրեական լուրջ դրա համար առիթների և հիմքերի առկայության դեպքում, ինչպես նաև դատարանի վրա դրված էր ապացուցման պարտականություն, դատարանին հավասարեցնում էր քրեական հետապնդման սուբյեկտներին՝ հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին: Այդ հանգամանքը դատական քննությանը թույլ չէր տալիս զբաղեցնել իրեն օբյեկտիվորեն հատուկ կենտրոնական տեղը քրեական դատավարությունում և վճռորոշ դեր խաղալ քրեական դատավարության խնդիրների իրացման լուրջում: Այդ համակարգի բնութագրական լուրջն այն էր, որ լուրջալուրջալուրջում էր նախնական քննության փուլի նշանակությունը՝ ի վնաս դատական քննության: Հետևաբար ցանկացած դատաիրավական բարեփոխ-

ման հիմնական խնդիրը քրեական դատավարությունում դատարանի հատուկ դերի ամրապնդումն է:

Դատական քննության փուլի կենտրոնական տեղը քրեական դատավարությունում պայմանավորված է այդ փուլի խնդիրներով, ընդունվող որոշումների և կատարվող դատավարական լուրջողությունների բնույթով: Նրան նախորդող փուլերում լուծվում են այլ, հիմնականներից ածանցված խնդիրներ՝ մեղադրանքի նախնական ձևակերպում, մեղադրանքը հիմնավորող ապացույցների հայտնաբերում և հետազոտում, լուրջը դատարանում ըստ էության քննելու և լուծելու համար անհրաժեշտ նախադրյալների ու պայմանների ստեղծում: Այդ իսկ պատճառով դատական քննությանը նախորդող վարույթն ունի նախնական, նախապատրաստական բնույթ: Հետևապես փուլերը (վարույթը վերաքննիչ և վճռաբեկ աստիճաններում) կոչված են ստուգելու առաջին աստիճանի դատավճռումների և այլ որոշումների օրինականությունն ու հիմնավորվածությունը և վերացնելու թույլ տրված սխալները:

Դատական քննությունն առաջին աստիճանի դատարանում անցկացվում է մրցակցության սկզբունքի հիման վրա, ինչը կանխորոշում է դրանում կողմերի պարտադիր մասնակցությունը: Հավասարիմ մնալով մրցակցության սկզբունքին՝ օրենքը նախատեսում է դատախազի, պաշտպանի, ամբաստանչալի պարտադիր մասնակցություն (քր. դատ. օր. 302, 304, 306 հոդվածներ): Դատական քննության մրցակցային բնույթի մասին է վկայում օրենքի ուղղակի ցուցումն այն մասին, որ պաշտպանը դատական քննությանը մասնակցելիս օգտվում է մեղադրողի հետ հավասար իրավունքներից (քր. դատ. օր. 304 հոդվ. 1-ին մաս): Բացի այդ, ի տարբերություն նախկինում լուրջ օրենսդրության, լուրջող քրեական դատավարության օրենսլուրջը միայն պրոֆեսիոնալ փաստաբանին է հնարավորություն տալիս՝ որպես պաշտպանի, մասնակցելու դատավարությանը:

Բացի դատարանից և պետական մեղադրողից Դատական քննության մասնակիցներ են համարվում քրեական դատավարության բոլոր այն սուբյեկտները, ովքեր տվյալ փուլում իրականացնում են իրենց շահերը կամ ներկայացվող շահերը՝ ամբաստանչալը և նրա պաշտպանը, տուժողը, քաղաքացիական հայցվորը, քաղաքացիական պատասխանողը (նրանց ներկայացուցիչները): Դատական քննությունում թվարկված սուբյեկտներից լու-

րաքանչյուրի դատավարական վիճակն ունի իր առանձնահատկությունները:

Դատավարության կենտրոնական փուլում, լիսավոր դերակատարը համարվում է դատարանը: Հենց դատարանի դերից, նրա լիազորություններից, կարճավիճակից և ակտիվության աստիճանից է կախված, թե որքան հաջող կլուծվեն ինչպես տվյալ փուլի, այնպես էլ ողջ քրեական դատավարության խնդիրները: Այստեղ էական նշանակություն ունի բուն մրցակցության սկզբունքի կիրառման նպատակը, այն դերը, որը հատկացվում է մրցակցությանը քրեական դատավարության այդ փուլում: Մեր կարծիքով մրցակցության սկզբունքը պետք է ոչ միայն ծառայի անձի իրավունքների ապահովմանը, այլ նաև արդարադատության երաշխիք լինի՝ նպաստելով դրա խնդիրների հաջող լուծմանը:

Մրցակցության դերի և նշանակության լերալուսահատումը, ինչին հակված են ՌԴ-ում դատական բարեփոխումների հայեցակարգի, մոդելային քրեական դատավարության օրենսգրքի, ՌԴ նախաահի աշխատակազմի պետաիրավական վարչության ներկայացրած քրեական դատավարության օրենսգրքի նախածի հեղինակները, մի կողմից կհանեցնի դատախազի և պաշտպանի լիազորությունների չափից դուրս ընդլայնմանը, արդարադատության իրականացման որոշմանցում նրանց դերի անհիմն ուժեղացմանը, իսկ մյուս կողմից՝ դատարանի դերի նսեմացմանը, նրա պասիվությանը: Սխալ է եմթադրել, թե կողմերի միջև վեճը որոշով ճշմարտության բացահայտման միակ միջոցն է: Կողմերի վեճը կարող է ինչպես նպաստել ճշմարտության բացահայտմանը, այնպես էլ թաքցնել այն՝ կախված նրանից, թե ճշմարտության բացահայտումն ինչքանով է համապատասխանում կողմերի շահերին: Պաշտպանը, որպես կանոն, շահաորոված է ճշմարտության հայտնաբերման մեջ, եթե դա կարող է վնաս պատճառել իր պաշտպանչալի շահերին: Նոր պայմաններում դատախազը, օժտված չլինելով դատարանում օրինականության նկատմամբ հսկողության լիազորություններով և ներկայացնելով միայն մեղադրանքի կողմին, ևս շահաորոված է լինի ճշմարտության բացահայտման մեջ, եթե դա կարող է խարխել նրա դիրքերը: Դրանից բացի, այդ իրադրության մեջ առաջնահերթ նշանակություն կունանա դատախազի և պաշտպանի պատրաստվածության և արոՖեսիոնալիզմի աստիճանը, ինչպես նաև այն, թե կայացման ո՞ր փուլում են որոշում մեղադրանքի և պաշտպա-

նության ինստիտուտները: Ոչ հեռու անցյալում որոշություն ունեցող քրեական դատավարությունը էր կարող նպաստել այդ ինստիտուտների կայացմանը և զարգացմանը: Պաշտպանի պասիվ, երկրորդական դերը քրեական դատավարությունում էր նպաստում նրա մասնաորական մակարդակի բարձրացմանը: Գաղտնիք է, որ լավ պաշտպան էր համարվում ոչ թե այն փաստաբանը, ով ունենալով բարձր մասնաորական որակավորում և խորը որոշումներ՝ կարող էր հաջողությամբ պաշտպանել պաշտպանչալի շահերը, այլ նա, ով կարող էր դատարանի հետ «ընդհանուր լեզու» որոնել: Դատախազն իր հերթին կարիք չունեղ մշտապես բարձրացնել իր մասնաորական պատրաստվածությունը, անհրաժեշտություն չկար մանրագնին պատրաստվել յուրաքանչյուր որոշի քննությանը դատարանում, քանի որ իր լիազորությունների ուժով նա կարող էր լուծել իր առջև դրված խնդիրները, որպես կանոն, առանց լուրջ ջանքեր թափելու, իսկ դատավորները, սովորաբար համաձայնում էին դատախազի դիրքորոշման հետ: Այլ կերպ ասած, դատախազը և պաշտպանը լրիվ պատրաստ էն իրենց նոր որոշումները մրցակցային դատավարությունում իրականացնելուն: Մեղադրանքի և պաշտպանության ինստիտուտների նման վիճակի ուժով պահպանվում է դատարանի ակտիվ դերի նշանակությունը, որի ձեռքին է դատական ճանաչման բանալին, քանի որ այս պայմաններում դատարանի ակտիվությունից, նախաձեռնությունից և կամքից փաստորեն կախված է քրեական որոշի բախտը, որոշով օրինական և հիմնավորված դատավճիո կայացնելու հարցը: Այս հիմնարար, ոչ տեսական հարցում մենք լիովին համաձայն ենք այն որոշականների հետ, ովքեր որոնում են, որ մրցակցությունը, որ հանում է կողմերի հակամարտությանը, նրանց ձեռնարկ՝ դատական վեճում հաղթել մյուսին, իր հիմքում ունի երեք տարրերի միասնություն՝ 1) մեղադրանքի և պաշտպանության կողմերի միջև դատավարական որոշումների տարանջատում և դրանց բաժանում դատական որոշումներումից, 2) իրենց որոշումներն իրականացնելիս կողմերի իրավահավասարություն, 3) դատարանի ակտիվ և ղեկավար դերը³⁹²:

Մինչդեռ վերը նշված օրինակների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց հեղինակները մրցակցությունը դիտարկում են

³⁹² Տե՛ս *Èaçàðááá Á.Á. Ñóáááí àÿ àèàñöü...*, էջ 105:

որպես ապացուցմանը մասնակցելուց դատարանին ազատելու միջոց³⁹³ և, որ ամենա□լիսավորն է, ճշմարտության բացահայտումը նրանք չեն դիտարկում որպես դատական քննության նպատակ: Իհարկե, հակամարտող կողմերի նկատմամբ անկողմնակալության ապահովման համար դատարանին անհրաժեշտ է ազատել բոլոր այն լիազորություններից, որոնք կարող են մեկնաբանվել որպես մեղադրական³⁹⁴: Սակայն դա չի կարելի անել դատարանը «պասիվ ընկալողի» վերածելու ճանապարհով: Դատարանին մեկուսացնելով ապացուցմանը մասնակցելուց, նրան օժտելով միայն պասիվ կազմակերպական լիազորություններով, ապացուցման ամբողջ ծանրությունը, նշանակում է՝ նաև քրեական □ործի բախտը դրվում է կողմերի, ամենից առաջ մեղադրողի վրա: Դժվար չէ պատկերացնել, թե ինչպիսի արդարադատություն ենք մենք ունենալու այդ իրադրության պայմաններում, իսկ դատարաններն էլ հարկադրաբար ինչքան անհիմն ու ապօրինի դատավճիռներ ու որոշումներ կկայացնեն:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենս□րքի համապատասխան նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենս□իրքը, հիմնականում ապահովելով կողմերի իրավահավասարությունը դատարանում, նրան հնարավորություն է տալիս անհրաժեշտության դեպքում ակտիվ մասնակցություն ունենալ ապացուցման □ործընթացին՝ չմնալով պասիվ դիտորդի և կողմերի վեճը կար□ավորողի դերում: Այդ մասին են վկայում Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենս□րքի մասնավորապես, 23, 331, 344, 352 հոդվածները: Այսպես, 23 հոդվ., ամրա□րելով մրցակցության սկզբունքը, պարունակում է հիմնարար դրույթ, որն ընդ□ծում է դատարանի կենտրոնական, ակտիվ դերը դատական քննության ընթացքում: Համաձայն այդ հոդվածի 4-րդ մասի՝ «դատարանը, պահպանելով օբյեկ-

տիվությունը և անկողմնակալությունը, մեղադրանքի և պաշտպանության կողմերի համար ստեղծում է □ործի հան□ամանքների բազմակողմանի և լրիվ հետազոտման անհրաժեշտ պայմաններ: Դատարանը կաշկանդված չէ կողմերի կարծիքներով և իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել քրեական □ործով ճշմարտությունը բացահայտելու համար»³⁹⁵:

Այս սկզբունքային դրույթն իր հետա□ա գար□ացումն է ստացել քրեական դատավարության օրենս□րքի 331 հոդվ. 2-րդ մասում, որը համարվում է ապացուցման □ործընթացին դատարանի ակտիվ մասնակցության օրենսդրական հիմքը: Համաձայն այդ նորմի՝ դատարանն իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ որոշում կայացնել վկաներ կանչելու, փորձաքննություն նշանակելու, այլ ապացույցներ պահանջելու մասին: Բացի այդ, դատարանն իրավունք ունի ակտիվ կերպով մասնակցելու ապացույցների հետազոտմանը, սակայն, ի տարբերություն նախկին օրենսդրության, դատարանը մեղադրյալին, տուժողին, վկաներին հարցաքննում է միայն կողմերից հետո: Ապացույցների հետազոտման մասն կար□ը տրամաբանական է և բխում է մրցակցային դատավարության էությունից: «Որպես մեղադրանքի վարկածի ստու□ում ներկայացված դատական քննությունը թույլ է տալիս դատարանի կողմից նոր ապացույցների ներ□րավումը դիտարկել ոչ թե որպես մեղադրական □ործունեության մնացուկ, այլ որպես մեղադրողի ներկայացրած ապացույցների լրիվության և առաջադրված մեղադրանքի հիմնավորվածության նկատմամբ դատական վերահսկողության դրսևորում: Այդ վերահսկողության նպատակը ոչ թե քննության բացերի լրացումն է, այլ ձ□տումը՝ թույլ չտալ ապացույցների վրա չհիմնված դատավճռի կայացումը: Փաստաբանի ակտիվությունը □ործի հան□ամանքների հետազոտման մեջ հատկապես անհրաժեշտ է այն ժամանակ, երբ այդ են պահանջում մեղադրյալի՝ որպես թույլ կողմի (նա օժտված չէ ապացույց-

³⁹³ Այդ մասին է վկայում մասնավորապես ՌԴ նախա□ահի աշխատակազմի պետաիրավական վարչության քրեական դատավարության օրենս□րքի նախա□ծի հեղինակային խմբի ղեկավար Ս.Ա. Պաշինի դիրքորոշումը: Ըստ նրա՝ «Դատարանը կոչված է ապահովելու դատական բանավեճի պատշաճ ընթացակար□ը և անձին՝ պաշտպանվելու ոչ իրավական օրենքից» (Տե՛ս *І діаеаі ū даОіди ū оаіеіаіі -і ді оаііааеüі іаі çаеііі äааеüііаа ä і ді аеаа Оі Е ДО. М., 1995, էջ 34*):

³⁹⁴ Տե՛ս *Оаеааđ Ñ.А. Аіеаçааеüііаа è аіеаçŪааіеа іі оаіеіаі ūі äаеаі : і ді аеаі ū оаі дее è і дааіаіаі äаäөөеđі äаі еу. Оіеüüөөе, 1997, էջ 13*:

ներ հավաքելու հավասար հնարավորություններով, ինչպես դատախազը՝ շահերի պաշտպանությունը»³⁹⁶:

Դատաքննությունում մրցակցության արդյունավետ իրացման համար կարևոր նշանակություն ունի լրացուցիչ քննության ուղարկելու ինստիտուտի օրենսդրական կարգավորումը: Նախկին օրենսդրությունը (ՀԽՍՀ 1961 թ. քր. դատ. օր. 229 հոդվ. և ՌԽՖՍՀ քր. դատ. օր. 232 հոդվ.) նախատեսում էր մի շարք հիմքեր, որոնց առկայության դեպքում դատարանն իրավունք ուներ սեփական նախաձեռնությամբ լրացուցիչ քննություն կատարելու համար: Այդպիսի կացության մեջ դատարանի վրա դրվում էր քրեական հետապնդման իրականացմանը մասնակցելու լրացուցիչ: Պատահական չէ, որ ՌԴ սահմանադրական դատարանն իր 1999 թ. ապրիլի 29-ի որոշմամբ ՌԽՖՍՀ քրեական դատավարության օրենսգրքի 232 հոդվ. 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերը, ինչպես նաև 258 հոդվ. 1-ին մասը ճանաչեց որպես դատարանի վրա սեփական նախաձեռնությամբ քրեական լրացուցիչ դատախազին վերադարձնելու պարտականություն դնող (այն դեպքում, երբ էապես թերի քննությունը չի կարող լրացվել դատական միտում, ինչպես նաև, երբ հիմքեր կան մեղադրյալին, բացի սկզբում առաջադրված մեղադրանքից, առաջադրելու այլ մեղադրանք կամ մեղադրանքը փոխելու ավելի ցածր կամ փաստական հանգամանքներով սկզբնականից տարբերվող մեղադրանքով) և ՌԴ Սահմանադրությանը՝ դրա 49, 123 (3-րդ մաս), ինչպես նաև 46 (1-ին մաս) և 52 հոդվածներին չհամապատասխանող:

Մրցակցային դատավարության համատեքստում այդ հարցը սկզբունքորեն այլ լուծում է ստացել Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրության մեջ: Համաձայն քրեական դատավարության օրենսգրքի 311 հոդվ. 1-ին կետի՝ դատարանը սեփական նախաձեռնությամբ լրացուցիչ քննության միայն այն դեպքում, երբ հետաքննության և նախաքննության մարմինների կողմից թույլ են տրվել քրեադատավարական օրենքի էական խախտումներ, որոնք չեն կարող վերացվել դատական քննության ընթացքում: Որպես այդպիսի խախտում կարելի է նշել մասնավորապես քննության կատարումը

բացարկման ենթակա անձի կողմից, մեղադրյալի պաշտպան ունենալու իրավունքի խախտումը, լրացուցիչ քննության ծանոթանալու՝ մեղադրյալի և նրա պաշտպանի իրավունքը չսպաստվելը և այլն:

Քրեական դատավարության օրենսգրքի 311 հոդվ. 2-րդ կետը սահմանում է, որ երբ առկա են մեղադրանքն ավելի ծանր կամ փաստական հանգամանքներով սկզբնականից տարբերվող մեղադրանքով փոխելու հիմքեր, ապա դատարանը լրացուցիչ քննություն է լրացուցիչ նախաքննության միայն մեղադրողի միջնորդության հիման վրա: Հարցի այդպիսի լուծումը թվում է տրամաբանական: Մրցակցության պայմաններում, երբ առաջանում է մեղադրանքն ավելի ծանր մեղադրանքով փոխելու անհրաժեշտություն, մեղադրողն է պարտավոր դատարանի առջև միջնորդել լրացուցիչ նախաքննության ուղարկելու մասին, քանի որ դատարանն իրավունք չունի սեփական նախաձեռնությամբ իրականացնել շրջադարձ դեպի վատթարացում: Ապացուցման լրացուցիչ քննության ակտիվորեն մասնակցելու համար օրենսդիրը դատարանին տալիս է նաև այլ լիազորություններ: Համաձայն քրեական դատավարության օրենսգրքի 344 հոդվ. 2-րդ մասի՝ դատարանն իրավունք ունի կողմերի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ նշանակել կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննություն՝ լսելով դրա վերաբերյալ կողմերից յուրաքանչյուրի կարծիքը:

Դատարանը նոր օրենսդրությամբ լիազորված է նաև մերժելու ապացույցների հետազոտումը սահմանափակելու միջնորդությունը: Համաձայն քրեական դատավարության օրենսգրքի 352 հոդվ. 1-ին մասի, մեղադրողն իրավունք ունի միջնորդել, որպեսզի ապացույցների հետազոտումը սահմանափակվի մինչև այդ պահը հետազոտված ապացույցներով: Լսելով կողմերից յուրաքանչյուրին՝ դատարանն իրավունք ունի բավարարելու այդ միջնորդությունը: Դատարանը մերժում է միջնորդությունը, եթե լրացուցիչ քննություն է, որ դեռևս չհետազոտված ապացույցները վերաբերում են լրացուցիչ քննության հանգամանքներին, որոնք դեռևս բավարար չեն լուսաբանվել:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում ամրագրված այս և այլ նորմերը հիմք են տալիս ենթադրելու, որ քրեադատավարական նոր օրենսդրությունը նախատեսում է ապացուցման լրացուցիչ քննության համար սեփական ակտիվ մաս-

³⁹⁶ Տե՛ս *Εἰσαγγεῖα Ἀ.Α. Νόμοι ἀγ ἀεῖνοι...*, էջ 127:

նակցության համար լայն հնարավորություններ՝ նրան իրավունք տալով անհրաժեշտության դեպքում սեփական նախաձեռնությանը հավաքել ապացույցներ, մասնակցել կողմերի ներկայացրած ապացույցների ուսումնասիրմանը, նպաստել Պործի հանձնարարների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը:

Քրեական դատավարության խնդիրների լուծման և արդարադատության արդյունավետ իրականացման համար կարևոր պայման է ընդդատության և Պործն ըստ էության լուծելիս դատարանի կազմի վերաբերյալ հարցերի ճիշտ կարծավորումը, որը քրեական դատավարության նոր օրենսդրությամբ չի կարելի համարել լավագույնը: Ըստ Հայաստանի Հանրապետության դատարանակազմական և դատավարական օրենսդրության՝ հանցաՊործությունների վերաբերյալ բոլոր քրեական Պործերն ընդդատյա են առաջին ատյանի դատարանին, որտեղ բոլոր քրեական Պործերը քննվում են մեկ դատավորի կազմով: Համաշխարհային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առանց բացառության, բոլոր քրեական Պործերի ըստ էության քննությունը մեկ դատավորի կազմով հատուկ չէ իրավական կոչվող պետությունների դատական համակարգերին: Տարբեր երկրների օրենսդրությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առաջին ատյանի դատարանում ըստ էության Պործի միանձնյա քննությանը ոչ մի տեղ չի տրված համընդհանուր բնույթ: Ֆրանսիայում, Գերմանիայում, Հոլանդիայում, Իտալիայում քրեական Պործեր քննող դատարանի կազմի նկատմամբ դրսևորված է տարբերակված մոտեցում՝ կախված արարքի բնույթից, հանրային վտանգավորության աստիճանից, հանցաՊործի անձից և այլ հանձնարարներից:

Կոնկրետ քրեական Պործը քննող դատարանի կազմի վերաբերյալ հարցը մեր քրեական դատավարության համար հարաբերականորեն նոր հիմնախնդիր է: Եթե Հայաստանի առաջին Հանրապետությունում միանձնյա հիմունքներով էր իրականացվում միայն հաշտարար արդարադատությունը, ապա խորհրդային կարգերի օրոք ավանդաբար արդարադատության հատկանիշներից էր համարվում կոլեկտիվությունը: Այս հարցը մեզանում Պործնական նշանակություն ձեռք բերեց միայն 90-ական թթ. սկզբներից, երբ օրենսդրության մեջ կատարված փոփոխությունները նախատեսեցին որոշակի քրեական Պործերի միանձնյա քննության կարգ, իսկ դատաիրավական բարեփոխումների արդյունքում ընդունված դատարանակազմական և դատավարական

նոր օրենսդրությունն ամրագրեց առաջին ատյանի դատարանում բոլոր քրեական Պործերի միանձնյա քննության կարգը: Այս կապակցությամբ հրատապ նշանակություն է ձեռք բերում ընդդատության հասկացությունը, որն անխզելիորեն կապված է ոչ միայն կոնկրետ դատարանի, այլև նրա կազմի հետ:

Դատարանի ընտրությունը, որտեղ պետք է քննվի Պործը, և նրա կազմի սահմանումը կարևոր նախադրյալ են Պործի լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննության սկզբունքի իրացման համար: Այդ նախադրյալները միաժամանակ անհրաժեշտ և արդյունավետ միջոց են՝ ապահովելու համար Պործի քննությունն ու լուծումն օրինական, ձեռնհաս, անկախ դատարանի կողմից, ինչը պահանջում են միջազգային փաստաթղթերը և ՀՀ Սահմանադրությունը: Այսպես, քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային պակտի 14 հոդվ. 1-ին մասում սահմանված է, որ «յուրաքանչյուր ոք իրեն առաջադրված ցանկացած քրեական մեղադրանք քննելիս կամ ցանկացած քաղաքացիական դատավարությունում նրա իրավունքները և պարտականությունները սահմանելիս ունի իր Պործը օրենքի հիման վրա ստեղծված ձեռնհաս, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից հրապարակային և արդարացի քննության իրավունք»: Այս նորմը վերարտադրված է ՀՀ Սահմանադրության 39 հոդվածում:

Առաջին ատյանի դատարանի դատական կազմի հիմնախնդրի նկատմամբ հատուկ ուշադրությունը բացատրվում է դատական կազմի այն լավագույն տարբերակը Պտնելու ձևով, որի դեպքում դատական սխալների հավանականությունը կհասցվի նվազագույնի: Այդ ջանքերի անընդհատության մասին է վկայում նաև արտասահմանյան փորձը: Ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Հյուսիսային Ամերիկայում և Եվրոպայում մինչ օրս շարունակվում են առաջին ատյանի կարգով քրեական Պործեր քննող դատարանների կազմերի լավագույն տարբերակի որոնումները:

Ծատ երկրներում քրեական Պործեր քննող դատարանների կազմերը կաշուն չեն եղել և մշտապես փոփոխվել են: Սովորաբար ոչ մեծ ծանրության քրեական Պործերը քննում են միանձնյա դատավորները, իսկ ծանր հանցաՊործությունների վերաբերյալ Պործերը քննվում են դատարանի կոլեկտիվ կազմով, այդ թվում նաև երդվյալ ատենակալների մասնակցությամբ: Երդվյալների իմաստոտությունը ձևավորվել է հիմնականում Անգլիայում և նրա Պաղոթներում, ԱՄՆ-ում: Մայրցամաքային Եվրոպայում

երդվյալների դատարանն առաջին անգամ ստեղծվել է Ֆրանսիայում Նապոլեոնի օրոք՝ 19-րդ դարի սկզբին: Սակայն 19-րդ դարի վերջին մայրցամաքային Եվրոպայի երկրներում երդվյալ ատենակալների դատարանի նկատմամբ հետաքրքրությունը սկսեց նվազել, և դրանք փոխարինվեցին ընդլայնված կազմով դատարաններով: Եվրոպական երկրներում, ամհրաժեշտ համարելով որոշակի կատեգորիայի քրեական լորձերի կողմից քննությունը, կասկածի տակ դրվեց երդվյալ ատենակալների դատարանի կողմից քրեական լորձի քննության կարգը, երբ ոչ պրոֆեսիոնալ դատավորները որոշում են մեղավորության հարցը, իսկ պրոֆեսիոնալները՝ պատժի միջոցի և այլ հարցերը: Դրա հետևանքով երկրների մի մասում լրիվ հրաժարվեցին երդվյալ ատենակալների դատարանից (Գերմանիայում՝ 1924 թ., Ֆրանսիայում՝ 1945 թ. և այլն), իսկ մյուսներում սկսեցին օտառործել կողմից դատական կազմի զանազան տարբերակներ: Այսպես, Գերմանիայում ծանր հանցաործությունների վերաբերյալ լորձերը քննում են երեք պրոֆեսիոնալ դատավորների և երկու ոչ պրոֆեսիոնալների կազմով դատարանները, Ֆրանսիայում, երեք պրոֆեսիոնալների և ինը ոչ պրոֆեսիոնալ, Իտալիայում՝ երկու պրոֆեսիոնալ և վեց ոչ պրոֆեսիոնալ, Հունաստանում՝ երեք պրոֆեսիոնալ և հինգ ոչ պրոֆեսիոնալ, Դանիայում՝ երեք պրոֆեսիոնալ և տասներկու ոչ պրոֆեսիոնալ դատավորներով դատական կազմերը: Ֆինլանդիայում, Ծվեդիայում, Ավստրիայում, Հոլանդիայում և այլուր օտառործվում են պրոֆեսիոնալների և ոչ պրոֆեսիոնալների այլ զուգակցումներ:

1992 թ. կեսերին ռուսական քրեական դատավարության մեջ ևս ներմուծվեց քրեական լորձի միանձնյա քննության ինստիտուտը: Հետաքրքիր է, որ Ռուսաստանի օրենսդիր իշխանությունը որոշակի գործառնություն դրսևորեց միանձնյա արդարադատության հարցում՝ լիտակցելով, որ այդպիսի բարենորոգումն անհամատեղելի է դատավարության ժողովրդավարականացման օաղափարի հետ: ՌԴ 1992 թ. մայիսի 29-ի օրենքը թվարկում է ՌԴ քրեական օրենսգրքի այն հոդվածները, որոնց վերաբերյալ քրեական լորձով սահմանվում է միանձնյա քննության կարգը: Այդ շրջանակն ընդլրկում է 70 հոդվածներ, որոնցում որպես պատիժ նախատեսված է մինչև մեկ տարի ժամկետով ազատազրկում: Բացի այդ, նախատեսվում էր լորձերի միանձնյա քննության հնարավորություն՝ մեղադրյալի համաձայնությամբ մինչև ե-

րեք տարի ժամկետով ազատազրկում նախատեսող մոտավորապես 70 հանցակազմերով:

Հնայած այդ նորամուծության քննադատությանը՝ 1996 թ. ՌԴ-ում միանձնյա արդարադատությունը տարածվեց մինչև 5 տարի ազատազրկում նախատեսող քրեական լորձերի վրա: Ընդ որում՝ մեղադրյալի համաձայնությունն արդեն չի պահանջվում (ՌԴ քր. դատ. օր. 35 հոդվ. 2-րդ մաս): Հատուկ կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քրեական լորձերի միանձնյա քննությունը զուգակցվում է բազմաթիվ դատական սխալներով և օրենքի խախտումներով: Դատավորները շատ լորձեր քննում են պարզեցված կարգով՝ առանց տուժողների և վկաների ներկայության: Հաճախ դատավճիոր կայացվում է ամբաստանյալի կողմից իր մեղքն ընդունելու և քննչական լորձողությունների արձանաորությունների հիման վրա: Ուսումնասիրողները տնում են, որ երբ որոշ անձանց քրեական լորձերը քննվում են կողմից դատական կազմով, իսկ մյուսներինը՝ մեկ դատավորի կազմով, առանց ամբաստանյալի համաձայնության, ապա խախտվում է օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարության սկզբունքը³⁹⁷:

Վիճակաորական տվյալների և կոնկրետ քրեական լորձերի ուսումնասիրության վերլուծությունը և ամփոփումը ցույց են տալիս, որ միանձնյա քննությունը բնութաորվում է մի շարք թերություններով, որոնք բացասաբար են ազդում դատական որոշումների օրինականության և հիմնավորվածության վրա³⁹⁸:

Ներկայումս ՌԴ-ում շրջանային դատարանում լորձի քննությունը կատարվում է դատարանի երկու տեսակի դատական

³⁹⁷ Տե՛ս Նի ու ի յի եա շաե ի ի նոե ա Ճի նոե ե նե ի ե Օաաաձաձե (1996-1997). Ա ձաեձե-ա նեեե ա ի եեաա. ի ԷԷ ի ձե ա ձաաե ս ի ե ի ձեձաձոձա ՃՕ. ի ., 1998, էջ 68-69:

³⁹⁸ Տե՛ս *Էաաե ի ա Յ.Ի., ի եձաե ի ա Օ.Ա., Օ ի աեաա Ա.Ի., Բոձաա ի ա ի.Ի.* Աձա ձեե շաե ի ի նոե ի ձե աե ի եե- ի ի ձա ն ի ձա ձե ե օ ձ ի ա ի ս ձ աե ա ո-աա. — Ա նա.: ի ձեձաձոձա ե ի ձա ձ նոաեա ա օ նե ի աե յո ոձաա ի ի-ձա ձ ի ա ե ձա-ձ ի ձ ի ս. ի ., 1997, էջ 59-76: Տ.Վ. Տրուբնիկովայի կարծիքով լորձերի միանձնյա քննությունը դատավորի կողմից լորձի հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ ուսումնասիրության ավելի քիչ երաշխիքներ է պարունակում, սակայն միանձնյա կարգով ավելի է ժան և ավելի արա լ... (Տե՛ս *Օձա ի եե ի ա Օ.Ա.* Աաե ի եե- ի ի ա ձա ն ի ձա ձե ե աե ոձա ի աե ե ի ձաա աձաաա. — Ա նա.: ի ձեձաձոձա ե ի ձա ձ նոաեա ա օ նե ի աե յո ոձաա ի ի-ձա ձ ի ա ե ձա-ձ ի ս. ի ., 1997, էջ 76-78):

կազմերով՝ ա) դատավորը միանձնյա կարող է քննել այն հանցա-
□ործությունների վերաբերյալ □ործերը, որոնց համար օրենքով
նախատեսված է պատիժ մինչև հին□ տարի ժամանակով ազա-
տագրկման տեսքով³⁹⁹, բ) շրջանային դատարանի ընդդատությա-
նը վերապահված մնացած □ործերը ենթակա են կոլե□իալ կար-
□ով քննության՝ մեկ դատավորի և երկու ժողովրդական ատենա-
կալների կազմով: Օրենքում հատուկ նշվում է անչափահասների
կատարած հանցա□ործությունների (անկախ հանրային վտան-
□ավորության աստիճանից) վերաբերյալ □ործերի միանձնյա
քննության անթույլատրելիությունը:

Միջին օղակի ընդհանուր իրավասության դատարաններում,
հիմնական և միջին օղակի զինվորական դատարաններում, ինչ-
պես նաև ՌԴ Գերա□ույն դատարանում քրեական □ործերն առա-
ջին աստիճանի կար□ով կարող են քննվել միայն կոլե□իալ կար□ով:
Այստեղ □ործերի □երակշռող մասը քննվում է մեկ դատավորի և
երկու ժողովրդական ատենակալների կազմով: Ամբաստանյալի
համաձայնությանը՝ նշված դատարաններում թույլատրվում է ե-
րեք պրոֆեսիոնալ դատավորներից կազմված դատական կազմի
ձևավորում: Այս կանոնը ներմուծվել է 1993 թ. և լրացվել է 1996 թ.
դեկտեմբերին: Վերջինս նախատեսում է, որ երեք պրոֆեսիոնալ
դատավորներից կազմված դատական կազմերը պետք է քննեն
այն բոլոր հանցա□ործությունների վերաբերյալ □ործերը, որոնց
համար օրենքով նախատեսված է պատիժ՝ 15 տարուց ավելի ժա-
մանակով ազատագրկում, ցմահ ազատագրկում կամ մահապա-
տիժ: Երկրամասային, մարզային և քաղաքային դատարաններին
ընդդատյա □ործերով նախատեսված է մեկ դատավորից և 12
երդվյալ ատենակալների կոլե□իայից կազմված դատական կազ-
մի ձևավորման հնարավորություն: Դա պետք է արվի մեղադրյալի
միջնորդությամբ: Քրեական □ործերի քննության այս կար□ը, որ
նախատեսվել է 1993 թ. հուլիսի 19-ի օրենքով, □ործում է միայն

³⁹⁹ Ընդ որում, այս ժամկետը դատավարա□ետներն արդարացիորեն հա-
մարում են շատ մեծ և առաջարկում են միանձնյա արդարադատությունը
սահմանափակել մինչև երեք տարի ժամանակով ազատագրկում նախա-
տեսող հանցակազմերով (Տե՛ս *Մ ըմ աեալ ու ձաոմմ ու օալ եմալ ի-մմ օալ-
նօաեմ իալ շաեմ ի իաաօեմնօաա ա իմմ աեաօ ՕՄ Է ԾՕ. Մ ., 1995, էջ 19)*:

ՌԴ ինը սուբյեկտներում, փորձարկման կար□ով, որի արդյունք-
ները չի կարելի միանշանակ □նահատել⁴⁰⁰:

ՀՀ Սահմանադրությունը նախատեսում է, որ օրենքով նախա-
տեսված դեպքերում արդարադատությունն իրականացվում է
երդվյալ-ատենակալների մասնակցությամբ (91 հոդվ.): Սահմա-
նադրական այս դրույթից բխում է, որ դատավարության իրակա-
նացումը երդվյալների մասնակցությամբ հնարավոր է միայն ՀՀ
դատարանակազմության մասին օրենքով և քրեական դատավա-
րության օրենս□րքով նախատեսված դեպքերում: Սակայն նշված
օրենքները չեն նախատեսում երդվյալների մասնակցությամբ
քրեական □ործերի քննության կար□:

ՌԴ □ործող քրեադատավարական օրենսդրությունը նախա-
տեսում է երդվյալ ատենակալների ինստիտուտը: Երդվյալ ատե-
նակալների մասնակցությամբ վարույթը նախատեսված է նաև
ՌԴ քրեական դատավարության օրենս□րքի նախա□ծով:

Երդվյալ ատենակալների դատարանի □նահատումը հետա-
զոտողների կողմից միանշանակ չէ: Այդ իսկ պատճառով նպա-
տակահարմար ենք համարում ավելի հան□ամանորեն քննարկել
այդ ինստիտուտը:

Երդվյալ ատենակալների դատարանը կազմված է երկու մա-
սերից՝ երդվյալների կոլե□իայից, որոնց քանակը տատանվում է
հին□ից մինչև տասներկուսը, և պրոֆեսիոնալ դատավորների կո-
լե□իայից, որոնց թիվը, որպես կանոն, չի անցնում երեքից, իսկ ա-
վելի հաճախ այն ներկայացված է մեկ պրոֆեսիոնալ դատավո-
րով: Երդվյալների կոլե□իան պետք է լուծի մեղադրանքի ապա-
ցուցվածության, ամբաստանյալի մեղավորության հարցերը, ինչ-
պես նաև այս կամ մեղմացուցիչ հան□ամանքի ճանաչման հարցը:
Իսկ ինչ վերաբերում է պրոֆեսիոնալ դատավորին (դատավորնե-
րին), ապա նա, կաշկանդված լինելով երդվյալների վերդիկտով և
էլեկտրոլ դրանից, կիրառում է քրեական օրենքը, որոշում է պատ-
ժաչափը: Ջար□ացած երկրների մեծ մասը (ԱՄՆ, Ան□լիա, Ի-
տալիա, Կանադա և այլն) աստիճանաբար հրաժարվում են արդա-
րադատության իրականացման այդ ձևից՝ այն համարելով հնա-

⁴⁰⁰ Տե՛ս *Մ ըմ աեալ ու ձաոմմ ու օալ եմալ ի-մմ օալ-
նօաեմ իալ շաեմ ի իաաօեմնօաա ա իմմ աեաօ ՕՄ Է ԾՕ. Մ ., 1995, էջ 19)*:
*Մ ըմ աեալ ու ձաոմմ ու օալ եմալ ի-մմ օալ-
նօաեմ իալ շաեմ ի իաաօեմնօաա ա իմմ աեաօ ՕՄ Է ԾՕ. Մ ., 1997,
էջ 78-102:*

ցած և ոչ արդյունավետ: Այդ երկրների տեսաբան և պրակտիկ իրավաբանները որպես երդվյալների դատարանի թերությունն նշում են նրա կողմնորոշումը դեպի խմբակային շահերը, հոետորությամբ և հասարակական կրքերին տուրք տալը, անօգնական վիճակը՝ բարդ ռոքթերով ապացույցները հետազոտելիս, երդվյալների պատասխանատվության ցածր աստիճանը ռոքթի քննության արդյունքների համար, անհիմն և անօրինական վերդիկտների մեծ քանակը, դատական քաշքշուքը և թանկությունը: Այս օնահատականները հաստատվում են նաև վիճակաօրական տվյալներով: Երդվյալների դատարանը Անօլիայում քննում է բոլոր ռոքթերի ընդամենը 24%-ը, ԱՄՆ-ում՝ մինչև 4%-ը, Կանադայում՝ 1%-ը, Ֆրանսիան հրաժարվել է երդվյալների դատարանից Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո⁴⁰¹:

Երդվյալ ատենակալների դատարանը ոչ միանշանակ օնահատականի է արժանացել նաև մի շարք ոուս դատավարաօետների կողմից⁴⁰²: Այսպես, Ա.Դ. Բոլկովը մտավախություն է արտահայտել դատավարության այդ ձևի հնարավոր բացասական հետևանքների վերաբերյալ, մասնավորապես, ճշմարտության բացահայտման խնդրից հրաժարումը, ընդունված որոշման համար պատասխանատվության ցածր աստիճանը, օրինականության խարխուլումը՝ այն արդարության մասին խմբակային պատկերացումներով փոխելու միջոցով⁴⁰³: Սակայն երդվյալների ինստիտուտն ունի նաև համոզված կողմակիցներ: Մասնավորապես, Ս.Ա. Պաշինի կարծիքով ինկվիզիցիոն հիմքերով կառուցված խորհրդային քրեական դատավարության օերիշխանության տասնամյակներից հետո ճանապարհը դեպի իրավական պետություն անցնում է մրցակցության և երդվյալների դատարանի միջոցով⁴⁰⁴:

⁴⁰¹ Տե՛ս *Aréola A.Ā.* *Òdàòúy àèàñòù...*, էջ 110-111:

⁴⁰² Տե՛ս *Òròdyeŕà Ā.* *Èààí èí àèy ñóààíí è ðàòí ðì ù èèè èí ò óóáóó ì ðèñŕy-ààòù ì ðèñŕy àí ù à.* — *Çà èí ì ì ñòù*, 1992, թիվ 8:

⁴⁰³ Տե՛ս *Aréola A.Ā.* *Ï ðí à è à ì ñ ó à à í í è ð à ò í ð ì ù.* — *Ñ í à à ò ñ è í à à ì ñ ó à à ð ñ ò à í è ì ð à à í*, 1991, թիվ 4, էջ 5:

⁴⁰⁴ Տե՛ս *Ï ð í à è à ì ù ð à ò í ð ì ù ó à í è í à í - ì ð í ò à ñ ñ ó à è ú í à í ç à è í ì ì à à ò à è ú ñ ò à à à ì ì ð í à è ò à ò Ó Í È Đ Ó. Ï à à ò ð à è ù ì à ó - ì í - ì ð à è ò è - à ñ è í è è í ì Ó à ð à í ò è è, ñ ñ ñ ò ì ÿ à - ò à è ñ ÿ à ì ì ñ è à à 15-16 à à è à à ð ý 1994 à. M., 1995, էջ 43:*

ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում երդվյալ ատենակալների ինստիտուտը, ինչը մեր կարծիքով ճիշտ է, եթե հաշվի առնենք հանրապետության սոցիալ-տնտեսական դրությունը, ազօային ավանդույթները, սովորույթները և մենթալիտետը: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հանցաօործությունների կանխման համար կարևոր է ոչ այնքան պատժի խստությունը, որքան նրա անխուսափելիությունը: Երդվյալների դատարանը դա չի կարող երաշխավորել: Ընդունված որոշումների համար երդվյալները որևէ պատասխանատվություն չեն կրում: Հետևաբար, հնարավոր չէ երաշխավորել նրանց անկաշատությունը և անկողմնակալությունը քրեական ռոքթեր քննելիս: Կարծում ենք՝ ամենից ճիշտ մոտեցումն առկա է այն երկրներում, որոնք լրիվ հրաժարվել են ոչ պրոֆեսիոնալներից (լինեն դրանք երդվյալ, թե ժողովրդական ատենակալներ) և արդարադատության իրականացումը վստահել են պրոֆեսիոնալ դատավորների կողմից: Օրինակ՝ Ճապոնիայում քրեական ռոքթերը, կախված հանցաօործության հանրային վտանաավորության աստիճանից, քննում են երեք կամ հինգ պրոֆեսիոնալ դատավորների կազմով դատարանները: Նման լուծումն ամենանպաստավորն է արդարադատության օրինականության և օրլելիկության ապահովման համար:

Այսպիսով, համաշխարհային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կախված հանցաօործությունների հանրային վտանաավորության աստիճանից, հանցաօործի անձից և այլ հանգամանքներից՝ կոնկրետ քրեական ռոքթեր քննող դատարանների դատական կազմի նկատմամբ դրսևորված է տարբերակված մոտեցում. ռոքթերը քննվում են ինչպես միանձնյա, այնպես էլ կողմից: Ոչ մի երկրում այս հիմնախնդիրը չի ստացել այնպիսի օրենսդրական լուծում, ինչպիսին առկա է Հայաստանի Հանրապետությունում: Արդարադատության իրականացման կողմից ձևի տոտալ փոխարինումը միանձնյա ձևով բացարձակացնում է մեկ անձի՝ դատավորի հնարավորությունները՝ որոշելու մեղադրանքի և ամբաստանյալի բախտը: Հայաստանի Հանրապետությունում դատարանն այժմ ավելի շատ հիշեցնում է վարչական մարմնի, դատավորը՝ իր հայեցողությամբ ռոքթող չի նովմիկի: Եթե դրան օումարենք նաև այն, որ ըստ օրենքի՝ դատավոր կարող են դառնալ 25 տարին լրացած անձինք, ովքեր չունեն կենսական և մասնաօիտական բավարար փորձ, դժվար չէ պատկերացնել, թե պատասխանատվության ինչ ծանր բեռ է դրված նրա ուտերին: Տեղին է հիշել նաև նրան սպառնացող վտանգներն ու

փորձությունները: Կարելի է վստահորեն ասել, որ դատավորին այդ պայմաններում իր պարտականությունները կատարելիս օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների ուժով ոչ միշտ կհաջողվի տնվել պատշաճ բարձրության վրա: Ազատ դատական հայեցողության աղափարն անկասկած այթակղիչ է անկախ և լիիրավ դատական իշխանություն ստեղծելու համատեքստում: Սակայն տվյալ դեպքում այն վերածվում է անկախության օրենքից, իսկ դա վտանգավոր է, հատկապես, եթե նկատի ունենանք, որ դատական կորպուսում քիչ չեն պատշաճ որակավորում չունեցող, անփորձ մարդիկ:

Ենթադրում ենք, որ առաջին ատյանի դատարանում առանց բացառության բոլոր քրեական ործերի քննությունը միանձնյա կարող կարող է հանգեցնել ապօրինի և անհիմն դատավճիռների և այլ որոշումների կայացման: Այստեղից էլ հիմնավոր են թվում առաջարկությունները՝ համապատասխան փոփոխություններ կատարել ՀՀ դատարանակազմության մասին օրենքում և քրեական դատավարության օրենսգրքում՝ նախատեսելով առաջին ատյանի դատարանում քրեական ործերի քննության ինչպես միանձնյա, այնպես էլ կոլեկտիվ կարգերը: Նպատակահարմար է, որ առաջին ատյանի տեղական դատարանների դատավորները միանձնյա քննեն մինչև երեք տարի ազատազրկմամբ պատժվող հանցագործությունների վերաբերյալ ործերը, ինչպես նաև իրականացնեն մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության լիազորությունները: Մնացած քրեական ործերը մարզային առաջին ատյանի դատարանները կքննեն կոլեկտիվ՝ երեք դատավորների կազմով:

Ինչպես ցույց են տալիս մեր կողմից դատավորների շրջանում անցկացրած հարցման արդյունքները, դատավորները ևս համաձայն չեն իրենց լիազորությունների այդպիսի ընդլայնմանը: Երևան քաղաքի և ՀՀ չորս մարզերի (Կոտայքի, Արմավիրի, Արարատի, Արագածոտնի) առաջին ատյանի դատարանների դատավորների ավելի քան 60%-ը առանց բացառության բոլոր քրեական ործերի միանձնյա քննությունը համարում է ոչ ճիշտ: Ըստ նրանց՝ որոշակի կատեգորիայի ործեր անհրաժեշտ է քննել կոլեկտիվ:

Ռատական քննության փուլի հիմնարար սկզբունքը մրցակցությունն է, որը ենթադրում է կողմերի իրավահավասարություն: Սակայն դատական քննությանը հետևող փուլերում իրավահավասարությունը կոպիտ կերպով խախտվում է, մասնավորապես, ուժի

մեջ չմտած դատավճիռների և այլ ակտերի վերանայման կարգը սահմանելիս: Ի տարբերություն մեղադրանքի կողմի՝ ամբաստանյալը և նրա պաշտպանն իրավունք ունեն բողոքարկել առաջին ատյանի դատարանի բոլոր վերջնական որոշումները, այդ թվում նաև դատավճիռները, ցանկացած հիմքով (քր. դատ. օր. 65, 73 հոդվածներ): Իսկ ինչ վերաբերում է մեղադրողին (դատախազին) և տուժողին, ապա նրանց լիազորությունները տվյալ հարցում անհիմն սահմանափակված են: Այսպես, համաձայն քրեական դատավարության օրենսգրքի 59 և 376 հոդվածների՝ տուժողն իրավունք ունի վերաքննիչ բողոք բերել միայն մասնավոր մեղադրանքի ործերով: Վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունի միայն ործում որպես մեղադրող մասնակցող դատախազը: Եթե ինչ-որ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ հիմքերով նա հրաժարվի բողոքարկել ապօրինի և անհիմն դատավճիռը, ապա դատավճիռն անարդյունավետի ուժի մեջ, քանի որ այդ իրավունքից զրկված են տուժողը և վերադաս դատախազը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված օրինական ուժի մեջ չմտած դատավճիռների և այլ ակտերի բողոքարկման կարգը հակասում է ոչ միայն մրցակցության սկզբունքին, նսեմացնում է հանցագործության գոհերի իրավունքներն ու օրինական շահերը, հարցականի տակ է դնում արդարադատության նպատակների նվաճումը, այլ նաև հակասում է ՀՀ Սահմանադրության, «Ռատարանակազմության մասին» ՀՀ օրենքի հոդված 103 հոդվ. և «Ռատարանակազմության մասին» ՀՀ օրենքի 5 հոդվ.:

Վերադաս դատախազներին (այդ թվում նաև ՀՀ լիավոր դատախազին) առաջին ատյանի դատարանների կայացրած և օրինական ուժի մեջ չմտած դատավճիռները և այլ որոշումները բողոքարկելու իրավունքից զրկելն անհիմն է, եթե հաշվի առնենք քրեական դատավարության օրենսգրքի 35 հոդվ. 4-րդ մասի դրույթը, համաձայն որի՝ ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին մեղադրողի հայտարարությունը դատարանի համար քրեական ործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք է:

Այս դրույթը տուժողին և վերադաս դատախազներին դատավճիռը բողոքարկելու իրավունքից զրկելու պայմաններում մրցակցության սկզբունքի էական խախտում է և անխուսափելիորեն հանգեցնում է մեղադրող կողմի, մասնավորապես տուժողի, խախտված իրավունքների վերականգնման հնարավորություններ

րի սահմանափակման: Դատախազի կողմից մեղադրանքից հրաժարվելու դեպքում տուժողը զրկված է նույնիսկ օրրժի կարճման դեմ առարկելու հնարավորությունից: Այդպիսով, եթե առաջին ատյանի կարճով օրրժը քննելիս մեղադրողն ինչ-որ պատճառով (ցածր մասնաօրհտական մակարդակ, անձնական շահաօրճովածություն և այլն) հրաժարվում է մեղադրանքը պաշտպանելուց, ապա դատարանը պարտավոր է կարճել օրրժը և քրեական հետապնդումը ամբաստանյալի նկատմամբ՝ հաշվի չառնելով տուժողի կարծիքը: Քննարկվող հարցի օրնետրական կարճավորումը սկզբունքորեն համարելով ոչ ճիշտ՝ մենք ենթադրում ենք, որ անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել քրեական դատավարության օրենսօրրքում այն հաշվով, որ՝ 1) տուժողն իրվունք ստանա բողոքարկելու առաջին ատյանի դատարանի ցանկացած վերջնական որոշում, այդ թվում նաև դատավճիռները, 2) այդպիսի իրավունքով պետք է օժտված լինեն օրրժի քննությանը որպես մեղադրող մասնակցած դատախազի բոլոր վերադաս դատախազները, ընդհուպ մինչև ՀՀ Օլխավոր դատախազը, 3) օրրժով դատական քննության ընթացքում մեղադրողի կողմից մեղադրանքի պաշտպանությունից հրաժարվելը համարվում է քրեական օրրժի կարճման և քրեական հետապնդման դադարեցման համար պարտադիր հիմք միայն տուժողի կամ նրա ներկայացուցչի կողմից չառարկելու դեպքում: Եթե տուժողն առարկում է, ապա օրրժի քննությունը պետք է շարունակվի: Տվյալ դեպքում, մեր կարծիքով, պետք է համաձայնել այն հեղինակների հետ, ովքեր առաջարկում են տվյալ պահից հայտարարել դատական նիստի ընդմիջում, տուժողին հնարավորություն տալ ընտրելու պրոֆեսիոնալ ներկայացուցիչ՝ փաստաբան, և նրա վրա դնել մեղադրանքը պաշտպանելու պարտականությունը: Ընդ որում, տուժողին պետք է ազատել ներկայացուցչի ծառայությունների համար վճարելուց⁴⁰⁵:

Տեղին է հիշեցնել, որ տուժողն արևմտյան երկրների քրեադատավարական սուբյեկտների շարքում չունի ոչ մի արտոնություն և դատավարական երաշխիքներ: Ֆրանսիայի, ԱնՕլիայի,

⁴⁰⁵ Տե՛ս *Aréola A.A.* Նիօեաիւի-իճաիւնա իճիաիւնա շաւեօս շաճօճ իճաիւնաիւնա.— *Ա նա.*: Նօաաիւնա ճաճիճի ա է իճիաիւնա ի ճիւնաիւնա ճաճիւնաիւնա.— *Օաեօեի A.A.* Օաիւնաիւնա իճաիւնաիւնաիւնա ճաճիւնաիւնա.— *Ա նա.*: *Օաիւնաիւնա ի ճիւնաիւնաիւնա ճաճիւնաիւնաիւնաիւնա.*— *Ա նա.*: *Օաիւնաիւնա ի ճիւնաիւնաիւնաիւնա.*— *Ա նա.*: *Օաիւնաիւնա ի ճիւնաիւնաիւնաիւնա.*— *Ա նա.*: *Օաիւնաիւնա ի ճիւնաիւնաիւնաիւնա.*— *Ա նա.*: *Օաիւնաիւնա ի ճիւնաիւնաիւնաիւնա.*

ԱՄՆ-ի, ԳԴՀ-ի և այլ պետությունների դատավարական օրենսդրությամբ տուժողը չի դիտարկվում որպես ինքնուրույն դատավարական անձ: Նա այս համակարճերում համարվում է և՛ որպես վկա, և՛ որպես քաղաքացիական հայցվոր: Դրան հակառակ՝ խորհրդային քրեական դատավարության օրենսդրությունն այդ ուղղությամբ առաջին նշանակալի քայլն արեց 1958թ. հիմունքների ընդունմամբ, որում տուժողը դիտվում էր որպես ինքնուրույն դատավարական սուբյեկտ՝ օժտված համապատասխան իրավունքներով ու պարտականություններով: Անշուշտ, այս հանՕամանքը կարելի է համարել խորհրդային օրենսդրության նվաճումը: Սակայն միաժամանակ պետք է նշել, որ տուժողի կարճավիճակը բավականաչափ չմշակվեց, մասնավորապես՝ նա չապահովվեց պաշտպանության հատուկ միջոցներով. տուժողի հարցաքննությունը կատարվում էր վկայի հարցաքննության կանոններով, տուժողն զՕուշացվում էր քրեական պատասխանատվության մասին ոչ միայն ակնհայտ կեղծ ցուցմունքներ տալու, այլ նաև ցուցմունքներ տալուց հրաժարվելու համար: Հետևաբար նա իրավունք չունեց հրաժարվելու ցուցմունքներ տալուց: Չնայած քրեական դատավարության 1958թ. հիմունքների ընդունումից հետո տուժողին թույլ տրվեց մասնակցել նախաքննությանը, նա իրավունք ստացավ ծանոթանալու օրրժի նյութերին, ներկայացնելու ապացույցներ, միջնորդություններ, օրենքով նախատեսված դեպքերում նույնիսկ մասնակցելու դատական վիճաբանություններին, այնուամենայնիվ, նրա մասնակցությունը քրեական դատավարությանը հաճախ ձևական բնույթ ուներ: Թվում է, թե նոր քրեադատավարական համակարճի ձևավորման պայմաններում, երբ հատուկ ընդճվում է քրեական դատավարությունում անհատի իրավունքների և ազատությունների պաշտպանության կարևորությունը, կճեռնարկվեն նոր քայլեր տուժողի իրավունքների ընդլայնման համար: Սակայն, օրինակ՝ ՌԴ-ում հանցաօրրժության զոհերի պաշտպանության դատաիրավական բարեփոխումները դեռևս որևէ էական տեղաշարժ չեն արձանաօրել, չնայած այդ հիմնախնդրի նկատմամբ ուշադրությունն առկա է, և հիմքեր կան խոսելու հասարակական իրավաօրհտակցության և իրավական օադափարախոսության մեջ տեղի ունեցած տեղաշարժի մասին՝ հօնուտ օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան փոփոխելու⁴⁰⁶: Դրանք արտացոլվել են նաև ՌԴ քրեական դատավարությո-

⁴⁰⁶ Տե՛ս *Aréola A.A.* Շաւեօճ շաճօճ իճաիւնաիւնաիւնա ճաճիւնաիւնաիւնա.— *Ա նա.*: *Օաիւնաիւնա ի ճիւնաիւնաիւնաիւնա.*

ինչպես նաև դատապարտչալը և նրա օրինական ներկայացուցիչը՝ արդարադատության նախարարի միջոցով⁴¹³:

Իտալիայում լուրջություն ունեն քրեական լուրջությունով դատավճիռները վերանայող հետևյալ դատարանները՝ տրիբունալներ, վերաքննիչ դատարաններ, երդվյալների վերաքննիչ դատարաններ և բարձրագույն վճռաբեկ դատարան⁴¹⁴: Առաջին երեք խմբի դատարաններն իրականացնում են վերաքննիչ վարույթ (տրիբունալները քրեական լուրջություն ունեն նաև որպես առաջին ատյան): Բարձրագույն վճռաբեկ դատարանն իրականացնում է վճռաբեկ վարույթը և դատավճիռների վերանայում նոր ի հայտ եկած հանցանքներով: Իտալիայում առաջին ատյանի դատարանի համարյա բոլոր դատավճիռները կարող են վերաքննության կարգով լուրջությունով առարկվել: Հետևաբար, քրեական լուրջություն այստեղ կողմերի ցանկության դեպքում ըստ էության քննվում են երկու անգամ, քանի որ վերաքննիչ ատյանը լուրջություն ունեն է ինչպես իրավունքի, այնպես էլ փաստի տեսանկյունից⁴¹⁵: Գործի քննության արդյունքում վերաքննիչ ատյանը կարող է՝

- 1) հաստատել առաջին ատյանի դատարանի դատավճիռը,
- 2) փոխել առաջին ատյանի դատարանի դատավճիռը,
- 3) վերացնել առաջին ատյանի դատարանի դատավճիռը և կայացնել նոր դատավճիռ կամ լուրջություն հանձնել առաջին ատյանի դատարանին՝ նոր քննության համար:

Իտալական քրեական դատավարությունում վճռաբեկության կարգով կարող են լուրջությունով առարկվել այն դատավճիռները, որոնք արդեն եղել են վերաքննիչ քննության առարկա, ինչպես նաև այն դատավճիռները, որոնք ըստ օրենքի ենթակա չեն վերաքննիչ լուրջության⁴¹⁶: Եթե վերաքննիչ ատյանում լուրջություն ըստ էության կրկնակի է քննվում, ապա վճռաբեկ ատյանում քննութ-

⁴¹³ Տե՛ս *Ataēyōēīīūā ē ēāñāōēīīūā ñōāū ēāīēōāēēñōē-āñēēō āīñō-āāñōā*.— *Ā ēī.:* *Çāēīīīāāōāēūñōāī çāđōāāēīūō ñōđāī. Ī āçīđīāy ēīōīđī āōēy. Āñī. 92. Ī ., 1975, էջ 10-11:*

⁴¹⁴ Տե՛ս *Ōēīæāīēā ī ñōāīōñōđīēñōāā*.— *Ā ēī.:* *Èđāēēy, Ēīīñōēōōōēy ē çā-ēīīīāāōāēūīūā āēōū. Ī ., 1988, էջ 300-304:*

⁴¹⁵ Տե՛ս *Ataēyōēīīūā ē ēāñāōēīīūā ñōāū ēāīēōāēēñōē-āñēēō āīñō-āāñōā...*, էջ 13:

⁴¹⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 16:

յան առարկա կարող են դառնալ միայն նյութական կամ դատավարական իրավունքի խախտումները:

Իտալական քրեական դատավարությունում բացի վճռաբեկ վարույթից լուրջություն ունի նաև ուղիղ դատարան՝ որպես օրինական ուժի մեջ մտած դատավճիռները նոր ի հայտ եկած հանցանքներով վերանայելու բացառիկ կարգով:

